

Էրիկ Ֆիլաթեյիուս

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ

10

ՈՍԿԵ

ՊԱՏՎԻՐԱՆ

Երեւան 2001

Ինտերնյուս

Շնորհակալություն ենք հայտնում
Սիացյան Նահանգների Սիջազգային Չառգացման Գործակալությանը
ֆինանսական աջակցության համար:

Հեղինակի նախաբանը

Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ Շվեդիայում չկային լրագրության ֆակուլտետներ կամ բաժիններ: Այդ մասնագիտությունը որեւէ տեղ չէին սովորեցնում, եւ նորեկները հաճախ ստիպված էին լինում անվճար աշխատել խմբագրություններում՝ արհեստի գաղտնիքներին տիրապետելով պրակտիկորեն եւ ստացած գիտելիքները փոխանցելով ուրիշներին: Միայն մեր դարի վաթսուհինական թվականներին երկրում առաջին անգամ հիմք դրվեց լրագրական կրթությանը, ինչն աստիճանաբար համալսարանական կարգավիճակ ձեռք բերեց: Լրագրությունը դարձավ գիտական հետազոտությունների առարկա, եւ այսօր արդեն երկրի շատ ժողովրդական դպրոցներ եւ գիմնազիաներ առաջարկում են զանգվածային լրատվության եւ հաղորդակցության բնագավառի ուսուցման զանազան ծրագրեր: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանզի լրագրող դառնալու համար արդեն միայն պրակտիկ հմտություններ ունենալը բավական չէ, անհրաժեշտ է նաեւ խորը սկադեմիական ուսուցում, բազմագիտակություն եւ տարբեր բնագավառների վերաբերյալ իրազեկություն:

Իհարկե, մեր օրերում էլ կարելի է լրագրության ասպարեզ մտնել տարբեր ձեւերով: Ինքս լրագրական գործունեությունս սկսել եմ տասնյոթ տարեկանում՝ իբրեւ իմ հայրենի Ուփսալա քաղաքի թերթի պրակտիկանս: Ապրելով հոնորարների եւ այն փողերի հաշվին, որ վաստակում էի խմբագրության աշխատակիցներին փոխարինելով՝ ես սովորեցի Ուփսալայի համալսարանի հասարակագիտության ֆակուլտետում:

Լրագրողի մասնագիտության հիմունքները ես սովորել եմ իմ գործընկերներից՝ օպերատորներից, հնչյունային օպերատորներից, մոնտաժողներից, խմբագիրներից: Իմ թերթի՝ «Uppsala Nya Tidning» - ի («Ուփսալա Նյուա Թիդնինգ» - «Ուփսալայի նոր թերթ») լուսանկարիչներից մեկն ինձ սովորեցրեց, թե ինչ պետք է հարցնեմ մարդկանց, երբ մեկնում եմ առաջադրանք կատարելու կամ հարցազրույցի, բացատրեց, թե ինչպես պետք է գրեմ հոդվածները: Երբ ես սկսեցի աշխատել ռադիոյում, իմ շեֆությունը վերցրած հնչյունային օպերատորը պատմեց ինձ, թե ինչպես է «արարվում» ռադիոհաղորդումը: Իսկ Շվեդական հեռուստատեսության «Աքթուելթ» լրատվական ծրագրի խմբագրությունում օպերատորներն ու տեսամոնտաժի ռեժիսորներն ինձ իրազեկ դարձրին լրատվության այդ էլեկտրոնային միջոցի գաղտնիքներին: Իհարկե, ինձ միշտ էլ օգնել են լրագրող գործընկերներս:

Երեսուն տարի լրագրող (առավելապես ռադիոյում եւ հեռուստատեսությունում) աշխատելուց հետո, ես ցանկացա փորձս փոխանցել նրանց, ովքեր այսօր են ցանկանում ծանոթանալ լրագրողի մասնագիտության հիմունքներին: Այն ամենը, ինչ ես սովորել եմ այդ տարիների ընթացքում, իրենց արտացոլումն են ստացել իմ ձեռագրված «լրագրության պատվիրաններում», որոնք վերջին քսան տարում Շվեդիայի եւ Սկանդինավիան մյուս երկրների լրագրության բարձրագույն դպրոցներում իմ կարդացած բազմաթիվ դասախոսությունների հիմքն են կազմել: Իհարկե, այդ դրույթները բազմիցս փոփոխվել ու լրացվել են, իսկ Ստոկհոլմի համալսարանին կից լրագրության բաժնում պրոֆեսորական աշխատանքի մեկ տարին ինձ հնարավորություն տվեց նոր նյութեր հավաքելու եւ սկսված գործն ավարտին հասցնելու:

Սրա նման գրքերի կարիքը ես զգում էի այն տարիներին, երբ ինքս սկսեցի յուրացնել լրագրողի արհեստը: «Լրագրության տասը ոսկե պատվիրաններ» - ը ուսումնական ձեռնարկ է, որ ոչ միայն զուտ պրակտիկ խորհուրդներ է պարունակում այն մասին, թե ինչպես պետք է պատրաստել լուրերը, այլեւ լրագրողի մասնագիտության տեսական ներածություն է: Գրքում գերակշռում են ձայնա(տեսա)գրության տեխնիկայի, հարցազրույցի եւ մոնտաժի վերաբերյալ գլուխները, որոնք զուգորդվում են այն տեսական դատողություններին, որոնք ներկայացնում են, թե ինչ է լուրը, ինչ դեր է կատարում լրագրողը ժամանակակից ժողովրդավարական հասարակարգում եւ ինչպես են մեր օրերում փոխվում լրատվամիջոցների վրա իշխանությունների ճնշման ձեւերը:

Գիրքն ամենից առաջ նախատեսված է լրագրության ֆակուլտետների ուսանողների համար, սակայն, հուսով եմ, որ այն օգտակար կլինի նաև նրանց, ովքեր արդեն ակտիվորեն աշխատում են զանգվածային տեղեկատվության եւ հաղորդակցության բնագավառում:

Էրիկ ՖԻԽԹԵԼԻՈՒՍ

1

Աշխատիքի ոգեշնչված

Ո՞րն է այն «լավ լրագրության» բանալին, որը մարդկանց անտարբեր չի թողնում եւ նրանց օգնում է հասկանալու, թե ինչ է կատարվում մեզ շրջապատող աշխարհում: Ի՞նչ կարող է լրագրողն անել, որպեսզի լուրը լսարանի համար աննկատելի չմնա:

Կատարեք պարզ մի փորձ. միացրեք ռադիոընդունիչը կամ հեռուստացույցը եւ լսեք վերջին լուրերի թողարկումներ, կարդացեք որեւէ թերթի առաջին էջը: Կես ժամ անց փորձեք վերհիշել, թե ինչ էք կարդացել, լսել կամ դիտել: Կպարզվի, որ շատ բան արդեն մոռացվել է: Միեւնույն ժամանակ՝ մի քանի օր առաջ կարդացածից, լսածից կամ տեսածից հավանաբար ինչ-որ բան դեռեւս մնացել է հիշողության մեջ: Ինչո՞ւ է այսպես:

Լրագրողի հաշվակետերը

Լուրերը մատակարարելու աշխատանքը կատարում են տեղեկատվական նյութ հավաքող ու տարածող խմբագրություններն ու գործակալությունները: Սակայն այդ շղթայի առաջին օղակը լրագրողն է, որը գտել, բացահայտել եւ նկարագրել է նորությունը:

Լրագրողի խնդիրն է՝ իրադարձությունը տեսնել, զգալ եւ հասցնել լսարանին: Եթե չլինի նկարագրողը, չի լինի եւ լուրը:

Նկարագրողն ինքը պետք է տարված լինի իրադարձությամբ, որպեսզի դրա մասին պատմի աշխույժ ու հետաքրքրաշարժ կերպով: Խոսքն, այսպիսով, լրագրողի՝ ոչ միայն տեղեկացնելու պարտականության, այլեւ՝ պատմելու ցանկության մասին է:

Լավ լրագրության հիմքը հենց լրագրողի ոգեշնչվածությունն է: Հենց իր գործով տարված լրագրողն է հետաքրքրվում շուրջը կատարվող ամեն ինչով եւ ձգտում գլուխ հանել իրադարձություններից, որպեսզի այդ ամենը պատմի իր լսարանին: Այն, ինչի մասին նա պատմում է, պետք է լինի կարեւոր, հետաքրքիր, ոչ ճանձրալի եւ հասարակության համար կարեւոր: Հաճախ լրագրողը ոչ միայն իրադարձության վկան ու մասնակիցն է լինում, այլեւ՝ նորությունը հայտնաբերողը: Լրագրողի առավելությունն այն է, որ ինքն առաջինն է իր ընթերցողին, ունկնդրին կամ հեռուստադիտողին պատմում իրադարձության մասին:

Լրագրողի առջեւ անընդհատ խոչընդոտներ են ծառանում. փողը չի բավականացնում, ժամանակն է քիչ, մտահոգումները կամ համարձակությունն են պակասում: Նրա աշխատանքին կարող են խանգարել ցինիզմը, ծուլությունը, փոքրոգությունը: Սակայն լրագրողի ոգեշնչվածությունը հնարավորություն է տալիս հաղթահարելու այդ

դժվարությունները: Այս կամ այն բանի մասին պատմելու անհրաժեշտությունը որոշելիս նա առաջնորդվում է ներգզացողությամբ (ինտուիցիայով) եւ իր զգացմունքներով:

Փողի ու ժամանակի պակասի պատճառաբանությունները ամենից տարածվածն են խմբագրություններում. «Հասկանո՞ւմ ես, մենք չենք կարող այդ խնդրով զբաղվել. փող չունենք»: Իհարկե, տնտեսական դժվարությունները իրողություն են շատ (այդ թվում շվեդական) խմբագրությունների համար: Շվեդիայի տեղական ռադիո կամ հեռուստակայաններում շատ հաճախ օրվա լուրերի թողարկման ողջ բեռն իրենց ուսերին են տանում ընդամենը երկու լրագրողներ: Նման իրավիճակում շատերը պարզապես հնարավորություն չունեն զբաղվելու լրագրողական հետաքննությամբ կամ սեփական լուրերի հայթայթմամբ: Սակայն հաճախ էլ միջոցների պակասի մասին բողոքները աշխատակիցների կամ խմբագիրների անձեռնհասությունը քողարկող շղարշ են: Իր գործով ոգեշնչված լրագրողը «սարեր շուռ տալու» ուժ է հնարավորություն կգտնի:

Ոգեշնչվածություն եւ անաչառություն

Մեր մասնագիտության հակասություններից մեկն այն է, որ լրագրողը մի կողմից պետք է ոգեշնչվի թեմայով, մյուս կողմից՝ անաչառ լինի այն ներկայացնելիս: Յուրաքանչյուրս իրականությունը յուրովի ենք գնահատում, սակայն լրագրողը պետք է ձգտի իրադարձությունների մասին տեղեկատվությունը կամ կատարվածի սեփական ընկալումը հաղորդել առավելագույնս ճշմարտացի եւ բարեկրթորեն՝ չտրվելով ընթերցողին, ունկնդիրներին ու հեռուստադիտողներին իր կարծիքը (թե ինչն ինչպես պետք է լիներ) պարտադրելու գայթակղությանը: Լրագրողը դեպքի վայրից հաղորդում է բուն իրադարձության մասին, եւ ավագակներ բռնելը կամ հրդեհ հանգցնելը նրա գործը չէ:

Ոգեշնչվածության եւ անաչառության միջեւ անտեսանելի սահման կա: Խախտելով այն՝ աշխատանքով խանդավառված լրագրողը մոռանում է անաչառության մասին եւ սկսում է յուրաքանչյուր հարցի վերաբերյալ լսարանին ներկայացնել իր լուծումները՝ դրանով իսկ լրագրողից վերածվելով մարգարեի:

Եկեք դիտարկենք կոնկրետ օրինակ՝ Էրեսուն նեղուցի կամրջի կառուցումը, ինչը Շվեդիայում բազմաթիվ քննարկումների եւ բանավեճերի առիթ տվեց: Ոգեշնչված լրագրողն անմիջապես կասի, որ դա քննարկման կարելու թեմա է: Իրադարձությունն իր ներսում լարվածություն ունի, դրանում միախառնված են զգացմունքներ, փող, հակասություններ, քաղաքականություն, բնապահպանական հարցեր... Կամուրջը, նախագծի հեղինակների մտահղացմամբ, կմիավորի Էրեսունյան տարածաշրջանի երկու մասերը՝ իրար միացնելով Բալթիկ ծովի ափերին գտնվող երկու պետությունները: Այդպիսով շվեդական Մալմյո քաղաքն ու Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենը կմիավորվեն նոր մշակութային եւ տնտեսական կոնգլոմերատի մեջ: Կամուրջը հսկայական, տեխնիկական առումով՝ բարդ կառույց է, որի շինարարությունն իրականացնելու համար պահանջվում են հսկայական աշխատուժ եւ տրանսպորտային փոխադրումներ: Մի կողմից՝ շինարարությունն իր ազդեցությունը կունենա ոչ միայն կամրջի ափամերձ հենասյուների վայրերի, այլև ողջ Բալթիկ ծովի եւ Էրեսունի շրջակայքի տարածքների բնական միջավայրի վրա: Կենդանական, բուսական աշխարհը, ձկներն ու ձկնարդյունահանությունը վտանգի տակ կլինեն: Մյուս կողմից՝ շվեդական եւ դանիական շատ ձեռնարկությունների համար շինարարությունը նշանակում է մի քանի միլիարդ կրոն գնահատվող ներդրումներ: Էրեսուն նեղուցի վրայով կամուրջը կառուցել - չկառուցելու հարցը Շվեդական կառավարությունը երկու ճամբարի էր բաժանել: Նման, հակասություններից ոչ գուրկ, թեման կարող է խանդավառել ու գերել ցանկացած լրագրողի: Այնինչ լրագրողը չպետք է մոռանա, որ իր

խնդիրն է հասարակությանը տեղեկացնել կամրջի շինարարությանն առնչվող բոլոր իրադարձությունների մասին, սակայն կամրջի լինել-չլինելը որոշելը նրա խնդիրը չէ*:

Մեր մասնագիտության մեջ ամենակարևորը, հավանաբար, անկանխակալության եւ գործիմացության սկզբունքներին հետեւելն է: Լրագրողը ոչ միայն պետք է փաստեր հայթայթի իրեն հետաքրքրող թեմայի մասին, այլև ոգետրվի, ապրի դրանով, խորամուխ լինի այն իրավիճակի մեջ, որ առաջանում է վիճելի հարցերի շուրջ, սակայն ոչ այնքան, որ ինչ-որ մեկի կողմը բռնի: Նա, ով գործ ունի լուրերի հետ, պետք է ձգտի առավելագույն անաչառության՝ չարտահայտելով իր համակրանքը ոչ այս, ոչ այն դիրքորոշման նկատմամբ: Իհարկե, դա հեշտ խնդիր չէ, սակայն չի կարելի հրաժարվել այդ նպատակից՝ պատճառաբանելով, թե դա անմատչելի է:

Ամեն ինչին նայեք ընթերցողի, հեռուստադիտողի, ունկնդրի աչքերով: Համաձայնեք, որ նրանք իրավունք ունեն ստանալու լրագրողի համակրանքներով կամ հակակրանքներով չգունագարդված տեղեկատվություն: Մեր շատ գործընկերներ այս խնդրից գլուխ չեն հանում, այդ պատճառով էլ մերժում են նման հարցադրումը: Եվ, այսուհանդերձ, լրագրողի ոգեշնչման եւ նրա անաչառության միջոց հակասության առկայության ընդունումը պարզապես անհրաժեշտ է, ինչպես որ անհրաժեշտ է նշել որոշ սահմանագատումներ, որ պահանջում է մեր մասնագիտությունը:

Ղերերի սահմանանշումը հանգեցնում է նրան, որ մենք երբեմն սոցիալապես մեկուսացված լինելու զգացում ենք ունենում: Լրագրողը տեղեկացնում է իրադարձությունների մասին, սակայն ինքը չի մասնակցում դրանց, նա կարծես եւ համակարգի մեջ է, եւ միաժամանակ՝ նրանից դուրս: Այն իրադարձությունների մասնակիցները, որոնց վկան է լրագրողը, հնարավորություն ունեն արտահայտելու իրենց կարծիքներն այս կամ այն հարցի վերաբերյալ, իսկ լրագրողը կարծես ստիպված է փոքր-ինչ մի կողմ քաշվել. «Ես այստեղ նրա համար չեմ, որ ասեմ, թե ինքս ինչ եմ մտածում, այլ նրա համար եմ, որ հաղորդեմ, թե ինչ եք մտածում եւ անում դուք»: Շատ լրագրողներ սա բավականին ցավազին են տանում: Չէ՞ որ, շատ հաճախ, նյութը պատրաստելիս լրագրողը ծանոթանում է մարդկանց հետ, կիսում է նրանց ապրումները, կարեկցում է նրանց կամ զայրանում նրանց հետ եւ հանկարծ ինչ-որ պահի ստիպված է սահմանագատվել հանրությունից, որպեսզի շարունակի իր աշխատանքը: Լրագրողը, ինչպես որ ցանկացած այլ մասնագիտության տեր մարդ, պետք է ունենա անձնական կյանքի իր ոլորտը, որում նա ոչ թե լրագրող է, այլ մասնավոր անձ: Սակայն իրական կյանքում մասնավորի եւ հանրայինի միջեւ սահման գծելն այնքան էլ հեշտ չէ:

Լրագրողի շահագրգռվածությունն ու ոգետրությունը պետք է, այդպիսով, սահմաններ ունենան: Սա անչան կարելոր է մեր մասնագիտության համար, ուստի ես դեռ մեկ անգամ չէ, որ կանդրադառնամ դրան, մասնավորապես՝ հրապարակման հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունք ունենալու սկզբունքը քննարկելիս: Ոգեշնչվածության եւ անաչառության հակասությունը առնչվում է հասարակության մեջ մեր ունեցած դերի հիմքերի հիմքին:

«Ներքին այրման շարժիչ»

Լրագրողը պետք է այրվի այն թեմայով, որն ուսումնասիրում է, որպեսզի գործն հաջողությամբ ավարտի: Այս դեպքում լրագրողի ոգեշնչվածությունն իր աշխատանքի «ներքին այրման շարժիչն» է: Հայտնաբերելով որեւէ տվյալ, հաճախ նույնիսկ դժվար է կռահել՝ կդառնա՞, արդյոք, այն լուր, թե՞ ոչ: Այն լրագրողները, ովքեր իմացան եւ հաղորդեցին հինգ երկվորյակների ծննդյան մասին, չէին էլ ենթադրում, թե այդ լուրը

* Բազմաթիվ բանավեճերից հետո որոշում ընդունվեց Էրեսուն նեղուցի վրայով կառուցել 7,8 կմ երկարությամբ կամուրջ: Հիմնարկերը կատարվեց 1997 թվականի հուլիսի 16-ին: Ըստ պլանի շինարարությունը պետք է ավարտվի 2000 թվականին:

կտարածվի աշխարհով մեկ: Իսկ այ, նրանց, ովքեր առաջինը զանգահարեցին խմբագրություններ եւ լրագրողներին հայտնեցին, թե Չերն կղզուն միացնող կամուրջը փլվել է*, խնդրում էին հիմնարկություններ դուրս չտալ՝ մտածելով, թե դա հարբած զվարճասերների կատակ է: Լուրերը երբեմն համազգային լրատվամիջոցների խմբագրություններ եւ բաժիններ են հասնում մի քանի շաբաթում կամ նույնիսկ ամսում:

Յինիկներն ասում են, թե մարդիկ ընկալում են միայն այն, ինչ ծանոթ է իրենց, իսկ այն ինչ արդեն հայտնի է՝ նոր չէ եւ այդպիսով չի կարող որակվել իբրեւ լուր:

Լուրի (նորության) սահմանումը

Ի՞նչ է լուրը: Անկեղծ ասած չկա այդ հասկացության լավ, տեսականորեն համընդգրկուն սահմանում, ինչպես որ չկա դրա՝ բոլորի կողմից ընդունելի բացատրությունը: Լուրերը՝ զգացմունքային ընկալումն ու ավանդական պատկերացումներն են՝ հավասար համամասնությամբ: Փորձառու լրագրողը շատ հաճախ կարող է կռահել, որ իր լսածը կամ տեսածը լավ լուրի հատկանիշներ է պարունակում: Իսկ իսկական նորությունը մեզ վրա, առաջին հերթին, հուզական ազդեցություն է ունենում: Եվ նրանք, ովքեր հաղորդում են լուրերը, եւ նրանք, ովքեր դրանք ստանում են, մեկ անգամ չէ, որ փորձել են բացատրություն տալ այդ երեւույթին: Սակայն լուրի նույնացումը հիմնվում է ավելի շատ փորձի, քան տեսական հետազոտությունների վրա: Իրեն լուրի հետ նույնացնելով՝ մարդն առաջնորդվում է զգացմունքներով եւ ոչ թե ընդունված չափանիշներով: Վերջին հաշվով խոսքն այն դիտարկումների մասին է, որ կատարում է թղթակիցը՝ ֆիզիկապես ներկա լինելով որեւէ իրադարձության վայրում, եւ որը կարելի է վերապատմել ու հաղորդել ուրիշներին: Շվեդերենի բացատրական բառարանում տրված է «լուր» բառի հետեւյալ բացատրությունը

Լուր –նոր, թարմության հմայքով, հրատապ իրադարձություն; հրատապ իրադարձության մասին հաղորդում (մամուլում, հեռուստատեսությամբ, ռադիոյով):

Իրադարձությունն, այսպիսով առանցքային բառն է: Ինչ-որ բան կատարվում է արագ, կոնկրետ, նկատելի եւ սահմանափակ ժամանակահատվածում: Իրադարձությունը՝ փոփոխություն է: Ինչ-որ բան փոփոխվում է. փոփոխության փաստն էլ հենց լուրն է, նորությունն է: Շվեդական լրագրողների ժարգոնում դա կոչվում է «կարթ»: Իրադարձությունն այն ակնհայտ փոփոխությունն է, որից կարելի է «կախել» պատմությունը կամ սյուժեն:

Փոփոխությունը տարբեր կարող է լինել: Ամենաակնհայտ լուրը անակնկալ իրադարձությունն է, օրինակ՝ ինքնաթիռի աղետը, հրդեհը, կառավարության հրաժարականը եւ այլն: Այսպիսով, **իրադարձային նորությունը**՝ հանկարծակի կամ անակնկալ փոփոխություն է:

Սակայն փոփոխությունը կարող է լինել նաեւ երկարատեւ, եւ այդ դեպքում արդեն խոսքը **նորություն-միտումների** մասին է: Փոփոխությունը կատարվում է դանդաղ եւ սկզբում աննկատելի, սակայն ժամանակի ընթացքում այնքան ակնհայտ է դառնում, որ վերածվում է նորության: Նորություն-միտումի օրինակ կարող է լինել ցամաքի ավելացումն ի հաշիվ ծովի: Լրատվամիջոցներով այս երեւույթը հարկ է լուսաբանել հարյուր տարում մի քանի անգամ: Շվեդիայի որոշ շրջաններում ցամաքը բարձրանում է 100 տարում 80 սանտիմետր արագությամբ: Հաճախ, որպեսզի նորություն-միտումին տեղեկատվական արժեք տրվի եւ նրանից պատմություն ստեղծվի, անհրաժեշտ է «կարթ»: Յամաքի ավելացման հետեւանքով առաջացած ծանծաղուտի մեջ խրված լաստանավը հենց այն «կարթն» է, որը հնարավորություն է տալիս «վեր հանել» ամբողջ երեւույթը: Երկարատեւ գործընթացում իրադարձության բացակայությունը դրան գրկում է դրամատիկ հանգույցից:

* Չերն կղզուն միացնող կամուրջը Շվեդիայի ամենախոշոր կամարակապ կամուրջն է: 1980 թվականին մտախուղի եւ մթության մեջ իր կորսից շեղված մի նավ բախվեց դրան, ինչի հետեւանքով կամուրջը փլվեց: 7 ավտոմեքենա ջուրն ընկավ, 8 հոգի զոհվեց: Նոր կամուրջը կառուցեցին ռեկորդային ժամկետում, այն շահագործման հանձնվեց արդեն 1981 թվականի նոյեմբերին:

Շվեդիայի տարբեր ՉԼՄ-ների խմբագրություններ իրենց աշխատանքային պլաններում կարող են ունենալ երկրում կին տարագիրների վիճակի վերաբերյալ օրախնդիր թեման, սակայն երբ իրաքցի անչափահասը սպանում է իր քրոջն այն բանի համար, որ վերջինս չափազանց «շվեդացել» է, երեսն է գալիս այն «կարթը», որը թեման առաջին էջ է մղում:

Տեսանկյուն

Լրագրողը միշտ պետք է գտնի այն տեսանկյունը (ռակուրսը), որով ցանկանում է ներկայացնել նյութը: Միեւնույն հարցը կարող է լուսաբանվել տարբեր տեսակետներով:

Ասենք, պարզ, արեւոտ եղանակը կարելի է ներկայացնել իբրևս փորձանք ֆերմերների համար: Նույն եղանակը հանգստացողների համար ներկայացվում է իբրևս երկրային դրախտ: Պայծառ արեւն ու շոգը ձեռնտու են պաղպաղակ վաճառողների եւ շվեդական զբոսաշրջության համար, սակայն ձեռնտու չեն հարավային երկրներ այցելություններ կազմակերպող գործակալությունների համար: Այսպիսով, նյութը ներկայացնելու տեսանկյունն ընտրում է ինքը՝ լրագրողը: Ի վերջո լավ եղանակի մասին կարելի է պատմել նաեւ օդերևութաբանի տեսանկյունից՝ նկարագրելով, օրինակ, թե ինչքան դժվար է ճիշտ կանխատեսում կատարելը:

Ոչ մի վատ բան չկա, եթե լրագրողը նյութը ներկայացնելու տեսանկյուն է փնտրում: Օգտագործելով այդ մեթոդը՝ մենք կարող ենք աշխուժացնել պատմությունը եւ այն ավելի հասկանալի դարձնել: Սակայն դա չի նշանակում, թե այդ նպատակին հասնելու համար կարելի է փաստերն աղավաղել: Այն, ինչ մենք պատմում ենք մեր լսարանին, պետք է լինի ճշմարտացի ու նշանակալից: Տեղեկատվությունը պետք է մատուցվի այնքան անկանխակալ ու անաչառ, որքան հնարավոր է:

Լուրերի (նորությունների) գնահատումն ու ընտրությունը

Եվ, այսպես, լուրի (նորության) պարզ սահմանում գոյություն չունի: Լուրերի գնահատման եւ ընտրության ժամանակ խմբագրությունները առաջնորդվում են ավելի շուտ պրակտիկ նկատառումներով, քան տեսական ձեւակերպումներով: Վերջին հաշվով, լուր է դառնում այն ամենը, ինչ հրապարակում է խմբագրությունը:

Ստոկհոլմի համալսարանին կից ժուռնալիստիկայի, ՉԼՄ-ների եւ հաղորդակցությունների ինստիտուտի պրոֆեսոր Խոկան Խվիտֆելդտը հետազոտել է լուրերի գնահատման գործընթացը՝ ուսումնասիրելով տարբեր թերթերի առաջին էջերի բովանդակությունը: Նա եզրակացրել է, որ ընդհանրապես նորության հրապարակման եւ առաջին էջում նրա տեղադրման հավանականությունը աճում է հետեւյալին համապատասխան.

- տեղեկատվությունն առնչվում է քննարկման ավանդական նյութի,
- իրադարձությունները կատարվել են մոտակա տարածքում,

դրանք՝

- մի կողմից սենսացիոն կամ անակնկալ բնույթ ունեն,
- իսկ մյուս կողմից՝ մասնակիցները մասնավոր անձինք են,
- հեշտ հակացվող են,
- նշանակալի (կարեւոր) են մարդկանց համար,
- կատարվում են կարճ ժամանակահատվածում՝ լինելով ընդհանուր թեմայի մի մասը,

- միաժամանակ ունեն բացասական երանգ,
- եւ ստացվում են ավանդական աղբյուրներից:

Երկու նորվեգացի գիտնականներ իրենց հետազոտություններով հանգել են նույն եզրակացություններին՝ հիշատակելով նաեւ ժամանակային հանգամանքը եւ «շեմքային արժեքը»: Լուրի նշանակությունն ինքնաբերաբար մեծանում է, եթե այն նկարագրում է թերթի համարի տպագրությունից ոչ շատ առաջ կատարված իրադարձություն եւ եթե այն հաղթահարել է տեղեկատվական արժեվորության որոշակի շեմը: Լուրը պետք է լինի բավականին նշանակալի եւ հարաշարժ (դինամիկ), որպեսզի կարողանա ուշադրություն գրավել: Վերը նշված հետազոտությունների արդյունքները աշխատանքային հրահանգներ չեն, դրանք պարզապես նկարագրում են այն գործոնները, որոնք լուրերն ընտրելիս ազդում են գնահատման վրա: Խոկան Խվիտֆելդտը, մասնավորապես, եզրակացրել է, որ լուրի արժեքը աճում է նաեւ այն ժամանակ, երբ դա առնչվում է քաղաքականության, տնտեսության խնդիրներին կամ պատմում է դժբախտ դեպքերի եւ հանցագործությունների մասին: Այսպիսով, առաջին էջերում կարող է տեղադրվել ինչպես շատ կարեւոր, այնպես էլ ոչ այնքան կարեւոր իրադարձությունների մասին տեղեկատվությունը:

Ժամանակակից աշխարհում լուրերն ապրանք են: Դրանք արտադրում եւ վաճառում են խոշոր հրատարակչական տները, որոնք պատկանում են հարուստ սեփականատերերի: Վերջիններս հաճախ իրենց շահերն են ունենում քաղաքական կամ տնտեսական ոլորտներում: Տեղեկատվությունը դարձել է շուկայում վաճառվող արտադրանք, եւ այն, ինչպես այլ ապրանքները, ունենում է իր գինը: Սա իր մեջ զարգացման եւ լրագրության անկախության սպառնալիք է պարունակում:

Երաշխավորվող գրականություն

Galtung, J. and Ruge, M. H. : “The Structure of Foreign News”, Journal of Peace Research, 2/1965.
 Gans, Herbert, J.: Deciding What’s News. Vintage, New York, 1979.
 Stephens, Mitchell: A History of News. Hrcourt Brace College, 1979

2

Հաղորդի կարեւորը

Լրագրողի խնդիրն է՝ հատիկը որոմից ջոկելով, հրապարակել որոմը:
Անանուն ցինիկ

Հեռագրական գործակալությունների հաղորդումները, մամուլի հաղորդագրությունները, հանդիպումների եւ համաժողովների հրավերները՝ խմբագրություններ հասնող տեղեկատվական հոսքի վտակներն են: Սրան պետք է ավելացնել աշխատանքի համար անհրաժեշտ թեմաների ինքնուրույն փնտրտուքը, որ անընդհատ կատարում են խմբագրությունների լրագրողները: Եվ այսուհանդերձ, ողջ տեղեկատվական նյութի միայն աննշան մասն է լույս տեսնում: Ի՞նչ չափանիշներով են ընտրվում լուրերը:

Կարեւորության չափանիշները

Շատ խոշոր խմբագրություններ եւ լուրերի բաժիններ մշակում են տեղեկատվական նյութի հետ աշխատելու իրենց սեփական կանոնները, որպեսզի հեշտացնեն աշխատակիցների կողմից լուրերի ամենօրյա ընտրության գործը: Իբրեւ նման մի փաստաթղթի օրինակ ես կցանկանայի ներկայացնել Շվեդական ռադիոյի նորությունների «Էխո» («Արձագանք») խմբագրության աշխատանքի սկզբունքները: Փաստաթուղթն ընդունվել է 1968 թվականին: Ահա մի փոքրիկ հատված դրանից.

«Մենք հաղորդում ենք այն ամենը, ինչ կարելի է համարվում: Այսինքն այն, ինչ նշանակալի է եւ կարող է ազդել շատերի վրա: Տեղեկատվությունը, որը մենք հաղորդում ենք, պետք է լինի ճշմարտացի եւ կարելի:

Մենք պետք է հետետողականորեն լուսաբանենք նաեւ բարդ, հաճախ էլ ընկալման համար դժվար մատչելի երեւոյթները»:^{*}

«Էխո» խմբագրության աշխատանքները կարգավորող այս փաստաթուղթն անփոփոխ գործում է արդեն երեսուն տարուց ավելի: Նրանում առանցքայինը «կարելի» բառն է: Այն լուրերը, որոնք խմբագրությունն ընտրում է հրապարակման կամ եթեր հեռարձակելու համար, պետք է քաղաքացիներին օգնեն հասկանալու երկրում եւ աշխարհում կատարվող երեւոյթները: Լրագրողը չպետք է տրվի հեշտ, բոլորին հաճելի կամ սենսացիոն լուրեր ընտրելու գայթակղությանը: Նա պետք է ձգտի լուսաբանելու այն, ինչ նշանակալի է շատերի համար: Նա պետք է կարողանա հայտնաբերել իրադարձությունների եւ դրանց՝ մարդկանց կյանքի պայմանների վրա ազդեցության կապը:

Առավել կարելի է ընթերցողներին, ունկնդիրներին, հեռուստադիտողներին տեղեկացնել պետական բյուջեի ճեղքվածքի մասին, քան թե՝ դժբախտ պատահարի: Բյուջեի ճեղքվածքի թեման շատ ավելի բարդ է եւ ավելի դժվարամարս, սակայն երկրի քաղաքացիների համար, անկասկած, այն ավելի մեծ նշանակություն ունի քան հանցագործությունը, չէ՞ որ խոսքն այն ծախսերի մասին է, որոնք իրենց վրա են վերցրել պետությունը կամ քաղաքային իշխանությունները՝ չապահովելով երկարատեւ ֆինանսավորումը: Քաղաքացիները պետք է տեղյակ լինեն այդ ոլորտում կատարվող ամեն ինչի մասին, քանի որ ժամանակի ընթացքում հենց իրենք եւ իրենց զավակներն են ստիպված լինելու հատուցելու պարտքերը:

Առավել կարելի է հաղորդել միջուկային թափոնները հորելու հիմնախնդիրների մասին, քան թե՝ խանութ թալանելու: Առավել էական է քննարկել ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցերը, քան թե՝ հանրահայտ երգչուհու անձնական կյանքը: Գերադասելի է վեր հանել բնակչության սոցիալական ապահովության հարցերը, քան թե՝ հերթական անգամ «հաճույքով» ներկայացնել քրեական պատմության արյունոտ մանրամասները:

Լրագրության ուղղված քննադատությունը

Վերջին տարիներին, ինչպես Շվեդիայում, այնպես էլ այլ երկրներում, լրագրությանն ուղղված քննադատությունը գնալով ավելի ու ավելի սուր է դառնում: Այդ քննադատությունն, առաջին հերթին, այն մասին է, որ նորությունները ներկայացվում են ավելի ու ավելի մակերեսային ու կցկտուր: ՉԼՄ-ների առետրայնացումը հանգեցնում է նրանցում պարզունակ պատկերացումների եւ ենթադրությունների գերակշռությանը: Բռնությունը, սեքսը, հանցագործությունները, դժբախտ պատահարներն ու սկանդալները հեղեղել են նորությունների թողարկումները: Տեղեկատվական գործակալությունները դառնում են

^{*} Ekopolicy

անդրազգային ընկերությունների եւ խոշոր բիզնեսի՝ շահույթով մտահոգ պարագլուխների սեփականությունը: Վերջիններիս չի հետաքրքրում ոչ լրագրության բովանդակությունը, ոչ էլ ժողովրդավարական հասարակարգում նրա դերը:

Քաղաքական մեկնաբաններն ավելի ու ավելի հաճախ են իրենց լսարանին պատմում խարդավանքների ու անդրկուլիսային պայքարի մասին եւ ավելի քիչ են անդրադառնում իսկապես կարեւոր հարցերին: Դատարկ եռուզեռն է փոխարինում լուրջ խոսքին, սենսացիաներն են բռնում գործի էության տեղը: Տնտեսության հարցերը լուսաբանող լրագրողները, հաճախ իրենք էլ չգիտակցելով, աշխատում են ի շահ խոշոր ձեռնարկությունների: Գլխից դուրս բարբաջողները հաճույքով ելույթ են ունենում հեռուստաբանավեճերում՝ մակերեսային, հաճախ էլ՝ անկիրթ մեկնաբանություններով՝ մոլորության մեջ զցելով հեռուստադիտողներին եւ խանգարելով նրանց՝ հասկանալու տարբեր երեւոյթների պատճառներն ու հետեւանքները: Իրադարձությունների նրանց սխալ, անհիմն, պոպուլիստական մեկնաբանություններն են փոխարինում խորը վերլուծություններին: ՁԼՄ-ների ուշադրության կենտրոնացումը առանձին անհատների միջեւ պայքարի վրա եւ հետաքրքրությունը սկանդալային պատմությունների նկատմամբ հանգեցնում են նրան, որ մարդիկ զրկվում են այնպիսի կարեւոր հարցերում խորամուխ լինելուց, ինչպիսիք են երկրում գործազրկության բարձր մակարդակը, քաղաքացիների սոցիալական ապահովությունը, պետական բյուջեի ճեղքվածքը եւ այլն:

Այս քննադատությանը պետք է ունկնդրել: Այն հաճախ միանգամայն հիմնավորված է փաստերով: ՁԼՄ-ների առեւտրայնացումը իր մեջ քիչ սպառնալիքներ չի պարունակում՝ դառնալով լրագրության մեջ շատ բացասական երեւոյթների պատճառ: Մենք, լրագրողներս, պետք է մարդկանց հնարավորություն տանք հանդես գալու իբրեւ ժողովրդավարական հասարակության քաղաքացիներ: Խմբագրությունները պարտավոր են իրավասու կերպով եւ ժամանակին բացատրել իրենց լսարանին երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի բարդ երեւոյթները: Հասարակությանը պետք է մատչելի լինի այս կամ այն որոշման կամ օրենսդրության մասին տեղեկատվությունը, եւ հենց ՁԼՄ-ները պետք է լինեն այն կապուղին, որով մարդիկ տեղեկություններ են ստանում քննարկվող կարեւոր հարցերի վերաբերյալ տեսակետների ու տարբեր կողմերի փաստարկների մասին:

Որոշ խմբագրություններ հաճախ պարզեցնում են իրենց խնդիրը: Այսօր նրանք պատմում են դպրոցական նախաճաշերի համար նախատեսված գումարների կրճատման հարուցած բողոքների մասին, հաջորդ օրը ցուցադրում են տեղական պոլիկլինիկան փակելու դեմ հանդես եկող ցուցարարներին: Իրադարձություններն առանց քննադատական մոտեցման, միայն տուժողների տեսակետից լուսաբանելով՝ մենք մարդկանց հնարավորություն չենք տալիս իմանալու, թե ինչն է ստիպել մյուս կողմին ընդունելու այս կամ այն որոշումը եւ ինչ փաստարկներ են բերվում հօգուտ դրա:

Public Journalism – հանրային լրագրություն

Մակերեսային եւ պոպուլիստական լրագրության դեմ բողոքները աճում են նաեւ լրագրողների շրջանում: ԱՄՆ-ում այդ բողոքը վերածվել է մի հոսանքի ձեւավորման, որը ստացել է **Public Journalism**՝ հանրային լրագրություն անվանումը: Այս հոսանքին հարող լրագրողները, երկրի քաղաքացիների հետ միասին, խնդիր են դրել՝ փորձել որոշելու հասարակության համար ամենից կարեւոր եւ օրախնդիր թեմաները, գտնելու եւ առաջարկելու իրենց բացահայտած խնդրահարույց իրավիճակից դուրս գալու հնարավոր ձեւերը:

Այդ խնդիրները քննարկվում են հասարակության ներկայացուցիչների կամ առանձին շրջանների բնակիչների հետ հանդիպումներում, որ կազմակերպում են լրագրողները: Թերթը, ռադիոկայանը կամ հեռուստաալիքը բանավեճերի եւ գործողությունների ասպարեզ են տրամադրում: Վերջին տարիներին ԱՄՆ-ի հարյուրավոր խմբագրություններ բազմաթիվ ծրագրեր են նախաձեռնել հանրային լրագրության շրջանակներում:

Մասնագիտական միջավայրում Public Journalism-ի նկատմամբ վերաբերմունքը բոլորովին էլ միանշանակ չէ: Այս երեւոյթը հերթական անգամ մեզ հասարակության մեջ մեր դերի մասին մտորումների տեղիք է տալիս: Որքա՞ն է հնարավոր եւ որքա՞ն է ցանկալի լրագրողի մասնակցությունը որեւէ հիմնախնդրի լուծմանը: Ո՞րն է այն անտեսանելի սահմանը, որով լրագրողի դերը բաժանվում է գեկուցողի, քարոզչի կամ քաղաքական գործչի դերից: Ի՞նչ պատասխանատվություն է վերցնում իր վրա լրագրողը՝ փոխելով իր դերը եւ ու՞մ շահերն է նա այդ դեպքում պաշտպանում:

Լրագրության խնդիրների շուրջ հասարակության բանավեճերը դեռեւս ավարտված չեն, առաջվա պես չկան այդ առթիվ առաջացող հարցերի պատրաստի պատասխանները: Մեր ամնասակնհայտ եւ գլխավոր խնդիրներից մեկն է՝ ձգտել հաղորդելու կարելուրը: Այն ինչ հրապարակման համար մենք ընտրել են տեղեկատվության հսկայական հոսքից, պետք է նշանակալի լինի լսարանի համար: Հենց այս պատճառով, լուրեր պատրաստող յուրաքանչյուր լրագրող, հրապարակման համար նյութեր ընտրելիս, պետք է ինքն իրեն հարցնի. «ի՞նչ է տալիս այս տեղեկությունը հեռուստադիտողին, ունկնդրին, ընթերցողին:

Լրագրողի խնդիրները

Անկախ տեղեկատվական ծառայություններն անհրաժեշտ են հասարակության ժողովրդավարական հիմքերը պահպանելու համար: Այդ գործում լրագրողներին վերապահված է մի կարելուր դեր, որի ձեւավորումն ունի երկարատեւ պատմություն եւ որի արմատները արեւմտյան ազատական մամուլի ավանդույթներում են:

1975 թվականին Շվեդիայի մամուլի գործերի հանձնաժողովի մի առաջարկությամբ, որը պաշտպանեցին Թերթերի հրատարակիչների ընկերակցությունը, Լրագրողների միությունն ու «Շվեդական ռադիո» կոնցեռնը, Շվեդիայի խորհրդարանը՝ Ռիքսդագը, ընդունեց արդի պայմաններում երկրի ՉԼՄ-ների դերի ու խնդիրների մասին հայեցակետային փաստաթուղթ: Նրանում նշված են ժողովրդավարական հասարակության մեջ զանգվածային լրատվության միջոցների չորս հիմնական գործառույթ:

Տեղեկատվության գործառույթ

ՉԼՄ-ները պետք է ներկայացնեն այնպիսի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է, որպեսզի երկրի քաղաքացիները կարողանան ճշտել իրենց դիրքորոշումը հանրորեն կարելուր հարցերի վերաբերյալ: Ժողովրդի ընտրյալներն, իրենց հերթին, պետք է հնարավորություն ունենան ՉԼՄ-ների միջոցով կանոնավորապես ստանալու տեղեկատվություն՝ տարբեր քաղաքական հարցերի շուրջ առանձին մարդկան կամ կազմակերպությունների կարծիքի մասին:

Մեկնաբանության գործառույթ

ՉԼՄ-ները պետք է՝ կամ իբրեւ հասարակության համահավաք շահերի խոսափող, կամ՝ ներկայացնելով բոլորովին անկախ շահեր, մեկնաբանեն երկրում եւ աշխարհում կատարվող իրադարձությունները:

Վերահսկողության գործառույթ

Անհրաժեշտ է, որ հասարակության շահերը ներկայացնող զանգվածային լրատվության միջոցները ստուգեն եւ վերահսկեն իշխանության մարմինների աշխատանքը:

Կապի գործառույթ

ՁԼՄ-ները պետք է նպաստեն երկրի քաղաքական, արհմիութենական եւ հասարակական կազմակերպությունների ներքին եւ միմյանց միջեւ հաղորդակցությանը:

Վերը թվարկված դրույթները դժվար է անվիճելի անվանել: Պե՞տք է, իրոք, ՁԼՄ-ներն ունենան կազմակերպությունների ու կուսակցությունների միջեւ տեղեկատվություն հաղորդող մի տեսակ կապուղու դեր, ինչպես նշված է վերջին կետում: Իհարկե, կան հրատարակություններ, որոնց կոչումը ձեռնարկությունների աշխատողների, կուսակցությունների, արհմիությունների եւ այլ կազմակերպությունների անդամների համար տեղեկություններ տարածելն է, սակայն նման թերթերի ու հանդեսների խմբագրությունների հարաբերությունները տերերի հետ մի քիչ այլ են, քան այն, որ գոյություն ունի ազատ մամուլում: Առաջինների գործառույթներն էլ էականորեն տարբերվում են անկախ լրագրության խնդիրներից:

Ինչ-որ մեկը հավանաբար կարող է ասել, թե զանգվածային լրատվության միջոցների հիմնական գործառույթն իր տերերի համար շահույթ ապահովելն է: Առեստրային հեռուստաալիքն առաջին հերթին մտահոգված է նրանով, որ իր գովազդատուների համար հեռուստադիտող ապահովի, սակայն մյուս կողմից՝ ո՞վ է ասել, թե տնտեսական շահի ձգտումը բացարձակապես անհամատեղելի է լուրջ լրագրության հետ:

Լրագրության շարադրման, մեկնաբանության ու վերահսկողության գործառույթները երբեմն բախվում են: Միեւնույն լրագրողը, թեկուզ հենց զուտ պրակտիկ նկատառումներով, չի կարող միաժամանակ կատարել բոլոր այդ երեք գործառույթները: Սակայն հասարակության մեջ լրագրողի խնդիրները եւ, այսուհանդերձ, կցանկանալի ձեւեր պետք է հենց այսպես ստուգել, շարադրել, մեկնաբանել:

Ստուգել

Լրագրության վերահսկողության գործառույթը խախտումներն ու սկանդալները բացահայտելն է: Լրագրությունը հասարակության մեջ ներկայացնում է քաղաքական կառույցների, արդյունաբերական աշխարհի եւ կազմակերպությունների հակակշիռը: Շվեդիայում ՁԼՄ-ներն անվանում են երրորդ պետական իշխանություն (խորհրդարանից եւ կառավարությունից հետո), իսկ շատ ուրիշ երկրներում՝ չորրորդ իշխանություն:

Չարաշահումների բացահայտումը օգտակար է ժողովրդավարության համար: Դա միայն ուժեղացնում է նրա դիրքերը: Սկանդալները կարող են լիցքաթափել հասարակության լարված իրավիճակը: Շատ չարաշահումներ, խարդախումներ եւ խախտումներ կանխվում են հենց թերթերի էջերում կամ հեռուստաէկրաններին հայտնվելու հանդեպ պաշտոնյաների վախով: Ժողովրդավարության լծակներից մեկը մամուլում, ռադիոյով եւ հեռուստատեսությամբ անկարգությունները քողազերծելու (անհրաժեշտության դեպքում՝ ծպտյալ մնալով) հնարավորությունն է: Սկանդալներն ու բացահայտումները շատերի մոտ կարող են անբարյացկամություն ու թշնամանք առաջացնել, սակայն, ընդամիս, չպետք է մոռանալ, որ հասարակության տարբեր կառույցների աշխատանքի անկախ հսկողությունը ժողովրդավարության հիմքն է:

Քննադատաբար տրամադրված լրագրողը ձգտում է բացահայտել եւ ի դերել հանել այն, ինչ մեկ ուրիշը փորձում է թաքցնել: Նա իրականությունը համեմատում է բարձրագույն խոսքերի եւ վերամբարձ ճոռոմաբանության հետ: Տնօրենը պնդում է, թե դպրոցական նախաճաշերը նախկինի համեմատ ամենեւին էլ վատը չեն՝ չնայած հատկացվող միջոցների կրճատմանը: Այդպե՞ս է իրականում: Ի՞նչ են մտածում այդ մասին իրենք՝ աշակերտները,

բժիշկ ֆիզիոլոգը, ճաշարանի աշխատողները: Լրագրողը պետք է փաստեր հայթայթի, վերլուծի դրանք, տեսնի պատճառներն ու հետևանքները, գնահատի արդյունքները:

Սակայն քննադատությամբ ու մերկացումներով չափազանց հրապուրվելը կարող է հանգեցնել նրան, որ բազմաթիվ սկանդալային եւ սենսացիոն հաղորդումները թերթերի էջերից ու հեռուստատեսության հարյուրամյակից դուրս կմնան վերլուծական նյութերն ու մեկնաբանությունները: Քաղաքական գործիչների կողմից ծառայողական վարկային քարտերը չարաշահելու նոր մերկացնող փաստերի հետեւից ընկնելով՝ լրագրողները կարող են աչքաթող անել կարեւոր իրադարձությունների կամ երեւոյթների մասին հաղորդագրությունները, ինչը հասարակությանը զրկում է երկրի տնտեսության մեջ եւ քաղաքական կյանքում կատարվող դեպքերին հետեւելու հնարավորությունից: Բիլ Բլինթոնի եւ Մոնիկա Լիվինսկու սիրային կապի մեղադրանքների մասին սկանդալն ամերիկյան ՉԼՄ-ների կողմից անհավանական չափերով ուռճացվեց: Սա հանգեցրեց նրան, որ շատ կարեւոր իրադարձություններ հասարակության համար համարյա աննկատ մնացին:

Շարադրել

Ջանգվածային լրատվության միջոցները պետք է ոչ միայն մերկացնեն, այլև արտացոլեն երկրի եւ աշխարհի կյանքի իրադարձություններն ու երեւոյթները՝ լսարանին կատարվածի մասին հաշվետվություն ներկայացնելով: Թղթակիցն իր ընթերցողներին, ունկնդիրներին եւ հեռուստադիտողներին հաղորդում է.

- Այսօր տեղական վարչակազմը որոշում է ընդունել...
- Երեկ տեղի ունեցավ տեղական քաղաքական գործիչների հանդիպումը գործարարների հետ...
- Վաղ առավոտյան հրդեհ է բռնկվել այսինչ փողոցի այնինչ շենքում, կան...

Նման լրագրությամբ զբաղվող լրագրողները հազվադեպ են արժանանում «Ոսկե գրիչ» մրցանակին կամ հետաքննող լրագրողների («խլուրդների») ընկերակցության պարգևավճարին, սակայն, այսուհանդերձ, նրանց աշխատանքը չափազանց կարեւոր է: Ստանալով զանազան աշխատանքների մասին հաշվետվություններ՝ քաղաքացիները կարող են հետեւել այն ամենին, ինչ կատարվում է հասարակության մեջ: Լրագրողը, որ պատմում է այս կամ այն միջոցառման մասին, պետք է ձգտի կատարվածի կամ ասվածի վերաբերյալ տեղեկատվությունը տեղ հասցնել հնարավորինս բարեկիրթ: Սակայն այն խմբագրությունները, որոնք միայն պասիվ կերպով վերապատմում են խորհրդարանական անվերջ բանավեճերը կամ պաշտոնական հաղորդագրությունները, պարզունակացնում են իրենց խնդիրը՝ մոռանալով լրագրության կարեւոր՝ վերահսկողական գործառույթը: Պատմելու եւ բացատրելու ցանկությունը երկրորդ պլան է մղում ստուգելու եւ բացահայտելու խնդիրը:

Մեկնաբանել

Մեկնաբանությունները մեր աշխատանքի անքակտելի մասն են: Մեկնաբանը փորձում է նկատել առանձին երեւոյթների միջուկ կապը, բացատրում է, թե ինչ է թաքնված այս կամ այն իրադարձության կամ որոշման հետեւում: Սակայն մեկնաբանությունը լրագրողի անձնական կարծիքը չէ, դա մի փորձ է՝ բացատրելու, թե ինչու կատարվեց այս կամ այն իրադարձությունը: Լրագրողը չէ, որ պետք է որոշի՝ կառուցե՞լ, թե՞ չկառուցել Էրեսունի նեղուցի կամուրջը, սակայն նա կարող է լսարանին բացատրել, թե ինչու կամրջի կառուցումը, չնայած բազմաթիվ բողոքներին, սկսվեց:

Սակայն երբեմն, լրագրողը, վերլուծելով իրադարձությունները՝ կարող է իր մեկնաբանություններով լսարանից թաքցնել իրականությունը: Ամենեւին էլ ոչ բոլոր մեկնաբաններին է հաջողվում դիմակայել «այսպես պետք է անել»- ի տիպի դատողություններին տրվելու գայթակղությանը՝ փոխանակ վերլուծելու, թե իրականում ինչ է

կատարվել ու ինչու: Հավասարկշռությունը պահպանելու միջոցներից մեկը քննարկվող հարցի էությանը հավատարիմ մնալն է:

Տեսնել հեռանկարները

Ո՞ր լուրն է ավելի կարեւոր: Ինչպե՞ս «չկորցնել գլուխը» տեղեկատվության հսկայական հոսքի մեջ: Շատ լրագրողներ փորձում են իրենք որոշել, թե ինչն է կարեւոր եւ նշանակալի անձամբ իրենց եւ իրենց լսարանի համար: Որոշակի ոլորտի (աշխարհագրական կամ առարկայական) հարցերով մասնագիտացած լրագրողը պետք է գտնի իր ամեն մի հաղորդագրության «կարմիր թելը» եւ թեման: Կարեւոր է, որ նա չկառչի լուրերի գնահատման ինչ-որ ժամանակ իր իսկ սահմանած կարգից, այլ հետետողականորեն փնտրի այն տեղեկատվությունը, որը նշանակալի է շատերի համար:

Նա, ով լուսաբանում է տեղական իրադարձությունները, պետք է հստակ պատկերացում ունենա, թե որ հարցերն են շրջանի (մարզի) բնակչության համար առավել կարեւոր եւ օրախնդիր, ինչ են նրանք քննարկում, ինչ կարեւոր որոշումների ընդունում է սպասվում, ինչպես են քաղաքի (մարզի, շրջանի) ձեռնարկությունների գործերը, կբավարարի, արդյոք, դպրոցներին ուսումնական տարվա համար հատկացված փողը:

Աշխատելով իբրեւ քաղաքական մեկնաբան՝ ես ամեն տարի, խորհրդարանական նստաշրջանները սկսվելուց ոչ շատ առաջ, փորձում էի կռահել, թե Ռ-իքսոսագի առաջիկա աշխատանքներում որ հարցերը կարող են ամենակարեւորները լինել: Ես կարդում էի, խորհում, քննարկում այդ հարցերն ուրիշների հետ եւ այդպիսով ինքս ինձ համար որոշում էի աշխատանքիս թեմատիկան: Մի տարի ես մվիրեցի պետական բյուջեի ճեղքվածքի ուսումնասիրությանն ու լուսաբանմանը, հաջորդ տարի ինձ հետաքրքրեց Եվրամիությանը Շվեդիայի անդամակցության թեման: Բնակչության զբաղվածությունը, էներգամատակարարումը, քաղաքացիների սոցիալական ապահովագրությունը այն թեմաներն են, որոնք ես որոշակի ժամանակաշրջաններում ինձ համար առանձնացրել եմ իբրեւ առաջնային: Որոշելով դրանք՝ ես փորձում էի կառչելու տեղեր եւ քայլեր փնտրել, որպեսզի տարբեր կողմերից լուսաբանեմ այդ խոշոր եւ կարեւոր թեմաները:

Աշխատանքի այս մեթոդի հիմքն է՝ ինքնուրույն մտածել եւ գործընկերների հետ քննարկել, թե լսարանն ինչը կարեւոր կհամարի ժամանակի որեւէ հատվածում, ասենք՝ առաջիկա ամիսներին: Այս ուղղությամբ արդեն մեկ քայլ ավելի են արել Public Journalism-ի կողմնակիցներն ԱՄՆ-ում: Խոշոր հրատարակչությունները, հեռուստառադիոկայանները բազմիցս կազմակերպել են քաղաքացիական հավաքներ կամ անց են կացրել հասարակական կարծիքի հարցումներ, որպեսզի վեր հանեն կենսական հարցերը:

Խոսքն, այսպիսով, այն մասին է, որ մենք իրավունք ունենք մեր աշխատանքի համար ընտրելու դժվար եւ հոգեմաշ թեմաներ, սակայն դա բոլորովին չի նշանակում, թե դրանք ներկայացնելն էլ պետք է ձանձրալի լինի: Այն մարտահրավերը, որ նետում է մեզ մեր մասնագիտությունը այս է. գրավիչ ու հետաքրքիր ներկայացնել ծայրահեղորեն ձանձրալի թեման, ասենք՝ բյուջեի դեֆիցիտը:

Լուրերի գնահատումը

Ով չի համաձայնի, որ լուրերի ընտրությունն ու գնահատումը լրագրողի ամենօրյա գործունեության ամենաբարդ կողմերից են: Այս կամ այն խմբագրության՝ լուրեր ընտրելու առանձին որոշումների քննադատությունը հաճախ միանգամայն արդարացի է: Առաջին գլխում հիշատակվեց տեղեկություններ ընտրելու ընթացակարգի ուսումնասիրությանը վերաբերող հետազոտությունը: Չնայած այդ գործի բարդությանը՝ մենք, այսուհանդերձ, կփորձենք նշել մի քանի չափանիշներ, որոնք կարելի է հաշվի առնել աշխատանքում:

Լուրը (նորությունը) պետք է լինի.

Թարմ: Ինչքան հրատապ է լուրը, այնքան մեծ է նրա արժեքը: Ինչքան շատ ժամանակ է անցնում իրադարձության պահից, այնքան թուլանում է մարդկանց հետաքրքրությունը դրա նկատմամբ: Նույնիսկ աննշան լուրը կարող է նշանակալի դառնալ՝ ստվերելով ծրագրի գլխավոր նորությունը, եթե այն լուսաբանում է deadline-ից (վերջնաժամկետ – նյութը համարին հանձնելու կամ ռադիո եւ հեռուստածրագրի եթերին պատրաստ լինելու վերջին ժամկետը): Մակայն, որպես կանոն, լուրերի արդեն հաջորդ թողարկմանն այն խամբում է, քանի որ դառնում է քիչ հրատապ ու տեղափոխվում է երկրորդական դիրք՝ տեղը զիջելով գլխավոր լուրին եւ այլ նորություններին:

Մինչ այդ անհայտ: Մարդկանց լայն շրջանակներին անհայտ երեւոյթի բացահայտումն, անկասկած, նորություն է, նույնիսկ եթե իրադարձությունը կատարվել է դրանից որոշ ժամանակ առաջ: Ելնելով այս չափանիշից՝ կարելի է լուր համարել նաեւ համեմատաբար հին իրադարձությունները եւ երեւոյթները, պայմանով, որ դրանք կամ դրանց հանգամանքները հասարակությանն անհայտ են:

Լսարանին մոտիկ: Այն, ինչ մոտ է մեզ աշխարհագրական տարածքով կամ մշակութային առումով, միշտ ավելի մեծ հետաքրքրություն է առաջացնում, քան ինչ-որ տեղ հեռվում կատարվողը: Լուրի արժեքը հակառակ համեմատական է լսարանի եւ իրադարձության վայրի միջեւ ընկած տարածությանը: Որքան մեծ է այդ տարածությունը, այնքան նվազում է լուրի արժեվորությունը: Հնդկաստանցի ռադիոլսողի համար այն լուրը, թե Կալկաթայի մոտ տեղի է ունեցել գնացքի աղետ, որի հետեւանքով քսան մարդ է զոհվել, ավելի հետաքրքիր ու նշանակալից է, քան այն, որ Բալթիկ ծովում մարդատար լաստանավ է խորտակվել. ողբերգություն, որի հետեւանքով հարյուրավոր զոհեր են եղել:

Արտասովոր: Ինքնաթիռի աղետի մասին հաղորդումը լուր է, իսկ այն, որ ինքնաթիռը թռչել է՝ ոչ: Ծանր կծած մարդու մասին պատմությունը ավելի մեծ նորություն է, քան մարդուն կծած շան մասին պատմությունը: Արտասովոր, հազվադեպ, զարմանալի իրադարձությունները կարող են լավ լուրեր դառնալ՝ ունենալով որոշակի զվարճալիություն, եթե նույնիսկ լուր հասկացությունն, իբրեւ այդպիսին, ոչինչ ընդհանուր չունի զվարճանքի հետ:

«Լճագած»: Մենք հաճախ ենք կուրորեն ուշադրությունը կենտրոնացնում մեզ շրջապատող աշխարհի ամենատարբեր փոփոխությունների վրա՝ մոռանալով, որ անփոփոխությունը, լճացումը կամ տեսականությունը նույնպես կարող են կարելուր լուրեր լինել: Տարիներ շարունակ ջրամբարի մեջ թունավոր նյութեր արտանետող գործարանը կամ մաքրման կայանը լուրի նյութ են, որի արժեքը չի նվազում, քանի դեռ խախտումները վերացված չեն: Հանձնաժողովի ստուգումների արդյունքները ոչ մեկի կողմից ուշադրության չարժանացնելը հրապարակման արժանի փաստ է:

Անճնավորված: Հետաքրքիր եւ հաճելի մարդու մասին պատմությունը շատ ավելի գրավիչ է, քան ձանձրալի ու սովորական մարդու մասինը: Բոլորը գիտեն, որ նշանավոր մարդիկ հասարակության համար ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քան անհայտ անձինք: Մակայն բոլորովին էլ պարտադիր չէ, որ առհավետ այդպես լինի: Փնտրեք նոր վառ անհատներ:

Գրավիչ: Լուրը պետք է հետաքրքրություն առաջացնի նրանց մոտ, ում համար նախատեսված է: Տեսական ընթացք ունեցող իրադարձությունը կարելի է նկարագրել նոր տեղեկություններ ստանալուն զուգընթաց, որպեսզի լսարանը հնարավորություն

ունենա քայլ առ քայլ հետեւելու դեպքերի զարգացմանը: Այն լուրը (սյուժեն), որի ելքը մինչեւ վերջին պահը հայտնի չէ, լրագրողներն անվանում են cliff hanger (cliff hanger – գրավիչ հեռուստա կամ ռադիո սերիալ, որը լարվածության մեջ է պահում լսարանը):

Սեփական (խմբագրական): Սեփական նորություն հայթայթած խմբագրությունը կամ լրագրողը հաճախ այն գերադասում են այլ աղբյուրներից ստացվածներից: Շատ լրագրողներ առաջնորդվում են որեւէ տեղեկատվական նյութի առաջին եւ միակ սեփականատերը լինելու ցանկությամբ, իսկ խմբագրությունները գերադասում են հեռուստատեսային կամ ռադիոէթերում, կամ էլ իրենց թերթերում տեղ հատկացնել հենց այդպիսի լուրերին: Սակայն սեփական (խմբագրական) լուրերի հետեւից ընկնելը չպետք է փակի այլ հաղորդումների ճանապարհը: Յավոք, շատ խմբագրություններում նկատվում է «օտար» լուրերի անտեսման միտում, այդ պատճառով հաճախ դրանք հայտնի են դառնում միայն սահմանափակ թվով ընթերցողների, ունկնդիրների ու ռադիոլսողների, իսկ լայն հասարակության համար համարյա աննկատ են մնում:

Կարեւոր: Նորություններն ընտրելիս լրագրողը չպետք է կուրորեն ապավինի միայն իր զգացումներին, այլ պետք է հաշվի առնի նաեւ առողջ բանականությունը: Որպեսզի լրագրությունը կարողանա կատարել ժողովրդավարական հասարակությունում իրեն վերապահված դերը, լրագրողը պետք է ձգտի լուսաբանելու այն ամենը, ինչն իրոք կարեւոր է մարդկանց, նրանց կենսապայմանների, երկրում եւ աշխարհում կատարվող իրադարձություններն ընկալելու եւ մեկնաբանելու համար:

«Ձկնիկ լող տուր, լող արա...»

Լուրերն ընտրողների գնահատումը պետք է զգալիորոն համապատասխանի այդ լուրերը սպառողների ակնկալիքներին (սպասումներին): Այն խմբագրությունները, ովքեր չեն կարողանում լսարանի պահանջումներին համապատասխանող տեղեկատվական հոսանքում հմտորեն նավարկել, շատ արագ կորցնում են իրենց գրավչությունը հասարակության համար: Հենց այս գործոնն է մեզ հաճախ խանգարում վերանայելու լուրերի գնահատման եւ ընտրության գոյություն ունեցող կարգը. ո՞վ կցանկանա կորցնել իր հանդիսատեսի, ունկնդրի, ընթերցողի համակրանքը:

Պատկերացնենք, որ տեղեկատվական հոսքը մի գետ է, իսկ լուրերը՝ ձկներն ու ձկնիկներն են: Առաջին հերթին մենք պետք է որսանք այն ձկները, որոնց համին մեր լսարանն արդեն սովոր է, որոնց եփելու եւ ուտելու ձեւը նա գիտի: Բոլոր անծանոթ տեսակները կխտտանվեն: Եթե մեր լսարանը վարժվել է իշխանին, նշանակում է մենք պետք է հենց իշխան որսանք՝ ընդամին օգտագործելով այդ նպատակի համար անհրաժեշտ ձկնորսական սարքեր:

Իմ կանխատեսումներով հրապարակվող եւ եթեր հեռարձակվող տեղեկատվության մեծ մասը պետք է լինեն այսպես կոչված ակնկալվող լուրերը, այլապես հեռուստադիտողներն ու ռադիոլսողները պարզապես կդադարեն ծրագիրն ընդունել իբրեւ վերջին լուրերի թողարկում: Ֆրանսիայում «Le Provençal» օրաթերթի բովանդակության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ հրատարակության տեղեկատվության 80 տոկոսը համապատասխանում էր թերթի ընթերցողների ակնկալիքներին: Ինքնաթիռի աղետի մասին հաղորդագրությունն անպայման պետք է տեղ գտնի լուրերի առաջիկա թողարկման մեջ: Կառավարության պաշտոնակալությունը պետք է դառնա առաջին էջի լուր: Ձեռնարկության ստացած խոշոր պատվերը, գործարանի նոր գլխավոր տնօրենի նշանակումը եւ նման այլ լուրերը պետք է արտացոլվեն գոնե մի փոքրիկ հոդվածում: Այն հրատարակությունները, հեռուստաալիքներն ու ռադիոկայանները, որոնք չեն պահպանում այս չգրված օրենքը, կորցնում են իրենց լսարանի վստահությունը:

Եվ այսուհանդերձ, մի գեղեցիկ օր պրպտող, տաղանդավոր լրագրողը հանկարծ կպարզի, որ կողակն էլ ոչ միայն ուտելի է, այլև բավականին համով: Մեկ ուրիշը գետի վտակներում կհայտնաբերի սաղմոնաձկան հազվադեպ համեղ տեսակներ: Իսկ երրորդն էլ քարերի տակ այլանդակ դողոշ կգտնի: Մեր մասնագիտության ամենագրավիչ կողմերից մեկը առօրեականում նորը տեսնելը, ուրիշների համար աննկատ մնացածը նկատելն է:

Մեր լսարանի ավանդական ակնկալիքների մասին խոսակցությունները շատերին անհամ եւ նույնիսկ անընդունելի կթվան. «ի՞նչ, ընդառաջ գնալ լսարանի՞ն. երբեք...»:
Սակայն պատկերացրեք, թե ինչպես կարելի է օգտագործել մեզ մնացած տոկոսը: Հենց այդ 20 տոկոսն է բազմազանության անսահման հնարավորություններ տալիս: Տեղեկատվության եւ լուրերի թողարկման շղթայի մի օղակ լինելն առաջին հերթին նշանակում է ապահովել բոլորի համար սովորական ձկնատեսակների որսը: Այս անելուց հետո հանգիստ խղճով կարող ենք գետի վտակներում եւ հորձանուտներում զբաղվել հազվադեպ ձկնատեսակների սպորտային որսով:

Երաշխավորվող գրականություն

Fallows James: Breaking the News, How the Media Undermine American Democracy. Pavtheon Books, New York 1966.
Meritt Davis "Buzz": Public Journalism & Public Life, Why Telling the News is Not Enough. Lawrence Erlbaum Associates Publishers, 1995.

Rosen Jay and Meritt Davis: Public Journalism: Theory and practice. Kettering Foundation, 1994.

Chanel Alain: Penser la formation des journalistes. Université Robert Schuman, Strasbourg, 1996.

Iyenger Shanto: Is anyone responsible? How Television Frames Political Issues. University of Chicago Press, 1995.

Schudson Michael: The Power of News. Harvard University Press, 1955.

3

Աշխատիր պլանավորվա՛ծ

Առանց լրագրողների, որոնք իմանում են, թե ինչը որտեղ է կատարվել ու նկարագրում են իրադարձությունները, եւ առանց խմբագրությունների, որոնք կազմակերպում են տեղեկատվության հավաքումն ու դրա տարածումը, լուրերը երբեք լույս չէին տեսնի:

Որպես կանոն, լրագրության մեջ ամեն ինչ հանգում է իրադարձություններին հետեւելու եւ դրանք վերահսկելու բավականին առօրեական պրակտիկային: Ամերիկյան լրագրողների ժարգոնում ընդունված է ասել, որ յուրաքանչյուր լրագրող ունի իր beat-ը՝ տեղամասը, որը միշտ հսկողության տակ է պահում, ինչպես ոստիկանների կարգախումբը, որը պարեկություն է անում իր տեղամասում: To cover a beat – հենց նշանակում է պարեկություն անել իր տեղամասում:

Ոստիկանության հետ շփումները

To cover a beat –ը ըստ էության նույնն է, ինչ պլանավորված աշխատելը: Աշխատանքի նման մեթոդի տիպիկ օրինակ է ոստիկանության հետ ամենօրյա շփումը հեռախոսով: Շվեդական խմբագրություններում սովորաբար այդ աշխատանքը հանձնարարվում է սկսնակներին, թեպետ այն հաջողությամբ գլուխ բերելու համար անհրաժեշտ է լինել բավականին փորձառու եւ թրծված լրագրող: Մի քանի տարի շարունակ ես սեփական մաշկիս վրա զգացել եմ այդ գործի բոլոր դժվարությունները:

Լինելով սկսնակ լրագրող՝ ես ամեն օր, նախապես սահմանված սխեմայով զանգահարում էի մեր ռադիոկայանի ընդգրկման գոտու ոստիկանական բոլոր տեղամասերի հերթապահ պարեկախմբերի պետերին:

Եվ ամեն էլ օր ես միեւնույն հարցն էի տալիս. «Դե, ի՞նչ նոր բան կա այսօր»: Այդ հարցի պատասխաններն ինձ գողությունների, դժբախտ դեպքերի եւ հրդեհների մասին կարճ հաղորդագրություններ պատրաստելու տվյալներ էին տալիս: Տեղական ՋԼՄ-ների նորությունների բաժինների եւ խմբագրությունների աշխատակիցների հետ ամենօրյա զրույցները մի տեսակ սովորույթ են դարձել ոստիկանների համար, եւ վերջիններս լավագույնս յուրացրել են լուրերն ընտրելու հմտությունները:

Սակայն երբ միեւնույն զբաղմունքը միօրինակորեն կրկնվում է ամեն օր, ապա հեշտությամբ կարող ես զգոնությունը բթացնել: Ոգեշնչված լրագրողին առաջնորդում է սեփական հետաքրքրասիրությունն ու հարցասիրությունը. դրանք նրան օգնում են հաղթահարելու ոստիկանություն զանգահարելու ամենօրյա արարողության հարուցած ձանձրույթը: Նա, ով կուրորեն հետետում է ինչ-որ ժամանակ սահմանված կարգին, հաճախ կարող է ձեռքից բաց թողնել հետաքրքիր ու կարեւոր իրադարձությունները: Ես այդ զգացել եմ սեփական կաշվիս վրա՝ խմբագրությունում մի քանի տարի աշխատելուց հետո:

Մի անգամ, ոստիկանական տեղամասեր զանգահարելու ընթացքում, Նորթելի հերթապահին ինձ տեղեկացրեց, որ այդ քաղաքի մոտակայքի փոքրիկ թռչադաշտ է մեկնել ոստիկանական կարգախումբը՝ հրշեջների եւ շտապ օգնության ուղեկցությամբ: Հերթապահը պատմեց, որ թռչաքի պահին մի փոքրիկ մարզական ինքնաթիռի անիվների անսարքություն է հայտնաբերվել, ինչը նշանակում էր, որ ինքնաթիռը վայրէջք կատարելիս կարող էր շրջվել:

և Դե՞, իսկ ի՞նչ եղավ հետո, և հարցրի ես հերթապահին:

Պարզվեց, որ ամեն ինչ բարեհաջող է ավարտվել: Մինչ ինքնաթիռը պտտվում էր թռչադաշտի վրա, ուղեւորներից մեկը կարողացել էր ձողով բացել անիվը: Ոստիկանները, հրշեջները եւ շտապ օգնության բժիշկները հանգիստ տուն էին վերադարձել. ինքնաթիռը վայրէջք էր կատարել:

և Իսկ ի՞նչ կասեք սպանությունների կամ այլ հանցագործությունների մասին, և ես մի ավանդական հարց տվեցի ես:

Ոչ այդ օրը Նորթելում սպանություններ կամ գողություններ չէին արձանագրվել: Ես կարող էի հանգիստ գնալ տուն: Ինչն էլ արեցի՝ որոշելով չհաղորդել օդանավի չկայացած աղետի իմ կարծիքով անհետաքրքիր լուրը: Իսկ «Դազենա Նյուհեթեր» խոշոր օրաթերթի թղթակիցը մեկնել էր դեպքի վայր եւ գրել հետաքրքիր մի ռեպորտաժ:

Նորությունների պլանավորված փնտրտուքը, որի օրինակ է ոստիկանության հետ հեռախոսային շփումը, ապահովում է տեղեկատվության ամենօրյա հոսքը խմբագրություն: Դա ամուսնի չէ, այլ ջանադրաբար փորված, խորահուն ջրանցք:

Որոշիր սահմանները

Տեղական թերթի թղթակիցը, ինչպես որ լրագրող-միջազգայնագետը, պետք է հստակորեն պատկարեցնի իր ուշադրության գոտում գտնվող տարածքների աշխարհագրական սահմանները: Ի՞նչ տեղամաս է այդ քաղաք է, թե՞ շրջան, երկիր է, թե՞ մի ամբողջ աշխարհամաս: Սահմանանշումը խմբագրության քաղաքականության մասնակի արտացոլումն է. ո՞ր տարածքում են գտնվում մեր ունկնդիրները, հեռուստադիտողները, ընթերցողները եւ հավանական գովազդատուները: Սակայն աշխատանքի ոլորտի որոշումը պակաս կարեւոր չէ նաեւ հենց լրագրողի համար: Չարժե նվազեցնել «Ձեռք չտաս: Սա իմն է» արտահայտության նշանակությունը: Թերեւս ոչ ոք «իր» սահմաններն այնքան խանդով չի պահպանում, որքան արտասահմանյան թղթակիցները: Նույնիսկ այն փորձառու միջազգայնագետները, ում սպասարկման գոտին մի ամբողջ աշխարհամաս է, սեփական խմբագրության առաջադրանքով մի այլ թղթակցի ժամանումն «իրենց» գոտի լուրջ սպառնալիք են համարում:

Մեփական գործունեության սահմանները նշելու մյուս եղանակը աշխատանքի թեման կամ մասնագիտացումը որոշելն է: Յուրաքանչյուր խմբագրությունում աշխատանքն, այս կամ այն չափով, բաշխվում է ըստ թղթակիցի կամ լրագրողների հետաքրքրությունների ու գիտելիքների:

Աղբյուրներ՝ ու գտիր

Երբ թղթակցի գործունեության աշխարհագրական սահմանները կամ նրա աշխատանքի թեմաները որոշվել են, ժամանակն է որոշել նաեւ, թե տեղեկատվության ինչ հնարավոր աղբյուրներ կան այդտեղ: Խոսքը հասարակության համար նշանակալի տեղեկատվության եւ բանավոր, եւ գրավոր աղբյուրների մասին է:

Տեղական թերթի, հեռուստակայանի կամ ռադիոկայանի խմբագիրը պետք է իմանա, թե ինչ մարմիններ կամ անձինք կարող են տվյալներ ունենալ քաղաքում կամ մարզում կատարվող իրադարձությունների մասին: Խոսքը ոչ միայն տեղական ոստիկանական բաժանմունքի կամ հրշեջ ծառայության մասին է, այլեւ մի ամբողջ շարք հիմնարկների ու կազմակերպությունների: Ե՞րբ եւ որտե՞ղ են կայանալու քաղաքային խորհրդի եւ նրա առանձին կոմիտեների նիստերը, ինչպե՞ս են ընթանում քննարկումները, ո՞վ է կոնկրետ տեղյակ այդ հարցերից, ինչո՞ւ ընդունվեց հենց այդ որոշումը: Տարբեր ձեռնարկություններում, կազմակերպություններում, միավորումներում ումի՞ց կարելի է տեղեկություններ հայթայթել, ո՞ր պաշտոնյայի հետ է անհրաժեշտ կանոնավոր կապ հաստատել՝ դատախարակական մարմիններում, դպրոցներում, հիվանդանոցներում, մանկական հիմնարկներում կատարվող իրադարձությունների զարգացմանը հետետելու համար: Տեղեկատվության հնարավոր աղբյուրների ցանկը կազմելու համար պետք է գտնել այդ հարցերի պատասխանները:

Գրավոր աղբյուրներ

Շվեդիայում ՉԼՄ-ների համար տեղեկատվության մատչելիությունը երաշխավորվում է կարգավորվում է սահմանադրությամբ: Հիմնական օրենքում դրույթներ կան տեղեկատվություն ստանալու ազատության, տեղեկատվության աղբյուրի գաղտնի մնալու եւ քաղաքացիների համար պաշտոնական փաստաթղթերի մատչելիության (հրապարակայնության սկզբունք) մասին: Սրանք, ըստ էության, ապահովում են տեղեկատվության անընդհատ հոսքը խմբագրություններ: Հիմնարար սկզբունք է այն, որ շվեդական կառավարական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ մուտք գործող եւ նրանցից դուրս եկող բոլոր գրավոր փաստաթղթերը (նամակներ, հաշվետվություններ, արձանագրություններ եւ այլն) մատչելի են հասարակության համար: Ոչ միայն լրագրողը, այլեւ ցանկացած քաղաքացի իրավունք ունի ծանոթանալու որեւէ հաստատությունում գրանցված նամակներին կամ փաստաթղթերին՝ առանց նշելու իր անունը եւ անգամ առանց բացատրելու փաստաթղթի նկատմամբ իր հետաքրքրության պատճառը: Շվեդիայում հրապարակայնության սկզբունքը սահմանվել է դեռեւս 1766 թվականին՝ մամուլի ազատության մասին առաջին օրենքում: Այն ժամանակ դա եզակի էր, բայց այսօր էլ քիչ քիչ երկրներում կա սահմանված նման դրույթ:

«Կարծիքների ազատ փոխանակման եւ տեղեկատվության համակողմանի տարածման նպատակով յուրաքանչյուր քաղաքացի պետք է իրավունք ունենա ծանոթանալու պաշտոնական փաստաթղթերին»:

«Մամուլի ազատության մասին» օրենք, գլուխ 2, § 1

Հրապարակայնության սկզբունքը ցանկացած անձի հնարավորություն է տալիս ծանոթանալու հանրորեն մատչելի որակված փաստաթղթերին: Այդպիսին են համարվում հիմնարկներ մուտք եղած կամ նրանցում ստեղծված այն բոլոր պաշտոնական փաստաթղթերը, որոնք «Գաղտնիության մասին» օրենքին համապատասխան չեն գնահատվել իբրև գաղտնի:

Սակայն օրենքների առկայությունը դեռևս չի նշանակում, թե լրագրողները կամ քաղաքացիները միշտ կարող են առանց խոչընդոտի ստանալ իրենց հետաքրքրող փաստաթուղթը: Թափանցիկության ավանդույթները շվեդական հասարակության մեջ շատ ուժեղ են, բայց, այդուհանդերձ, լինում են դեպքեր, երբ հիմնարկն այս կամ այն փաստաթուղթը թղթակցին չտրամադրելու իր հիմնավորումներն է ունենում:

Իրեն հետաքրքրող փաստաթուղթը փնտրելիս լրագրողը կարող է օգտվել ելքի եւ մուտքի փաստաթղթերի գրանցման մատյաններից, որպիսիք կան շատ հաստատություններում: Լրագրողը կարող է նաեւ պարզապես հաշվառումը վարող պաշտոնյայից խնդրել ծանոթացնելու այս կամ այն անձի ուղարկած նամակներին:

Պաշտոնյաները պարտավոր են գաղտնի չհամարվող փաստաթուղթը տրամադրել «անմիջապես կամ ամենակարճ ժամկետում», բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անելու «էական խոչընդոտներ կան»*: Արդարադատության նախարարը, ում գերատեսչությունը հսկում է «Մամուլի ազատության մասին» եւ «Խոսքի ազատության մասին» օրենքների պահպանումը, իբրև կանոն, չի խնայում այն հաստատություններին, որոնք ձգձգում են փաստաթղթերի տրամադրումը կամ քաշքշուկ են սարքում: Ըստ էության, փաստաթուղթը պետք է տրամադրվի մի քանի բույսի ընթացքում, սակայն առանձին դեպքերում հնարավոր է մեկ կամ մի քանի օրվա հետաձգում:

«Հասարակական փաստաթուղթը ստանալու պահանջը պետք է քննարկվի անհապաղ: Փաստաթուղթը տրամադրելու մասին ծանուցումը պետք է արվի նույն օրը, հետաձգումը թույլատրելի է միայն այն դեպքերում, երբ փաստաթղթի բովանդակության, նրա բնույթի կամ ընդգրկման ոլորտների պատճառով պաշտոնյաները կարիք ունեն որոշում ընդունելու՝ նշված փաստաթուղթը մատչելի^o է հասարակությանն ու ենթակա է^o հրապարակայնության, թե^o ոչ»**:

Բանավոր աղբյուրներ

Եվ այսուհանդերձ, լրագրողի աշխատանքի համար հաճախ առավել կարեւոր են լինում բանավոր աղբյուրները: Հեշտ ըմբռնելի եւ համընդգրկուն տեղեկատվությունը հազվադեպ է լինում գրավոր: Թղթակիցը միշտ կարիք է զգում գտնելու նրան (կամ նրանց), ով կարող է (կամ ովքեր կարող են) մեկնաբանել որեւէ փաստաթղթի բովանդակությունը, նկարագրել իրադարձության նախապատմությունը եւ հայտնել, թե լրացուցիչ տեղեկությունների համար ում կարելի է դիմել: Որպես կանոն, յուրաքանչյուր ձեռնարկությունում, հաստատությունում կամ կազմակերպությունում կան մարդիկ, ովքեր կարող են օժանդակել թղթակցին՝ գտնելու տեղեկատվություն: Նրանցից ոմանք պատրաստ են օգնելու ծառայության բերումով, մյուսները՝ օգտվելով տեղեկատվություն տալու ազատության եւ տեղեկատվության աղբյուրի գաղտնի մնալը երաշխավորող սահմանադրական իրավունքից: Աղբյուրների հետ աշխատելու սեփական փորձով եւ համոզվել եմ, որ կարեւոր տեղեկություններ ունեցող մարդիկ հաճախ պատրաստ են դրանք տրամադրել այն լրագրողներին, ում վստահում են:

Բանավոր աղբյուրները որոշելիս, լրագրողը նախ պետք է տեղեկություններ ստանա ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների այն պաշտոնյաների մասին,

* «Մամուլի ազատության մասին» օրենք, գլուխ 2, § 12

** JO 89: 1583

ում պարտականություններից է տեղեկատվություն տարածելը, իմանա՝ որտեղ եւ ինչպես նրանց գտնել, եւ ինչպես կապ հաստատել նրանց հետ, երբ ժամանակը սուղ է կամ երբ որեւէ արտակարգ դեպք է պատահել: Այնուհետեւ լրագրողը կարող է սկսել այն բանավոր աղբյուրների ցանցի ստեղծումը, ովքեր պատրաստ են տեղեկություններ հաղորդել սեփական նկատառումներով: Շատերը լրագրողներին տվյալներ են տալիս բացարձակապես անշահախնդիր, սակայն, հաճախ, գաղտնի մնալու երաշխիքը նրանց համար վճռորոշ նշանակություն ունի: Չէ՞ որ խոսքը կարող է լինել տեղեկատվի աշխատավայրում կատարվող անցուդարձի մասին: Ծառայողը ցանկանում է պատմել հիմնարկի այն բաժնի հոռի բարքերի մասին, որտեղ ինքն աշխատում է: Եթե պետք գլխի ընկնի, թե ով է բացբերանություն արել, ապա աշխատակցի բանը բուրդ է: Ձեռնարկության աշխատակիցը պատմում է իրենց ֆիրմայում թնդացող սկանդալների եւ ճղճիմ մթնոլորտի մասին: Սակայն եթե գործատուն իմանա, թե իրականում ինչ է նա գրուցել լրագրողի հետ՝ աշխատանքից կազատի: Շատ տեղեկատու աղբյուրներ գաղտնի մնալու լուրջ պատճառներ ունեն:

Մովորական բանվորը, հիվանդապահուհին, խանութի վաճառողը նույնպես, ինչպես որ բարձրաստիճան անձինք, դիվանագետներն ու քաղաքական գործիչները, պետք է հնարավորություն ունենան պատմելու, թե ինչ է կատարվում իրենց աշխատավայրերում կամ հայտնելու իրենց ունեցած տեղեկությունները՝ առանց իրենց անունները հայտնի դարձնելու: Տեղեկատվություն տալու ազատությունը եւ տեղեկատվության աղբյուրը գաղտնի պահելու իրավունքը ժողովրդավարության յուրատեսակ պահպանիչ կափույրներ են: Թղթակից աշխատելու երկար տարիների ընթացքում ես մշակել եմ աղբյուրների հետ աշխատելու իմ սկզբունքները.

- Միշտ ձգտել, որ աղբյուրը հանդես գա բացահայտ:
- Աղբյուրի հետ հստակ պայմանավորվել տեղեկություններ տրամադրելու պայմանները:
- Երբեք չբացահայտել աղբյուրները:
- Տեղեկատվության աղբյուրների նկատմամբ ունենալ քննադատական վերաբերմունք
- Իմ նկատմամբ աղբյուրների վստահությունը մեծացնել եւ պահպանել այդ վստահությունը:

On the record (հրապարակման համար)

Առողջ մթնոլորտ ունեցող ձեռնարկություններում, հիմնարկներում, քաղաքական կուսակցություններում կամ կազմակերպություններում պետք է թափանցիկություն լինի: Սա կարծիքների ազատ փոխանակման հիմքերի հիմքն է:

«Շվեդիայի յուրաքանչյուր քաղաքացի երաշխավորված իրավունք ունի գրողին կամ այլ հեղինակին, ինչպես նաեւ հրատարակիչներին, խմբագրություններին, լրատվական գործակալություններին եւ ֆիլմեր կամ ձայնագրություններ թողարկող ֆիրմաներին տրամադրել ցանկացած բնագավառին վերաբերող տվյալներ՝ դրանք ռադիոձայնագրերում, ֆիլմերում եւ ձայնագրություններով հրապարակելու համար: Նա նաեւ իրավունք ունի ցանկացած բնագավառի վերաբերյալ տվյալներ հավաքել՝ տեղեկատվություն հաղորդելու կամ այդ տվյալները հետագայում հրապարակելու համար: Այս իրավունքները չեն կարող սահմանափակվել որեւէ այլ դրույթներով, բացառությամբ սույն հիմնական օրենքից բխող դրույթների»:

«Խոսքի ազատության մասին» օրենք, գլուխ 1, §2

Հետագա հրապարակման համար տեղեկություններ հավաքելիս առաջնային պետք է լինի այն պայմանը, որ լրագրողին տվյալներ հաղորդող անձինք այդ անում են on the record - «արձանագրելու համար», այսինքն՝ իրենց անունը, պաշտոնը նշելով եւ իրավունք տալով մեջբերելու իր խոսքի ցանկացած հատված: Մինչ թղթակցի կողմից առաջին հարցը տալը ելակետ է այն պայմանը, որ գրույցը բաց է: Այն տեղի է ունենում, որպեսզի դրա բովանդակությունը հրապարակվի, այլ ոչ թե, որ թղթակիցը տվյալները գաղտնի պահի:

Լրագրողի կողմից մեջբերումը նշելու համար օգտագործվող չակերտները կամ ուրիշի ուղղակի խոսքը նշող գծիկը պետք է նշանակեն գրուցակցի խոսքի բառացի հրապարակում: Ցավոք, շվեդական լրատվամիջոցներում խոսքերից մեջբերումների նկատմամբ քամահրական վերաբերմունքն ավելի ու ավելի հաճախ է նկատվում: Առավել տարածված է դառնում թղթակցի կողմից գրուցակցի ասածը ամփոփ շարադրանքով ներկայացնելու մեթոդը: Դա միանգամայն ընդունելի է, քանի դեռ գրույցի բովանդակությունն անխաթար է մնում, սակայն այս դեպքում տեքստում չակերտներն անթույլատրելի են: Հաճախ պարզապես անհրաժեշտ է երկար ելույթի համառոտ ամփոփում կատարել, սակայն այդ դեպքում պետք է հստակորեն տարանջատել մեջբերումը լրագրողի տեքստից:

Պայմանավորվածություն

Բացահայտ ելույթները տեղեկություններ հավաքելու հիմնական աղբյուրն են, սակայն հանգամանքները կարող են այնպիսին լինել, որ աղբյուրին անհրաժեշտ է գաղտնի պահել իր անունը, որպեսզի լրագրողը (հետեւաբար եւ հասարակությունը) իմանա այն տեղեկությունները, որոնք հակառակ դեպքում գաղտնի կմնան: Հենց այս պատճառով տեղեկատվությունն ազատ փոխանցելու իրավունքն անմիջականորեն կապված է իր աղբյուրի գաղտնիությունը պահպանելու լրագրողի պարտականության հետ: Շվեդիայում, որպես կանոն, տեղեկություններ հայտնողը կարող է ակնկալել խմբագրության կողմից իր անվան գաղտնիքի բավականին ուժեղ պաշտպանություն: Սա ժողովրդավարությունը պահպանելու եւ ամրապնդելու եւս մի միջոց է. քաղաքացիները պետք է հնարավորություն ունենան բացահայտելու այս կամ այն թերություններն ու խախտումները, որպեսզի հասարակությունը կարողանա կանխել կամ կասեցնել իշխանության չարաշահումները:

Տեղեկատվությունն ազատ փոխանցելու իրավունքի եւ աղբյուրը չբացահայտելու երաշխիքի մյուս կարեւոր կողմն այն է, որ դրանք լրագրողներին օգնում են ավելի լավ հասկանալու իրադարձությունները եւ ուսումնասիրելու տարբեր փաստարկները: Դիվանագիտական աշխարհում գոյություն ունեն խաղի լավ մշակված եւ կշռադատված կանոններ: Դիվանագետը կամ արտաքին գործերի նախարարության աշխատակիցը կարող է լուրջ հիմնավորումներ ունենալ լրագրողին այս կամ այն իրադարձության մասին տեղեկություններ հայտնելու՝ ընդամին խնդրելով բառացի մեջբերումներ չանել եւ չնշել իր անունը:

Ենթադրենք շվեդ լրագրողն այցելում է երրորդ աշխարհի մի երկիր, որում դաժան բռնապետություն է հաստատված: Շվեդիայի դեսպանի հետ «ֆոնի համար» գրույցի ընթացքում լրագրողը վերջինիցս տեղականում է, որ երկրում իշխում է կոռումպացված, խելացնոր մի բռնապետ: Դեսպանը կարող է մանրամասն տեղեկություններ տալ այդ երկրի բանտերում տանջվող քաղաքական բանտարկյալների մասին, պատմել, թե ինչպես է Շվեդիան, ըստ կարելվույն, փորձում օգնել այդ կալանավորներին: Այսպիսով, դիվանագետն օգնում է լրագրողին ըմբռնելու այն իրավիճակը, որում գտնվում է երկիրը եւ ստանալու այդ իրավիճակի ճշմարտացի նկարագրությունը, որը թղթակիցը հագիվ թե իմանար, եթե տեղեկություններ քաղեր միայն վարչախմբի ներկայացուցիչներից ու պաշտոնական քարոզչությունից: Սակայն նման պարագայում բացարձակապես անհեթեթ կլիներ դեսպանից պահանջել հրապարակայնորեն հանդես գալ թերթում, հեռուստատեսային կամ ռադիո ծրագրում: Իր տեղեկատվությունը նախապատրաստելիս լրագրողը կարող է

դեսպանի հետ գրույցից ստացած տեղեկություններն օգտագործել իբրև օժանդակ նյութ, եթե երկու կողմերը նախապես քննարկել են այդ գրույցի պայմանները:

Նման բան կարող է լինել նաև քաղաքական ոլորտում: Քաղաքային խորհրդում մի խոշոր կուսակցություն ներկայացնող պատգամավորը չի ուզում հրապարակայնորեն հանդես գալ եւ արտահայտել իր կարծիքը քաղաքապետի մասին, մարզական ընկերության վարչության անդամը չի համարձակվում բացահայտ ներկայացնել կազմակերպությունում արմատավորված մեքենայություններն ու կաշառաշորթությունը: Սակայն եւ մեկը, եւ մյուսը պատրաստ են այդ մասին պատմելու այն լրագրողին, ում վստահում են: Ենթադրենք, կառավարությունում բուռն քննարկումներ են եղել մի բավականին նուրբ խնդրի, ասենք՝ գործազրկության նպաստի չափի սահմանման եւ դրա ֆինանսավորման հնարավորությունների մասին: Չուսկանորեն կառավարությունը միշտ կողեկալի՞վ պատասխանատվություն է կրում իր ընդունած որոշումների համար: Որոշում ընդունելուց հետո նախարարները նույնպես պետք է ցույց տան իրենց միասնականությունն ու միակամությունը՝ անկախ քննարկումների ժամանակ եղած տարակարծություններից: Սակայն ի՞նչ է տեղի ունեցել փակ դռների հետեւում, կողմ եւ դեմ ի՞նչ փաստարկներ են բերվել, ովքե՞ր են հանդես եկել միստում, ի՞նչ են ասել: Այս ամենը հետաքրքիր է հասարակության համար, սակայն, հասկանալի է, ոչ մի նախարար չի պատմի, թե ինչպես են ընթացել փակ քննարկումները: Տեղեկություններ ստանալու միակ միջոցը իրազեկ մարդկանց հետ գրուցելն է: Նա, ում հայտնի են միստի մանրամասները կամ ով անձամբ ներկա է եղել միստին, իր համար վստահելի լրագրողին պատմում է մանրամասները: Լրագրողն օգտագործում է իր ստացած տեղեկությունները, հնարավոր է՝ մեջբերում է առանձին խոսքեր՝ չնշելով սակայն, թե կոնկրետ ով է այդ խոսքերի հեղինակը:

Off the record (ոչ հրապարակման համար)

Ինչ-որ մեկը կարող է ասել, թե վերը բերված օրինակներում քաղաքական գործիչը կամ դիվանագետը լրագրողի հետ գրուցել է off the record՝ «ոչ հրապարակման համար» պայմանով: ԱՄՆ-ում լայն տարածում ստացած այս հասկացությունը Շվեդիայում համարյա չի կիրառվում: Ամերիկյան լրագրության մեջ «ոչ հրապարակման համար» կամ «ոչ արձանագրության համար» սկզբունքը պաշտոնապես ամրագրված եւ բավականին հստակ սահմանված է:

ՆԱՏՕ-ի կենտրոնակայանը մշակել է «Չանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ պաշտոնատար անձանց հաղորդակցվելու հիմնական կանոնների» պաշտոնական մեկնաբանությունը: Այդ կանոնները, որ երկու կողմերն էլ ընդունում են, կարգավորում են լրագրողների կողմից իրենց ստացած տեղեկությունների օգտագործումը* .

On the record (հրապարակման համար) – պաշտոնատար անձի բոլոր ասածները կարող են բառացի մեջբերվել՝ վերջինիս անվան եւ զբաղեցրած պաշտոնը ուղղակիորեն նշելով կամ էլ՝ հռետորին կամ պաշտոնատար անձին անուղղակիորեն նշելով: Սպաներին եւ հրամանատարական կազմին խորհուրդ է տրվում օգտագործել լրագրողների հետ հենց այդ տեսակի գրույցները:

Background (ֆոն) – տեղեկատվություն, որը կարելի է օգտագործել առանց աղբյուրը ճշտելու: Փեռք բերված համաձայնությունների պայմանները կարող են տարբեր լինել: Չրուցակիցն իրավունք ունի լրագրողից պահանջելու, որպեսզի իր անունը, պաշտոնը եւ իր ներկայացրած կազմակերպությունը չհիշատակվեն հրապարակման մեջ: Լրագրողը կարող է նաև տեղեկատվությունն իր լսարանին ներկայացնել իբրև սեփական հետաքննության արդյունք:

* NATO/NACC/PFP, unclassified, Annex A to AD 95-1

Off the record (ոչ հրապարակման համար) – տեղեկություններ, որոնք չեն կարող հրապարակվել լրագրողական նյութերում: Տեղեկատվությունը լրագրողին է ներկայացվում տվյալներին նրա անձնական ծանոթացման եւ սեփական գնահատման համար: Թյուրիմացություններից խուսափելու համար ՆԱՏՕ-ի կենտրոնականացմանը համառոտ են խորհուրդ է տալիս պաշտոնատար անձանց չօգտագործել լրագրողների հետ հաղորդակցվելու այս ձևը, բացառությամբ՝ ՉԼՄ-ների հետ կապերի համար պատասխանատու բարձրաստիճան սպայի հետ խորհրդակցելուց հետո եւ միայն այն դեպքերում, երբ խոսքը ծայրահեղ եւ արտառոց իրավիճակների մասին է:

Շվեդիայում (նաեւ շատ այլ երկրներում), ինչպես լրագրողների, այնպես էլ տեղեկատվություն հաղորդողների մոտ այս տերմինների ընկալման խառնաշփոթ է տիրում: Շատերն են «ոչ հրապարակման համար»-ը շփոթում «ֆոնի» հետ: Լրագրողը վստահ է, որ աղբյուրն իրեն տեղեկատվություն է տրամադրում հրապարակման համար՝ առանց նշելու անունն ու պաշտոնը, ընդամին՝ չճշտելով, թե մեջբերվելու՞ են, արդյոք, խոսքերը եւ ինչպես է աղբյուրը ներկայացվելու հասարակությանը: Մյուսները՝ հավատարիմ են մնում ՆԱՏՕ-ի ձեւակերպումներին: Լրագրողների համար «ոչ հրապարակման համար»-ը նշանակում է, որ թղթակցին տեղեկությունները տրվում են այն պայմանով, որ նա խոստանա չհրապարակել դրանք, այլ պահպանել իր համար:

Ես համաձայն եմ պաշտոնատար անձանց եւ ՉԼՄ-ների ներկայացուցիչների միջեւ նման տեսակի հաղորդակցման վերաբերյալ ՆԱՏՕ-ի կենտրոնականի անվստահությանը: Պետք չէ աղբյուրի հետ համաձայնության գալ՝ տեղեկություններ հաղորդելու՝ աշխատանքում դրանք չօգտագործելու պայմանով: Եթե լրագրողը չի կարող օգտագործել տեղեկությունները, ապա դրանք նրա ինչի՞ն են պետք: Թղթակցը տեղեկություններ է հավաքում, որպեսզի դրանք փոխանցի ուրիշներին, եւ նա միշտ հնարավորություն պետք է ունենա օգտագործելու ինչ-որ մեկից ստացած տվյալները: Այս պարագայում տեղին է լրագրողի աշխատանքը համեմատել հարկահավաքի աշխատանքի հետ: Պատկերացրեք, թե վերջինս հարկերը հավաքելիս մի քանի դրամ դնում է իր գրպանը: Ընդամին, նա գիտի, որ դրանք իր անձնական փողերը չեն, այլ պատկանում են հասարակությանը: Տարբեր աղբյուրներից լրագրողի ստացած տեղեկատվությունն էլ պատկանում է ոչ միայն իրեն, այլեւ իր ընթերցողներին, ունկնդիրներին, հեռուստադիտողներին:

Այստեղ կա եւս մի կարեւոր հանգամանք: Ի՞նչ պետք է անի լրագրողը, եթե հանկարծ նույն տեղեկությունները ստանա մեկ այլ, ավելի բացահայտ աղբյուրից: Արդյոք կապվա՞ծ են նրա ձեռքերը նախկինում իր տված խոստմամբ, թե՞ կարող է տեղեկատվությունը հրապարակել: Հաճախ իրավիճակը կարող է փակուղային լինել: «Ոչ հրապարակման համար» գրույցի ձեւը հաճախ պաշտպանում են նրանով, թե իբր լրագրողի համար «օգտակար է պատկերացում կազմել իրադարձությունների կեղտոտ ենթատեքստերի մասին», սակայն աշխատանքի այս եղանակը բավականին ծուղակներ ունի, որոնք կարող են հանգեցնել լրագրողի համար բացարձակապես անընդունելի կապանքների:

Ֆոն

Սահմանումների խառնաշփոթը հանգեցնում է այն բանին, որ համաձայնության գալով, թե գրույցը տեղի է ունենում «ոչ հրապարակման համար» պայմանով, ոչ լրագրողը, ոչ նրա գրուցակիցը, այդպես էլ հստակորեն չեն ըմբռնում, թե դա ինչ է ի վերջո նշանակում: Նման իրավիճակը երկու կողմերի համար էլ անցանկալի հետեւանքներ կարող է ունենալ: Այդ պատճառով ես կցանկանայի խորհուրդ տալ գրույցի պայմանները քննարկելիս չօգտագործել «off the recwrd» ճապաղ ձեւակերպումը:

Թղթակիցը եւ աղբյուրը գրույցի պայմանները՝ կոնկրետ ձեւակերպումներով, պետք է քննարկեն մինչ գրույցը սկսելը: Ելակետն, իհարկեւ, պետք է լինի «հրապարակման համար» պայմանը (վերջին տերմինը միանգամայն ընդունելի է)՝ մինչ այն պահը, երբ կողմերը կորոշեն փոխել գրույցի պայմանները: Սա մի տեսակ չգրված պայմանագիր է, որը լրագրողին պարտադրում է հետեւելու պայմանին: Լավ կլինի, եթե թղթակիցը միանգամից պայմանավորվի աղբյուրի հետ, թե վերջինիս ինչպես է ներկայացնելու իր հրապարակման մեջ:

Մինչ աղբյուրը գաղտնի պահելու մասին կողմերի համաձայնության գալու պահն ասված ամեն ինչ կարող է մեջբերվել: Ջրուցակցի անձը եւ պաշտոնը չբացահայտելու պահանջը չի կարող է ներկայացվել գրույցն ավարտվելուց հետո: Պաշտոնյան, ում հետ գրույցում է լրագրողը, չի կարող հանկարծ հայտարարել, թե իր խոսքերը հետ է վերցնում կամ գրույցի վերջում պահանջել, որ պահպանվի իր անվան գաղտնիքը: Սակայն այն անձինք, ովքեր սովոր չեն հարցազրույց տալ, չեն կարող իմանալ տերմինաբանության կամ պայմանների նրբությունները, ահա թե ինչու թղթակիցը պետք է նրանց հստակորեն բացատրի գոյություն ունեցող կանոնները: Պրակտիկայում լինում են նաեւ դեպքեր, երբ բավականին փորձառու անձը «հրապարակման համար» գրույցում հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնց աղբյուրն ակնհայտորեն չպետք է բացահայտել: Նման դեպքերում նրա բոլոր ասածները կարելի է բառացի մեջբերել: Սակայն եթե լրագրողը ցանկանում է պահպանել իր աղբյուրը, ապա ինքը պետք է ամբողջ գրույցը կամավոր կերպով գնահատի իբրեւ «ֆոն»:

Ընդհանրապես լրագրողը պետք է նախաձեռնությունն իր ձեռքը վերցնի՝ գրուցակցին ուղղություն ցույց տալով գոյություն ունեցող կանոնների եւ ձեւերի լաբիրինթոսում: Որպես կանոն, դա հանգստացնում է նրանց, ովքեր իրենց մի քիչ անվստահ են զգում: Ինքս հաճախ եմ մինչեւ գրույցի սկիզբն առաջնակարգ աղբյուրի հետ պայմանավորվել, որ մեր գրույցը «ֆոնի» համար է, մինչ այն պահը, քանի դեռ չենք պայմանավորվել այլ ձեւի մասին: «Ֆոնի» իմ ձեւակերպումը.

«Ֆոնի» համար գրույցը նշանակում է, որ լրագրողը կարող է օգտագործել գրույցի ժամանակ աղբյուրից ստացած ամբողջ տեղեկատվությունը եւ բառացի մեջբերել նրա ցանկացած խոսք՝ պայմանով, որ աղբյուրի ինքնությունը ոչ մի պարագայում չի բացահայտվի: Աղբյուրը հենվում է լրագրողի՝ տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը պաշտպանելու Սահմանադրությամբ ամրագրված պարտականության վրա:

Մի բացահայտի աղբյուրները

Նրանց համար, ովքեր տեղեկություններ են հայտնում խմբագրություններին, անվան գաղտնիքը երաշխավորված է: Դա նշանակում է, որ լրագրողն իրավունք չունի բացահայտելու իր տեղեկատվության աղբյուրը, իսկ «իշխանություններին կամ այլ հասարակական մարմիններին»^{*} արգելվում է այդ աղբյուրը փնտրելն ու գաղտնագրելը: Այս կարգը խախտող լրագրողները կամ պաշտոնատար անձինք կարող են շվեդական դատարանի վճռով դատապարտվել դրամական տուգանքի կամ մինչեւ մեկ տարվա ազատազրկման: Այո, լրագրողը կարող է պատասխանատվության ենթարկվել աղբյուրի բացահայտման համար, սակայն մեր օրերում ոչ մի լրագրող նման իրավախախտման համար դեռեւս չի դատապարտվել:

Իհարկեւ, աղբյուրը գաղտնի պահելու եւ դրա համար պատասխանատվության չենթարկվելու համընդհանուր կանոնն ունի նաեւ բացառություններ: Եթե տեղեկատուն

^{*} «Մամուլի ազատության մասին» օրենք, գլուխ 3, §4

խմբագրությանն է հայտնում այնպիսի տվյալներ, որոնք կարող են սպառնալ պետական անվտանգությանը կամ որոնց հրապարակումը կարող է հանգեցնել լրտեսության կամ պետական դավաճանության, ապա դատական մարմիններն իրավունք ունեն հետաքննել, բացահայտել աղբյուրը եւ վերջինիս ենթարկել դատական պատասխանատվության: Նման գործողությունները որակվում են իբրեւ ծանր հանցագործություններ, այդ պատճառով դատարանը կարող է լրագրողից պահանջել բացահայտելու տեղեկատվության աղբյուրը:

Անհրաժեշտ է նշել, որ տեղեկատվության աղբյուրը փնտրելու եւ բացահայտելու արգելքը տարածվում է միայն հաստատությունների եւ կազմակերպությունների վրա, սակայն ոչ ձեռնարկությունների կամ անհատների: Մասնավոր ձեռնարկության գործատուն հանգիստ կարող է հետապնդել նրան, ով տեղեկատվության արտահոսք է թույլ տվել, ինչպես նաեւ խմբագրության աշխատակից լրագրողը կարող է իր գործընկերոջից հարցնել, թե ինչ աղբյուրներ է նա օգտագործում: Թե ինչով կավարտվի այդ փնտրտուքը, մեծապես կախված է թղթակցից: Լրագրողը, որը տեղեկություններ է ստանում աղբյուրը չբացահայտելու պայմանով, ոչ միայն իրավական, այլեւ բարոյական պատասխանատվություն է կրում: Այդ պատճառով լրագրողը, հետեւելով բարոյական պարտքին, պետք է շարունակի գաղտնի պահել իր տեղեկատվության աղբյուրը, անգամ եթե իշխանությունները կամ դատական մարմինները պահանջում են բացահայտել այն, չնայած վերջինը Շվեդիայում միայն բացառիկ դեպքերում է լինում:

Ճերմակ սուտ

Երբեմն աղբյուրների պաշտպանության կանոնով արդարացվում եւ փաստարկվում են սուտն ու խեղաթյուրումները: Այսպես՝ ձեզ ներկայացնելով սահմանափակ թվով մարդկանց հայտնի գրույցի մանրամասները, տեղեկատուն իրեն վտանգում է բացահայտված լինելու: Չնայած դուք պայմանավորվել եք, որ ամբողջ ասվածը կարող է օգտագործվել եւ մեջբերվել լրագրային նյութում, գործնականում հաճախ դա անհնար է, քանի որ կարող է հանգեցնել աղբյուրի բացահայտման: Երբեմն, դրանից խուսափելու համար, լրագրողը ստիպված է լինում խուսափել ասվածը բառացի ներկայացնելուց: Ինքս հաճախ ստիպված եմ եղել սքողել որոշ տվյալներ կամ էլ նույնիսկ ներմուծել ակնհայտ անճշտություններ եւ սխալներ, միայն նրա համար, որպեսզի խճճեմ հետքերը:

Եթե շատերին է հայտնի, որ լրագրողն ու աղբյուրը ճանաչում են իրար կամ լավ հարաբերություններ ունեն, ապա ավելի խելամիտ կլինի, որ լրագրողը տեղեկատվությունը փոխանցի իր մի այլ գործընկերոջը՝ հրաժարվելով մերկացնող հրապարակման հեղինակային իրավունքից: Սա սեփական աղբյուրները պաշտպանելու արդյունավետ եղանակ է, թեպետ եւ՝ բավականին ցավազին է այն լրագրողի համար, ով ստիպված է հրապարակման բերելիք փառքն ու պատիվը զիջել ուրիշի:

Չնայած լրագրողը տիրապետում է տեղեկատվության, որը նա իրավունք ունի մեջբերել եւ օգտագործել՝ համաձայն «ֆոնի համար» գրույցի պայմանների, սակայն հաճախ դրա օգտագործումը սահմանափակվում է աղբյուրի պաշտպանության անհրաժեշտությամբ: Լրագրողը ստիպված է լինում կարեւոր տեղեկությունը հրապարակելիս զգուշություն եւ հնարամտություն հանդես բերել: Հաճախ միանգամայն ավելորդ է աղբյուրին ներկայացնել իբրեւ նախարար, կառավարության աշխատակազմի բարձրաստիճան պաշտոնյա, կուսակցության ղեկավարության ներկայացուցիչ եւ այլ: Նման ճշտումները ենթադրությունների եւ աղբյուրը գտնելու հնարավորությունների պարարտ հող են ստեղծում: Եթե նույնիսկ տեղեկատուն կուսակցության առաջնորդ է կամ տեղական վարչակազմի ղեկավար, ապա շատ դեպքերում ավելի լավ է նրան մի քիչ անորոշ ներկայացնել, ասենք՝ «իրազեկ աղբյուր», եթե աղբյուրին հղումն ընդհանրապես անհրաժեշտ է: Իհարկե, չպետք է ակնհայտորեն ստել՝ տեղեկատուին ներկայացնելով իբրեւ ֆինանսների նախարարության աշխատակից, եթե իրականում նա խորհրդարանի պատգամավոր է: Նման սուտը կարող է

հանգեցնել նրան, որ մի խումբ մարդիկ բացարձակապես անհիմն կերպով կասկածի տակ կառնվեն:

Հաճախ տեղեկատուի հայտնած բանավոր տվյալը կամ ուղղորդումը վերածվում են նույն թեմայով հրապարակային տեղեկությունների ի հայտ գալու: Նման դեպքերում անանուն աղբյուրին հղում կատարելու անհրաժեշտությունն ընդհանրապես վերանում է: Բավական է մեջբերում կատարել հանրությանը հայտնի փաստաթղթերից՝ գլուխ չգովելով, թե դուք տեղեկություններ ունեք նաև այլ աղբյուրից: Չէ՞ որ դա մի ավելորդ անգամ կարող է կասկածներ հարուցել նրանց նկատմամբ, ում ինքնությունը դուք չեք ցանկանում բացահայտել:

Մի՞շտ է լրագրողը ծառայության մեջ

Եվ այսպես, լրագրողը չպետք է աղբյուրներից տեղեկություններ վերցնի, եթե դրանք չի կարող օգտագործել իր նյութերում: Իսկ ի՞նչ անի այն թղթակիցը, ով, ասենք, ընկերոջ տանը կազմակերպված երեկույթի ժամանակ հյուրերից մեկից (որը չի էլ կասկածում, թե ներկաների մեջ լրագրող կա) լսում է հետաքրքիր, բացահայտումներով հարուստ մի պատմություն: Ի՞նչ անել, եթե մանկությանդ ընկերն անկեղծության պահին պատմում է, թե ինչեր են կատարվում իր աշխատավայրում: Ինչպե՞ս վարվել, եթե տանեցիներից կամ հարազատներից մեկը, ում աշխատանքի բերումով գաղտնի տեղեկություններ են մատչելի, հանկարծ դրանք հայտնում է ձեզ:

Որոշ լրագրողներ պնդում են, թե սա սկզբունքների խնդիր է, եւ որ լրագրողը միշտ ծառայության մեջ է: Սակայն բարեկամությունը, ինչպես որ լրագրությունը, ունի իր էթիկան: Երկար տարիներ թղթակից աշխատելուց հետո այդ հարցերի նկատմամբ իմ վերաբերմունքն ավելի պրագմատիկ է դարձել: Չի կարելի դավաճանել մոտիկ ընկերներին: Բարեկամական կամ ընկերական հարաբերությունները կարող են լրագրողին այնպիսի պայմանների մեջ դնել, որ նա հնարավորություն չի ունենա առանց խոչընդոտների իրականացնել առաջադրանքը: Ես խորապես համոզված եմ, որ, առանձին դեպքերում, լրագրողի անձնական կյանքի հանգամանքներով պայմանավորված, հարկ է, որ վերջինս հրաժարվի տվյալ նյութը պատրաստելուց:

Վստահություն նվաճիր

Տեղեկատվության անհայտ մնալ ցանկացող աղբյուրի հետ աշխատելը նրբանկատ գործ է, որը լրագրողից պահանջում է լարախաղացի նման հավասարակշռություն պահպանել: Աղբյուրի հետ հարաբերությունները չեն կարող լինել մտերմիկ-ընկերական եւ միաժամանակ՝ չպետք է լինեն շատ սառը, եթե ցանկանում ես վստահության մթնոլորտ ստեղծել: Նա, ով տեղեկություններ է տալիս՝ հուսալով անհայտ մնալ, լրագրողին վստահում է՝ իրեն ենթարկելով հնարավոր բացահայտման վտանգի:

Տեղեկատուն պետք է հավատա. լրագրողը կարող է ստացած տվյալներն օգտագործել այնպես, որ դա չի հանգեցնի իր բացահայտման: Նա նաև պետք է հիմք ունենա հուսալու, որ անհրաժեշտության դեպքում լրագրողը, հետեւելով իր բարոյական պարտքին, կանի ամեն ինչ գաղտնիքը պահպանելու համար: Բարոյական պարտականությունները նախատեսված չեն օրենքով: Դրանք աղբյուրի եւ լրագրողի միջեւ վստահության հարաբերությունների ծնունդ են, ընդամին՝ լրագրողն էլ, իր հերթին, պետք է հիմքեր ունենա հավատալու, որ աղբյուրը ճշմարիտ տեղեկություններ է հաղորդում եւ չի փորձում իրեն օգտագործել ի շահ սեփական մեքենայությունների: Նման իրավիճակում լրագրողի եւ տեղեկատու աղբյուրի միջեւ ստեղծվում են հատուկ հարաբերություններ, որոնք կարող են մի քիչ խոցելի լինել լրագրողի հուսալիության տեսանկյունից: Վերջին հաշվով խոսքն այն մասին է, որ երկու կողմերն էլ պետք է գիտակցեն ժողովրդավարական հասարակության մեջ իրենց դերը:

Լրագրողը պետք է հոգատար լինի իր աղբյուրների նկատմամբ: Սա, մասնավորապես, նշանակում է, որ նա պետք է կանոնավոր կապ պահպանի այդ աղբյուրների հետ, տեղեկացնի, թե ինչպես են օգտագործվել իրեն տրամադրված տեղեկությունները: Լրագրողը կարող է աղբյուրի տվյալների հիման վրա պատրաստված հոդվածը կամ տեքստը հեռախոսով կարդալ կամ աղբյուրին տալ պատճենը: Եթե տեղեկատուն եւ լրագրողը պայմանավորվել են, որ տեղեկությունները չեն կարող հրապարակվել պայմանավորված որեւէ ժամկետից առաջ, ապա լրագրողը պարտավոր է հավատարիմ մնալ իր խոստմանը նույնիսկ այն ժամանակ, եթե վտանգ կա, որ մրցակիցներն իրենից առաջ կրնկնեն:

Սեփական աղբյուրները պաշտպանելու եւս մի եղանակ. պետք է փորձել գտնելու ստացված տեղեկությունների հավաստիության ապացույցներ այլ աղբյուրներից կամ պաշտոնական, հասարակությանը մատչելի փաստաթղթերում: Անանուն աղբյուրին հղում կատարելու անհրաժեշտությունը կարող է վերանալ, եթե տեղեկությունը հնարավոր է ստանալ այլ ճանապարհով: Հրապարակումից հետո աղբյուրն իրեն ավելի վստահ կզգա՝ տեսնելով, որ լրագրողը կատարել է անունը գաղտնի պահելու իր խոստումը: Աղբյուրի հետ ազնիվ լինելը կարեւոր է, երբ խոսքը նրանից ստացված տվյալների օգտագործման վերաբերյալ տեղեկություն հաղորդելու մասին է, սակայն լրագրողը ոչ մի դեպքում նրան չպետք է հայտնի իր մյուս աղբյուրները:

Քննադատաբար վերաբերվիր աղբյուրներին

Սեփական աղբյուրը պաշտպանելու եղանակներից մեկը նորերը ձեռք բերելն է: Սա լավ է ոչ միայն տվյալները ստուգելու հնարավորության եւ սխալվելուց ապահովագրվելու, այլեւ հենց աղբյուրը չվտանգելու համար: Եթե լրագրողը նյութը նախապատրաստելիս զրուցել է մի քանի իրազեկ անձանց հետ, ապա նրանցից յուրաքանչյուրը հենց իրեն է համարում տեղեկատվության սկզբնաղբյուր, եթե նույնիսկ ինքը չափազանց քչախոս է եղել: Հրապարակումից հետո շատերը նրանցից, ում հետ զրուցել է թղթակիցը, կսկսեն գլուխ ջարդել՝ կռահելու համար, թե ով է այդքան բան պատմել: Նրանք մի որոշ ժամանակ ընդհատակ կանցնեն, որպեսզի կասկածներն իրենց վրա չընկնեն:

Լրագրողներին տեղեկություններ հաղորդելու աղբյուրների պատրաստակամության պատճառները տարբեր են եւ հաճախ՝ ոչ այնքան ազնվաբարո: Տեղեկատվության ազատ փոխանցման դրույթով քողարկվելով՝ մարդիկ կարող են տվյալներ հաղորդել շահադիտական, թյուրիմացության մեջ զցելու, անգամ՝ զրպարտելու նպատակներով: Իր աղբյուրները գնահատելիս՝ լրագրողը պետք է հստակորեն գիտակցի այս: Քարոզչությունը եւ խարդավանքները նյութերը ավելի ու ավելի հաճախ են դառնում տեղեկատվության արտահոսքի պատճառ: Եկրի քաղաքական անցուդարձը ներկայացնող լրագրողները պետք է հստակ պատկերացում ունենան աղբյուրի միտումների մասին: Վերջինիս անդամակցությունը քաղաքական կուսակցությանը կամ որեւէ այլ կազմակերպության կարող է պատճառ լինել, որ նա տեղեկությունները ներկայացնի իրեն կամ իր կազմակերպությանը ձեռնտու տեսանկյունից: Աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունք ունեցող լրագրողը պետք է ունենա տարբեր քաղաքական շահեր եւ բեռներ ներկայացնող տեղեկատուներ:

Տեղակատվություն հավաքելիս լրագրողը պետք է միշտ ձգտի օգտագործելու տարբեր աղբյուրներից ստացված տվյալները, սակայն սա չի կարող համարվել բացարձակ եւ անվիճելի պահանջ: Լրագրողն իր աղբյուրը գնահատում է՝ ելնելով նրա հետ աշխատանքի իր փորձից: Բոլորովին էլ պարտադիր չէ ինչ-որ բան պնդելու համար միշտ տեղեկությունները ստանալ երկու իրարից անկախ աղբյուրներից: Նման պատկերացումը դեռեւս կենսունակ է լրագրողական աշխարհում՝ սկսած Ուոթերգեյթյան սկանդալից, որը բացահայտելիս «Վաշինգտոն փոստ»-ի լրագրողներն աշխատում էին հենց այդ սկզբունքով: Սակայն սեփական աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքն ավելի բարդ գործ է:

Լրագրողը միշտ պետք է կասկածի աղբյուրի իսկությանը: Իրո՞ք տեղեկատուն հենց այն է, ինչ ներկայանում է: Գուցե նա ասում է բաներ, որ ուրիշները հենց իրե՞ն են վերագրում: Որքանո՞վ է նա տեղյակ քննարկվող հարցերին:

Ժամանակային կողմը կարելի է դնել ունի: Ինչքան ավելի շատ ժամանակ է անցել իրադարձությունից, այնքան ավելի անստույգ են դառնում դրան մասնակցած անձի ցուցմունքները: Լրագրողը նաև ինքն իրեն պետք է հարց տա, թե որքանո՞վ է տեղեկատուի պատմածը անկախ արտաքին ազդեցություններից: Արդյոք ինքը մասնակցե՞լ է իրադարձությանը, թե՞ ներկայացնում է ուրիշի պատմածով:

Իհարկե, առավել լավ է անկողմնակալ մարդու հետ աշխատելը, իրականությունը, սակայն, այն է, որ աղբյուրները հաճախ կանխակալ են: Խոսքն ամենեւին էլ զիտակցված քարոզչության մասին չէ, ընդհակառակը՝ աղբյուրն, իբրև կանոն, ենթագիտակցորեն փաստերը ձեռափոխում է այնպես, որ դրանք համապատասխանեն իր գնահատականներին ու համակրանքներին:

Աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքը գնալով ավելի կարելի է դառնում լուսանկարների ու պատկերների պարագայում: Ժամանակակից թվանշային սարքավորումները հնարավորություն են տալիս վարպետորեն խարդախել պատկերները, բաղադրել եւ կեղծել կադրերն ու լուսանկարները: Այսօր արդեն լուսանկարներն իբրև ինչ-որ բանի ապացույց չեն կարող ծառայել: Խմբագրությունները միշտ պետք է կասկածեն լուսանկարում պատկերվածի իսկությանը՝ բնագի՞ր է դա, թե՞ կեղծիք կամ խարդախում:

Լուսանկարները ռետուշ անելը հայտնի էր դեռես լուսանկարչության արշալույսին: Նորությունն այն է, որ այժմ խարդախելն ու կեղծելը կարելի է անել ավելի արագ եւ ավելի վարպետորեն: Խորհրդային պետության պատմության մեջ հայտնի են «վաղ խարդախումների» հետաքրքիր դրվագներ:

1908 թվականի լուսանկար. Կապրի կղզում Լենինը շախմատ է խաղում: Մաքսիմ Գորկին ուշադիր հետետում է խաղին: 1939 թվականին վերջինիս «Լենին» գրքում լուսանկարը տպագրելու համար փոփոխություններ կատարողը (ռետուշ անողը) ստիպված եղավ բավականին չարչարվել: Լուսանկարում Վլադիմիր Իլյիչից առիշեղ կանգնած գլխարկով անձնավորությունը մենշելիկ Վլադիմիր Բազարովն էր, որը հետագայում քննադատեց Լենինին: 1931 թվականին Բազարովը ձերբակալվեց, իսկ 1937-ին՝ գնդակահարվեց: Լուսանկարից նա, բնականաբար, անհետացել է... Գորկուց աջ կանգնած մարդը Ջինովի Պեչկովն էր, որը արտագաղթեց Ֆրանսիա, սպա դարձավ, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայեց ֆրանսիական բանակում, իսկ ավելի ուշ գեներալ Դ-ը Գոլի մտերիմ ընկերն էր եւ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխատում էր Ֆրանսիայի անվտանգության ծառայությունում: Նա նույնպես 1939 թվականին անհետացավ լուսանկարից: Սակայն... նա նորից հայտնվեց, երբ Մոսկվայի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը հրապարակեց լուսանկարի երրորդ տարբերակը: Բազարովի փոխարեն ... սյուն էր, իսկ թե ինչու էր լուսանկարի ներքեի աջ անկյունում կանացի ծունկ հայտնվել, ոչ ոք չկարողացավ բացատրել:

Նորություններին հետամուտ լինելու կարգը

Երբ խմբագրությունը եւ լրագրողը հստակ պատկերացում ունեն, թե որտեղ տեղեկատվություն կա, ապա մնում է միայն ստանալ այն: Գրան կարելի է հասնել երկու եղանակով. կանոնավորապես զանգահարելով կամ այցելելով հնարավոր աղբյուրներին կամ էլ գործն այնպես կազմակերպելով, որ տեղեկատվությունը հասնի կազմակերպված եւ հնարավորինս կանոնավոր: Գրավոր փաստաթղթերը կարող են ստացվել փոստով (սովորական կամ էլեկտրոնային) կամ ֆաքսով: Գրավոր տեղեկատվության հոսքի հսկայական մասը խմբագրություններ է հասնում սահմանված որեւէ կարգով: Խմբագրությունները կարող են հետել, որպեսզի իրենք ներկայացված լինեն այն հասցեատերերի ցանկում, որոնց պետական եւ տեղական ինքնակառավարման

մարմինների, ինչպես նաև ձեռնարկությունների մամուլի թողարկումները եւ այլ տեղեկատվությունը առաքվում է ավտոմատ կերպով:

Առավել դժվար է կազմակերպել բանավոր հաղորդագրությունների ստացումը: Ոչ մի լրագրող չի կարող իր արդեն գոյություն ունեցող եւ հավանական աղբյուրներից պահանջել, որպեսզի նրանք սեփական նախաձեռնությամբ զանգահարեն իրեն որոշակի պարբերականությամբ: Նրանց հարկավոր է փնտրել մշակված ժամանակակարգի համաձայն: Հենց այս պատճառով «կարգապահ» խմբագրություններում ձեւավորվում է ոստիկանական տեղամասերի հետ հեռախոսային կանոնավոր կապի ավանդույթը:

և Ի՞նչ նորություններ կան այսօր:

Որպես կանոն հետամտումն ու փնտրտուքը ժամանակ են պահանջում, սակայն փոխհատուցվում են հարյուրապատիկ: Այն լրագրողը, ով հաջողացնում է ստեղծել տեղեկատու աղբյուրների ճյուղավորված ցանց, սովորաբար նորություններ հայթայթելու գործում մեծ հաջողությունների է հասնում:

Տեղեկատվական նյութերի ներհոսքը խմբագրություններից պահանջում է կազմակերպված ընդունում, ինչը դժվար չէ ապահովել: Դրա համար ընդամենը պահանջվում է հեռախոս, նոթատետր եւ իրադարձությունների օրագիր, որը կարող է լինել սովորական մատյան կամ A4 չափսի թղթերի թղթապանակ: Շվեդիայում այդ օրագիրն անվանում են խմբագրության «խիղճ»: Գոյություն ունեն օրագրի տվյալների տեսակավորման եւ պահպանման բազմաթիվ ձեւեր:

Օրագրի իմաստն այն է, որ բոլոր հրավերները, մամուլի թողարկումները, տեղեկատվությունների խոսքերից գրառված ուղղորդումները տեսակավորվում են ըստ հրատապ իրադարձությունների ամսաթվերի: Օրագիրն, այդ պատճառով, պետք է ունենա ամսաթվերի գրանցման մատյան: Ոմանց սա կարող է պարզամիտ գործ թվալ, սակայն, այսուհանդերձ, օրագրում նշելու համար ստացվող նյութերի տեսակավորումը կարելու է եւ նրանից, ով գրառվում է դրանով, պահանջում է նորությունները զգալու «հոտառություն» ունենալ:

Չնայած մենք ապրում ենք համընդհանուր համակարգչայնացման ժամանակաշրջանում, թղթի տեսքով օրագրի դասական տարբերակը մնում է խմբագրություններում նորությունների հետ աշխատելու հիմնական միջոցներից մեկը: Երբ խորհրդարանի, դումայի կամ սեյմի նիստի աշխատանքների օրակարգը հասնում է խմբագրություն, այն, հրատապ ամիս ամսաթվով, անմիջապես պետք է տեղադրվի օրագրում: Այստեղ պահվում են նաև խմբագրական դասական «հուշաթերթերը», որոնց աղբյուր կարող են լինել աշխատակիցների գաղափարները, թերթերի կտրածոները, հրավիրատոմսերը, մամուլի թողարկումները, ինչ-որ մեկի բանավոր հաղորդումները եւ այլն: Հուշագրի իմաստն այն է, որ խմբագրության աշխատակիցներից որեւէ մեկը մշտապես հետևում է, թե ինչ զարգացումներ ունեցավ այդ թղթի վրա նշված իրադարձությունը եւ հետևում է դրա ընթացքին: Նման հուշաթերթը կարող է այդ նորությանը հետևել մշտապես: Այդ աշխատանքը շատ ժամանակ չի խլում: Ասենք, լրատվական գործակալության հաղորդման մեջ նշվում է, թե սպասվում է ինչ-որ կարելու հարցի վերաբերյալ որոշման ընդունում: Որոշ ժամանակ անց խմբագրության աշխատակիցներից մեկը նույն տեղում նշում է կատարում, որ արդեն հաստատված է այդ հարցը քննարկող հանձնաժողովի կազմը: Մի այլ լրագրող կցում է նույն թեմայի վերաբերյալ թերթերից մեկի հոդվածը եւ նշում հանձնաժողովի քարտուղարի անունն ու հեռախոսահամարը, ապա ավելացնում. «զանգահարել մեկ ամսից»: Ամեն անգամ, երբ տեղեկությունը նոր հանգույց կունենա՝ հուշաթերթը կլրացվի լրագրողների նշումներով: Նորություններին հետամտելու համակարգը դառնում է մի տեսակ խմբագրության հավաքական հիշողությունը:

Ստուգիչ զանգերն ու խմբագրական հուշաթերթերը լրագրողական մասնագիտության դժգույն իրականությունն են: Սակայն առանց այն նորությունների, որ հենց դրանք են ապահովում, տեղեկատվության հորդառատ հոսքը կքշանա եւ աստիճանաբար կկտրվի:

Խմբագրության աշխատանքների կազմակերպումը

Այն, ինչ վերը նկարագրեցինք, input (մուտքի) գործառույթի հիմքն է: Յուրաքանչյուր խմբագրությունում կան լուրերի բաժնում կան input (մուտքի) եւ output (թողարկման) գործառույթներ: Իհարկե, տարբեր տեղերում դրանք տարբեր կերպ կարող են կոչվել, սակայն գործառույթների էությունը, անկախ խմբագրությունների աշխատանքի կազմակերպումից, նույնն է եւ հանգում է տեղեկություններ հավաքելուն եւ այն հրատարակելուն (եթեր հեռարձակելուն): Արեւմուտքի երկրների խմբագրությունների կառուցվածքային ստորաբաժանումների եւ ռադիոյի կամ հեռուստատեսության պաշտոնների շատ անվանումներ փոխառնված են զանգվածային լրատվամիջոցների աշխատանքների կազմակերպման անգլոսաքսոնական ավանդույթներից:

Շվեդիայում, ինչպես եւ աշխարհի շատ երկրներում, այսօր օգտագործվում են input, output, desken արտահայտությունները:

Ընդունող խմբագիր (input) – ղեկավար, որը պլանավորում է աշխատանքը: Նա զբաղվում է հրավերներով, մամուլի թողարկումներով, թերթերի կտրածոներով, հետեւում է, թե ինչեր են նշվում հուշաթերթերում: Նա է բաշխում հանձնարարությունները լրագրողներին՝ ըստ վերջիններիս հետաքրքրությունների, իրավասությունների կամ մասնագիտացման: Հեռուստատեսային խմբագրությունում այս խմբագիրը կարետոր դիրք ունի, քանի որ օգտագործվող տեխնիկայի առատությունը մանրամասն պլանավորում է պահանջում:

Թողարկման խմբագիր (output) – ղեկավար, որը պատասխանատու է լուրերի ծրագրի թողարկման համար: Որոշ խմբագրություններում այդ մարդուն անվանում են պատասխանատու քարտուղար կամ desken: Թողարկող խմբագիրը, որպես կանոն, հերթափոխն ընդունում է այն ժամանակ, երբ ընդունող խմբագիրն արդեն տուն է գնացել: Նա լրագրողների հետ քննարկում է յուրաքանչյուր սյուժեի վերջնական տարբերակները: Հենց նա է որոշում, թե ինչ սյուժեներ են ցուցադրվելու, ինչ լուրեր են ընթերցվելու, ինչպես նաեւ՝ ծրագրի պլանը: Եթերի պահին թողարկող խմբագիրը կենտրոնական ապարատային բաժնում է գտնվում, հետեւում է թողարկման ընթացքին եւ անհրաժեշտության դեպքում՝ որոշում է ընդունում որեւէ կտոր մտցնել թողարկման մեջ կամ, ընդհակառակը, կրճատել որեւէ սյուժե: Թողարկողների շտաբի մեջ են մտնում նաեւ ծրագիրը վարող լրագրողները, մոնտաժող ռեժիսորները, տեխնիկական խմբագիրները, ռեժիսորը եւ նրա ասիստենտները:

Լրագրողների մասնագիտացված խմբերից (քաղաքական մեկնաբանների, միջազգայնագետների, հատուկ թղթակիցների եւ այլն) շատերը, որպես կանոն, ունենում են իրենց ընդունող խմբագիրները, որոնք ոչ միայն բաշխում են առաջադրանքները, այլեւ ստեղծագործական աշխատանք են տանում: Ընդունող շտաբում են նաեւ նրանք, ում անվանում են researchers. այսինքն՝ մարդիկ, ովքեր որոնում են փաստեր եւ հող են նախապատրաստում հետագա սյուժեների եւ նյութերի համար:

Desk (կենտրոնական խմբագրություն) – տեղ, ուր նստած են բոլոր ղեկավարները: Խմբագրության սիրտը, կենտրոնը, ուր միախառնվում են բոլոր հոսքերը: Հենց այստեղ են ընդունող եւ թողարկող խմբագիրները հետեւում, որպեսզի նյութերը լինեն մշակված եւ լուրերի տեսքով ներկայացվեն լսարանին: Թերթերում ընդունող խմբագրին անվանում են լուրերի բաժնի խմբագիր կամ պատասխանատու խմբագիր:

Առավոտյան խմբագիր – անձ, ով թերթում պլանավորում է բաշխում է առաջադրանքները աշխատանքային օրվա սկզբում: Երեկոյան (գիշերային) խմբագիրը նույն թողարկողն է, ով երեկոյան եւ գիշերը պետք է որոշի, թե ինչ է տպագրվելու թերթի վաղվա համարում:

Պատասխանատվության նման բաշխումն, իհարկե, հղի է հակասություններ առաջ բերելու վտանգով: Գործնականում լուրերի բոլոր խմբագրությունները տուժում են ընդունող եւ թողարկող խմբագիրների լարված հարաբերություններից եւ անգամ իշխանության համար բացահայտ պայքարից: Լրագրողները, լուսանկարիչները, օպերատորները ստիպված են

միաժամանակ երկու տիրոջ ծառա լինել, իսկ վերադաս դեկավարությունը մշտապես փորձում է այդ երկու ուժերի միջև հավասարակշռություն սահմանել եւ պահպանել այն:

Այն իրավիճակը, երբ ընդունող խմբագիրը առաջադրանքներ է տալիս այն թեմաներով, որոնք հետաքրքիր չեն թողարկողի համար, ի վերջո դառնում է անտանելի խմբագրության աշխատողների համար: Նյարդայնացնում է նաեւ այն, որ, ասենք, շուտ բռնկվող թողարկող խմբագիրը հապշտապ առաջադրանքներ է տալիս այն լրագրողներին, ովքեր այդ պահին այլ սյուժեներ են պատրաստում: Մյուս կողմից, լրատվական աշխատանքի մշտական ուղեկիցներն են ստրեսները, շտապողականությունը, անակնկալները, այդ պատճառով մենք հաճախ ենք ստիպված լինում հաշտվելու պլանները խախտելու հետ: Սակայն չպետք է մոռանալ, որ լուրերի թողարկումը շուրջօրյա գործ է: Աշխատակիցների մեծ մասը ստիպված է աշխատել հերթափոխով: Աշխատանքի մեծ մասը յուրաքանչյուրից պահանջում է ոչ միայն ճկունություն, այլեւ սահմանված պլանների նկատմամբ հարգանք:

Այդ երկու ուժերի միջև հակասությունը համարյա անլուծելի է, սակայն ենթակա է կարգավորման, եթե խմբագրակազմի յուրաքանչյուր անդամ իրեն ամբողջի մի մասնիկ է զգում, իսկ խմբագրությունն իր առջև ընդհանուր նպատակներ է դնում եւ ունի հստակ մշակված քաղաքականություն: Լավագույն արդյունքների կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ ընդունող եւ թողարկող խմբագիրները աշխատանքում չեն խոչընդոտում իրար, այլ, ընդհակառակը՝ ձգտում են մեկ նպատակի: Լրագրողը պետք է ցանկություն ունենա այդ անվերջանալի «փոխանցումավազքում» իր սկսած գործը ուրիշին փոխանցելու: Լուրերի խմբագրությունում «միայնակ գայլը» դատապարտված է անհաջողության:

Ընդունող եւ թողարկող լրագրողներ

Դեկավար աշխատանքի փորձ ունեցող մի մոլեռանդ լրագրող մի առիթով հեզմանքով նշել է, թե գոյություն ունի լրագրողի երկու տեսակ. ընդունող եւ թողարկող. հարցն այն է, թե ով է նրանցից ավելի վատը:

«Ընդունող» լրագրողն անփոխարինելի է, երբ անհրաժեշտ է իրավիճակը մշտական հսկողության տակ պահել: Նա հսկայական թվով կապեր եւ աղբյուրներ, լավ ձեւավորված արխիվ ունի: Ոչ մի նորություն չի սպրդի նրա զգոն հայացքից: Դժբախտությունն այն է, սակայն, որ նա հազվադեպ է որեւէ բան ներկայացնում լսարանի դատին: Նրա գիտելիքներն այդպես էլ իրենն են մնում, քանզի ամբողջ ժամանակը ծախսվում է տեղեկություններ փնտրելու եւ դրանք որսալու վրա. ստեղծագործելու համար ժամանակ չկա: Այլոց հազվադեպ է հաջողվում իմանալ այն, ինչ նա գիտի:

«Թողարկող» լրագրողն աշխատում է նույնախիսի փութաջանությամբ, սակայն տարբերությունն այն է, որ վերջինս անխոնջ ստեղծագործում է: Նրա ձայնը հնչում է ռադիոյի լուրերի բոլոր թողարկումներում, նա անընդհատ հեռուստատեկրաններին է, հասցնում է մեկը մյուսի հետեւից գրքեր, ֆելիետոններ, մեկնաբանություններ գրել: Հասարակությունը պաշտում է նրան: Մի հարց է միայն առաջանում. ե՞րբ է նա հաջողացնում տեղեկություններ հավաքել իր հրապարակումների համար, եթե անընդհատ ուղիղ եթերում է:

Ոսկե միջինը՝ հավասարաչափ «ընդունող» եւ «թողարկող» լրագրող լինելը, հենց այն է, ինչին յուրաքանչյուր լրագրող պետք է ձգտի:

Պատասխանատու հրատարակչի դերը

Շվեդիայի սահմանադրությունը հստակորեն նշում է, թե ով է պատասխանատու այն ամենի համար, ինչ տպագրվում է մամուլում կամ եթեր է հեռարձակվում: Այդ պատասխանատվությունը դրված է մամուլում՝ պատասխանատու հրատարակչի, ռադիոյում եւ հեռուստատեսությունում՝ պատասխանատու թողարկողի վրա: Թերեւս սա Շվեդիայում միակ պաշտոնատար անձն է, որ նման իշխանություն ունի.

«Պատասխանատու հրատարակչի խնդիրներից են՝ տպագիր օրգանի հրատարակությանը հետեւելու եւ նրա բովանդակության վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասությունները: Այսպիսով, ոչ մի նյութ չի կարող տպագրության ընդունվել հրատարակչի կամքին հակառակ: Նրա իրավասությունները սահմանափակելու ցանկացած փորձ ապօրինի է»:

«Մամուլի ազատության մասին» օրենք, գլուխ 5, §3

«Մամուլի ազատության մասին» օրենքը տարածվում է տպագիր հրատարակությունների վրա, սակայն ռադիո եւ հեռուստատեսային ծրագրերի պատասխանատու թողարկողներին վերաբերող նման դրույթներ կան նաեւ «Ֆոսքի ազատության մասին» օրենքում: Երկու օրենքները սերտորեն համահունչ են իրար եւ ունեն գանգվածային լրատվամիջոցների աշխատանքին առնչվող մի շարք դրույթներ: Տարեկան չորս եւ ավելի անգամ լույս տեսնող ցանկացած շվեդական պարբերական հրատարակությունում, ինչպես նաեւ հեռուստատեսային եւ ռադիո ծրագրերում պետք է նշանակվեն պատասխանատու հրատարակիչներ (թողարկողներ), ովքեր անձամբ պատասխանատու են հրապարակումների եւ սյուժեների բովանդակության համար: Ոչ մի նյութ չի կարող հրապարակվել՝ առանց պատասխանատու հրատարակչի որոշման, ոչ մի սյուժե չի կարող հանվել լուրերի ծրագրից պատասխանատու թողարկողի կամքին հակառակ: Միայն նա կարող է պատասխանատվության ենթարկվել որեւէ խախտման համար:

Ի դեմս պատասխանատու հրատարակչի շվեդական օրենսդիրները ստեղծել են մի յուրատեսակ կոլեկտիվ՝ մեդավորի, որը երբեմն ստիպված է պատասխան տալ ուրիշների՝ լրագրողների, խմբագրության աշխատակիցների, տեղեկատուների արած-չարածների համար: Սա մամուլի եւ խոսքի ազատության երաշխիքներ է ապահովում: Ոչ մի պետական հաստատություն, կազմակերպություն կամ պաշտոնատար անձ իրավունք չունի որոշելու, թե ինչը կարող է հրապարակվել կամ չհրապարակվել:

«Անթույլատրելի է, որ ռադիոծրագրում օգտագործվելու նախատեսված սյուժեի բովանդակությունը կամ ձայնագրությունը մինչեւ հրապարակվելը վերահսկողության ու ստուգման ենթարկվի իշխանությունների կամ հասարակական մարմինների կողմից: Իշխանությունների եւ այլ հասարակական մարմիններին չի թույլատրվում, առանց սույն օրենքի պահանջները հաշվի առնելու, արգելել կամ փորձել խոչընդոտել սյուժեների կամ ձայնագրությունների հրապարակմանը՝ նրանց բովանդակության վերաբերյալ տվյալներ կամ ենթադրություններ ունենալու հիմնավորմամբ»:

«Ֆոսքի ազատության մասին» օրենք, գլուխ 1, §3

Սա նշանակում է, որ Շվեդիայում, ինչպես որ այլ ժողովրդավարական երկրներում արգելված են պաշտոնական գրաքննությունն ու հրապարակումների այլ լուրջ սահմանափակումները: Պատասխանատու հրատարակչի կառույցը ապահովում է անհատ լրագրողի պաշտպանությունը հնարավոր պատիժներից կամ հետապնդումներից: Բոլոր սխալների համար պատասխան է տալիս պատասխանատու հրատարակիչը:

Ուադիոյում ընդունված է, որ իբրեւ պատասխանատու թողարկիչ, որպես կանոն, հանդես է գալիս խմբագրության ղեկավարը: Նրա դերն ու խնդիրները նման են նրան, որ դրվում են պատասխանատու թողարկչի վրա, չնայած հնարավոր է դրանք ավելի բարդ լինեն: Խոշոր խմբագրություններում լուրերի նախապատրաստումն ու եթեր հեռարձակումը շուրջօրյա է, այդ թվում՝ երեկոյան, երբ ղեկավարը կարող է բացակայել: Սա հատուկ պատասխանատվություն է պահանջում լրագրողներից ու թողարկող խմբագիրներից: Մի քանի որոշումներ աշխատակիցները կարող են ընդունել ինքնուրույն: Սակայն բարդ

իրավիճակներում, մասնավորապես երբ հարցն առնչվում է էթիկական կողմին, որոշումը միշտ ընդունում է պատասխանատու թողարկողը:

Երաշխավորվող գրականություն

Ullman John and Colbert Jan: The Reporters Handbook. St. Martins Press 1991.

4

Խոսիր կոնկրետ՝ տ նյութերի մասին

Accuracy, Brevity and Clarity. այսպես է ձեռակերպել լուրեր պատրաստելու իր հավատո հանգանակը ամերիկյան ABC հեռուստաընկերությունը: Այդ երեք բառերը՝ ճշգրտություն, հակիրճություն, պարզություն, լրագրության հիմքերի հիմքն են:

Լուրը պետք է լինի վայելուչ (բարեկիրթ). սա տեղեկատվություն հաղորդելու գլխավոր սկզբունքներից մեկն է: Տեղեկությունները, որոնք մեզանից ստանում է լսարանը, պետք է լինեն ճշգրիտ եւ ստուգված այնքան, որքան հնարավոր է: Ռ-ադիոհեռուստատեսային լրագրողների համար հատկապես կարեւոր է հակիրճությունը. նրանք անգամ խոշոր ու բարդ իրադարձությունները մեկնաբանելիս պետք է կարողանան տեղավորվել մի քանի րոպեի, իսկ երբեմն էլ՝ վայրկյանների մեջ, ընդամին՝ ունկնդրին հասցնելով իրադարձության ողջ էությունը: Դրա համար անհրաժեշտ է գրել պարզ տեքստեր եւ օգտագործել բոլորին հասկանալի կադրերի լեզուն:

Ճշգրտություն, հակիրճություն, պարզություն: Ես ցանկանում եմ այս երեքին ավելացնել նաեւ չորրորդը՝ կոնկրետություն: Հետաքրքրությունը շարժել կարող է միայն կոնկրետությունը: Սա վերաբերում է ինչպես քաղաքականությանը, այնպես էլ՝ լրագրությանը: Կոնկրետ տվյալներն ու մանրամասները միշտ ուշադրություն են գրավում, ինչը հատկապես կարեւոր է հեռուստառադիոծրագրերում, որոնցում տեղեկատվություն հաղորդելու ինտենսիվությունն ու սեղմությունը ավելի մեծ են, քան մամուլում:

Նույնացում (համանմանեցում)

Լուրերը պատմում են մարդկանց մասին, նրանց, ովքեր ինչ-որ ապրումներ են ունեցել, ինչ-որ բան են անում, ում անմիջականորեն առնչվում է այս կամ այն որոշումը:

Կոնկրետացնելով իր հաղորդումը՝ լրագրողը լսարանին հնարավորություն է տալիս գտնելու նորության հետ իր առնչությունները:

Առավել հեշտ է նույնացման հասնել այսպես կոչված իրադարձային լուրերում: Հասարակությունը ցանկանում է տեսնել ու լսել իրադարձության կամ պատահարի մասնակիցներին: Կատարվածի մասին տեղեկատվությունը լրագրողը կարող է հաղորդել ակնառեսների բառերով: 1995 թվականի աշնանն «Էստոնիա» շոգեմալի խորտակումը Շվեդիայում բոլորին էր հուզել, սակայն մարդկանց վրա հատկապես խորն էր երկու ողջ մնացած ուղեւորների՝ Սառայի եւ Քենթի պատմածների ազդեցությունը: Ողբերգության մասին նրանց պատմությունը մարդկանց հնարավորություն տվեց իրենց պատկերացնելու այն մարդկանց հետ, ովքեր այդ ճակատագրական գիշերը «Էստոնիայում» էին:

Որեւէ մարդու ճակատագրի մասին պատմությունը օգնում է հեռուստադիտողին, ռադիոունկնողին կամ ընթերցողին իրեն նրա հետ համամասնեցնել անգամ այն ժամանակ, երբ խոսքը աղետների կամ դժբախտ դեպքերի մասին չէ: Մարդկանց համար առավել հեշտ է բարդ երեւոյթներն ու քաղաքական գործիչների որոշումներն ընկալել առանձին մարդու կամ ընտանիքի օրինակով: Լրագրության հիմնական սկզբունքներից մեկը խոշոր եւ բարդ երեւոյթները հասարակ մարդկանց օրինակով լուսաբանելն է:

Հիվանդանոցի ծննդաբերական բաժանմունքի փակվելու մասին կարելի է պատմել երեխայի ծննդին սպասող կնոջ խոսքերով: Ինչպե՞ս է ազդելու իշխանությունների որոշումը նրա վրա: Ի՞նչ ազդեցություն է ունենալու գործարանի փակումը բանվորի եւ նրա ընտանիքի կյանքի համար: Ինչքա՞ն է փոքրանալու թոշակառուի ընտանեկան բյուջեն հեռախոսային սակագների բարձրացումից հետո: Հասարակ մարդկանց պատմություններն այն մասին, թե ինչ ազդեցություն են ունենում քաղաքական գործիչների կամ իշխանությունների որոշումներն իրենց կյանքի վրա, օգնում են լսարանին ճանաչելու ինքն իրեն եւ ավելի լավ հասկանալու իրադարձությունների էությունը:

Նույնիսկ նա, ով ինչ-որ բան է անում, կարող է օգնել բարդ եւ խճճված հարցում համանմանություն գտնելուն: Շվեդիայի ֆինանսների նախարարը պետական բյուջեի նախագիծն անձամբ հանձնում է Ռ-իքսդագ (խորհրդարան): Այժմ, կատարելով իր ավանդական երթը կառավարական տնից դեպի Ռ-իքսդագ, նա կարիք չունի ճկվելու բազմաթիվ թղթապանակների ծանրությունից. պետբյուջեի ամբողջ նախագիծը տեղավորվում է մեն-մի լազերային սկավառակում, որը նախարարը հպարտությամբ ցուցադրում է լրագրողներին: Այս կոնկրետ մանրամասնը կարող է պետական բյուջեի նախագծի բարդ թեմայի մասին պատմությունն ավելի մատչելի դարձնել:

Քաղաքական բանավեճերում գլխավոր դերը դրանց մասնակիցներինն է, նրանցը, ովքեր հանդես են գալիս նկատառումներով, պահանջներով, քննադատությամբ կամ առաջարկություններով: Նույնիսկ ամենավերացականից կարելի է պատրաստել միանգամայն դյուրամարս լուր՝ այն «կցելով» իրադարձության մասնակիցներին: Եթե այդպիսիք չկան, ապա հավանաբար կան տուժողներ կամ՝ այնպիսիք, ում կատարվածն առնչվում է: Պետական բյուջեի նախագծով լազերային սկավառակը տեղադրելով համակարգչի մեջ՝ մենք իմանում ենք, թե ինչ է նշանակում այդ բյուջեն հասարակության համար եւ ինչ ազդեցություն է ունենալու տարբեր խավերի կյանքի վրա: Բնակչության այն խմբերի եւ առանձին քաղաքացիների համանմանեցումը, որոնց վրա ազդում է այս կամ այն քաղաքական կամ տնտեսական որոշումը, լրագրության հիմնական խնդիրներից մեկն է:

Սակայն կարելու է, որ այդ նպատակին հասնելու ձգտելիս չտրվեք ծեծված համեմատություններ եւ ստերեոտիպեր օգտագործելու գայթակղությանը: Վերջին տարիներին շվեդական ՉԼՄ-ները «ստեղծել են» ճգնաժամի գոհի անփոփոխ կերպարը. միայնակ մայր, որի եկամուտը չի բավականացնում իրեն ու իր երեխային կերակրելու համար: Երկրորդ տարածված ստերեոտիպը՝ Շվեդիայի ծանր ժամանակների խորհրդանիշը, թանկարժեք առանձնատանը բնակվող ընտանիքն է, որը զանազան նպաստների կրճատումից հետո բողոքում է, թե իրենք շուտով ստիպված կլինեն վաճառել տունը:

Շատ լրագրողներ պարզունակացնում են իրենց խնդիրը՝ լուրջ քննարկում պահանջող թեման վերածելով հուզական, հոգեցունց մի պատմության, որը գուրկ է քննադատական վերլուծությունից: Ի՞նչ է թաքնված այս կամ այն որոշման հետեւում: Կայի՞ն, արդյոք, այլընտրանքներ եւ ինչպիսի՞: Ի՞նչ հետեւանքներ կարող են ունենալ այն որոշումները, որոնք մենք քննադատում ենք. ահա հարցեր, որոնց պատասխանները լրագրողը պոտք է փորձի գտնել:

Ընդհանուրը մասնավորում է երեւում

Լրագրության մեջ կոնկրետացումը համանմանեցում է պահանջում, սակայն որեւէ մեկի կամ ինչ-որ բանի մասին պատմությունը պետք է լինի ընդհանուր թեմայի մի մասնիկը:

Առանձին մարդու ճակատագրի մասին պատմելը պետք է ծառայի առավել խոշոր իրադարձությունները լուսաբանելու նպատակին: Յուրաքանչյուր թեմայում պետք է լինի «գրվանի տակ դրվածը», որի հանգամանքները բացատրվում են կոնկրետ օրինակով:

Ութսունական թվականներին շվեդական ռադիոյի նորությունների «Էխո» խմբագրությունը որոշեց իր ունկնդիրներին տեղեկացնել շվեդական հեռահաղորդակցության գերատեսչությունը («Տելեվերկետ») հնաոճ հաստատությունից ժամանակակից ձեռնարկության վերածելու գործընթացին: Թեման ռադիոյի համար բավականին բարդ էր ու վերացական, սակայն դժգոհ բաժանորդներից մեկի զանգը խմբագրությանն օգնեց ունկնդիրների մոտ հետաքրքրություն առաջացնելու եւ այդ իրավիճակում իրեն տեսնելու: Ռադիոունկնդիր Մոնիկա Տրեգեմբոն նկարագրեց «Տելեվերկետի» աշխատանքի մեթոդները. երբ նա բողոքել էր խոսակցությունների սխալ լրացված անդորրագրի համար, նրա հեռախոսն անջատել էին: Նրա պատմությունը խմբագրությունում հեռախոսագանգերի փոթորիկ առաջացրեց. շատ ունկնդիրների Մոնիկայի պատմությունը հիշեցրել էր այդ գերատեսչության հետ առնչվելու իրենց սեփական փորձը: Կոնկրետ դեպքն օգնեց բացահայտելու «Տելեվերկետի» աշխատանքի խոշոր թերությունները:

Սակայն եթե կոնկրետ դեպքի մասին պատմությունը համընդհանուր հիմնախնդրի մասնիկ չէ եւ չի հանգեցնում առավել խոշոր հարցեր լուսաբանելուն կամ գոյություն ունեցող թերությունները բացահայտելուն, ապա լուրը կորցնում է իր նշանակալիությունը լսարանի համար: Կոնկրետի մասին տեղեկացնելով, մենք, միեւնոյն է, պետք է տեղեկացնենք կարեւորի մասին: Ընտրելով մասնավոր օրինակ, մենք պետք է հիմնավորենք, թե ինչու ենք հենց այդ ընտրել:

Պատմության դրամատուրգիան

Ռադիոյում եւ հեռուստատեսությամբ պատմություններ ներկայացնելու տեխնիկայի ոսկե կանոններից մեկը պատմությունը կոնկրետից սկսելն է՝ այնուհետեւ վերացականին անցում կատարելու համար: Լրագրողը սկզբում պետք է ներկայացնի խնդրի վավերագրական բնույթը, ցույց տա դրա էությունը, լսարանի մոտ հետաքրքրություն առաջացնի կոնկրետ օրինակով: Ունկնդիրը կամ հեռուստադիտողը, խորամուխ լինելով իրականության մեջ, սկսում է ինքն իրեն հարց տալ, թե ինչպես եւ ինչու կարող էր այդպես պատահել: Լսարանի հետաքրքրասիրությունն արթնացնելուց հետո, լրագրողն անցնում է երկրորդ փուլին՝ բացատրություններին: Եթե լրագրողն իր պատմությունը սկսի վերացականից, լսարանը, չընկալելով խնդրի էությունը, կկորցնի հետաքրքրությունը սյուժեի նկատմամբ եւ հավանաբար այն կլսի «ականջի պոչով»: Միշտ պետք է սկսել խնդիրը սահմանելուց, կոնկրետը պետք է նախորդի վերացականին: Այսպիսի մեթոդի է կոչում հեռուստադրամատուրգ Բոբ Ֆոսը:

Ռադիոյում, հեռուստատեսությունում եւ մամուլում դրամատուրգիական հնարքներն, իհարկե, իրարից տարբերվում են: Թերթում լուրերը ներկայացվում են ուղղակի, առանց երկդիմի ակնարկների: Թերթային հոդվածն ամենից հաճախ սկսվում է ամենագլխավորից եւ ավարտվում ամենից քիչ հետաքրքիր մանրամասներով, հաճախ նրա համար, որ անհրաժեշտության դեպքում դրանք հնարավոր լինի կրճատել՝ առանց բովանդակությունը խեղաթյուրելու: Խոշոր կամ կարեւոր իրադարձությունները ռադիոյով եւ հեռուստատեսությամբ նույնպես ներկայացվում են ուղղակի ու ճակատային՝ ինչպես մամուլում, այն դեպքում, երբ սովորական ռեպորտաժը կառուցվում է պատմության դրամատուրգիայի սկզբունքներով: Սյուժեն պետք է ունենա լավ մտածված հանգույց, միջնարար եւ ավարտ: Այն հետեւում է իրադարձությունների կամ կոնֆլիկտի ընթացքին: Դրամատուրգիական առումով լավ մտահղացված ռեպորտաժի ավարտի կրճատումն ուղիղ եթերում հավասարագոր է փոքրիկ աղետի:

Լրագրողն ու օպերատորը դեռեւս նկարահանման վայրում պետք է մտածեն սյուժեի մուտքի եւ ավարտի մասին: Կարճ տեղեկատվական հաղորդում նկարահանելիս կարիք չկա

դիմելու հատուկ հեռուստադրամատուրգիական հնարքների: Շվեդական լուրերի ծրագրերի սյուժեներն, իբրև կանոն, սկսվում են հեռուստադիտողին հարցազրույցի օբյեկտին ներկայացնող կադրերով: Սովորաբար օպերատորը սյուժեի սկզբում խոշոր պլան է վերցնում, իսկ «նահանջը» օգտագործում է եզրափակիչ կադրերում:

Ռեպորտաժին նախորդող ընդհանրացմամբ մենք ոչ միայն շարժում ենք հեռուստադիտողի հետաքրքրասիրությունը, այլև նրա հետ անխոս պայմանավորվում ենք, թե ինչի մասին է լինելու սյուժեն: Դա օգնում է ուրվագծելու քննարկվող թեմայի սահմանները, որոնք մենք պետք է խստորեն պահպանենք: Պետք չէ դեսուդեն ընկնել. սյուժեի համար քննարկվող մեկ թեման էլ բավական է: Եթե ռեպորտաժն սկսվում է Ստոկհոլմի Կենտրոնական կամրջի վրա ավտոմոբիլային խցանումները ցուցադրող կադրերով, ապա անդրադարձեք հենց այդ թեմային: Դրանից շեղումները, ասենք՝ Էրեսունի կամրջի շահագործումից հետո նրա վրա հնարավոր խցանումների մասին պատմությունը շփոթության մեջ է գցում հեռուստադիտողին:

Սյուժեի սկզբնական կադրերն ու դրան ուղեկցող տեքստը մի տեսակ դրամատուրգիական խայժ են, որ լրագրողը նետում է հեռուստադիտողին՝ ակնարկելով իրադարձությունների հետագա զարգացումն ու լարելով նրա ուշադրությունը: Այդ կադրերը չպետք է դուրս լինեն սյուժեի համատեքստից, ավելին՝ դրանք պետք է զարգացնել նյութի շարունակության մեջ: Տրամաբանությունը հուշում է, որ ցուցադրելով բյուջեի նախագիծը ձեռքին Ռիքսդագ գնացող ֆինանսների նախարարին, պետք է սյուժեի վերջում ցուցադրել, թե ինչպես է նա բացում դուռը եւ մտնում խորհրդարանի շենք: Նման սյուժեն ավարտելու հնարավոր տարբերակներից մեկը. ֆինանսների նախարարը, պետական բյուջեի նախագիծը հանձնելով խորհրդարանի խոսնակին, զբաղեցնում է իր տեղը Ռիքսդագի նիստերի դահլիճում:

Պատմելու դրամատուրգիական հնարքները ազդում են լսարանի կողմից իրականությունն ընկալելու վրա: Դա հզոր ուժ է, որի չարաշահումը կարող է նրան վերածել աճապարարության միջոցի:

Զգո՛ւյ՜. «մարդակեր» կադրեր են

Թղթապանակը ձեռքին դեպի Ռիքսդագ քայլող ֆինանսների նախարարին ներկայացնող կադրերը Շվեդիայում հեռուստատեսային հայտնվեցին դեռևս վաթսույնական թվականներին: Այդ կադրերն առանձնակի դրամատիկությամբ աչքի չեն ընկնում, սակայն գործողություն են պատկերում եւ կադրից դուրս հնչող տեքստի համար հիանալի տեսաշար են: Լրագրողին տեսաշար է անհրաժեշտ իր պատմության համար: Կադրերը դառնում են տեսողական պատմության հիմքը եւ լրագրողի տեքստի (speakertext) լրացումը: Երբ տեսաշարն ու տեքստը համապատասխանում են իրար, ապա պարտադիր է, որ լրագրողը բառերով ասի այն ամենը, ինչ ցանկանում է հայտնել հեռուստադիտողին, ինչպես դա ստիպված է անել ռադիոլրագրողը: Եկեք դիտարկենք վերը հիշատակված օրինակը՝ պետական բյուջեի նախագիծը խորհրդարան հանձնելու մասին: (Ներդիր 1):

Հաճախ հեռուստատեսությունը մակերեսային զգացմունքների միջոց են անվանում: Սա այնքան էլ ճիշտ չէ: Այն կարող է լինել նաեւ շատ արդյունավետ ու տեղեկատու: Շատ բան, որ ռադիոլրագրողը ստիպված է պատմել, հեռուստալրագրողը կարող է տալ պատկերներով: Մեր դիտարկած օրինակում հեռուստալրագրողը կարիք չունի անվանելու ֆինանսների նախարարին. բոլորն են տեսնում, որ դա Էրիկ Օսթրինկն է, որ նա ժպտում է՝ չնայած անձրեւին, տեսնում են, թե ուր է նա գնում եւ թե ինչպիսին է պետբյուջեի նախագծով լազերային սկավառակը: Բանավոր տեքստի խնայված վայրկյանները լրագրողը կարող է օգտագործել հեռուստադիտողին պետական բյուջեի մասին ավելի շատ տեղեկություններ տալու համար:

Զգու՛ք կադրերին ձեր փոխարեն խոսելու հնարավորություն տալ: Սակայն զգույ՜ եղեք չափազանց արտահայտիչ կադրեր պատկերելիս: Հաճախ դրանք կլանում են

հեռուստադիտողի ողջ ուշադրությունը՝ նրան շեղելով սյուժեի բովանդակությունից: Այս երեւոյթն ընդունված է անվանել «մարդակերություն»: Պատկերները կարող են այնքան վառ, զգացմունքային կամ սարսափելի լինել, որ հեռուստադիտողը, հայացքը հատելով դրանց (կամ, ընդհակառակը, հայացքը շրջելով), կկորցնի հետաքրքրությունը կադրից դուրս հնչող պատմության նկատմամբ: Շվեդիայում նման լրագրության դասական օրինակներից մեկը երեւան է եկել դեռեւս սեւ-սպիտակ հեռուստատեսության ժամանակաշրջանում: Սյուժեն նկարահանվել է 1961 թվականին: Լրագրողը, գտնվելով ատամնաբուժարանում, փորձում է պատմել բնակչության ատամնաբուժական ապահովագրության հանձնաժողովի աշխատանքների արդյունքի մասին: Օպերատորը խոշոր պլանով նկարում է բժշկին, որը միացնելով բորմեքենան սկսում է փորել հաճախորդի ատամը: Այդ պահից սկսած լրագրողի խոսքերն արդեն չեն հասնում հեռուստադիտողին, նրա ուշադրությունը կենտրոնացած է բազկաթռոնի նստած դժբախտի վրա:

Ահա նման «մարդակերության» եւս մի օրինակ. երկրի պաշտպանության մասին լրագրողի պատմությունն ուղեկցվում է ավիակրի տախտակամածին մարտական ինքնաթիռի վայրէջքը պատկերող կադրերով: Հեռուստադիտողն անթարթ հետեւում է էկրանին, նրա համար հետաքրքիր է իմանալ, թե ինչպես կկատարվի վայրէջքը. այդ պահին նրան արդեն չեն հետաքրքրում ռազմական արդյունաբերության հիմնախնդիրները: Տեսաշարը «կուլ տվեց» տեքստը:

Կադրի «մարդակերության» ավելի անմեղ օրինակ է տեքստի եւ տեսաշարի վատ համապատասխանեցումը: Լրագրողը տալիս է Բորիս Ելցինի անունը, իսկ կադրում այդ պահին Բիլ Զիմերոնն է: Կամ՝ լրագրողը պատմում է շրջակա միջավայրի վրա ավտոմեքենաների արտանետած գազերի ազդեցության մասին, իսկ էկրանին՝ հեծանվորդների խումբ է:

Սրա հակառակը այսպես կոչված «նարնջային հեռուստատեսությունն» է. տեքստի եւ տեսաշարի ծայրահեղ հանդիչ, սակայն չափազանց պարզունակ համապատասխանեցումը: Լրագրողն արտասանում է «նարինջ» բառը, եւ կադրում նարինջ է հայտնվում, որը փոխարինվում է խնձորով, հենց որ հնչում է «խնձոր» բառը: Չգտեք պահպանել տեքստի եւ տեսաշարի միջեւ հավասարակշռությունը: Կոնկրետությունն օգտակար է, սակայն երեւակայությունն ու նրբագեղությունը բարձրացնում են սյուժեի որակը:

Մանրամասներ

Ուադիոն զուրկ է պատկերներ օգտագործելու հնարավորությունից, սակայն ունի քննարկվող առարկան նկարագրելու, դրա մասին պատկերացում տալու ուժ: Պատմելու եւ նկարագրելու արվեստին տիրապետող լրագրողը կարող է բառերով ավելի մեծ պատկերավորության հասնել, քան տալիս է հեռուստատեսային սյուժեն: Սակայն դրա համար ռադիոլրագրողը պետք է տիրապետի ամենափոքր իսկ մանրամասները նկատելու եւ դրանք այնպես ունկնդրին ներկայացնելու հմտության, որ վերջինս կարողանա մտովի ստեղծել սյուժեին առնչվող սեփական պատկերները: Մա չի նշանակում, թե լրագրողը պետք է երկարացնի իր տեքստը կամ այն ծանրաբեռնի մանրամասներով ու մակդիրներով: Բավական է ավելացնել միայն ունկնդրի մոտ իրադարձությանը ներկա լինելու զգացում առաջացնող մեկ-երկու ճշտում: Ասենք, պետական բյուջեի նախագիծը խորհրդարան հանձնելու մասին վերը բերված ռադիոտեքստում լրագրողների խումբը «աղմկոտ է», լազերային սկավառակը՝ «ծիածանի բոլոր գույներով ճաճանչավորված», դեղնա-կապտավուն ժապավենը՝ «գեղեցիկ»: Իհարկե, կարելի է այդ բառերը դնել նետել՝ առավել արդյունավետության եւ տեղեկատվությունն ավելացնելու մղումով, սակայն այդ դեպքում սյուժեն կդառնա ծանրաբեռնված եւ ընկալման համար առավել դժվար:

Իր նկարագրությամբ հասնելով նրան, որ ունկնդիրն իրեն իրադարձության սկանատես զգա՝ լրագրողը կարող է անցնել լազերային սկավառակի բովանդակությունը

ներկայացնելուն: Ռադիոլրագրողին, թերեւս, դրա համար ավելի շատ ժամանակ պետք կլինի, քան հեռուստալրագրողին: Վերջինիս համար, տեքստը պատրաստելիս, ամենաառաջին կանոնը բոլոր ավելորդ բառերը դուրս նետելն է: Նույն կանոնն իրենց աշխատանքում կիրառում են նաեւ թերթերի լրագրողները: Թերթային տեքստում կարելի է յուրազնայն առանց ուժեղացնող բառերի: Տեքստը պետք է լինի արտահայտիչ, բովանդակալից եւ հաղորդի իրադարձության մթնոլորտը:

Փոխանունություն (մետոնոմիա) եւ փոխաբերություն (մետաֆորա)

Լրագրողը պետք է տիրապետի հռետորական արվեստին հատուկ հնարքների եւ սովորի դրանք կիրառել հեռուստատեսային ժանրերում: Փոխանունությունն ամբողջականի հատվածը կամ մի պատահիկն է: Հեռուստատեսային սյուժեում, բազմաթիվ պատճառներով, մենք կարող ենք ցուցադրել միայն իրադարձությունների առանձին դրվագներ, որոնցով հեռուստադիտողը պետք է պատկերացում կազմի ամբողջ իրադարձության մասին: Կադրերն ու ձայնը վերջինիս օգնում են պատկերացնելու իրականությունը: Կինոնկարներն ու հեռուստատեսությունը սովորեցրել են հանդիսատեսին մեկնաբանել կադրերի լեզուն:

Խոշոր պլանով ցուցադրելով հրացանի ձգանքը քաշող մատները, մենք դիտողին հասկացնում ենք, որ դա հրաձիգի ձեռքն է՝ վերջինիս անգամ կադրում չցուցադրելով: Եթե էկրանին հայտնվում է կարմիր վարդերի փունջը ձեռքին մի տղամարդ, իսկ կադրից դուրս բազմալեզու խոսակցություններ են լսվում, եւ բարձրախոսից հնչում է ինքնաթիռի ժամանման մասին հաղորդումը, ապա հասկանալի է, որ տղամարդն օդանավակայանում դիմավորում է իր սիրեցյալին:

Փոխանունությունը կարող է հեռուստատեսային դրամատուրգիայի չափազանց արտահայտիչ միջոց լինել: 1989 թվականի Ծննդյան տոներից մեկ օր առաջ շվեդ օպերատոր Դան Յոմեին հաջողվեց նկարահանել, թե ինչպես են ռումինական սահմանապահները հանում «Բարի գալուստ Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետություն» ցուցանակը: Այդ ցուցանակի հակառակ կողմում գրված էր՝ «Farewell»: Նկարահանված մի քանի կարճ վայրկյանները պատկերել էին Ռումինիայի համար պատմական իրադարձությունները: Դան Յոմայի մեկ այլ ռեպորտաժում Մոսկվայի փողոցներից մեկում գարնանային արեւոտ օրը ավտոմեքենաների հոսքին ընդառաջ է վազում մի թափառող շուն: Այս կադրերով օպերատորին հաջողվել է պատկերել «պերեստրոյկայի» հակասություններն ու կատակլիզմները:

Փոխաբերությունը հասկացության պատկերավոր արտահայտությունն է: Ավազի ժամացույցը կարող է խորհրդանշել կյանքի անցողիկությունը: Փոխաբերությունը բանաստեղծի գեներն է, որ հաջողությամբ կարող է կիրառվել հեռուստատեսային լրագրության մեջ: Այն, որ մեկը «գայլի պես քաղցած է», «եզան նման համառ» կամ «աղվեսի պես խորամանկ» կարելի է պատկերել տեսաշարով: Շիշը տենդագին սեղմած դողդողացող ձեռքը կարող է դառնալ սոցիալական քաղաքականության խորհրդանշիչ: Թառամած վարդի պատկերը շվեդ լրագրողները հաճախ են օգտագործում ընտրողների մոտ սոցիալ-դեմոկրատների հեղինակության անկումը ներկայացնող սյուժեներում*:

Հստակություն

Որպեսզի նյութը լսարանի համար հասկանալի լինի, հաղորդումը կոնկրետացնելն ու խորհրդանշիչներ օգտագործելը բավական չէ: Անհրաժեշտ է նաեւ, որ լրագրողը գլուխ հանի քննարկվող հարցից: Միայն նա կարող է հստակ ու պարզորոշ ներկայացնել իրադարձությունը, ով ինքը հասկանում է այդ: Լրագրողը պետք է լինի բազմազանակ եւ տեսականորեն պատրաստ կատարելու առաջադրանքը:

* Վարդը Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության խորհրդանշիչն է - ծ.թ.

Շվեդական ռադիոյի ծրագրերի ու լսարանի ուսումնասիրման բաժնի աշխատակիցներ Ուլե Ֆինդալը եւ Բիրգիտա Հոյերը բազմաթիվ ուսումնասիրություններից հետո նշել են մի քանի գործոններ, որոնք ազդում են զանգվածային լրատվության միջոցներով ներկայացված այս կամ այն իրադարձության` հասարակության ընկալման վրա:

Ընդգծել պատճառներն ու հետեւանքները. Որպես կանոն, սյուժեում առաջին բանը, ինչի վրա ուշադրություն է դարձնում ունկնդիրը կամ հեռուստադիտողը, իրադարձության վայրն ու դրա մասնակիցներն են: Խոսքն, առաջին հերթին, այնպիսի կոնկրետ մանրամասների մասին է, ինչպիսիք են աշխարհագրական անունները, քիչ թե շատ հայտնի մարդկանց անունները, ֆիրմաների կամ ձեռնարկությունների անվանումները եւ այլն: «Աֆղանստանում բախումներ են տեղի ունեցել...» կամ «Վոլվոն» կրճատում է 200 աշխատակիցների...»: Սյուժեի բովանդակության այս բաղկացուցիչ տարրերը հասարակությունը կընկալի եւ կհիշի համարյա ինքնաբերաբար, այն դեպքում, երբ պատճառներն ու հետեւանքները կմղվեն երկրորդ պլան: Տեղեկատվության նման մատուցման հետեւանքը լսարանի կողմից նկարագրվող իրադարձության համատեքստից պոկված առանձին դրվագների կցկտուր ընկալումն է:

Բավական չէ միայն հպանցիկ հիշատակել այն, ինչ իրադարձության հիմնական պատճառն է եւ այն, թե ինչի կարող է դա հանգեցնել: Պատճառների եւ հնարավոր հետեւանքների մասին պատմությունը պետք է առանցքային լինի տեղեկատվության մեջ` դրանով իսկ բացահայտելով իրադարձության էությունը: Միայն այդ դեպքում լսարանը հնարավորություն կստանա ամբողջովին ընկալելու նախապատմություն եւ տրամաբանական զարգացում ունեցող իրադարձության սյուժեն:

Այսպիսով, ընկալման համար մատչելի սյուժե ստեղծելու նախադրյալները այս կամ այն իրադարձության պատճառների բացատրությունը եւ դրա հնարավոր հետեւանքները ներկայացնելն են:

Ֆինդալը եւ Հոյերը ընդգծում են այդ գործում տեսաշարի ընտրության եւ մոնտաժի կարեւորությունը: Իրադարձության կոնկրետ մանրամասները դժվար չէ պատկերել, սակայն նման լուծումները հաճախ են հանգեցնում սյուժեի հատվածական ընկալման: Իսկ իրադարձության պատճառների եւ հետեւանքների պատկերումը կօգնեն հեռուստադիտողին հետեւելու դրան եւ ամբողջությամբ հասկանալու այն: Տվյալ դեպքում ձայնի եւ տեսաշարի ներդաշնակությունը վճռական դեր է կատարում: Շարժում, հաճախ փոփոխվող կադրերի առատությունը կամ լրագրողի պատմածի հետ որեւէ առնչություն չունեցող պատկերները խանգարում են բովանդակության ընկալմանը: Նշանակություն ունի նաեւ նյութի մատուցման ընտրված տեմպը: Կադրից դուրս չափազանց արագ տեմպով, առանց դադարների հնչող խոսքը հաճախ հանգեցնում է նրան, որ հեռուստադիտողը դժվարանում է հասցնել ընկալել եւ «մարսել» բովանդակությունը:

Նույնին է հանգեցնում նաեւ ճապաղ կամ վերացական արտահայտությունների եւ տերմինների օգտագործումը: Վերացական թվերին պետք է կոնկրետ բովանդակություն տալ: Ձեր կարծիքով շա՞տ մարդիկ են հասկանում, թե ինչ ասել է 230 հեկտար հողը: Քանի՞ սածիլ կարելի է տնկել այդ տարածության վրա: Ինչքա՞ն ժամանակ կպահանջի նման գործը, եթե դա անեն երկու հոգի: Ի՞նչ է իրենից ներկայացնում մեկ միլիոն դոլարը եւ քանի գավաթ զարեջուր կարելի է խմել այդ փողով: Ինչքան մեծ են թվերը, այնքան դրանք վերացական են մարդկանց համար: Ո՞վ կարող է հաշված թույլների ընթացքում պատկերացնել, թե ինչ է 120 միլիարդ դոլարը:

Հռետորական արվեստի հնարքների եւ սեփական երեւակայության օգնությամբ լրագրողը կարող է ընկալման համար ոչ մատչելի վերացական թվերը կամ

հասկացությունները վերածել կերպարների՝ ունկնդրին կամ հեռուստադիտողին օգնելով պատկերացում կազմելու դրանց մասին:

«Լիտերատուրնայա գազետա»-ի թղթակից Անատոլի Ռուբինովին հաջողվել է կոնկրետացումը լրագրողի հզոր զենք դարձնել անգամ խորհրդային ամենալճացած տարիներին: Կապի նախարարության աշխատանքի նրա քննադատական վերլուծությունը կոնկրետացման ուժը հաստատող դասական օրինակ է:

Փոստի աշխատանքը ստուգելու համար Ռուբինովը ինքն իրեն հարյուր նամակ ուղարկեց: Նա նամակները փոստարկղ գցեց Մոսկվայի տարբեր մասերից՝ հաշվառելով յուրաքանչյուր առաքման ժամը: Փորձի նպատակն այն կարգի գործելը ստուգելն էր, ըստ որի մինչև առավոտյան ժամը 10-ը ուղարկված նամակները հասցեատիրոջն են հասնում նույն օրը: Ռուբինովը (ինչպես որ Մոսկվայի ցանկացած այլ բնակիչ) հրաշալի գիտեր, որ այդ կարգն իրականում չի գործում, սակայն նրան ապացույցներ էին անհրաժեշտ:

Հարյուր նամակից եւ ոչ մեկը նույն օրը լրագրողին չհասավ: Դրանց մեծ մասը նա ստացավ երրորդ օրը միայն, իսկ վերջինները՝ եւս մի քանի օր անց: Ամենաուշը Ռուբինովին էին հասել կապի նախարարության մոտակայքի փոստարկղեր նետված նամակները: Այժմ հեղինակը կոնկրետ տվյալներ եւ մանրամասներ ուներ, սակայն հողված գրելու համար նրան ֆաբուլա էր անհրաժեշտ:

Լեւ Տոլստոյի թանգարանում գրողի բազմաթիվ գրառումներ ու նամակներ են պահպանվում: Ռուբինովին հաջողվեց այնտեղ գտնել փոստային պարզորոշ շտամպով մի նամակ, որը 1890 թվականի հունվարի 22-ին Տոլստոյը Մոսկվայից ուղարկել էր Պետերբուրգի հանրային գրադարանի տնօրենին: Փոստային շտամպը վկայում էր, որ նամակը հասցեատիրոջն է հանձնվել հաջորդ օրը, չնայած այն ժամանակ շոգեքարշով գնացքը Մոսկվայից Պետերբուրգ էր գնում 14 ժամում: Ռուբինովի փորձի օրերին արդեն գործում էր «Մոսկվա - Լենինգրադ» ճեպընթաց գնացքը: Ռուբինովը մի նամակ էլ ուղարկեց այն փողոցից, որում ժամանակին ապրել էր Տոլստոյը: Լենինգրադի գրադարանի տնօրենին հասցեագրված նամակը վերջինիս հասավ միայն չորրորդ օրը:

Ռուբինովի լրագրողական հետաքննությունը ցույց տվեց, որ փոստը Տոլստոյի ապրած տարիներին ավելի արդյունավետ էր աշխատում, քան խորհրդային ժամանակաշրջանում: Նամակն այն կոնկրետ փաստն էր, որի վրա աչք փակել հնարավոր չէր:

Կոնկրետ փաստը մերկացնող լրագրությանը պայթուցիկի ուժ է հաղորդում:

Երաշխավորվող գրականություն

Foss Bob. Narrative Technique and Dramaturgy in Film and Television. SVT Training, 1992.

Նախապատրաստվի՛ր եւ լսի՛ր

Հաճախ ասում են, թե հարցազրույցն արվեստ է, իսկ արվեստը չի հանդուրժում կանոններով ու ցուցումներով սահմանափակումներ: Սակայն ամենաօժտված եւ տաղանդավոր նկարիչն անգամ իր ստեղծագործական ուղին սկսում է գեղանկարչության օրենքների ուսումնասիրությունից, որպեսզի հետագայում խախտի դրանք: Հարցազրույցը լրագրողից պահանջում է տիրապետող որոշակի տեխնիկայի, չնայած հասկանալի է, որ հաջողված հարցազրույցը ավելին է, քան միայն լավ հարց տալու հմտությունը:

Եկեք խոսենք հարցազրույց վարելու ոչ թե տեխնիկայի, այլ մեթոդիկայի մասին: Տիրապետելով դրան՝ մենք կկարողանանք ձեռակերպել այնպիսի հարցեր, որոնց պատասխանները կարող են լինել անսպասելի, բովանդակալից եւ մերկացնող:

Նախապատրաստություն

Հաջող հարցազրույցի հիմքերի հիմքը լրագրողի մանրակրկիտ նախապատրաստությունն է: Նա պետք է լավ պատկերացնի գրույցի ընթացքում քննարկվելիք նյութը, դրա մասին իմանա համարյա այնքան, որքան հարցազրույց տվողը: Այն պատկերացումը, թե լրագրողը պետք է տա լսարանի միջին մակարդակն արտացոլող հախուռն ու կոպիտ հարցեր, կեղծ է: Միայն նա կարող է հարցնել էականի մասին, ով տիրապետում է գրույցի նյութին: Հարցազրույցի ներածական կամ առաջին հարցը կողմնակի մարդուն կարող է պարզունակ ու միամիտ թվալ, սակայն տալով այն, լրագրողը որոշակի նպատակ է հետապնդում: Նախապատրաստված լինել հարցազրույցին՝ նշանակում է, որ մենք ինչ-որ չափով կարող ենք կանխատեսել, թե ինչ պատասխան կտրվի այս կամ այն հարցին եւ կարող ենք պատրաստել նաեւ հետագա այլընտրանքային հարցերը:

Լրագրողը պետք է նախապատրաստվի նաեւ այն հարցազրույցին, որի ժամանակ խոսքը, ասենք, կառավարական հանձնաժողովի փաստացի կատարածի կամ կոնրետ նախագծի մասին է: Առավել դժվար է նախապատրաստվել կառավարության կամ խորհրդարանի այն առաջարկների մասին գրույցին, որոնք նախկինում չեն քննարկվել: Սակայն այս դեպքում էլ լրագրողի համար կարելու է ընդհանուր պատկերացում ունենալ գրույցի թեմայի մասին: Դա հնարավորություն է տալիս հարցերը ձեռակերպել ըստ էության եւ կատարել համապատասխան մեկնաբանություններ: Թերթերի կտրածոները, սեփական գրառումները, ինտերնետային էջերը լրագրողին օգնում են տեղեկատու նյութեր հավաքել, պատրաստվել հարցազրույցին եւ հարցազրույց տվողի մոտ տգետի տպավորություն չթողնել: Նախապատրաստության մի ձեւ է նաեւ քննարկվող բնագավառից տեղյակ մարդկանց հետ գրույցը կամ նախնական հանդիպումը հարցազրույց տվողի հետ:

Ուսողիցում եւ հեռուստատեսությունում հաճախ է օգտագործվում նախնական հարցազրույցը. այսինքն՝ մինչ հաղորդումը տեսագրելը կամ ձայնագրելը ծրագիրը վարողի կամ հետազոտող թղթակցի գրույցը հարցազրույցի հրավիրված անձնավորության հետ: Սա հնարավորություն է տալիս լրագրողին համոզվելու իր հարցադրումների ճշտությանը, մեկ անգամ էլ ստուգելու փաստերը, ինչպես նաեւ՝ օգնելու գրուցակցին պատկերացում կազմելու առաջիկա գրույցի թեմայի մասին: Աշխատանքի այս եղանակը լրագրողին գիտելիքներ է տալիս եւ օգնում է կողմնորոշվելու:

Նախապատրաստական աշխատանքը պակաս կարելու չէ նաեւ այսպես կոչված դիմանկար – հարցազրույցների համար: Տեղեկություններ հավաքելու համար հարցազրույց – դիմանկարի հերոսի բարեկամների, գործընկերների հետ գրույցները, նրա հետ նախկինում կայացած հարցազրույցների ընթերցումը կամ դիտումը, նրա սեփական հոդվածների կամ ելույթների ծանոթանալը նախապատրաստական աշխատանքի ինքնին հասկանալի տարրերն են: Սակայն նման ակտիվությամբ նախապատրաստվելը նաեւ վտանգ է պարունակում. լրագրողը կարող է դառնալ իր հավաքած նյութի գերին: Իրականության կամ

անձի նկարագրի այլոց պատկերացումները հաճախ են մի դիմանկարից մյուսը «քոչում»։ Անճշտությունները, լեզենդները, սխալ փաստերը կրկնվում են ժամանակի ընթացքում ուռճացվում են հաղորդումներում եւ հողվածներում։ Հարցազրույցի հերոսն աստիճանաբար վերածվում է այլոց ստեղծած մի առասպելական կերպարի։ Հարցազրույց – դիմանկարի պատրաստվող լրագրողը, կարդալով արխիվային նյութերը, կարող է ընկնել կանխակալության, մարդու մասին սուբյեկտիվ ու կեղծ պատկերացումների ազդեցության տակ, եւ այդ ժամանակ արդեն նրա համար միեւնույն է, թե իրականում ինչ է ասում ու անում այն մարդը, ում մասին նախապատրաստվում է գրել։ Հարցազրույցի կարեւոր պայմաններից մեկը դրան առանց կանխակալության նախապատրաստվելն է։

Հարցերի ձեւակերպումը

Հարցազրույցի նախապատրաստվող թղթակիցը, մեր լավագույն պատկերացումներով, պետք է ժամերով նստի գրադարանում՝ կարդա գրքեր, տեղեկագրեր, հողվածների ընտրանիներ, արխիվային գրառումներ, ընդամին՝ հասցնելով վարել նաեւ նախնական գրույցներ՝ տեղեկություններ հավաքելու համար։ Սակայն իրական կյանքում, խմբագրության լարված առօրյայում, համարյա այդպես չի լինում։ Հաճախ հարցազրույցի նախապատրաստվելիս ժամանակը բավականացնում է միայն գործընկերների հետ խորհրդակցելու համար։

Նախ եւ առաջ լրագրողը պետք է ինքն իր համար որոշի, թե ինչ հարցազրույց է պատրաստվում վարել, ինչի մասին եւ ինչ նպատակով։ Դա նշանակում է, որ լրագրողը նախապես պետք է ձեւակերպի եւ գրառի իր հարցերը։ Լավագույնները՝ մտածված, կարճ, ճշգրիտ եւ պարզ հարցերն են։ Հաճախ դրանք ձեւակերպելու լավ ելակետ է հենց իր՝ լրագրողի հետաքրքրասիրությունը. «Ահա, թե ինչ կցանկանայի իմանալ», «Դա կարող է հետաքրքիր լինել մեր ունկնդիրների (ընթերցողների, հեռուստադիտողների) համար»։

Ձեր ձեւակերպած յուրաքանչյուր նախադասությունը պետք է միայն մեկ հարց պարունակի։ Մեկ նախադասությամբ երկու հարց տալով՝ դուք հարցազրույց տվողին հնարավորություն եք ընձեռում խուսափելու «անհարմար» հարցին պատասխանելուց եւ պատասխանելու միայն մեկին։ Հարցը պետք է տրվի հենց հարցական նախադասությամբ եւ ոչ թե հաստատական։ Դրա ձեւակերպումը պետք է պատասխանողին ստիպի ասելու այն ամենը, ինչ մտածում եւ զգում է կամ այն ապրումները, որ ունեցել է։ Այս պատճառով պետք է խուսափել այն հարցերից, որոնք ենթադրում են միանշանակ «այո» կամ «ոչ» պատասխաններ, ձգտել դրանք թողնելու այնքան առկախ, ինչքան հնարավոր է։ Այն հարցերը, որոնք ոմանց անմիտ են թվում, իրականում հաճախ ունենում են անսպասելի եւ հետաքրքիր պատասխաններ։ Ահա նման հարցերի օրինակներ.

- Ի՞նչ եք զգում դուք...:
- Ի՞նչ նկատի ունեք:
- Ինչպե՞ս եք դա պատկերացնում:
- Ի՞նչ եք պատրաստվում անել այժմ:

Հարցերն էլ անհրաժեշտ է մանրակրկիտ նախապատրաստել, սակայն դա բոլորովին չի նշանակում, թե հարցազրույցի ժամանակ լրագրողը պետք է կուրորեն հետեւի իր պատրաստած գրառումներին։ Այդ սեւագիր հարցերը միայն վստահություն են ներշնչում եւ հնարավորություն են տալիս պահպանելու ինքնատիրապետումը։ Ես միշտ ձեռքիս ունենում եմ պատրաստի հարցերով նոթատետր, սակայն հարցազրույցի ժամանակ հազվադեպ եմ նայում դրան եւ երբեք հարցերն անգիր չեմ անում։

Կանադացի լրագրող, գրող եւ լրագրության դասախոս Ջոն Սավոտսկին արդեն երկար տարիներ զբաղվում է հարցազրույց վարելու մեթոդիկայի մշակմամբ։ Նրա մշակած մեթոդի հիմնարար սկզբունքն է՝ հարցերը պետք է լինեն ուղղակի, չեզոք եւ պարզ։ Ուղղակի

տրված հարցերը ստիպում են մարդուն մտածել բովանդակության մասին եւ ջանքեր գործադրել պատասխանելու դրանց: Այս դեպքերում դուք հնարավորություն ունեք ոչ միայն բացատրություններ ստանալու, այլև լսելու պատասխանողի տեսակետը: Միանշանակ պատասխան ենթադրող հարցերը հարցազրույց տվողին հնարավորություն են ընձեռում «այո» կամ «ոչ» ասելուց հետո պատասխանը շեղել իր ուզած ուղղությամբ:

Հարցերը պետք է չեզոք լինեն: Միայն այդ դեպքում հարցազրույց տվողը կարող է արտահայտվել եւ դառնալ զրույցի առանցք: Լրագրողի անձնական կածիքով համեմված հարցերը զրույցի առանցք են դարձնու նույն այդ լրագրողին:

Երբ լրագրողն արդեն նախապատրաստել եւ գրառել է հարցերը, կարելի է փոքրիկ ինքնատեստավորում անել. կարո՞ղ է արդյոք հարցազրույց վարողը պատասխանել այս կամ այն հարցին, իսկ գուցե նա բավարար չափով իրազե՞կ չէ տվյալ խնդրին, նա պատասխանատո՞ւ է, արդյոք, կատարվածի համար...

Հարցազրույցին նախապատրաստվելու եղանակներից մեկը ձեւակերպված հարցերն ինքն իրեն տալն է: Կարո՞ղ ես ինքդ պատասխանել այդ հարցին: Այս պարզագույն հարցը հաճախ է լրագրողին ստիպում լիարժեք հարցազրույցի համար անհրաժեշտ հետագա այլընտրանքային հարցեր կազմելու: Եթե չեք ցանկանում հարցերը ձեզ վրա փորձարկել, փորձեք դրանք տալ ձեր գործընկերոջը կամ բարեկամին: Քաղաքական գործիչները, պատրաստվելով լրագրողների հետ հանդիպման, հաճախ փորձեր են անում. նրանց գործընկերները կատարում են լրագրողների դերեր՝ փորձելով այդ գործչին «նեղը գցել»: Այսպիսի գործնական խաղերը օգնում են նրանց մշակելու ընդհանուր պատասխաններ, որոնք հաճախ կապ անգամ չեն ունենում իրենց տրվող հարցերի հետ: Գործընկերների հետ հարցազրույցի ստուգողական փորձարկումը հնարավոր անակնկալներին նախապատրաստվելու հիանալի միջոց է, որով, ընդամին, լրագրողը կարող է համոզվել նաեւ, թե արդյո՞ք իր հարցադրումներն արդիական են ու ճիշտ:

Արգելվում է...

Որոշ հարցեր ես կտրականապես կարգելի: Ջոն Սավոտսկին կազմել է հարցազրույց վարող լրագրողի տասը «մահացու մեղքերը».

Միանշանակ պատասխաններ («այո», «ոչ») ենթադրող հարցեր

Հարցականի փոխարեն հաստատական նախադասություն

Համատեղ երկու հարց

Ծանրաբեռնված հարցեր

Պատասխանը հուշող հարցեր

Հարցի մեջ մեկնաբանությունների եւ սեփական գնահատականների առկայություն

Հարցի մեջ ենթադրությունների եւ հերյուրանքների առկայություն

Հարցի մեջ պիտակների առկայություն

Հարցի մեջ չափազանցությունների առկայություն

Դժվար ըմբռնելի հարցեր

Ցավոք, մենք շատ հաճախ ենք անտեսում այս արգելքները՝ մոռանալով, որ վերը հիշատակված հարցերը օգտագործելով, մենք սահմանափակում ենք ամբողջական տեղեկատվություն ստանալու եւ տարածելու մեր հնարավորությունները: Լրագրողներին բնորոշ սխալներից են միանշանակ պատասխաններ ենթադրող հարցերը եւ հարցականի փոխարեն հաստատական նախադասություններ օգտագործելը: Հարցազրույցի տեխնիկան կատարալեզործելու լավ միջոց է եթեք հեռարձակված (տպագրված) սեփական հարցազրույցները լսելը կամ դիտելը (ընթերցելը) եւ վերոհիշյալ ցուցակով այն վերլուծելը:

Չուն Սավոտսկու թվարկած «մահացու մեղքերին» ես կավելացնեի հարցի ես մեկ տեսակ, որը կարելի է տալ, որի պատասխանով, սակայն, ամենեւին պարտադիր չէ տանջել ունկնդրին կամ հեռուստադիտողին: Խոսքը կոնկրետ փաստական տվյալներ, թվեր ստանալու կամ իրադարձության ենթատեքստը պարզելու նպատակով հնչած հարցերի մասին է: Իհարկե, թղթակիցը պետք է ստանա փաստեր ու տվյալներ եւ դրանք իր լսարանին հասցնի հնարավորինս մատչելի ու հասկանալի: Սակայն չպետք է մոռանալ, որ հենց լրագրողը պետք է կատարի տվյալների ընդհանրացումը եւ ոչ թե հրշեջ խմբի պետը կամ քաղաքական գործիչը: Հարցազրույցը պետք է լուսաբանի եւ մեկնաբանի այս կամ այն բարդ խնդիրը, ունկնդրին, հեռուստադիտողին կամ ընթերցողին ծանոթացնի հարցազրույց տվողի տեսակետներին, նրա զգացումներին եւ տպավորություններին եւ ոչ թե թվարկի անվերջ փաստեր ու չոր թվեր:

- Պարոն մայր, կարո՞ղ եք ասել, թե քանի մարդ է զոհվել հրդեհի հետեւանքով:
- Միջոցների տնտեսման նպատակով քանի՞ մանկապարտեզ պետք է փակվի (հարց տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին):
- Պարոն տնօրեն, քանի՞ մարդ կազատվի աշխատանքից արտադրությունն արտասահման տեղափոխելու հետեւանքով:

Այս հարցերն ինքնին այնքան էլ վատը չեն, սակայն հնչեցնելով դրանք եւ պատասխանները ներկայացնելով լսարանին, մենք դրանով իսկ մեր դերը փոխանցում ենք ուրիշին: Լրագրողը եւ ոչ թե մեկ ուրիշը պետք է պատմի, թե ինչպես են զարգացել դեպքերը խոշոր հրդեհի ժամանակ: Հարցը, որ մենք պետք է տանք հրշեջ խմբի պետին, այս է. «Ինչո՞ւ եք դուք գրուցում լրագրողների հետ, երբ ձեր թիկունքում հրդեհն է մոլեգնում»: Տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը պետք է պարզաբանի, թե ինչու է որոշել փակել այդքան մանկապարտեզներ: Տնօրենին պետք է հարցնել ձեռնարկության շահույթների եւ ձեռնարկությունն արտասահման տեղափոխելու իր «պարաշյուտային պայմանագրի»^{*} մասին: Թղթակիցը հաղորդում է փաստերը, իսկ իրավասու անձինք բացատրում են, թե ինչպես եւ ինչու է որեւէ բան տեղի ունեցել:

Սակայն երբ խոսքը այնպիսի վիճելի հարցերի մասին է, որոնց շուրջ հակադիր տեսակետներ են բախվում, միանգամայն արդարացված եւ նույնիսկ անհրաժեշտ է օգտագործել փաստերին վերաբերող հարցերը: Սա վերաբերում է նաեւ այն դեպքերին, երբ անհրաժեշտ է իրադարձությանն ակնհաստես եւ այդ մասին պատմող մարդուն աջակցել շարունակելու պատմությունը:

Ես կցանկանայի արգելել նաեւ վարկածային հարցադրումները, ինչպես, օրինակ. «Ի՞նչ եք անելու դուք, եթե կատարվի այս կամ այն»: Նման հարցերը հեշտ է «ջրել», եւ դրանք, որպես կանոն, հանգեցնում են բովանդակալից գրույցի սահմանափակման: Եւս մի խորհուրդ՝ մեկընդմիջտ հրաժարվեք «Դուք կարո՞ղ եք երաշխավորել , որ...» անմիտ հարցից:

Կառուցվածքը

Նախապատրաստվելով հարցազրույցի՝ դուք ոչ միայն պետք է ձեւակերպեք ու գրառեք ձեր հարցերը, այլեւ մտածեք դրանց հերթականությունը: Լրագրողը պետք է մշակի գրույցի կառուցվածքը, դրա հանգույցը, ավարտը եւ զարգացումը դրամատուրգիայի կանոններով: Սա հատկապես կարեւոր է զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցների համար, քանի որ հարցերն ու պատասխաններն այստեղ լսելի են: Թերթի թղթակիցը հնարավորություն ունի հարցազրույցն ավարտելուց հետո հարցերն ու

^{*} «Պարաշյուտային պայմանագիրը» նախատեսում է ձեռնարկության գլխավոր տնօրենին, պաշտոնը թողնելուց հետո (անկախ պաշտոնանկության պատճառից), պայմանագրով նախատեսված ժամանակաշրջանում վճարել վերջինիս կողմից առաջարկված որոշակի գումար: Որպես կանոն, խոսքը խոշոր գումարների մասին է:

պատասխանները դասավորել այն հերթականությամբ, որն ինքն անհրաժեշտ է համարում: Իհարկե, այսօր ռադիոլրագրողների համար էլ դժվար չէ մոնտաժ անելը, եւ հեռուստալրագրողն էլ կարող է մոնտաժի օգնությամբ գրույցը կառուցել այնպես, ինչպես ցանկանում է, սակայն լավագույնը հարցերը տրամաբանական հերթականությամբ հնչեցնելն է: Հարցազրույցի որակն այդ դեպքում նշանակալիորեն բարելավվում է, իսկ հարցազրույցն էլ ստացվում է առավել կանոնավոր ու մտածված:

Չպետք է վախենալ այն հարցերից, որոնք ինչ-որ մեկին միամիտ են թվում: Երբեմն լրագրողն ինքն է բարդացնում իր խնդիրը՝ ձեւակերպելով չափազանց «խուճուճ» ու խրթին հարցեր, որոնցում փորձագետի խոսքի երանգներ են հնչում: Շատերը համարում են, թե իրենք այնքան փորձառու եւ հմուտ լրագրող են, որ իրենց վայել չէ անհեթեթ ու պարզ հարցեր տալ: Սակայն ինչու այն անձի հետ հարցազրույցը, ով վերջերս որեւէ ցնցում է ունեցել, կարելու է կամ հետաքրքիր իրադարձության վկա է եղել, չսկսել գերպարզունակ մի հարցով. «Հը, ինչպե՞ս եք ձեզ զգում...»: Հենց նոր ազատված պատանդը, դատարանի դահլիճից ազատ արձակված մեղադրյալը, ընտրություններում հաղթած քաղաքական գործիչը կամ մրցումներում տանուլ տված մարզիկը այդ անպաճույճ հարցը լսելով կարող են ընթերցողների, ունկնդիրների, հեռուստադիտողների համար չափազանց հետաքրքիր կերպով պատմել իրենց զգացմունքների ու ապրումների մասին: Այդ հարցը կարելի է տարբեր կերպ հնչեցնել, այն նույնիսկ կարելի է հանել մոնտաժի ժամանակ, որովհետեւ դրա գլխավոր նպատակը կատարվածի մասին զգացմունքային եւ հախուռն պատասխան կամ պատմություն ստանալն է:

Հաջորդ պարզ ու ինքնին հասկանալի հարցը, որ կարելի է տալ որեւէ որոշման պատասխանատուին կամ նրան, ում ասածները հասարակության մեջ բանավեճ են առաջացրել, «Ինչո՞ւ»-ն է: Երբ ինչ-որ հետաքրքիր կամ կարելու բան է կատարվում, բոլորս ուզում ենք իմանալ, թե ինչու դա տեղի ունեցավ եւ ինչպես: Ահա թե ինչու այս երկու հարցերը իսկը գրույցը սկսելու համար են:

Ջրույցը կարելի է ամփոփել ապագային վերաբերող ուղղակի հարցով. «Ի՞նչ եք պատրաստվում անել այժմ», «Ձեր հաջորդ քայլը...» եւ այլն: Որքան էլ տարօրինակ թվա, հասարակ հարցերը սովորաբար տալիս են ամենահամարձակ եւ փորձառու լրագրողները:

Լավ նախապատրաստված հարցազրույցում պարտադիր լինում են մի քանի հիմնական հարցեր, որոնք այն զարգացնում են ժամանակագրական կարգով կամ հարցազրույցի տրամաբանությամբ: Նման հարցերը գրույցի առանցքն են, նրա դրամատուրգիական հիմքը: Սակայն դրանց զուգահեռ կան նաեւ այսպես կոչված հետագա կամ այլընտրանքային հարցեր: Ջրուցակցի պատասխաններից կախված դրանք կարող են լինել ճշտող, մեկնաբանություն հայցող կամ առարկող: Այդ հարցերը կարելի է պատրաստել նախօրոք՝ տվյալ հարցազրույցի համար կամ էլ կարելի է մշակել որեւէ համընդհանուր ուրվագիծ:

Հարցազրույցի վերլուծությունը կարելի է կատարել երեք չափանիշներով. գլխավոր թեմա, նախօրոք պատրաստված այլընտրանքային հարցեր եւ չնախատեսված հարցեր: Հարցազրույցի հենքը նախապես պատրաստված հիմնական հարցերն են, որ սկսում են գրույցը, դառնում դրա միջուկը եւ ավարտում այն: Երկրորդ չափանիշը՝ այլընտրանքային հարցերը, կազմվում են նախօրոք՝ հետեւյալ սկզբունքով. «Եթե գրուցակիցը պատասխանի այսպես, ապա կտամ այս հարցը, իսկ եթե պատասխանի այլ կերպ, ապա այս մյուսը...»: Երրորդը՝ չնախատեսված, հրնթացս ծագած հարցերն են: Սա, հավանաբար, հարցազրույցի ամենաբարդ պահն է: Նախապես ձեւակերպված հարցին հանկարծ անսպասելի պատասխան կտրվի, որը կպահանջի ձեր ակնթարթային ու հախուռն արձագանքը: Չնախատեսվածին միշտ պետք է պատրաստ լինել: Հարցազրույցի հանկարծակի շրջադարձը՝ դրա ամենահետաքրքիր պահն է: Հենց այդ ժամանակ հարցազրույցը կարող է անսպասելի ընթացք ունենալ, վերացնել լարվածությունը կամ, ընդհակառակը՝ կրքեր բորբոքել:

Լսելու ընդունակություն

Որպեսզի լրագրողը կարողանա հետագայում տեղին հարցեր տալ եւ հարցազրույցին աշխուժություն հաղորդել, նա պետք է ընդունակ լինի լսելու: Հարցազրույցին նախապատրաստվելը, սեփական հարցերը կազմելն ու գրի առնելը գործի կեսն են: Լսելու ընդունակությունը՝ հաջողված հարցազրույցի երկրորդ կեսն է: Չափազանց փութաջան նախապատրաստվելը կարող է հանգեցնել նրան, որ լրագրողը հարցերը կտա մեխանիկորեն, առանց լսելու, թե ինչ է պատասխանում գրուցակիցը: Նման լրագրողի գլխում մի միտք է միայն. «Դե, գրողը քեզ տանի, ամփոփիր ասելիքդ, որ հասցնեն հաջորդ հարցը տալ»: Նման հարցազրույցը ստացվում է միապաղաղ, սարքովի եւ «չոր»:

(Ներդիր 2)

Յուրաքանչյուր լրագրող, ով հարցազրույց է վարում ուղիղ եթերում, մի փոքր երկյուղում է, որ գրուցակիցը կարող է հանկարծ ինչ-որ անսպասելի բան ասել: Լսելու ընդունակությամբ օժտված լրագրողը պետք է պատրաստ լինի իրադրության փոփոխության դեպքում հանպատրաստից ստեղծագործելու: Խոսքը ոչ միայն պատասխանների փաստական բովանդակության, այլև հարցազրույցի հուզական կողմի մասին է: Եթե գրուցակիցը ճնշված է, խոսում է դանդաղ եւ մեղմ ձայնով, ապա լրագրողն իր խոսքը պետք է հարմարեցնի նրան: Եվ ընդհակառակը՝ կարիք չկա հարցերը շարժալով կամ կմկմալով ուղղել օլիմպիական խաղերի երջանիկ չեմպիոնին: Լրագրողը պետք է կարողանա հետեւել պատասխանների բովանդակությանն ու գրուցակցի տրամադրությանը:

Հարցազրույցի ժամանակ պետք է միշտ զգոն լինել. եթե պատասխանում հնչում են կամ որեւէ մեկին գնահատող կամ պատիվն արտավորող արտահայտություններ, ապա դրանք չպետք է թողնել անպատասխան: Լրագրողը պետք է ժամանակին առարկի դրանց կամ մեկնաբանի նման արտահայտությունները: Ոչ ճիշտ ձեւակերպումները կամ լսարանի համար անհասկանալի տերմինները պետք է բացատրվեն: Երբեմն հարցազրույց վարող լրագրողը պետք է կտրուկ փոխի զրույցի ուղղությունն ու ոճը: Եթե գրուցակիցը, փորձելով իր նկատմամբ համակրանք առաջացնել, սկսում է ինքն իրեն ներկայացնել իբրեւ հանգամանքների բերումով հետապնդվող գոհ, ապա խելամիտ չի լինի, եթե լրագրողը շարունակի հարցազրույցը մեղադրական ոճով: Եվ դարձյալ շատ բան կախված է ունկնդրելու եւ լսելու ընդունակությունից:

Հարցազրույցի ժամանակ կարելու է նաեւ գրուցակիցների դասավորությունը: Պետք չէ, որ լրագրողը գրուցակցին շատ մոտ նստի: Նախ՝ դա ծանրաբեռնում է կադրը, այնուհետեւ՝ գրուցակցին խանգարում է կենտրոնանալ եւ հանգիստ պատասխանել հարցերին: Մյուս կողմից՝ չպետք է նաեւ շատ հեռու նստել. դա էլ մի տեսակ լարված մթնոլորտ է ստեղծում: Դասավորությունը որոշելիս՝ առաջնորդվեք ձեր փորձով եւ ներզգացողությամբ: Երկու կողմերն էլ պետք է հարմարավետություն զգան:

Լրագրողը պետք է կարողանա նայել գրուցակցի աչքերին: Երբեմն հոնքի մի շարժումը կամ գրուցակցի վրա գցված մի հայացքը բավական են, որ վերջինս շարունակի զարգացնել թեման: Հեռուստահարցազրույցի ժամանակ կարելու է, որ գրուցակիցը, հարցերին պատասխանելիս, աչքերն այս ու այն կողմ չգցի կամ էլ սառած հայացքով չնայի խցիկին, այլ իր հայացքը պահի լրագրողի վրա: Երբեւէ հարցազրույցի չմասնակցած մարդուն պետք է բացատրել, թե ինչպես իրեն պահի խցիկի առջեւ: Եթե հարցին պատասխանելիս գրուցակիցը նայում է ձեր աչքերին, կարողացեք դիմանալ նրա հայացքին:

Ռադիոլրագրողը կարող է իր գրուցակցին խրախուսել շարունակելու պատմությունը գլխի թեթեւակի շարժումով կամ բարեկամական ժպիտով, սակայն հեռուստալրագրողի գլխի շարժումները բարկացնում են հեռուստադիտողին եւ խանգարում ընկալելու զրույցը: Նույն հետեւանքն են ունենում նաեւ ռադիոլրագրողի անընդհատ «այո, այո»-ները, նրա ծիծաղը կամ բացականչությունները: Տալով իր հարցը՝ ռադիոլրագրողը պետք է լուռ լսի

պատասխանը: Պետք չէ գրուցակցին ընդհատել խոսքի կեսին, թույլ տվեք, որ նա ավարտի իր նախադասությունը: Դա ոչ միայն դիմացինի հանդեպ հարգանքի նշան է, այլև հետագայում մոռտաժը հեշտացնելու միջոց: Այն ճայնագրությունը, որում երկուսը միաժամանակ խոսում են կամ ընդհատում են իրար, դժվար է մշակել: Իհարկե, երբեմն անհրաժեշտ է ընդհատել շատախոս գրուցակցի բառերի անընդհատ հոսքը: Սակայն այդ պետք է անել բարեկամական տոնով եւ հնարավորության դեպքում բացատրել, թե ինչու եք ստիպված ընդհատել: Լսելու ընդունակություն ունեցող լրագրողը ընդհատում է այն ժամանակ, երբ գրուցակիցը մի պահ լռում է՝ շնչառությունը տեղը բերելու համար:

Ընդհանրապես, հաճախ լռությունը կարող է փոխարինել անգամ ամենալավ հարցին: Լրագրողի հարցական հայացքը, գլխով համաձայնության նշան անելը կամ առանց բառ իսկ արտասանելու դադարը կարող են ամենաանսպասելի պատասխանների առիթ դառնալ:

Ուշադիր լսելով գրուցակցին՝ փորձառու լրագրողը արդեն գրույցի ընթացքում ընտրում է կարճ ու բովանդակալից արտահայտություններ, որոնք կարելի է օգտագործել իբրև հարցազրույցի սկիզբ կամ ավարտ: Այսպիսով, դեռես գրույցի ժամանակ լրագրողը կարող է մտովի պատկերացնել մոռտաժի հնարավորությունները:

Ստացվում է, որ տալով հարցը, լրագրողը պետք է եւ մտովի նախապատրաստվի հաջորդ հարցին, եւ ուշադիր լսի պատասխանը, որպեսզի բաց չթողնի որեւէ անսպասելի կամ հետաքրքիր բան, եւ միեւնույն ժամանակ՝ պատկերացնի հարցազրույցի մոռտաժը: Նշանակություն չունի, թե լրագրողը որքան է նախապատրաստվել առաջադրանքը կատարելուն, նա կարող է ազատ շունչ քաշել միայն այն ժամանակ, երբ գրույցն ավարտվել է իսկից կամ ճայնագրիչն անջատվել են:

Յուրաքանչյուր լրագրող կցանկանա, որ հարցազրույցն ընթանա անմիջական ու անկաշկանդ գրույցի ձեւով, սակայն եկեք չմոռանանք, որ դրան դժվար է հասնել: Եվ լրագրողը, եւ հարցազրույց տվողը հասկանում են, որ իրենց յուրաքանչյուր բառին հեռուստադիտողներ կամ ռադիոլսողներ են հետեւում, եւ որ՝ դա երկու մարդու սովորական գրույց չէ: Նույնիսկ ամենաանկաշկանդ ու սովորական մթնոլորտում խոսափողը եւ իսկիցը միշտ հիշեցնելու են, որ դա երկու բարեկամների գրույց չէ: Խոսափողը հաճախ կմկմալ է ստիպում փորձառու քաղաքական գործչին, իսկ հեռուստատուղիան կարող է սարսափեցնել անգամ նախարարին:

Հարցազրույցի տարատեսակները

Լրագրողական ժարգոնում հարցազրույցն անվանում են սինխրոն: Այս տերմինը երեւան է եկել առաջին հնչյունային ֆիլմերի հետ, երբ խոսքը ճայնագրվում էր առանձին՝ հատուկ ճայնագրիչով: Մոռտաժի ժամանակ անհրաժեշտ էր համապատասխանեցնել (սինխրոն դարձնել) ձայնը եւ պատկերը: Այժմ արդեն, իհարկե, ոչ ոք չի օգտագործում այդ մեթոդը, սակայն հասկացությունը մնացել է, իսկ տերմինը կիրառում են լրագրողները:

Էթիկական նորմերը եւ գործնական հնարքները մեծապես կախված են հարցազրույցի տեսակից: Կյանքում երբեւէ հարցազրույց չտված մարդուն այլ մոռտեցում է պետք, քան փորձառու քաղաքական գործչին:

Անհրաժեշտ է տարբերակել կարծիք հարցազրույցները, ակնաատեսի հետ հարցազրույցները, «առճակատում» հարցազրույցները, մամուլի ասուլիսները եւ փաստահավաք հարցազրույցները:

Կարծիք հարցազրույցները, թերես հարցազրույցի ամենատարժված տեսակն են: Այս դեպքում գրուցակից կարող է լինել ինչպես հայտնի քաղաքական գործիչը կամ գիտնականը, այնպես էլ բոլորովին անհայտ անձնավորությունը կամ փողոցում զբոսնող անծանոթը: Նման հարցազրույցի նպատակը կոնկրետ հարցի վերաբերյալ հարցվողի գրուցակցի կարծիքն իմանալն է:

- Ի՞նչ կարծիքի եք Էրեսուն նեղուցի վրա կամուրջ կառուցելու մասին:

- Ինչպե՞ս այն կազմի շրջակա միջավայրի վրա:
- Եվրոպական միասնական դրամական գոտուն անդամակցելու առավելության վերաբերյալ ձեր փաստարկները:
- Ի՞նչ նկատի ունեք:

Նման հարցազրույցները չպետք է բարդացնել: Դրանց նպատակն է հնարավորություն տալ, որ մարդն արտահայտի իր տեսակետը: Այնուհետև կարելի է մեկի կարծիքը հակադրել մյուսների կարծիքներին կամ հենց լրագրողի հարցերին: Նման հարցազրույցներում աշխատանքի տարածված ձեւը հակառակ տեսակետը լրագրողի հարցերի միջոցով արտահայտելն է, որպեսզի երկու կողմերն էլ ներկայացված լինեն մեկ զրույցում: Նման հարցազրույցի ժամանակ լրագրողը կարող է քաղաքական գործչին տալ միանգամայն հակառակ քաղաքական բեւեռի տեսակետներն արտահայտող հարցեր, իսկ խոշոր ձեռնարկության ղեկավարին՝ այնպիսի հարցեր, որոնք մտահոգում են ինչպես բաժնետերերին, այնպես էլ ձեռնարկության աշխատակիցներին: Տվյալ դեպքում լրագրողը հարցեր է տալիս, որպեսզի լսի այս կամ խնդրի վերաբերյալ գրուցակցի փաստարկները:

Մոլեռանդ քաղաքական գործչի հետ զրույցում կարելի է հարձակողական ոճ ընտրել՝ նրան նեղը գցելու համար, սակայն պատահական անցորդների հետ հարցազրույցներ վարելիս պետք է ավելի քաղաքավարի լինել: Սա, իհարկե, բոլորովին չի նշանակում, թե չի կարելի փողոցում զբոսնող «հասարակ մահկանացուներին» բարդ հարցեր տալ կամ առարկել նրանց: Նրանք, ովքեր բողոքի են դուրս եկել ինչ-որ բանի դեմ, դժգոհ են որեւէ որոշումից, պետք է կարողանան բացատրել եւ պաշտպանել իրենց տեսակետները: Շատ լրագրողներ գիտակցաբար խուսափում են «հասարակ մահկանացուների» հետ զրույցների ժամանակ առարկելուց կամ սուր հարցեր տալուց, որպեսզի, իբր, չնեղացնեն նրանց:

Ականատեսների հետ հարցազրույցներ. այսինքն՝ զրույցներ այն մարդկանց հետ, ովքեր վկա են եղել որեւէ միջադեպի, դժբախտ պատահարի կամ հանցագործության:

- Պատմեք, խնդրում եմ, թե ի՞նչ է տեղի ունեցել:
- Ի՞նչ տեսաք դուք:
- Ինչպե՞ս զարգացան իրադարձությունները:
- Ի՞նչ եք զգում հիմա:

Ականատեսի պատմության սկզբում լրագրողի լռությունը կարող է ամենալավ հարցից ազդեցիկ լինել: Միեւնույն ժամանակ, չպետք է մոռանալ, որ նման հարցազրույցների ժամանակ լրագրողի վրա մեծագույն պատասխաստվություն է ընկնում: Մարդիկ ցնցումների մեջ հաճախ իրենց ծայրահեղ անբնական են դրսևորում՝ ուշադրություն չդարձնելով, թե ինչպիսին է իրենց պահվածքը կամ զգացմունքների արտահայտումը: Հենց նոր ավտոաղետի գոհ դարձած տղայի մայրը կարող է բռնկվել հիստերիկ ծիծաղի նույնպիսի: Հեռուստացույցի էկրանից դրա ցուցադրումը լրագրողի եւ նրա խմբագրության համար որեւէ արդարացում չի կարող ունենալ: Մենք պետք է հարգենք ողբերգություն ապրած մարդկանց զգացմունքները:

Ականատեսների պատմությունները ռադիոյի եւ հեռուստատեսության գործնականում ամենահետաքրքիր եւ գրավիչ կողմն են: Լսելը, թե ինչպես է որեւէ իրադարձության վկա կամ մասնակից իր բառերով պատմում, թե ինչ է տեղի ունեցել, բոլորովին էլ նույնը չէ, ինչ այդ մասին թերթում կարդալը: Թղթակցի խնդիրը, տվյալ դեպքում, առանց գրուցակցին խանգարելու եւ առանց բազմաթիվ հարցերով ու ռեպլիկներով վերջինիս միջամտելու, նրան արտահայտվելու հնարավորություն տալն է:

«Առճակատում» հարցազրույցները բոլորովին այլ ժանր են: Նման հարցազրույցների ժամանակ մենք կարող ենք նեղը գցել իշխանավորներին, նրանց կանգնեցնել իրենց արարքները բացատրելու անհրաժեշտության առջեւ: Զննադատության ենթարկված անձնավորությանը հնարավորություն է տրվում պատասխանելու մեղադրանքներին,

սակայն նա պետք է նաեւ պատրաստ լինի, որ իրեն բավականին անողորմ կերպով տրվելու են դատափետող հարցեր:

- Ինչո՞ւ եք դուք ծառայողական վարկային քարտերն օգտագործել անձնական նպատակներով:
- Դուք լա՞վ ժամանակ անցկացրեցիք գիշերային ակումբում:
- Ի՞նչ կարող եք պատասխանել նրանց, ովքեր ձեզ կնամոլ են անվանում:
- Ի՞նչ էիք անում դուք սաունայում պռոնկուիների հետ:

Նման հարցազրույցների նախապատրաստումն ու անցկացումը բավականին տարբերվում է մյուսներից. այս դեպքում ձայնագրությունը սկսելուց առաջ հարցազրույց տվողի հետ մտերմիկ գրույցը տեղին չէ, վերջինիս չեն առաջարկում նախապես ծանոթանալ հարցերին, չեն կատարվում փորձնական տեսաձայնագրություններ: Նման հարցազրույցի տեմպը եւ մարտավարությունը հարձակողական բնույթի են: Չուտ գործնական նկատառումներով, սակայն, չէր խանգարի ամենասուր եւ անողորմ հարցը թողնել գրույցի վերջում տալու համար, քանզի պատահում է, որ չափազանց կոշտ հարցից հետո գրուցակիցը բարկության նուպայով հեռանում է հարցազրույցի սենյակից: Եթե դուք հարցազրույցը սկսեք այդպիսի հարցով, ապա վտանգ կա, որ մնաք ձեռնունայն:

Նեղը գցված քաղաքական գործիչը կամ իշխանավորը հաճախ պաշտպանվում է այսպես կոչված «Չեքերի» մեթոդով: Այս մեթոդն առաջին անգամ կիրառել է Ռիչարդ Նիքսոնը՝ 1952 թվականի նախընտրական արշավի ժամանակ: Հենց այդ ժամանակ էր սենատոր Նիքսոնը առաջադրվել իբրեւ ԱՄՆ-ի փոխնախագահի թեկնածու: Նիքսոնին մեղադրում էին, թե կաշառքներ է վերցրել նախընտրական արշավի ժամանակ: Ամեն կողմից իրեն ուղղված հարձակումներից պաշտպանվելու համար Նիքսոնը որոշեց հանդես գալ ճառով, որը քաղաքական պայքարի ողջ պատմության ընթացքում առաջին անգամ հեռարձակվում էր ուղիղ եթերով: Նիքսոնը, վշտահար դեմքով իր հայացքը հատելով ուղիղ խցիկին, հայտարարեց, թե պատրաստ է ամերիկյան ժողովրդին հաշվետվություն տալ իր վաստակած եւ օգտագործած յուրաքանչյուր ցենթի համար: Իր խեղճ կինը հնարավորություն չունեի ջրաքիսի մորթուց մուշտակ գնելու եւ ստիպված էր բավարարվել «պատվարժան հանրապետականի վերարկուով»: Այդ ամբողջ պատմությունը, պնդում էր Նիքսոնը, չարամիտ լիբերալների անվերջ հարձակումների հետեւանք է: Վերջիններս այնքան հեռու են գնացել, որ իրեն մեղադրել են, թե նվեր (ասել է, թե՛ կաշառք) է ստացել Չեքեր * անունով կոկեր-սպանել ցեղի շուն:

- Սակայն նրանք թող ասեն ինչ խելքներին փչի, միեւնույն է՝ մենք շունը մեզ ենք թողնելու, -հանդիսավոր հայտարարեց Նիքսոնը եւ շահեց հեռուստադիտողների համակրանքը՝ խցիկի առջեւ ներկայանալով սիրող ամուսնու եւ կենդանիների բարեկամի կերպարով: Նա ընտրվեց, ինչն իր հերթին, հնարավոր է, փոխեց պատմության ընթացքը: «Չեքերի» մեթոդի էությունն այն է, որ քո նկատմամբ համակրանքի եւ ցավակցության զգացումներ առաջացնես. ախ, այդ չարանենգ լրագրողները, նրանք միայն մի նպատակ ունեն՝ բոլորին մրտել ու վնաս պատճառել: Ահա այդպես էլ ես եւ իմ ընտանիքն ենք հարձակումների թիրախ դարձել, մեզ հետ անարդարացի են վարվում, մեզ հետապնդում եւ թունավորում են: Որքան էլ տարօրինակ թվա, այս ակնհայտ, մինազամայն անթաքույց մարտավարական հնարքը հաճախ է ավարտվել հաղթանակով եւ հաջողությամբ կիրառվել ու կիրառվում է տարբեր սկանդալների մեջ հայտնված քաղաքական գործիչների կողմից:

Հարցազրույց վարող լրագրողը պետք է պատրաստ լինի գրուցակցի նման մարտավարությանը եւ զգոն լինի, որպեսզի չհայտնվի իր համար հյուսված ուռկանի մեջ: Երբ հարցազրույց տվողը սկսում է բողոքել անարդարացի եւ դաժան վերաբերմունքից, լրագրողը հայտնվում է ծանր դրության մեջ, նրա համար արդեն դժվար է եւս մի կոշտ կամ դատափետող հարց տալ: Հենց այս է «Չեքեր» մեթոդի խայծը: «Դե, ահա, հարվածիր

* “Checker”- անգլերեն՝ շախմատի խաղատախտակ

ընկածին, ճիվաղ»,- ըստ էության այս կշտամբանքն է անխոս ուղղվում լրագրողին: Նման իրավիճակից լավագույն ելքն է. կտրուկ փոխել գրույցի ընթացքը եւ փորձել հեռուստադիտողին կամ ռադիոլսողին հասկացնել, որ գրուցակիցն իրականում կոկորդիլոսի արցունքներ է թափում:

- Կոնկրետ ինչպե՞ս է արտահայտվել զանգվածային լրատվության միջոցների կողմից ձեր նկատմամբ անարդարացի վերաբերմունքը:
- Ո՞վ ձեր ննջարանի լուսամուտից լուսանկարեց (նկարահանեց) ձեզ:
- Ե՞րբ է դա տեղի ունեցել:

Բարեհամբույր, խաղաղ հարցերը կարող են շատ արագ ցրել պատրանքն այն տառապյալ կերպարի, որ գրուցակիցը փորձում էր ստեղծել խցիկի կամ խոսափողի առջեւ, իսկ լրագրողներին ուղղված մեղադրանքների վերաբերյալ ճշգրտող հարցերը՝ կօգնեն մերկացնելու նրա հռետորական հնարքները: Իսկ եթե լրագրողը, հանկարծ չնկատի իր համար նախատեսված թակարդը եւ շարունակի մեղադրող տոնով տալ դատափետող հարցեր, ապա գրուցակիցն առանց դժվարության կնվաճի լսարանի համակրանքը: Հարձակողական հարցերը բոլորովին էլ միշտ չէ, որ ամենից արդյունավետն են: Ընդհակառակը, հաճախ առավել արդյունավետ են լինում այն հարցերը, որոնք տրվում են ըմբռնումով եւ բարեկամական տոնով, սակայն սառնարյուն խաղաղությամբ եւ վստահությամբ:

Մամուլի ասուլիսների պայմաններում դժվար է ամբողջական հարցազրույց ստանալ: Իշխանավորները, լավ հնարավորություններ ունեն «Չեքեր» մեթոդի օգնությամբ ջրից չոր դուրս գալ՝ այդքան լրագրողների բազմության առջեւ, որոնք իրար խանգարում են խոսել ու հարցեր տալ: Այսուհանդերձ, շվեդական սովորական «կիսանինջ» մամուլի ասուլիսներում հարցեր հազվադեպ են տրվում: Լինում է նաեւ այնպես, որ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի մամուլի ասուլիսում ընդհանրապես որեւէ ռեպլիկ չի հնչում: Մովորաբար, Շվեդիայում մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպումները անցնում են վաղուց ընդունված կարգով. նա, ով մամուլի ասուլիս է հրավիրել, տալիս է իրադարձության, որոշման կամ առաջարկության ընդարձակ նկարագրությունը, որից հետո լրագրողներին հարցեր տալու հնարավորություն է ընձեռվում: Հեռուստատեսային եւ ռադիոլրագրողների համար իմաստ ունի տեսագրել (ձայնագրել) այն ամենը, ինչ ասվում է մամուլի ասուլիսում: Հետագայում ասվածի ձայնագրությունը կարող է պետք գալ: Եթե խոսքը խոշոր իրադարձության մասին է, ասենք՝ վարչապետի հրաժարականի մասին հայտարարության, ապա ունկնդիրներն ու հեռուստադիտողները շահագրգռված են հենց վարչապետից լսելու այդ որոշման մեկնաբանությունները: Շվեդական մամուլի ասուլիսների առանձնահատկություններից մեկն այն է, որ լրագրողն ինքն է հարց տալիս՝ չսպասելով այն պահին, երբ իրեն ձայն կտան: ԱՄՆ-ում հակառակն է. նախագահի մամուլի ասուլիսի ժամանակ վերջինս անձամբ կամ իր մամուլի քարտուղարն է խոսք տալիս ընտրյալ լրագրողներին: Մյուս թղթակիցներին, լավագույն դեպքում, հաջողվում է խնդրել մեկնաբանություններ տալ:

Սա իշխանավորներին տեղեկատվությունը վերահսկելու անսահմանափակ հնարավորություններ է տալիս: Անցանկալի լրագրողներին կարելի է անտեսել, տհաճ հարցերին՝ չպատասխանել: Իսկ եթե նախագահին, այդ ամենով հանդերձ, հաջողվի խոսափել մեկնաբանություն հայցող այն մեկ մի հարցից, ապա իր համար առավել լավ կլինի: Հենց այս պատճառով շվեդ լրագրողները երկար ժամանակ գիտակցաբար հակազդում էին մամուլի ասուլիսների կազմակերպիչների կողմից լրագրողներին ձայն տալու պրակտիկային: Հաճախ այդ պայքարը վերածվում էր քառսի, քանի որ լրագրողներն ամբողջ ձայնով բղավելով հնչեցնում էին իրենց հարցերը՝ իրար խանգարելով խոսել, ինչը հազիվ թե օգուտ էր գործին: Կառավարական Ռ-ոգներադ նստավայրի Բելա Վենեցիա դահլիճում կազմակերպվող մամուլի ասուլիսների ժամանակ առաջին շարքերը զբաղեցնող հեռուստա եւ

ռադիոլրագրողները, բղավոցներով իրարից խոսք խլելով, փորձում էին հնչեցնել իրենց հարցերը:

Ուղիղ եթերի մի քանի ձախողումներից հետո լրագրողները որոշեցին մշակել մամուլի ասուլիսների ժամանակ լրագրողների վարքի սեփական կանոնները: Մինչ ասուլիսը սկսվելը լրագրողները հավաքվում են եւ որոշում, թե ով է տալու առաջին հարցը: Այն թղթակիցները, ում խմբագրություններն ասուլիսի ընթացքը լուսաբանում են ուղիղ եթերում, պետք է, իհարկե, իրենց հարցերն առաջին հերթին տալու հնարավորություն ստանան: Խորհրդարանական թղթակիցների միավորման անդամ լրագրողների կնքած ոչ պաշտոնական համաձայնությունը նախատեսում է նաեւ, որ հարց տվողն իրավունք ունի զարգացնելու իր թեման հետագա եւս երկու կամ երեք հարցով, սակայն դրանից հետո պետք է խոսքը զիջի ուրիշին: Այս կամավոր համաձայնությունը հնարավորություն չի տալիս, որ դահլիճում տեղ ու տնօրինություն անի մեկ, սովորաբար ամենաճարայիկ ու փորձառու լրագրողը:

Անհույս իրավիճակից ելքը այն թղթակցի համար, ով ոչ մի կերպ չի կարողանում իր հարցը հնչեցնել, այս է. պետք է որսալ պահը, երբ դահլիճում մի պահ լռություն է հաստատվում, ողջ հասակով ոտքի կանգնել եւ բարձր ձայնով տալ կարճ, հստակ ձեւակերպված հարց: Որպես կանոն դա պայթող ռումբի տպավորություն է թողնում, եւ դահլիճում նստած լրագրողները մի պահ կորցնում են խոսելու ընդունակությունը: Սակայն չարժե չարաշահել այս հնարքը, քանի որ այն բավականին արագ կորցնում է իր ազդեցությունը:

Էթիկայի հարցեր

Անհրաժեշտ է հարգել այն մարդու իրավունքները, ում հետ պատրաստվում ես հարցազրույց վարել: Հնարավորության դեպքում անհրաժեշտ է բավարարել ապագա հարցազրույցի մասին որոշ նախնական տեղեկություններ (որ ալիքով եւ որ ծրագրով է հեռարձակվելու, ինչ առիթով, ինչքան եթերային ժամանակ է դրան տրամադրվելու, ինչ է քննարկվելու) իմանալու նրա ցանկությունը:

Հազիվ թե խելամիտ է (ասենք՝ հնարավոր էլ չէ) նախապես թվարկել ապագա զրույցի հարցերը. չէ՞ որ դրանցից շատերը կախված են զրուցակցի պատասխաններից, բացի այդ՝ միշտ պետք է անկանխատեսելի պատասխանների եւ անսպասելի հարցերի տեղ թողնել: Մյուս կողմից՝ թղթակիցը կարող է զրուցակցին տեղեկացնել հարցազրույցի նպատակի, դրա բնույթի, քննարկվող հարցերի թեմատիկայի մասին:

Եթե ապագա զրուցակիցը քննադատվում է այս կամ այն որոշման կամ արարքի համար, ապա նրան ազնվորեն պետք է հնարավորություն տրվի պատասխանելու այդ քննադատությանը: Ցավոք, շատ լրագրողներ հաճախ անտեսում են այս սկզբունքը: Մա զրուցակցի նկատմամբ անազնիվ վերաբերմունք եւ էթիկական չափանիշների խախտում է: Հարցազրույցը չպետք է թակարդ դառնա ձեր զրուցակցի համար: Նա պետք է հնարավորություն ստանա պատասխանելու իր հասցեին հնչած մեղադրանքներին: Մյուս կողմից, թղթակիցը պարտավոր չէ բոլոր հարցերը նախապես ներկայացնել: Նա իրավունք ունի դրանք տալու հարմար պահին, պահանջելու՝ ճշտել այս կամ այն պատասխանը, իսկ երբեմն էլ՝ անսպասելի հարցով հանկարծակիի բերել զրուցակցին:

Հարցազրույցի մոնտաժը եւս պետք է ազնվորեն կատարվի: «Այո»-ն չի կարելի փոխարինել «ոչ»-ով, պատասխանները պետք է հնչեցնել ամբողջությամբ, չպետք է դրանք այնպես կրճատել ու աղավաղել, որ զրուցակցի ասածի իմաստը խեղաթյուրվի: Թղթակցի հարցը չպետք է փոխարինել մեկ ուրիշով: Ժամանակակից տեխնիկայի օգտագործմամբ հնարավոր է ձայնի եւ տեսաշարի ցանկացած աճպարարություն անել, ինչն անբույլատրելի է էթիկայի տեսակետից: Թղթաթակիցն այս հարցում մեծագույն պատասխանատվություն է կրում:

Ինչպե՞ս պետք է վարվի թղթակիցը կամ խմբագրությունը, երբ մարդը, ում հետ ցանկանում են հարցազրույց վարել, որոշակի պայմաններ է առաջ քաշում: Մի կողմից՝ չկան

որեւէ մեկին հարցազրույց տալու պարտադրող օրենքներ: Մյուս կողմից՝ լրագրողն իրավունք ունի եւ նույնիսկ պարտավոր է հարցեր տալ նրանց, ովքեր փորձում են խույս տալ լրագրողների հետ զրույցից:

Ըստ էության, ցանկացած մարդ, ում դուք դիմում եք հարցազրույցի խնդրանքով, կարող է պահանջել պահպանելու որոշակի պայմաններ: Խմբագրությունն իր հերթին միանգամայն իրավունք ունի մերժելու այդ պայմանները, եթե դրանք անընդունելի համարի: Ծրագիրը վարողը կարող է տեղեկացնել, որ ներկայացված պայմանները թղթակցի հարցերին պատասխանելուց հրաժարվելու ձեւ են, խմբագրությունը՝ կարող է փորձել այլ հնարավորություններ եւ այդ իրավիճակից ելքեր գտնել: Կարելի է, օրինակ, դիմել ընդդիմության ներկայացուցիչներին կամ հարցազրույցից հրաժարված անձի քննադատներին՝ մեկնաբանության խնդրանքով, կարողալ իր հարցերն առանց պատասխանների կամ էլ փորձել այդ հարցերն ուղղելու այդ անձին ամեն անգամ, երբ վերջինս հայտնվում է հասարակական վայրերում:

Հարցազրույցից հրաժարումը չի կարող խոչընդոտել խմբագրության՝ այդ խնդրի վերաբերյալ փաստերն ու քննադատական դիտողությունները իր լսարանին հաղորդելու որոշմանը: Խոսքի ազատության մասին օրենքի այս սկզբունքորեն կարելի էր դրույթը հիսունական թվականներին Շվեդիայում բոլորի համար չէ, որ ակնհայտ էր: Այդ ժամանակ կար մի չգրված օրենք, ըստ որի հարցազրույցից քաղաքական գործչի, պաշտոնյայի, պատասխանատու աշխատողի կամ հակամարտության մի կողմի հրաժարումը նշանակում էր, որ ռադիոն պետք է չհեռարձակի նաեւ այդ անձնավորության հասցեին ուղղված քննադատությունը: Երկար ու բուռն բանավեճերից հետո, 1956 թվականին այդ արգելքը վերացվեց: Այսօր Շվեդիայում ոչ մի խմբագրություն չի թաքցնի լրագրողների հարցերին պատասխանելուց հրաժարված պաշտոնատար անձի կամ քաղաքական գործչի հասցեին հնչած քննադատությունները: Ծրագիրը վարողը կամ լրագրողը իրավունք ունի նաեւ բարձրաձայն նշելու, թե որտեղ է հարցազրույցի մասնակիցն ակնհայտորեն ստում:

Էթիկայի տեսակետից բացարձակապես անընդունելի է, որ իշխանավորին թույլ տրվի ինքնուրույն ընտրելու այն թղթակցին, ում կցանկանար հարցազրույց տալ: Մենք չենք կարող քաղաքական գործչին կամ ձեռնարկության տնօրենին իր հավանած հեռուստաընկերության կամ ռադիոկայանի՝ իր նկատմամբ բարեհաճ տրամադրված լրագրողին ընտրելու իրավունք վերապահել: Խմբագրությունն ինքն է որոշում, թե ով ավելի լավ կարող է կատարել առաջադրանքը: Պաշտոնյան միանգամայն ազատ է եւ իրավունք ունի պահանջելու՝ ծանոթանալու համար նախապես իրեն տրամադրել հարցերը, ինչպես նաեւ կարող է պահանջել հարցազրույց միայն ուղիղ եթերում, սակայն խմբագրությունն էլ, անկասկած, իրավունք ունի մերժելու այդ պահանջները կամ ընդհանրապես հրաժարվելու հարցազրույց անցկացնելուց: ՉԼՄ-ները սակայն բավականին հանդուրժող են, երբ պաշտոնյաները, ձեռնարկությունների տնօրենները կամ քաղաքական գործիչներն իրենք են ընտրում ոչ թե թղթակցին, այլ այն խմբագրությունը, ում հետ պատրաստ են գործ ունենալ: Երբ նեղն ընկած քաղաքական գործիչը համաձայնում է պատասխանել իր ընտրած ալիքի թղթակիցների հարցերին, խմբագրությունը, չնայած իրավիճակի ողջ անհեթեթությանը, սուր մրցակցության պայմաններում, հազվադեպ է հրաժարվում նման հնարավորությունից: Ժամանակակից մամուլի միջավայրում այս երեւույթի դեմ պայքարի միակ ձեւը բաց բանավեճն է եւ ինչպես առաջարկն ընդունած խմբագրության, այնպես էլ՝ հարցազրույց տալու համար վերջինիս ընտրած քաղաքական գործչի քննադատական վերլուծությունը: Նրանք, ովքեր ՉԼՄ-ների նշանառության տակ են ընկել, այս եղանակը հաճախ են օգտագործում՝ որպեսզի հեռուստատեսային կամ ռադիոյի խմբագրություններին իրար դեմ հանեն եւ այդպիսով մասամբ իրենցից շեղեն հարվածները:

Հարցազրույց տված անձինք հաճախ խնդրում են իրենց հնարավորություն տալ ծանոթանալու եթեր հեռարձակվելու պատրաստ հարցազրույցի տեքստին կամ տեսա(ձայնա)գրությանը: Երբ խոսքը ռադիոյի կամ հեռուստատեսության լուրերի ծրագրերով հեռարձակվող սինխրոնների մասին է, ապա այդ խնդրանքը հարգելը

գործնականում անհնար է: Եթե նման պահանջի համար հատուկ հիմնավորումներ կան, կարելի է պատրաստի ձայնագրությունը հեռախոսով լսելու հնարավորություն ստեղծել: Սա բոլորովին չի նշանակում, թե լրագրողը կամ խմբագրությունը պետք է ստանան մոնտաժի կամ տեքստի վերաբերյալ հարցազրույց տված անձի հավանությունը: Խնդրի նման դրվածքը բացարձակապես անընդունելի է: Մակայն հաճախ նա, ում խոստացել են, թե կարող է ծանոթանալ գրույցի տեքստին կամ տեսա(ձայն)ագրությանը, այդ խոստումն ընդունում է իբրև հարցազրույցի հեռարձակումը կասեցնելու իրավունք: Իրականում նման իրավունք նա չունի: Շվեդիայում միակ անձը, ով որոշում է, թե ինչը կարող է հրապարակվել կամ եթեր հեռարձակվել, պատասխանատու հրատարակիչն է՝ տպագիր մամուլում եւ պատասխանատու թղթակողը՝ ռադիոյում եւ հեռուստատեսությունում: Այս իրավունքը ոչ մի դեպքում չի կարելի փոխանցել հարցազրույց տված անձին: Թղթակիցը երբեք չպետք է հարցազրույց տվող անձին առիթ տա կարծելու, թե վերջինս կարող է մինչեւ հրապարակումը կամ հեռարձակումը հավանություն տալ հարցազրույցի տեքստին կամ տեսա(ձայն)ագրությանը: Առանց նախնական պայմանների գրույցի համաձայնություն տված անձը չի կարող պահանջել կասեցնել հարցազրույցի հեռարձակումը: Այն ամենի պատասխանատուն, ինչ հրապարակվել կամ եթեր է հեռարձակվել, պատասխանատու հրատարակիչն է կամ պատասխանատու թղթակիչը:

Ինչպես թղթակիցը, այնպես էլ խմբագրությունը պետք է շահագրգռված լինեն, որ հարցազրույցը հրապարակվի ըստ էության: Առանձին դեպքերում իմաստ ունի փորձագետ հրավիրել՝ ուսումնասիրելու համար հրապարակման համար պատրաստ նյութը՝ ներառյալ հարցազրույցի տեքստն ու լրագրողի մեկնաբանությունները: Սա հնարավորություն է տալիս խուսափելու անճշտություններից ու սխալներից: Երբեմն, որպեսզի իրականացվի այն հարցազրույցը, որը խիստ անհրաժեշտ է խմբագրությանը, վերջինս համաձայնում է գրուցակցի հետ տարբեր տեսակի պայմանավորվածությունների, ինչը ոմանց կարծիքով հակասում են լրագրության հիմնական սկզբունքներին: Նման դեպքերում անհրաժեշտ է նախապես դիմել խմբագրին կամ ղեկավարությանը՝ համատեղ որոշում կայացնելու համար:

Ձանգվածային լրատվության շվեդական միջոցները տեղեկություններ հավաքելու եւ այս կամ այն նյութը հրապարակելու որոշում կայացնելու բավականին լայն իրավունքներ ունեն: Թղթակիցն, օրինակ, կարող է առանց նախնական պայմանավորվածության հասարակական վայրում դիմել պաշտոնատար անձին, միացնել խոսափողը կամ տեսախցիկը եւ սկսել տեսա(ձայն)ագրությունը, եթե անգամ գրուցակիցը չի ցանկանում այդ: Տեսա(ձայն)ագրության ժապավենը դառնում է խմբագրության սեփականությունը: Նա, ում հետ նման հարցազրույց են վարել (անկախ այն բանից, թե իշխանության ներկայացուցիչ է, պաշտոնյա, թե մասնավոր անձ) չի կարող կանխել տեսա(ձայն)ագրության հրապարակումը: Շվեդական ՋԼՄ-ների լրագրողներն առանց նախազուշացման տեսա(ձայն)ագրություն սկսելու օրինական իրավունք ունեն: Լրագրողը իրավունք ունի նաեւ գաղտնի ձայնագրելու այն գրույցը, որին ինքը մասնակցում է: Այնպիսի գրույցի գաղտնի ձայնագրությունը, որում լրագրողը չի մասնակցում, գնահատվում է իբրև գաղտնալուծում եւ շվեդական քրեական օրենսդրությամբ համարվում է լուրջ հանցագործություն, որը կարող է հանգեցնել բանտարկության:

Այն, որ աշխատանքի ինչ-ինչ մեթոդներ թույլատրված են օրենքով, դեռեւս չի նշանակում, թե դրանք էթիկայի տեսակետից արդարացված են: Շվեդիայի շատ խմբագրություններ մշակում են սեփական վարքականոցները, որոնք խիստ սահմանափակում են գաղտնի տեսա(ձայն)ագրության հնարավորությունները: Հիմնական կանոններից մեկը նշում է, թե հարցազրույց տվող անձը պետք է նախազուշացված լինի, որ տեսա(ձայն)ագրություն է կատարվում կամ՝ որ այն արդեն սկսվել է: Բացառություններ թույլատրվում են միայն այն դեպքերում, երբ կարելի է կամ էական հանգամանքները չեն կարող լուսաբանվել այլ կերպ: Խոսքը կարող է լինել այնպիսի հանցագործությունների կամ մեքենայությունների մասին, որոնց փաստագրումը կամ բացահայտումը անհնար է առանց թաքնված տեսախցիկ կամ խոսափող օգտագործելու:

Այս մեթոդն օգտագործելով՝ կարելի է բացահայտել, ասենք, բանկերի այն աշխատակիցներին, ովքեր օգնում են կապիտալների տերերին խուսափելու հարկեր վճարելուց: Թաքնված խցիկի օգնությամբ մերկացվեցին այն բժիշկները, ովքեր առողջ մարդկանց համար կաշառքով հիվանդության թերթիկներ էին դուրս գրում, ինչպես նաև՝ սեւ շուկայի սպեկուլյանտները, ռասիստները: Թաքնված խցիկի օգտագործումը աշխատանքի այն մեթոդներից է, որը լրագրողները կարող են օգտագործել բարդ իրավիճակներում, սակայն դա ոչ մի դեպքում չի կարելի չարաշահել: Անթույլատրելի է, որ թաքնված խցիկի օգտագործումը դառնա ինքնանպատակ կամ նյութ պատրաստելու դրամատուրգիական ձեւ: Շվեդական հեռուստատեսությունը եւ Շվեդական ռադիոն մշակել են այդ մեթոդը սահմանափակող սեփական կանոնները: Թաքնված խցիկով նկարահանված տեսաշարի կամ թաքնված խոսափողով կատարված ձայնագրության օգտագործումը կարող է խախտել անձի անձեռնմխելիության սկզբունքը, նման դեպքերը կարող են նաև քննարկման առարկա դառնալ Մամուլի, ռադիոյի եւ հեռուստատեսության գործերի խորհրդում:

Շատ երկրներում թղթակիցներն իրենց հեռախոսային գրույցները ձայնագրում են՝ պարզապես արձանագրելու համար: Որոշ խմբագրություններում աշխատանքի այս մեթոդն ավելի շուտ կանոն է, քան բացառություն: Ընդամին լրագրողը նույնիսկ իր գրուցակցին չի տեղեկացնում, թե ձայնագրում է իրենց գրույցը: Նման դեպքերում ձայնագրիչը մի տեսակ նոթատետրի դեր է կատարում: Ձայնագրությունները չեն նախատեսվում եթերի կամ հրապարակման համար: Եթե գրուցակիցը ձեզ հարցնի, թե արդյո՞ք գրույցը ձայնագրվում է, կարիք չկա խուսափել պատասխանից, առավել լավ է ազնվորեն բացատրել, որ դա արվում է գործնական նկատառումներով:

Եվ վերջում՝ մի քանի գործնական խորհուրդներ, որոնք ներկայացնելու անհրաժեշտությունը թելադրված է տողերիս հեղինակի դառը փորձից.

- Հարցագրույցի գնալուց առաջ ստուգեք մարտկոցները. չնոռանաք վերցնել նաև պահեստային մարտկոցներ:
- Երբ հարցագրույցը սկսվել է՝ ստուգեք եւ համոզվեք, որ ձայնագրիչը կամ տեսախցիկը միացված է:
- Հարցագրույցի ժամանակ որսացեք պահը՝ ստուգելու՝ տեսա(ձայնա)գրվե՞լ է արդյոք հարցագրույցը ժապավենի վրա:

Եվ էլի մի խորհուրդ՝ ձեզ համար սովորություն դարձրեք հարցագրույցն ավարտելու հետևյալ հարցով.

- Մենք որեւէ բան բաց չթողեցի՞նք գրույցի ընթացքում:

Երաշխավորվող գրականություն

Broughton Irv. The Art of Interviewing for Television, Radio & Film. Tab Books Inc. 1981

Մի՛ խանգարիր դեպքերի զարգացմանը

Հեռուստատեսությունը եւ ռադիոն զանգվածային լրատվության արտահայտիչ միջոցներ են: Տեսա(ձայնա)գրելով իրադարձությունները ժապավենի վրա՝ մենք կարող ենք դրանք մեր լսարանին ներկայացնել կադրերի եւ ձայնի միջոցով: Հեռուստադիտողներն ու ռադիոունկնդիրները դառնում են իրադարձությունների վկաներ, այն դեպքում, երբ թերթերի ընթերցողները, որպես կանոն, դրանց մասին իմանում են բավականին ուշ:

Այս գլուխը նվիրված է իրադարձությունների վայրում հեռուստառադիոլրագրողների՝ ռեպորտաժ տեսա(ձայնա)գրելու աշխատանքային վարպետությանը: Այսօրվա ռադիոլրագրողը միաժամանակ ե՛ր տեխնիկ է, ե՛ւ ձայնագրման օպերատոր, ինչը նրանից պահանջում է ձայնագրություն կատարելու եւ մոնտաժելու հմտություններ:

Հեռուստալրագրողի աշխատանքին օգնում են օպերատորը եւ մոնտաժող ռեժիսորը. այսուհանդերձ, ինքը՝ լրագրողն էլ պետք է պատկերացում ունենա այդ մասնագիտության նրբությունների մասին: Ռադիոյի եւ հեռուստատեսության համար ընդհանուրն այս է. լավագույն սյուժեները ստեղծվում են այն ժամանակ, երբ իրադարձությունները, երբեմն անսպասելի ընթացք ստանալով, ծավալվում են լրագրողի աչքի առջեւ, իսկ ինքը՝ լրագրողը, չխոչընդոտելով, հետեւում է զարգացումներին:

Հեշտ ուղիներ մի՛ ընտրեք: Ռադիոլրագրողը պետք է առաջադրանքի մեկնի ե՛ր անձրեւին, ե՛ր սառնամանիքին՝ լքելով խմբագրության տաքուկ ու հարմարավետ աշխատասենյակը, այլապես ստիպված կլինի կատարելու միայն ձայնագրություններ ստուդիայում եւ հեռախոսային հարցազրույցներ: Հեռուստալրագրողը չպետք է փափուկ կյանք փնտրի՝ միայն արխիվային տեսագրությունների համար տեքստեր գրելով: Մեր խնդիրն է՝ լինել այնտեղ, ուր ինչ-որ բան է կատարվում:

Հեռուստառեպորտաժ

Որպես կանոն, հեռուստալրագրողն ավելի շատ է աշխատում խմբագրության պատերից դուրս, քան ռադիոլրագրողը: Հեռուստատեսությունը պատկերային միջոց է, լրագրողը կարիք ունի իրադարձության վայրում նկարահանված կադրերի, այն էլ, հնարավորության դեպքում, լավ կադրերի, ինչը հաճախ իր ազդեցությունն է ունենում հեռուստատեսային խմբագրությունում լուրերն ընտրելու վրա: Կարելորագույն իրադարձության մասին պատմող անհաջող կամ ձանձրալի կադրերի պատճառով այդ իրադարձության փոխարեն կարող է ներկայացվել մեկ այլ, ոչ այնքան կարեւոր, սակայն լավ նկարահանված կադրերով իրադարձություն: Ի՞նչ արած, այսպիսին է հեռուստատեսային լրագրության կյանքը:

Իրադարձությունների կիզակետում օպերատիվ նկարահանումներ կատարելու հնարավորությունը հեռուստատեսությունը դարձնում է տեղեկատվության տարածման շատ առումներով անգերազանցելի միջոց: Կատարվող դեպքերի վավերագրված կադրերը մխրճվում են հեռուստադիտողի հիշողության մեջ՝ վերջինիս օգնելով հետեւելու իրադարձությունների ընթացքին եւ հասկանալու այն: Սա հենց այն է, ինչին հարկ է ձգտել: Հեռուստատեսությունում լուրը պետք է ներկայացնել կադրերի լեզվով, այլ ոչ թե սոսկ տեսաշարով «ձեւավորված» տեքստային հաղորդագրությամբ:

Աշխատանքը հեռուստատեսային լուրերի խմբագրությունում լրագրողից պահանջում է խմբով աշխատելու ունակություն: Ռադիոլրագրողը հիմնականում աշխատում է միայնակ՝ նա միաժամանակ ե՛ր լրագրող է, ե՛ւ ձայնագրող օպերատոր, ե՛ւ մոնտաժող: Հեռուստատեսային օպերատորն առաջմ չի կարող աշխատել միայնակ, թեպետ ժամանակակից տեխնիկան հեշտացնում է տեսագրություն կատարելը: Ապագայի

հեռուստալրագրողին արդեն այսօր անվանում են տեսալրագրող: Նրա աշխատանքային պարտականությունները ներառում են տեսա(ձայնա)գրությունը, մոնտաժը եւ լրագրողի սովորական աշխատանքը:

Շատ երկրներում, այդ թվում եւ Շվեդիայում, նկարահանող խումբը կազմված է ընդամենը երկու հոգուց՝ լրագրողից եւ օպերատորից: Նրանք պետք է աշխատեն հնարավորինս ներդաշնակ: Ե՛վ լրագրողը, ե՛ւ օպերատորը պետք է հստակ պատկերացնեն իրենց տրված առաջադրանքը, իմանան սյուժեի նպատակն ու այն, թե ինչի են իրենք ձգտում: Նրանք նյութի համահեղինակներն են եւ միասին են այն ներկայացնում հեռուստադիտողների դատին, այդ պատճառով էլ նրանց աշխատանքում համաձայնություն պետք է լինի: Լրագրողն օպերատորի հետ քննարկում է առաջիկա սյուժեի մասին իր մտահղացումները, պատմում, թե ինչպես է այն պատկերացնում: Օպերատորը, նախաձեռնություն հանդես բերելով, գործընկերոջն առաջարկում է սյուժեի պատկերավորության համար այս կամ այն նկարահանումները կատարել այս կամ այն ձևով: Որպես կանոն նկարահանման լավագույն արդյունքների է հասնում այն օպերատորը, ով սյուժեի նյութին ու մտահղացումներին նույնքան լավ է ծանոթ, որքան լրագրողը: Լրագրողն էլ իր հերթին պետք է պատկերացում ունենա օպերատորի աշխատանքի մեթոդների մասին:

Նկարահանված նյութը մշակելիս լրագրողը, օպերատորը եւ մոնտաժման ռեժիսորը պետք է սերտորեն համագործակցեն: Միայն այս դեպքում է հնարավոր լսարանին ներկայացնել կարելորդն ու հետաքրքիրը: Սակայն լարվածության եւ սարքավորումների ու անձնակազմի խիստ սակավության պայմաններում մենք հաճախ ստիպված ենք լինում բավարարվել ամենապարզունակ, նպատակահարմար, հաճախ էլ՝ ծեծված որոշումներով:

Նկարահանող խմբի առջեւ ծառայող ամենադժվար խնդիրը իրադարձության վայրում նկարահանում կատարելն է՝ նախապես չիմանալով, թե դեպքերն ինչպես կծավալվեն: Լրագրողը եւ օպերատորը միասին պետք է գտնեն այն խորհրդանիշները, որոնք կմարմնավորեն եւ կցուցադրեն սյուժեի էությունը: Նման դեպքերում լրագրողը պետք է դառնա օպերատորի օգնականը, նրա երկրորդ գույգ աչքը:

Իրադարձության ընթացքը պատկերի

Թվում է՝ ավելի հեշտ բան, քան ցույց տալ, թե ինչպես է մարդը մտնում սենյակ, չկա: Իրականում մեկ օպերատորի համար գործնականում հնարավոր չէ այդ տեսարանը նկարահանել միանգամից, թեպետ հեռուստակերպանին դա առավելագույնը տասը վայրկյան է տևելու: Օպերատորը ստիպված է գործողությունը նկարահանել տարբեր ռակուրսներով եւ տարբեր կետերից:

Օպերատորը չի կարող «մի քանի մասի բաժանվել» եւ միաժամանակ գտնվել ամենուր՝ տարբեր խոշորության պլաններ նկարահանելու համար: Այս գործից կարող էին գլուխ հանել միաժամանակ աշխատող երկու կամ երեք օպերատորներ: Մեկ հոգին այդ խնդիրը կլուծի միայն այն դեպքում, եթե գործողությունների հերթականությունը մի քիչ խախտվի: Միեւնույն գործողությունը պետք է կրկնվի մի քանի անգամ, որպեսզի օպերատորը կարողանա այն ամբողջությամբ նկարահանել, այսինքն՝ անհրաժեշտ է մի քանի դուբլ: Սա էլ, սակայն, միշտ չէ, որ հնարավոր է, քանզի դրա համար անհրաժեշտ է նկարահանվող անձանց աջակցությունը:

Որպեսզի օպերատորը կարողանա հարցազրույցի հրավիրված անձին (հապավենք՝ Ջ - զրուցակից) նկարահանել ընդհանուր պլանով, վերջինս պետք է անցնի միջանցքով, հասնի դռանը եւ ձեռքը մեկնի բռնակին: Դրանից հետո Ջ-ը ստիպված է միջանցքով մինչեւ դուռն իր «զբոսանքը» կրկնել, որպեսզի նրան մեկ անգամ էլ նկարեն խոշոր պլանով: Դուռը պետք է բացի առնվազն չորս անգամ, որպեսզի մենք կարողանանք երկու անգամ (խոշոր եւ ընդհանուր պլանով) նկարահանել միջանցքից եւ երկու անգամ էլ՝ այն սենյակից, որտեղ ընթանալու է հարցազրույցը: Այնուհետեւ Ջ-ը ստիպված կլինի մի քանի անգամ քայլել դռնից

մինչեւ բազկաթոռը, որպեսզի օպերատորը հնարավորություն ստանա նրա շարժումը նկարահանելու սենյակի տարբեր կետերից: Այս ամենն արվում է հարցազրույցի հրավիրված անձին ներկայացնող մուտքի կադրեր ունենալու համար:

«Անիծյալ քայլ»

Վերը նկարագրված օրինակ հեռուստատեսային սյուժեն սկսելու բավականին տարածված ձեւ է: Այսուհանդերձ, լրագրողը ամենեւին էլ պարտադրված չէ միշտ հետեւելու դրան: Իհարկե, մուտքի կադրերն անհրաժեշտ են, սակայն ո՞վ է ասել, թե դրանք պետք է լինեն հենց այնպիսին, ինչպիսին մեր քննարկած օրինակում էր: Շատ խմբագրություններում չեն դադարում աշխատանքի այսօրվա ընդունված մեթոդները նորացնելու հնարավորությունների շուրջ բանավեճերը: Մեզ ընդառաջ եկող մարդուն պատկերող տեսաշարը նորվեգացի լրագրողներն անվանել են gåing, ինչը կարելի է թարգմանել իբրեւ «քայլող» (ընթացող մարդ, քաջընթացիկ անձ): Քննադատներն ինչ-որ առումով ճիշտ են, երբ հեռուստադրամատուրգիայի այդ հնարքն անվանում են «անիծյալ քայլ»: Միջանցքով քայլող մարդու տեսաշարն այլ բան չէ, քան լրագրողի եւ օպերատորի համատեղ ջանքերով իրականացված բեմադրություն: Միզանցեցնաները մի տեսակ անբնական հարաբերություններ են հաստատում նկարահանող խմբի եւ գրուցակցի միջեւ: Լրագրողները խիստ քննադատներից վերածվում են ռեժիսորների: Նրանք խեղճ գիտնականին կամ նախարարին ցուցումներ են տալիս, թե ինչպես նա պետք է քայլի (դանդաղ կամ արագ), որ կողմ նայի (խցիկին կամ ընդհակառակը՝ նրա կողքերը), ինչպես բացի դուռը եւ ինչպես նստի բազկաթոռին:

Ընդառաջ գնալ աշխատող խցիկին, բացել դուռը, մտնել սենյակ, նստել բազկաթոռին եւ այս ամենից հետո բնական ու անկաշկա՞նը լինել. դա շատ ավելի դժվար է, քան թվում է առաջին հայացքից: Հաճախ սա պահանջում է բազմաթիվ կրկնանկարահանումներ կատարել ոչ միայն այն պատճառով, որ օպերատորը պետք է տարբեր պլաններով նկարահանի, այլեւ, որ գրուցակիցը, ասենք, քայլում է ոչ այնքան բնական, շեղվում է, մոռանում է իրեն տրված ցուցումները: Նախարարը, գիտնականը կամ ձեռնարկության տնօրենը պատասխանատու անձից վերածվում են սիրող դերասանների, իսկ լրագրողը՝ դիլետանտ ռեժիսորի. «Լավ է, սակայն եւս մեկ անգամ: Պարոն նախարար, չէի՞ք կարող մի քիչ ավելի դանդաղ քայլել եւ այդքան հաճախ չնայել խցիկին»:

Էթիկական եւ մասնագիտական տեսակետներից առավել արդարացված է իրականության հանպատրաստից նկարահանումը: Չգտեք նկարահանել այն, ինչ ձեր հարցազրույցի մասնակցի առօրյա կյանքի իրականությունն է: Հագիվ թե նախարարները կամ պրոֆեսորները աշխատանքային ժամին միջանցքներով այս ու այն կողմ են գնում:

Պրոֆեսորն ամբողջ օրը, հավանաբար, դասավանդում է, աշխատում համակարգչով, տեղեկատու գրականություն կարդում, գրառումներ կամ հաշվարկներ կատարում: Նախարարը, հավանաբար, նիստեր է վարում, ելույթներ է ունենում, հանդիպում է մարդկանց հետ: Հարցազրույցի հրավիրված անձի ցանկացած անմիջական եւ բնական գործողություն, անկասկած, բեմադրությունից լավ է: Օպերատորի համար, որպես կանոն, առավել հեշտ է իրադարձությունների զարգացումը եւ մարդու շարժումները նկարահանել դյուրակիր, քան շտատիվին ամրացված խցիկով:

Շրջապատը

Նույնիսկ ամենակարճ տեղեկատվական սյուժեն ունի սկիզբ եւ ավարտ: Լրագրողը եւ օպերատորը դեռեւս նկարահանման ժամանակ պետք է մտահղանան մուտքի եւ ավարտի հնարավոր կադրերը, որոնք արդեն ձեռքի տակ կան կամ որոնք դեռ անհրաժեշտ է նկարահանել: Չպետք է մոռանալ, որ լրագրողը պետք է ունենա նաեւ «լիդին» ուղեկցող կադրեր, որոնք պետք է համադրվեն ծրագրի գլխադրին: Շվեդական SVT1

հեռուստատեսության նորությունների «Ակտուել» ծրագիրը իբրև գլխադիր օգտագործում է ծրագրի լոգոտիպը, որն էկրանին է հայտնվում աջ կողմից, ինչը որոշակի նշանակություն ունի մուտքի տեսաշարը նկարահանելու եւ համադրելու համար:

Հարցազրույց վարելու համար տեղ ընտրելիս ձգտեք, որ շուրջ բոլորն ամեն ինչ բնական եւ միաժամանակ՝ գրավիչ լինի: Տեսաշարը պետք է դառնա ոչ միայն լրացուցիչ տեղեկատվության, այլև հարցազրույցի բովանդակության զգացական ընկալման միջոց: Այն ինչ գտնվում է հետին պլանում, գրուցակցի թիկունքում, հաճախ կարող է սիմվոլիկ նշանակություն ունենալ: Հեռուստադիտողի համար առավել հետաքրքիր է ատոմային էլեկտրակայանի տնօրենի հետ իր իսկ աշխատասենյակում, այլ ոչ թե փակման ենթակա ռեակտորի ֆոնին նկարահանված զրույցը: Ծանապահաշինական վարչության պետի հետ զրույցը, եթե վերջինս որոշել է քաղաքի պատմական մասը քանդել՝ երկաթուղի կառուցելու համար, ընդհակառակը, առավել լավ է նկարահանել այնտեղ, որտեղից երկաթուղու տեսարան է բացվում: Հարցազրույցի անցկացման վայրն ազդում է նաև ինչպես լրագրողի, այնպես էլ նրա գրուցակցի տրամադրությունների վրա:

Կարևոր են ոչ միայն հարցազրույցի վայրի պայմանները, այլև հետին պլանը: Եթե համաշխարհային հռչակ ունեցող վիրաբույժը համաձայնել է վիրահատարանում հարցազրույց տալ, ապա անհեթեթ կլինի նրան նկարահանել մեջքով դեպի հիվանդանոցային սպիտակ պատը, առավել լավ է նկարահանել վիրահատարանի ֆոնին (պայմանով, որ այդ պահին այնտեղ վիրահատություն չի կատարվում, այլապես դա կլինի «մարդակեր» կադրի տիպիկ օրինակ):

Կառուցվածքային տեսակետից, հարցազրույց տվողի թիկունքում պետք է ավելի մուգ կամ ավելի բաց ֆոն լինի, որպեսզի պատկերը էկրանին հստակ երևա: Գեմքը պետք է լուսավորված լինի դիմացից ընկնող լույսի ճառագայթով: Հաշված թույլների ընթացքում միշտ էլ կարելի է գտնել լուսավորության նվազագույն մակարդակը: Հաճախ միանգամայն բավական է անգամ խցիկի փոքրիկ լամպը կամ շրջապատի լույսը: Կադրը կարող է միջինից մի քիչ խոշոր լինել: Ուտերը կամ կուրծքը կադրի ներքին եզրի լավ սահման են: Ցանկալի է, որ գրուցակցի երկու ակնջներն էլ տեսանելի լինեն հեռուստադիտողի համար: Օպերատորը եւ լրագրողը պետք է հնարավորինս մոտ լինեն իրար, որպեսզի գրուցակցի դեմքը, երբ վերջինս, պատասխանելով հարցերին նայում է լրագրողին, կադրում լինի:

Հարցազրույցի ժամանակ ֆոնը, հնարավորության դեպքում, պետք է անփոփոխ մնա: Ֆերմերի հետ հանդում հարցազրույց վարելիս հետեւեք, որ նրա թիկունքում աշխատող տրակտորը կամ մոտակայքում արածող կովերը միշտ տեսադաշտում լինեն: Միեւնույն ժամանակ հետին պլանը չպետք է շեղի հեռուստադիտողների ուշադրությունը: Եթե ձեր գրուցակցի թիկունքում ծաղկաման կա, հանդվեք, որ կադրում այնպես չի թվալու, թե պատասխանատու աշխատողի կամ հայտնի գիտնականի գլխից կակտուս է աճել: Զրուցակցի հետևում կախված նկարի շրջանակը չպետք է երիզի նրա գլուխը:

Կադրի կառուցվածքը պետք է հստակ լինի: Պարզ կառուցվածքով սովորական կադրերն առավել հեշտ է ընկալել եւ հասկանալ: Առջեւի պլանը կարևոր է կադրին խորություն հաղորդելու համար, այլապես մեծ է խեղաթյուրված տեսաշար ստանալու հավանականությունը: Ցայտագուն լույսը պատկերներին ծավալ եւ գույներին փայլ է տալիս:

Դասավորություն

Հարցազրույցի մասնակիցների ամենասովորական դասավորությունն այն է, երբ գրուցակիցը կանգնած է լրագրողի դիմաց, իսկ վերջինիս թիկունքում, մի փոքր աջ կամ ձախ՝ կանգնած է օպերատորը: Օպերատորը գրուցակցին պատկերում է երկու պլանով՝ ժամանակ առ ժամանակ օբյեկտիվը սահուն առաջ կամ ետ տեղափոխելով: Մի պլանը՝ լայն, միջին խոշորության է (գոտկատեղից). գրուցակիցը նկարահանվում է մոտավորապես փորից վեր: Երբեմն առջեւ պլանում կարելի է ցուցադրել լրագրողի ծոծրակը: Շվեդիայում դրան անվանում են «կրակոց ծոծրակին»: Երկրորդ ընդունված ձեւը գրուցակցի դեմքի

(նկարահանված ուսերից վեր) խոշոր պլանն է: Միշտ որոշ տարածություն՝ «օդ» թողեք խոսողի գլխավերեւում: Իսկ եթե գրուցակցին նկարահանում եք պրոֆիլից, պետք է «օդ» թողնեք նրանից աջ կամ ձախ: Մի մոռացեք կադրի աջ կամ ձախ կողմերում թողնված տարածությունը, ուր ուղղված է նկարահանվողի հայացքը, պետք է ավելի լայն լինի, քան քիկունքի տարածությունը: Իբրև կանոն, ավելի լավ է նկարահանել առջեից՝ շեղակի: Նկարահանման պլանները պետք է տարբեր լինեն, որպեսզի մոնտաժողը հնարավորություն ունենա դրանք անմիջապես, մեկը մյուսի հետեից, առանց կտրուկ անցումների (որոնք մասնագիտական լեզվում անվանվում են jump-cuts՝ «ցատկոտումներ» կամ «ցնցումներ») մոնտաժելու:

Հարցագրույցի ժամանակ կամ դրանից հետո օպերատորը պետք է նկարահանի մի քանի «միջահատում» կամ «ներդիր» կադրեր:

Երկուսը կադրում (եւ լրագրողը եւ նրա գրուցակիցը գրույցի ժամանակ երեսում են էկրանին).

ա) Լրագրողը հարց է տալիս, գրուցակիցը լսում է: Օպերատորը նկարահանում է լրագրողի քիկունքից, կադրում երեսում են նրա այտը եւ հնարավոր է, ուսի կամ ձեռքի շարժումն այն պահին, երբ նա տալիս է հարցը: Շրթունքների շարժումը նկատելի չէ, ինչը հնարավորություն է տալիս այդ կադրերն օգտագործել իբրև «ներդիր» անկախ նրանից, թե ինչ հարց կհնչի կադրից դուրս:

բ) Ջրուցակիցը խոսում, իսկ լրագրողը լսում է: Նկարահանումը կատարվում է գրուցակցի քիկունքից, մի փոքր կողքից, այնպես, որ շրթունքները չերեսան:

Ունկնդիրը խոշոր պլանով.

ա) Կադրում գրուցակիցն է:

Լրագրողը հարց է տալիս: Օպերատորը շարունակում է խոշոր պլանով նկարահանել իրեն ուղղված հարցը լսող գրուցակցին:

բ) Կադրում լրագրողն է:

Նա լսում է գրուցակցի պատասխանը: Էթիկական տեսանկյունից նման դեպքերում կարելու է նկարահանել մի քանի տարբերակ, քանի որ լրագրողի դեմքի ժայիտը կամ նրա գլխի հավանություն արտահայտող թափահարումները կարող են հեռուստադիտողների կողմից ընկալվել իբրև գրուցակցի խոսքերին համա ձայնություն: Լրագրողի դեմքի բարկացած արտահայտությունը կարող է գնահատվել իբրև իր լսածի նկատմամբ բացասական վերաբերմունք: Այլ խոսքով, լրագրողի դեմքի արտահայտությունը կարող է ընկալվել իբրև խմբագրության կողմից հարցագրույցի անխոս մեկնաբանություն: Իր տված հարցի պատասխանը լսող լրագրողին պատկերող կադրերը պետք է լինեն հնարավորինս չեզոք:

Լրագրողն էկրանին պետք է երես այն նույն մեծությամբ, ինչ գրուցակիցը, այլապես ներդիր կադրերը տարօրինակ եւ անբնական կթվան: Անհրաժեշտության դեպքում լրագրողին պետք է նկարահանել ընդհանուր պլանով այնպես, որ էկրանն առավելապես «պատկանի» գրուցակցին: Չէ՞ որ հենց նա է հարցագրույցի գլխավոր գործող անձը:

Ջրուցակցին ունկնդրող լրագրողին ցուցադրող կադրերը կարող են նկարահանվել նույնիսկ գրուցակցի հեռանալուց հետո: Դա, սակայն, լրագրողից որոշակի դերասանական ունակություններ է պահանջում, քանի որ նա պետք է միայնակ խոսելով բնական երես եւ նայի այն կետին, որտեղ մի քանի րոպե առաջ կանգնած էր իր գրուցակիցը: Եթե օպերատորը նախապես գիտի, որ ինքը նման նկարահանումներ է կատարելու, ապա դեռես հարցագրույցի ժամանակ կարող է «նշանառության տակ առնել» լրագրողի գրուցակցի ուսերի մակարդակի բարձրությունը, որպեսզի հետագայում հեշտ լինի նկարահանման ճիշտ անկյունն ու խցիկի դիրքի բարձրությունը գտնելը:

Լրագրողը կարող է հարցերը կրկնել նաեւ անմիջապես խցիկի առջեւ, որպեսզի այդ կադրերը հետագայում օգտագործվեն իբրև «միջահատում»: Խցիկի առջեւ հնչած հարցերը

բավականին հեշտացնում են մոնտաժը եւ այնպիսի տպավորություն են ստեղծում, թե հարցազրույցը նկարահանվել է երկու խցիկով: Լրագրողը պետք է բառ առ բառ կրկնի հարցազրույցի ժամանակ իր տված հարցը, որպեսզի զրույցի բովանդակությունը չխեղաթյուրվի: Նման դեպքերում կարելի է հարցազրույց տվող անձնավորությանը խնդրել սպասելու մի քանի րոպե, որպեսզի հարցերը տեսագրելիս նա հետեւի, որ լրագրողը շատ չշեղվի հարցի նախնական ձեւակերպումից:

Ծայրահեղ դեպքում կարելի է հարցերը տեսագրել նաեւ այն ժամանակ, երբ զրուցակիցն արդեն հեռացել է, սակայն, ինչպես արդեն նշեցինք, դա պահանջում է, որ լրագրողն ունենա դերասանական ընդունակություններ եւ հայացքը մի կետի հատելու հմտություն: Այս մեթոդի առավելությունն այն է, որ լրագրողը շտապելու կարիք չունի: Անհրաժեշտության դեպքում նա կարող է լսել իր հարցերի ձայնագրությունը, որպեսզի դրանք նորից տեսագրի բառ առ բառ:

Երկու խցիկով նկարահանվող առավել երկար հարցազրույցը հիանալի է, բայց, համենայն դեպս՝ շվեդ լրագրողի համար, շքեղություն է: Նման դեպքերում վերանում է «միջահատումներ» նկարահանելու անհրաժեշտությունը, ինչը միշտ այս կամ այն չափով բեմականացում է: Հարցերն ու պատասխաններն այս դեպքում տեսագրվում են անմիջապես, խցիկը կարող է որսալ զրուցակցի անմիջական ու բնական շարժումները: Երկու խցիկով նկարահանված հարցազրույցն ավելի հեշտ է մոնտաժել, պայմանով, որ երկու օպերատորները համաժամանակացրել (սինխրոնացրել) են իրենց խցիկները: Նրանք նաեւ պետք է նախապես պայմանավորվեն նկարահանումների միեւնույն պլան ընտրելու շուրջ, որպեսզի կադրում դեմքի մեծությունները կամ կամ երկու անձանց պատկերները երկու խցիկների նկարահանումներում իրարից շատ չտարբերվեն:

Նկարահանման պլանի չափսն ընտրելիս օպերատորը պետք է հաշվի առնի ծրագրի ընդհանուր գրաֆիկական չափանիշները: Յուրաքանչյուր խմբագրություն, իբրեւ կանոն, ունի նկարահանումների իր չգրված օրենքները. ասենք՝ քանի վայրկյան պետք է խոշոր պլանով ցուցադրել հարցազրույց տվողի դեմքը: Չպետք է մոռանալ նաեւ, որ անհրաժեշտ է տարածություն թողնել այդ մարդու անունն ու պաշտոնը նշող տիտրերի համար: Շատ խմբագրություններ տիտրերի համար նախընտրում են էկրանի վերին ձախ անկյունը, մյուսները՝ կադրի ներքեւի հատվածը: Շվեդիայում օտար լեզվով տրված հարցազրույցի քարզմանությունը կատարվում է սուբտիտրերի միջոցով, ինչը պահանջում է կադրի որոշակի կառուցվածք:

Խցիկի ռակուրսը

Նկարահանումների ժամանակ խցիկի դիրքն ըստ բարձրության մեծ նշանակություն ունի հեռուստադիտողների կողմից պատկերն ընկալելու համար: «Ներքին ռակուրսով» նկարահանված մարդն էկրանին բարձրահասակ, տիրական, անգամ՝ պերճաշուք է թվում: Նա ում նկարահանում են վերեւից, հեռուստադիտողին կթվա փոքրիկ եւ անօգնական: Կինոյի եւ հեռուստատեսության լեզուն մեր հանդիսատեսին վարժեցրել է, որ նա ով կադրում ձախից աջ է անցնում, ասես քամուց քշված լինի, այն դեպքում, երբ աջից ձախ անցնողը ենթագիտակցորեն ընկալվում է իբրեւ իր ճանապարհին խոչընդոտներ հանդիպող:

180 աստիճանի կամ շփման առանցք

Հեռուստանկարահանման հիմնական պատվիրաններից մեկն է՝ պահպանել 180 աստիճանի առանցքը, այսինքն այն ենթադրյալ գիծը, որն անցնում է հարցազրույց տվողից կամ նկարահանման օբյեկտից դեպի խցիկի օբյեկտիվի կիզակետը: Նկարահանելիս օպերատորը պետք է միշտ գտնվի այդ գծի մի կողմում: Այդ անտեսանելի գծի հատումը խախտում է շարժման կամ մարդու հայացքի ուղղությունը:

Յանկացած առարկա՝ կամ անձնավորության ետեւից, կամ առջեւից կարող է նկարահանվել պայմանական գծի մի կողմից: Հենց որ օպերատորն անցնում է մյուս կողմը, նրա նկարահանած օբյեկտի շարժման ուղղությունը փոխվում է: 180 աստիճանի առանցքի տարբեր կողմերից նկարահանված կադրերի ցուցադրման դեպքում կարող է այնպես թվալ, թե երկու թշնամի խմբեր իրար ընդառաջ են գալիս:

Լրագրողի եւ գրուցակցի հայացքների հարաբերումը նշանակություն ունի ոչ միայն հարցազրույցի հոգեբանական կողմն ապահովելու, այլեւ այն բանի համար, թե դա ինչպես կերես է կրանին: «Միջահատող» կադրերում պատասխանը լսող լրագրողի հայացքը պետք է ուղղված լինի գրուցակցին, այլ ոչ թե նրանից աջ կամ ձախ:

Եթե օպերատորը նկարահանում է լրագրողի ետեւի աջ կողմից, ապա կադրում գրուցակցի հայացքն ուղղված կլինի դեպի ձախ: Օպերատորը չպետք է հատի շփման պայմանական առանցքը, երբ սկսում է նկարահանել լրագրողին: Նա պետք է տեղավորվի գրուցակցի ետեւի ձախ կողմից:

Շփման առանցքի կանոնի պահպանման կարեւորության դասական օրինակ է սեղանի թեմիս խաղացողներին նկարահանելը: Եթե օպերատորը հատի պայմանական առանցքը եւ խաղացողներին նկարահանի դրա տարբեր կողմերից, ապա էկրանին այնպես կթվա, թե երկու խաղացողներն էլ գնդակը ետ են մղում միեւնույն ուղղությամբ:

Ելույթների նկարահանումը

Նույն սկզբունքն է կիրառվում նաեւ զեկուցումներն ու ելույթները նկարահանելիս: Պայմանական առանցքն անցնում է ելույթ ունեցողից դեպի խցիկը, նկարահանումը կարելի է կատարել միայն դահլիճի մեկ կեսից: Չեկուցողը պետք է նայի հանդիսատեսին, իսկ վերջինս՝ զեկուցողին: Եթե օպերատորը հատի պայմանական առանցքը, ապա կստացվի, որ հանդիսատեսն ու հռետորը նայում են տարբեր կողմեր: Հանդիսատեսին ներկայացնող եւ իրար հետեւից ցուցադրվող կադրերը կարելի է նկարահանել 180 աստիճանի առանցքի տարբեր կողմերից, դա տեսաշարին որոշ բազմազանություն է հաղորդում: Մեր դեպքում խոսքը հանդիսատեսի նկատմամբ հռետորի դիրքի նկարահանման մասին է:

Ելույթների տեսագրումը պահանջում է լրագրողի եւ օպերատորի սերտ համագործակցություն: Խցիկը պետք է միացվի եւ ելույթ ունեցողին ուղղվի այն ժամանակ, երբ վերջինս ինչ-որ կարեւոր բան է ասում: Եթե ելույթի տեքստը նախապես տարածվել է, ապա աշխատանքը բավականին հեշտանում է: Մյուս դեպքերում օպերատորը պետք է միշտ պատրաստ լինի եւ հետեւի լրագրողի ազդանշանին:

Նույնիսկ ամենակարճ լրատվական սյուժեի համար միայն ամբիոնի մոտ կանգնած հռետորի խոշոր պլանը բավարար չէ: Անհրաժեշտ է նկարահանել դահլիճի համայնապատկերը, հռետորին՝ ընդհանուր պլանով առջեւից եւ հետեւից: Ելույթ ունեցողին պետք է նկարահանել տարբեր ռակուրսներով, ինչպես նաեւ կողքից կամ այնպիսի հեռավորությունից, որ շրթունքների շարժումները չերեսան, սակայն նկատելի լինի, որ նա ինչ-որ բան է ասում: Նման կադրերը կարող են իբրեւ ներդիր օգտագործվել, ինչը կօգնի խուսափելու մոնոտոնային կտրուկ անցումներից: Ներդիրների մյուս տարածված ձեւերն են՝ հռետորի ձեռքերը խոշոր պլանով, ելույթի բնագիրը կամ հանդիսասրահը: Լսարանը կարող է լինել կենտրոնացած եւ լուռ կամ ոգետրված ու ծափահարող (եթե տվյալ իրավիճակում ծափահարություններն ընդհանրապես տեղին են): Ե՛ր մեկ, ե՛ր մյուս կադրերն անհրաժեշտ են, որովհետեւ եթե հռետորի խոսքն ընդհատվի ծափահարություններով, ապա էկրանին պետք է հայտնվեն համապատասխան կադրերը:

Մամուլի ասուլիսներում ծափահարություններ հազվադեպ են լինում: Օպերատորը նկարահանում է լրագրողներին, որոնք հարցեր են տալիս, լսում եւ գրանցում են պատասխանները նոթատետրում: Կարելի է նկարահանել նաեւ լուսանկարիչների եւ օպերատորների բազմությունը: Իհարկե, դրանք ամենապարզունակ ներդիրներն են, սակայն միանգամայն ընդունելի են տեղեկատվական սյուժեներում, որոնք մոնոտոնային են սրընթաց:

Ճառի կամ մամուլի ասուլիսի ընթացքում գրառելով, թե երբ են հնչել այս կամ այն կոնկրետ խոսքերը, դուք հեշտացնում եք մոնտաժը, պայմանով, որ օպերատորը դեռևս մինչև նկարահանումը սահմանել է իրական ժամանակի կողմը՝ համապատասխանեցնելով իր եւ ձեր ժամացույցները: Նման հնարքը հնարավորություն է տալիս մոնտաժի ժամանակ արագ գտնելու այն հատվածները, որոնք ձեզ հետաքրքրում են:

Ժամանակակից թվանշային ձայնագրիչները, որ ավելի ու ավելի շատ ռադիոլսողներ են օգտագործում, գրանցում են նաև ընթացիկ ժամանակը, ինչը նույնպես հեշտացնում է ժապավենի վրա այս կամ այն հատվածը գտնելը: Այլ տեսակի ձայնագրիչների վրա ձայնագրության ժամանակ կարող եք մատիտով թվային նշաններ դնել՝ հեշտացնելու համար ձեր գործը:

Stendup

Նորվեգացիներն ասում են «ֆեսինգ», շվեդները՝ «սթուուփ», անգլալեզու լրագրողները՝ «ստենդափ»: Երեք բառերն էլ նույն նշանակությունն ունեն. ռեպորտաժ իրադարձության վայրից: Հետին պլանում՝ ինչ-որ տեղ պատերազմ է, իսկ հեռուստադիտողների առջև լրագրողն է, որ պատմում է, թե ինչ է կատարվում թե՛ կետում կամ իրադարձության վայրում: Նկարահանում կատարել պատերազմական գործողությունների վայրում, ուր նռնակներ են պայթում եւ փոխհրաձգություն է, վտանգավոր գործ է, այդ պատճառով լրագրողը ստիպված է իրենով «լցնել» էկրանը:

Իհարկե, անժխտելի է, որ լավագույն հեռուստատեսային սյուժեները նրանք են, որոնք լուրերը ներկայացնում են կադրերի լեզվով: Սակայն որոշակի հանգամանքներում «սթենդափը» կարելու էր է կատարում եւ կարող է լավագույն լուծումը լինել: Խոսքն այնպիսի իրավիճակների մասին է, երբ.

- Չկա լրագրողի պատմությանն ուղեկցող տեսաշար:
- Անհրաժեշտ է հստակ եւ ճկուն անցում կատարել նյութի մի հատվածից մյուսը:
- Պետք է լրագրողին «տեղավորել» արտակարգ իրավիճակում: Տվյալ դեպքում նկարահանումները պետք է կատարվեն այնպիսի վայրերում, որոնք կարող են լրագրողի պատմածը լրացնող լրացուցիչ տեղեկատվության աղբյուր դառնալ: Ֆոնը խիստ կարելու է կատարում, լրագրողը պետք է դառնա իրադարձության մասնիկը: Անձանոթ քաղաքի ուրվագիծ, ճանապարհատրանսպորտային պատահարի հետքեր, փախստականների համար նախատեսված վրանային ճամբար, ռմբակոծություններից տուժած գյուղի ավերակներ... Սրանք, ինչպես նաև ցանկացած այլ տեսարան (միայն թե ոչ աղյուսե պատը) կարող են ֆոն դառնալ:
- Լրագրողը փորձում է վերլուծել եւ բացատրել կատարվածի ենթատեքստը: Էկրանից անմիջականորեն դիմելով հեռուստադիտողին՝ նա իր խոսքերի նկատմամբ առավել մեծ վստահություն է ներշնչում:
- Լրագրողն ինքը հենց նոր եղել է որեւէ իրադարձության մասնակից կամ ինչ-որ ապրումներ է ունեցել եւ փորձում է նկարագրել վերացական թվացող զգացմունքները, հոտերը, իրադրությունը:
- Անհրաժեշտ է ցուցադրել ինչ-որ բան. «Իմ ձեռքին է այն XX ինքնաթիռի սեւ արկղը, որի մնացորդները երկար ժամանակ չէր հաջողվում գտնել»:

Կադրի կառուցման տեսակետից, «սթենդափ» նկարահանելիս կան համարյա անսահման հնարավորություններ: Լրագրողը կարող է ընդառաջ գալ խցիկին, խոսել կանգնած, նստած, նույնիսկ՝ պառկած: Նրան կարելի է նկարահանել գործողություններ կատարելիս: Նա կարող է կադրում հայտնվել միանգամայն անսպասելիորեն, նկարահանվել

խոշոր պլանով կամ համայնապատկերով: Խցիկի «նահանջը» լրագրողից, ինչը հետին պլանում անտվոր իրադրություն կցուցադրի, կարող է հեռուստադիտողի կողմից ընկալվել իբրև անակնկալ:

Ուղիղ խցիկի առջև խոսող լրագրողը պետք է իր համար գտնի մի կետ, որի վրա կարող է հառել հայացքը՝ հեռուստադիտողների հետ անմիջական շփման տպավորություն ստեղծելու համար: Կան նման կետ գտնելու մի քանի միջոցներ:

Ռադիոռեպորտաժ

Եթե հեռուստալրագրողը «սթենդափ»-ով կարող է իրենով իրադարձությունները ծածկելու տպավորություն ստեղծել, ապա իրադարձությունների վայրից հաղորդում տվող ռադիոլրագրողը ապացուցում է իր ներկայությունն այդ վայրում: Ռադիոլրագրության մեջ այդ մեթոդը անվանվում է ոչ թե «սթենդափ», այլ կենդանի ռեպորտաժ (կամ ուղիղ ռեպորտաժ): Գործնականում դա նշանակում է, որ լրագրողը հանպատրաստից նկարագրում է իրադարձությունը, իր շուրջը եղած իրավիճակը, իր զգացումները կամ իրեն շրջապատած մարդկանց զգացումները: Նա հրդեհի կամ դժբախտ դեպքի մասին պատմում է անմիջականորեն խոսափողով, ունկնդիրներին լսելի են այլ ձայներ, ճիչեր, աղմուկ կամ շտապ օգնության մեքենաների շչակները: Կենդանի ռեպորտաժը ունկնդրին հնարավորություն է ընձեռում դառնալու նկարագրվող իրադարձությունների «ականատեսը»: Ռադիոլրագրողը բառերի միջոցով ստեղծում է տեսանելի կերպարներ: Այս պատճառով ռադիոն հաճախ են թվարկում տեղեկությունների տարածման պատկերավոր միջոցների շարքում: Խոսափող, ըստ էության, դառնում է նույն բանը, ինչ տեսախցիկն է: Չայնի եւ ձայնային էֆեկտների միջոցով մենք ունկնդիրների համար պատկերներ ենք նկարում, օգնում ենք նրանց՝ իրենց երեսակայությամբ պատկերացնելու այս կամ այն իրադարձությունը:

Իրադարձությունների վայրում նկարահանող խմբի աշխատանքի մեթոդների մեծ մասը կարող է կիրառել նաև ռադիոլրագրողը: Դեպքերի մասին ռադիոլրագրողի անմիջական եւ արտահայտիչ պատմությունը փոխհատուցում է խցիկով իրադարձությունների զարգացումը «հավերժացնելու» հնարավորության բացակայությունը: Մակայն, իհարկե, իր շուրջը կատարվող իրադարձությունների մասին առանց նախապատրաստության պատմող լրագրողը պետք է ունենա արտակարգ դիտողականություն, պատմելու տաղանդ եւ իրադարձություններին հարմարվելու ընդունակություն:

Ռադիոռեպորտաժներ դատարանի դահլիճից

Ռադիոն հաճախ տեղեկատվության տարածման անգերազանցելի միջոց է, իսկ առանձին դեպքերում՝ սահմանված կանոններն ու օրենքները հեռարձակման այդ միջոցին առավելագույն հնարավորություններ են տրամադրում:

Աշխարհի շատ երկրներում թույլատրվում է դատավարության ընթացքում ձայնագրություն կատարել, այն դեպքում, երբ հեռուստալրագրողներին արգելվում է խցիկ օգտագործել, լուսանկարիչներին՝ չի թույլատրվում լուսանկարել, իսկ թերթերի թղթակիցները ստիպված են լինում բավարարվել նոթատետրում գրառումներ կատարելով: Նման իրավիճակում ռադիոթղթակիցը, անշուշտ, առավելություններ է ստանում:

Թերթերի թղթակիցների համար, թերեւս, ամենից դժվար է ներկայացնել դահլիճում իրադարձությունների զարգացումը, կրքերի բորբոքումը եւ ընդհանուր իրավիճակը: Դատախազի հարցերի դաժանությունը, մեղադրյալի անվստահությունն ու խոսքի խառնաշփոթը, վկաների ընդհատ պատասխանները, փաստաբանի պաշտպանական ճառի պերճաշուքությունը չափազանց բարդ է նկարագրել անգամ արհեստավարժ գրողի համար:

Իսկ ռադիոլրագրողի համար բավական է միացնել խոսափողը եւ սեղմել ձայնագրության կոճակը:

Շվեդական ռադիոն համարյա ամբողջությամբ հեռարձակեց Ուլոֆ Պալմեի սպանության գործով դատավարության ողջ ընթացքը* : Ունկնդիրներին դահլիճում իրադարձությունների զարգացմանը հետեւելու եւ տեղի ունեցածն ինքնուրույն գնահատելու եզակի հնարավորություն էր տրված: Այդ դատավարության նկատմամբ հետաքրքրությունն անչափ մեծ էր: Հավաստի տեղեկատվության մատչելիությունը կանխեց այդ աղմուկ հանած գործի մասին ասեկոսեների եւ անհիմն ենթադրությունների տարածումը:

Շվեդիայում արդարադատության հիմնարար սկզբունքն այն է, որ դատական ընթացակարգերը հասարակության համար բաց են: Գործնականում դա նշանակում է, որ այն ամենը, ինչ ասվում է դատական նիստի ժամանակ, կարող է ձայնագրվել ծապավենիմ: Ձայնագրությունը հետագայում կարող է համարյա առանց սահմանափակումների օգտագործվել: Օրենսդրական ձեւակերպումները բավականին հստակ են, այսուհանդերձ, զանազան մեկնաբանությունների հնարավորություն են ընձեռում: Նախագահողն, օրինակ, իրավունք ունի արգելելու դահլիճում ձայնագրություն կատարելը, եթե դա զուտ գործնական տեսակետից խանգարում է դատարանի նորմալ աշխատանքին (դահլիճում լարերի առատություն ու խճողում է, սարքավորումներն աղմուկ են հանում եւ այլ): Արգելել կարող է նաեւ այն ժամանակ, երբ դատավարության մասնակիցներից մեկը ձայնագրությունն անցանկալի է համարում:

Ուլոֆ Պալմեի սպանության գործով դատավարության ժամանակ առաջին ատյանի դատարանը եւ գերագույն դատարանը տարբեր կերպ գնահատեցին ձայնագրության հարցը, սակայն երկու ատյանի դատարաններն էլ քննադատվեցին իրենց ընդունած որոշումների համար: Դատարանի դահլիճից ուղիղ հեռարձակում կազմակերպելու հարցն ընդհանրապես արտացոլված չէ Շվեդիայի այսօրվա օրենսդրության մեջ:

Դատարանի դահլիճից ռեպորտաժներ հաղորդելու ռադիոլրագրողի աշխատանքի մասին դժվար է ընդհանրացված խոսել, քանի որ տարբեր երկրներում գործող օրենքները կարող են տրամագծորեն տարբեր լինել: Շատ երկրներում, այդ թվում Բալթյան երկրներում եւ Ռուսաստանում, օրենսդրությունը ձեւականորեն հնարավորություն է տալիս դատարանի թույլտվության դեպքում ձայնագրություն կատարել: Սակայն փորձը ցույց է տալիս, որ այդ երկրների դատարանները հաճախ, ի պատասխան լրագրողների խնդրանքի, բացասական վճիռներ են կայացնում՝ իրենց մերժումը փաստարկելով զանազան պատճառաբանություններով:

Շվեդ ռադիոլրագրողի համար աշխատանքի կարեւոր գործոն են բաց դատավարությունները, ինչպես նաեւ՝ առանձին իրավական դրույթներն ու դրանք տարբեր կերպ մեկնաբանելու հնարավորությունները, ինչը թույլ է տալիս ձայնագրություն կատարելու դատարանի դահլիճում: Շվեդիայում բոլորի համար մատչելի են նաեւ հենց դատարանի կատարած ձայնագրությունները, սակայն դրանք օգտագործելու իրավունք ձեռք բերելու գոյություն ունեցող կարգը միանշանակ չէ: Այդ պատճառով, չի խանգարի, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, լրագրողը, մինչ իր գործը սկսելը դիմի դատարանի աշխատակիցներին՝ իմանալու համար գոյություն ունեցող սահմանափակումները: Երբեմն կարիք կա խորհրդակցելու նաեւ իրավաբանի հետ:

«Բնական» հարցազրույցներ

Հարցազրույցն առավել լավ է վարել ոչ թե ստուդիայում, այլ ձեր գրուցակցի համար սովորական պայմաններում: Հարազատ պատերի մեջ գրուցակիցն ավելի վստահ եւ ազատ է

* Ուլոֆ Պալմեն Շվեդիայի վարչապետն էր 1969-76 եւ 1982-86 թվականներին: Սպանվել է Ստոկհոլմում՝ 1986 թվականի փետրվարի 28-ին: Հանցագործության մեջ մեղադրվող եւ Պալմեի այրու կողմից ճանաչված անձը, երկարատեւ դատավարությունից հետո ազատ արձակվեց՝ հանցանշանների անբավարարության պատճառով: Սպանությունն առ այսօր բացահայտված չէ:

զգում անգամ լրագրողի եւ օպերատորի ներկայությամբ: Ընդամին՝ տեղում կատարված հարցազրույցն էլ առավել բնական է ստացվում. ունկնդիրներին լսելի են ճայերի ճշվողյունը, կովերի բառաչը, ժամացույցի տկտկոցը կամ մարդկանց աղմուկը, որոնք որոշակի մթնոլորտ են ապահովում:

Ռադիոուսկնդրի համար այդ ձայները տեղի ունեցողի իրական լինելու հավաստում են եւ երեւակայության խաղ են ապահովում, սակայն, իհարկե ֆոնային ձայները չպետք է խանգարեն զրույցի ընկալմանը եւ շեղեն լսարանի ուշադրությունը: Երեխայի բարձրաձայն լացի կամ որեւէ հոգեմաշ ճռինչի ֆոնին զրույցները գրգռում են ունկնդրին կամ նրան մղում այլ խորհրդածությունների. «տեսնես ի՞նչ է կատարվում, ինչո՞ւ է այդ երեխան այդպես ճչում, այդ ի՞նչ ճռինչ էր...»:

Գայթակղվելով այդ աղմուկները ֆոն դարձնելով՝ մի մոռացեք, որ ժապավենը հետագայում պետք է մոնտաժեք: Իհարկե հին ժամացույցի տկտկոցը ընտանեկան անդորրի մթնոլորտ է ստեղծում, սակայն ձայնագրությունը մոնտաժելիս, երբ առանձին հատվածներ դուրս գան, տկտկոցը կարող է վերածվել խափանված ժամացույցի անհամաչափ աղմուկի: Երաժշտությունն իբրեւ հարցազրույցի ֆոն օգտագործելն ընդունված է, սակայն նման ձայնագրությունը համարյա ենթակա չէ մոնտաժի: Այդ պատճառով երբեմն խելամիտ է զրույցի համար ավելի հանգիստ պայմաններ ընտրել:

Հարցազրույցը ձայնագրելուց հետո անհրաժեշտ է ձայնագրել շրջապատի ձայները: Որպես կանոն, դրա համար մեկ րոպեն էլ բավական է: Վավերագիր աղմուկը կամ ձայնային էֆեկտները հարցազրույցի անցկացման վայրի մթնոլորտի ձայնագրումն են՝ առանց ձեր զրուցակցի (զրուցակիցների) խոսքի: Աղմուկի ձայնագրությունը հեշտացնում է հետագա մոնտաժը: Նման ֆոնի օգնությամբ կարելի «հարթեցնել» անհաջող մոնտաժված կամ ձայնագրված հատվածները: Նման ձայնագրությունները նաեւ հնարավորություն են տալիս սահուն անցում կատարել լրագրողական տեքստին կամ կարող են իբրեւ ֆոն ծառայել հարցազրույցի ընթացքում կատարվածի մասին պատմող լրագրողի համար: Իսկ ահա ստուդիայում կատարված երկարատեւ հարցազրույցների համար ֆոնային ձայնագրությունների օգտագործումը, որպես կանոն, ձախողման է դատապարտված: Զրուցակցի ձայնը կարող է անբնական հնչել, իսկ ֆոնը ունկնդիրները կարող են ընկալել իբրեւ հատուկ էֆեկտ:

Ձայնային ֆոնը կարելի է նաեւ հեռուստատեսությունում. դա ուժեղացնում է այն ամենի զգացական ընկալումը, ինչ հեռուստադիտողը տեսնում է էկրանին:

Հեռուստատեսային սյուժեներում փաստագրական աղմուկը ավելի քիչ է ուշադրություն շեղում, քանի որ հեռուստադիտողը, որպես կանոն, կարող է տեսնել այդ ձայնի աղբյուրը:

Լուրերի «վերակերտում»

Լրագրողներն առ այսօր շարունակում են վիճել, թե որքանով է ընդունելի «վերակերտման» (լրագրողների եւ դերասանների ուժերով որեւէ իրադարձության վերապատկերման) մեթոդը: Ե՞րբ եւ ի՞նչ չափով է արդարացված այդ հնարքի օգտագործումը: Եւ պե՞տք է արդյոք, ընդհանրապես, հանցագործության կամ դժբախտ պատահարի մասին պատմությունն ուղեկցել բեմադրած կադրերով:

Նման մեթոդը լայնորեն կիրառում են շատ երկրների, այդ թվում նաեւ Շվեդիայի, առետրային հեռուստատեսությունները: Շվեդական հեռուստատեսությունն այդ մեթոդին խիստ հազվադեպ է դիմում:

Ենթադրենք բանկի կողոպուտ է եղել, եւ ոստիկանությունը հանցագործների հետախուզում է հայտարարել: Կողոպուտի պահին հեռուստատեսության նկարահանող խումբը դեպքի վայրում չի եղել եւ չէր էլ կարող լինել: Խմբագրության աշխատակիցները կամ դերասանները խցիկի առջեւ քայլ առ քայլ կրկնում են կողոպուտի տեսարանը՝ կատարվածը բեմադրելով ոստիկանների եւ ականատեսների խոսքերի հիման վրա: Հեռուստացույցի էկրանին դա ազդեցիկ եւ գրավիչ է թվում, սակայն որքանո՞վ է այն ճշմարտացի:

Այն խմբագրությունները, որոնք շահագրգռված են պահպանելու իրենց ծրագրերի նկատմամբ հեռուստադիտողների վստահությունը, պետք է հրաժարվեն նման բեմադրություններից: Լրատվական սյուժեին ուղեկցող կադրերը պետք է իրական լինեն: Լրատվական ծրագրերի խմբագրությունները պետք է մշակեն հստակ կանոններ, որնք սահմանափակում են լուրերում բեմադրված կադրերի օգտագործումը: Նման կանոններ, որոնք արգելում են խեղաթյուրված եւ կեղծված լուսանկարների օգտագործումը, գործում են զանգվածային տեղեկատվության տպագիր միջոցներում: Ժամանակակից թվանշային տեխնիկան հնարավորություն է տալիս տեսակադրերը, լուսանկարների նման, զանազան ձեւափոխությունների ենթարկել: Ինչքան նոր տեխնիկան շատ է խեղաթյուրումների եւ կեղծումների հնարավորություններ տալիս, այնքան վճռականորեն մենք պետք է հրաժարվենք դրանցից:

Լրագրողը պետք է ձգտի արտացոլել եւ ներկայացնել իրական դեպքերը, այլ ոչ թե փորձի «վերակերտել» այն, ինչը կատարվել է ինչ-որ ժամանակ, դրանով իսկ հեռուստադիտողի համար իրականությունը սքողելով դրա մասին իր պատկերացումներով:

Թերթերի էջերի մակետներ

Եթե թերթում չկա հստակ եւ մտածված էջադրում, չկան լավ խորագրեր եւ վերնագրեր, անբավարար են ձեւավորումները, լուսանկարները եւ դրանց մակագրությունները, ապա նշանակություն չունի, թե հոդվածն ինչքան լավ է գրված եւ թե ինչ հետաքրքիր թեմա է այն շոշափում, միեւնույն է՝ նյութը կարող է մնալ աննկատ եւ չընթերցվել:

Եթե ընթերցողը, թերթը բացելով, բախվում է նյութերի եւ լուսանկարների քառասյին, չմտածված դասավորության կամ այնպիսի էջի, որում չկա հայացքը կենտրոնացնելու որեւէ բան, ապա նա մի կողմ է դնում այդ թերթը: Ընթերցողը պետք է հնարավորություն ունենա արագ եւ առանց որեւէ խնդրի գտնելու այն, ինչ իրեն հետաքրքրում է: Մակետը պետք է օգնի նրան, ուղեցույց լինի նյութերի եւ պատկերների առատության մեջ:

Թերթի էջի մակետը պետք է հետապնդի երեք նպատակ.

- Գրավի ընթերցողի ուշադրությունը:
- Հրատարակությանը հաղորդի սեփական, յուրօրինակ գրաֆիկական տեսք:
- Ընթերցողին օգնի կողմնորոշվելու եւ տարբերակելու տեղեկատվությունն ըստ կարեւորության աստիճանի:

Թերթի էջերի բոլոր տարրերը պետք է տրամաբանորեն համակցված լինեն, որպեսզի թերթը դառնա ընթերցվող:

Հրատարակությունների եւ ընթերցողների սովորույթների զանազան հետազոտություններն ու ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թերթ կարդալը շարունակելուն մղում են մակետի հետեւյալ տարրերը՝

- վերնագրերը,
- լուսանկարները,
- լուսանկարների մակագրությունները,
- ընդգծված բաղադրատարրերը («մխրճումները»),
- ենթավերնագրերով տեքստերը:

Հոդվածներն ընթերցողի ուշադրությունը գրավում են միայն այն ժամանակ, երբ վերոհիշյալ բոլոր տարրերն առկա են ինչպես առանձին էջի, այնպես էլ ողջ թերթի մակետում:

Քայլ առ քայլ

Առաջինը, որ աչքի է զարնում, վերնագիրն է: Դա ընթերցողին հաղորդվող ամենավառ ազդանշանն է՝ այն, ինչ գրավում է նրա ուշադրությունը: Կարդալով վերնագիրը՝ մենք անմիջապես ուշադրություն ենք դարձնում հոդվածին ուղեկցող լուսանկարին: Հենց դրա համար է կարելի վերնագրի եւ լուսանկարի միջեւ եղած կապը: Այն լուսանկարները, որոնցում մարդիկ են պատկերված, ընթերցողների համար ավելի հետաքրքիր են, քան բնության կամ անշունչ առարկաների պատկերները: Լուսանկարից նայող մարդու աչքերը պատկերի յուրատեսակ կենտրոն են դառնում:

Վերնագիրը կարող է լուսանկարի եւ տեքստի կապող օղակը դառնալ: Օրինակ, «Փրկեց իր թիմին» վերնագրի տակ կարելի է տեղադրել ֆուտբոլի հավաքականի դարպասապահի լուսանկարը, իսկ օրվա հերոսի լուսանկարին ուղեկցող տեքստը կամբողջացնի տեղեկատվությունը:

Վերնագրից եւ լուսանկարից հետո ընթերցողի հայացքը տեղափոխվում է հոդվածի նախաբանին, որը, իբրեւ կանոն, տպագրվում է ընդգծված շրիֆտով: Նախաբանն ընթերցողին կարճ ու հստակ ծանոթացնում է հոդվածի բովանդակությանը: Այն պետք է հետաքրքրություն առաջացնի նյութի նկատմամբ, ընթերցողին մղի կարդալու ամբողջ հոդվածը:

Կարելի է բավականին արագ ստուգել, թե պատրաստ է, արդյոք, տպագրության այն էջը, որի մակետի վրա աշխատում էիք: Փորձեք տեսնել վերոհիշյալ հերթականությամբ շրջան: Բոլոր տարրերն են տեղում: Արդյոք բոլոր տարրերն են տեղում: Ինքներդ կցանկանալի՞ք ձեր հայացքը հառել ինչ-որ բանի, կարդալ այս կամ այն հոդվածը:

Էջերի մակետները պետք է լինեն ուղղանկյուն բլոկներով, որոնք ներառում են հոդվածների տեքստերը, վերնագրերը եւ լուսանկարները: Այն էջը, որի ձեւավորումը համապատասխանում է այս սկզբունքին, հեշտ է կարդալ:

Շվեդական թերթերում օգտագործվում է էջը «բացելու» «վերին ձախ անկյունի» սկզբունքը: Համարի ամենակարելի լուրը տեղադրվում է հենց այդ անկյունում: Այստեղ վերնագիրը վճռորոշ դեր ունի: Ինչքան վերին ձախ անկյունից հեռու է տեղադրված տեղեկատվական նյութը, այնքան այն ավելի քիչ նկատելի է ընթերցողի համար, ինչն արտացոլվում է նաեւ վերնագրի տառատեսակում: Այս սկզբունքը կիրառվում է բոլոր պարբերականներում:

Երկար, առանց ենթավերնագրերի տեքստերը հաճախ են առաջացնում ընթերցողի բացասական վերաբերմունքը: Որպես կանոն, ինչքան երկար է տեքստը, մարդիկ այնքան ավելի քիչ ցանկություն են ունենում այն կարդալու: Հենց այս պատճառով հարկ է հոդվածները բաժանել, օրինակ՝ հիմնական տեքստի եւ փաստերի սյունակի: Եթե հոդվածում հարցազրույց է օգտագործված, ապա այն կարելի է առանձնացնել: Տեքստը «ջարդելու» տպավորիչ ձեւ է ենթավերնագրերի, ինչպես նաեւ՝ շրջանակներով ու գծերով առանձնացված եւ ընդգծված տառատեսակով տպագրված մեջբերումների օգտագործումը:

Գնահատում

Էջադրումը միայն թերթի ձեւավորման տարր չէ: Տեքստերը խմբագրելը եւ դրանք մակետավորելը արտացոլում են նաեւ տեղեկատվական նյութի խմբագրական գնահատականը: Որպես կանոն, մակետավորմամբ եւ էջադրմամբ զբաղվող աշխատակիցները պետք է նորությունների բաժնի խմբագրի կամ երեկոյան հերթապահի հետ գնահատեն ստացված նյութը, ապա վերջնական որոշում կայացնեն էջում նյութի տեղադրման եւ նրա գրաֆիկական մատուցման վերաբերյալ:

Եթե էջում գովազդ է տեղադրվելու, ապա մտածեք, թե որտեղ եւ ինչպես այն տպագրել: Ընթերցողն էջն ընկալում է իբրեւ ամբողջություն: Կարելի է, որ գովազդը կամ հայտարարությունը «ջարդեն» տեքստը՝ խանգարելով տեղեկատվական նյութերի

ընկալմանը: Գովազդներով եւ հայտարարություններով էջերի ձեւավորման լավագույն տարբերակը նյութերը վերին ձախ անկյունից սկսած տեղադրելն է, իսկ գովազդներն ու հայտարարությունները՝ ներքին աջ անկյուն տեղափոխելը:

Չի կարելի հողվածին ուղեկցող լուսանկարները տպագրել այն գովազդների հարեւանությամբ, որոնցում կամ գծանկարներ կամ լուսանկարներ: Ընթերցողին կարող է թվալ, թե դա միատարր զանգված է, որում դժվար է լրագրողական նյութն առանձնացնել հայտարարությունից:

Շվեդական օրաթերթերը ձգտում են խմբագրական նյութերը հստակորեն առանձնացնել հայտարարություններից եւ գովազդներից: Հայտարարությունների եւ գովազդների գրաֆիկայից, ձեւավորումից եւ մակետից ընթերցողները պետք է հստակորեն հասկանան, որ դրանք ոչ թե հողվածներ են, այլ վճարված ծանուցումներ: Դա օգնում է խուսափելու այնպիսի իրավիճակներից, երբ ընթերցողը, չտարբերելով, թե որոնք են ռեպորտաժներն ու հողվածները, իսկ որոնք գովազդները, աստիճանաբար կորցնում է վստահությունը այդ թերթի նկատմամբ:

7

Պահպանի՞ր խոսքի կուլտուրան

Դու պետք է իմանաս, թե ով ես, երբ քո ձայնով աշխարհն է խոսում
Բրիթ Էդվալ

Թերթերի լրագրողների համեմատ հեռուստատեսային եւ ռադիոլրագրողներն առավել մեծ իշխանություն ունեն իրենց նյութերի նկատմամբ: Թերթի խմբագիրը կամ պատասխանատու քարտուղարը կարող են լրագրողի հողվածն անճանաչելիորեն փոխել՝ կրճատելով մեկ-երկու պարբերություն, փոխելով վերնագիրը, սեփական հայեցողությամբ ընտրելով լուսանկարները: Լրագրողի խոսքը, որ հնչում է հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, փոխել հնարավոր չէ: Հեռուստադիտողների եւ ռադիոունկնդիրների կողմից տեքստի ընկալումն ու ըմբռնումը մեծապես կախված է նյութի մատուցման եղանակից: Չանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներում լավ արդյունքի հասնելու համար ձայնը հսկայական դեր է կատարում: Չայնի եւ հնչերանգի օգնությամբ լրագրողը կարող է զգացմունքներ հաղորդել եւ ընդգծել իր տեքստում ամենակարեւորը: Ռադիոյում ձայնը հենց գրաֆիկան է:

Չայնը եւ խոսքը պակաս կարեւոր չեն նաեւ հեռուստատեսության համար: Հնչողությունն, իհարկե, կախված է պարապմունքներից եւ ձայնի տեխնիկական մշակելուց, սակայն ոչ պակաս կարեւոր գործոններ են նաեւ վստահությունը սեփական ուժերի նկատմամբ եւ լրագրողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը: Ինչքան էլ ցավալի է խոստովանել, սակայն եթերում աշխատանքն սկսելը միշտ դժվար գործ է: Գեղեցիկ, լավ մշակված ձայնը դեռուս հաջողության գրավական չէ: Սկսնակ լրագրողին անմիջապես կարելի է ճանաչել անվստահ տոնից, ձայնում հնչող մի տեսակ վախից, թե ինչ-որ բան կարող է այնպես չանել: Սակայն նա, ով հաշվի է առնում, որ դա, միեւնույն է, պետք է հաղթահարել, կարող է կրճատել փորձերի եւ սխալների տանջալից ժամանակաշրջանը:

Աշխատելով եթերում՝ լրագրողը պետք է հավատարիմ մնա ինքն իրեն: Կարիք չկա նմանակելու հեռուստատեսային եւ ռադիոլրագրության աստղերին: Սակայն նաեւ չպետք է բարդացնել խնդիրը: Պրակտիկայում ամեն ինչ առավել պարզ է. որքան մեծ է սեփական ուժերի նկատմամբ լրագրողի վստահությունը, երբ խոսափողով ելույթ է ունենում, այնքան նրա ձայնն ավելի լավ է հնչում եթերում: Ինչքան էլ տարօրինակ թվա, սակայն փաստ է, որ

աշխարհի տարբեր ռադիոկայանների լուրերի թողարկումները լսելիս՝ մենք, առանց նույնիսկ լեզուն հասկանալու, կարող ենք անսխալ նկատել այս կամ այն լրագրողի ձայնի անվստահությունը: Ունկնդիրները, որպես կանոն, իրենց պատկերացումներն ունեն լուրերի թողարկման ոճի վերաբերյալ: Հենց այս պատճառով մեզ հարկ է լինում հավասարակշռություն պահպանել նորությունները մատուցելու ավանդական եղանակների եւ աշխատանքի անհատական ոճի միջեւ: Շվեդիայում վերջին տարիներին կարելի է ռադիոյով լսել լրագրողների, ովքեր ոչ միայն բարբառով են խոսում, այլև որեւէ շրջանին հատուկ առոգանությամբ, չնայած այս երեւոյթի նկատմամբ էլ ունկնդիրների վերաբերմունքը միանշանակ չէ:

Նա, ով պատրաստվում է աշխատել ռադիոյում կամ հեռուստատեսությունում, պետք է յուրացնի ձայնն օգտագործելու արվեստը: Դրան անհնար է տիրապետել միայն դասագրքեր կարդալով: Չայնը լրագրողի գործիքն է, նրա հնչերանգները յուրացնելու համար անհրաժեշտ է լրջորեն աշխատել եւ սովորել օգտագործելու նրա բոլոր հնարավորությունները: Ահա թե ինչու սկզբնական փուլում ոչ միայն կարեւոր, այլև անհրաժեշտ է փորձառուների օգնությունը:

Լուրերը եթերում

Շվեդիայում ռադիոյի եւ հեռուստատեսության լրագրողների մեծ մասը նախկինում թերթի թղթակից է եղել: Ռադիոյի կամ հեռուստատեսության համար սյուժե պատրաստելը բոլորովին էլ նույնը չէ, ինչ թերթի համար տեղեկատվական հոդված գրելը, քանզի եթերային լուրերը լսվում են եւ ոչ թե ընթերցվում:

Հոկան Հանսոնը, Շվեդական ռադիոյի լուրերի «Էխո» խմբագրության նախկին պատասխանատու քարտուղարը, իր դասախոսություններում օգտագործում է «խոսափողի պարադոքս» արտահայտությունը. «Չարմանալի բան. ցանկացած մարդ կարող է ելույթ ունենալ ռադիոյով կամ հեռուստատեսությամբ, բացի նրանցից, ովքեր այդտեղ աշխատում են: Վերջիններս, արի ու տես, պետք է նախ թղթի վրա գրեն այն, ինչ պատրաստվում են ասել, իսկ հետո կարդան այդ գրածը»^{*}

Մամուլի համար գրված եւ բարձրաձայն ընթերցված նյութը, որպես կանոն, ունկնդրին անհասկանալի բառակույտ է թվում: Թերթային հոդվածն ավելի սեղմ է եւ տվյալներով ու փաստերով հագեցած, այն դեպքում, երբ եթերի համար նախատեսված տեքստը պակաս հագեցած է, որպեսզի ունկնդիրները հնարավորություն ունենան ընկալելու եւ ըմբռնելու բովանդակությունը:

Տեքստ (սցենար)

Կարճ տեղեկատվական հաղորդագրությունների տեքստն անհրաժեշտ է ամբողջությամբ գրել: Իսկ ահա երկար սյուժեները եթերում առավել լավ են հնչում, եթե դուք թղթի վրա գրի եք առնում միայն ձեր ասելիքի հիմնական դրույթները, այլ ոչ թե խոսքը՝ բառ առ բառ:

Թղթի վրա ձեր տեքստը գրի առնելիս կարելի է օգտագործել մեքենագրական ընդհատումները՝ դադարները նշելու համար, նախադասության մեջ ԿԱՐԵՎՈՐ կամ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ բառերը կարելի է առանձնացնել մեծատառերով կամ ընդգծել: Սրանք կհեշտացնեն նախադասությունը խոսափողի առջեւ ընթերցելիս շեշտադրումներ կատարելն ու ճիշտ առոգանություն ընտրելը: Խորհրդանիշներն ու պատկերներն ավելի լավ է գրի առնել բառերով, քանի որ տեքստը կարդալիս հեշտությամբ կարող եք լեզվի սայթաքումներ ունենալ՝ հանդիպելով \$, %, # եւ այլ նշանների: Տեքստը գրառելիս աշխատեք խուսափել այնպիսի համառոտագրություններից, ինչպիսիք են, ասենք՝ ելն, պրն, տկն եւ այլն:

^{*} Hansson Håkan: "Är radionheter skriftliga eller muntliga?". Språkvård nr2/1996.

Աշխատեք տեքստում չօգտագործել մասն հապավումներ, օրինակ՝ ԵԱՀԿ, ԵԽ ԽՎ, ՄՕԿ, ԱՕԿ, ԱՄՀ, ԱԱՆ, ԱՆ եւ այլն: Եթե առանց դրանց հնարավոր չէ յոլա գնալ, ապա ավելի լավ է հապավումները բացել: Մի մոռացեք, որ գործնականում անհնար է տարբերել ռադիոյով հնչող ԱԱՆ եւ ԱՆ հապավումները, եւ ունկնդիրն էլ չի հասկանա՝ խոսքը ազգային անվտանգության⁶, թե՞ առողջապահության նախարարության մասին է:

Թվերը, հատկապես խոշորները, ավելի հեշտ է կարդալ, երբ դրանք գրվում են բառերով: Իրոք, եթե գրել եք «Հաղթանակի համար նրան անհրաժեշտ էր ընդամենը հազար հարյուր երեսուներկու ձայն», ապա ավելի հեշտությամբ կկարդաք, քան եթե գրեիք «...նրան անհրաժեշտ էր 1132 ձայն»: Չեռագրում ավելի լավ է գրել «տասնմեկն անց երեսուն» քան՝ «11:30»: Պետք չէ ռադիոսյուժեի տեքստում աստղաբաշխական թվեր օգտագործել: Եթե առանց դրա էլ հնարավոր չէ յոլա գնալ, ապա աշխատեք կտրացնել դրանք. չպետք է ասել «Բյուջեում սոցիալական կարիքների համար նախատեսված է 580 միլիոն 700 հազար դրամ», ունկնդրի համար առավել հեշտ ընկալելի կլինի, եթե ասեք «մոտ վեց հարյուր միլիոն դրամ»:

Մի շփոթեք տոկոսն ու տոկոսային կետը: Եթե հասարակական հարցման արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալ-դեմոկրատների նկատմամբ համակրանքը 33%-ից իջել է 29%-ի, ապա դա նշանակում է, որ կուսակցության վարկանիշն ընկել է չորս տոկոսային կետով եւ ոչ թե չորս տոկոսով: Նույն հարցումը կարող է ցույց տալ, որ այսօր ձախ կուսակցություններին պատրաստ է ձայն տալ ընտրողների 8 տոկոսը եւ ոչ թե 4, ինչպես մեկ տարի առաջ էր: Սա նշանակում է, որ վարկանիշը բարձրացել է ոչ թե 4 այլ 100 տոկոսով: Նման սխալներն ավելի հաճախ են լինում, քան մենք կարող ենք պատկերացնել: Եվ ամենից հաճախ դրանք թույլ են տալիս սկսնակ լրագրողները:

Հեռուստատեսային սյուժեի սցենար գրելը, որպես կանոն, ավելի դժվար է, այն ներառում է ոչ միայն լրագրողի տեքստը, այլև տեսաշարի նկարագրությունը: Այսօր գոյություն ունեն գանազան համակարգչային ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս պարզեցնել եւ հեշտացնել սցենար գրելն ու մոնտաժը:

Եթերային խոսք

Խցիկի կամ խոսափողի առջև ելույթ ունենալիս լրագրողը պետք է չկեղծի եւ հավատարիմ մնա ինքն իրեն: Չեր սյուժեներում եւ հաղորդումներում խուսափեք միատոնությունից, նյութը պատրաստելիս ցույց տվեք ձեր «ես»-ը: Պետք է կարողանալ ունկնդիրին կամ հանդիսատեսին **պատմել**, այլ ոչ թե թղթից բառ առ բառ կարդալ գրած տեքստը: Հանպատրաստից ստեղծագործելու (իմպրովիզացիաներ անելու) ընդունակությունը հատկապես կարեւոր է ռադիոլրագրողի համար: Տեքստը մշակելու լավ ձեւ է այն եթերից կամ ձայնագրությունից առաջ մի քանի անգամ կարդալը: Դա հնարավորություն է տալիս ավելի լավ ընկալելու բառերի իմաստն ու ողջ սյուժեի բովանդակությունը: Ձնջեք ավելորդ բառերը: Մի մոռացեք հաշվել, թե քանի վայրկյան (րոպե) է հնչում ձեր նյութը. ծրագրի խմբագրին հետաքրքրում է յուրաքանչյուր սյուժեի տևողությունը:

Ռադիոյի եւ հեռուստատեսության լրագրողների լեզուն պետք է աչքի ընկնի բազմազանությամբ: Ցանկացած կրկնություն ջղայնացնում է հեռուստադիտողին եւ ռադիոունկնդիրին: Սովորություն դարձրեք օգտվել հոմանիշների բառարանից: Պետք է տիրապետել տեքստը բազմազան դարձնելու արվեստին:

Եթերից կամ ձայնագրությունից առաջ ընթերցելով տեքստը՝ ստուգեցեք, թե ճիշտ եք, արդյոք, ընտրել բառերն ու արտահայտությունները: Բարդ արտահայտություններն ու ոչ ճշգրիտ նկարագրությունները դժվարացնում են բովանդակության ըմբռնումը: Նախադասությունները պետք է ունենան ուղիղ շարադասություն, պետք չէ շրջում շարադասություն օգտագործել կամ տեքստը ծանրաբեռնել բարդ ու բարդ ստորադասական

նախադասություններով: Նախադասությունները պետք է ունենան պարզ կառուցվածք եւ տրամաբանորեն կապված լինեն իրար:

Եթե թերթի ընթերցողը ինչ-որ բան բաց թողնի կամ լավ չհասկանա որեւէ արտահայտության իմաստը, կարող է վերընթերցել նախադասությունը կամ պարբերությունը: Ունկնդիրն ու հեռուստադիտողը նման հնարավորություն չունեն, ահա թե ինչու նախադասությունները պետք է պարզ ու հասկանալի լինեն եւ տեքստում տարրնկալումների տեղիք չտան: Կարելի է փաստերն ու տվյալները կարելի է կրկնել մի քանի անգամ, սակայն մարդու պաշտոնն ու տիտղոսները նշելիս անհրաժեշտ է հակիրճ լինել: Անշուշտ, նման դեպքերում որոշ հակասություն է առաջանում տեղեկատվության ամբողջականություն եւ բանավոր խոսքի հստակություն հասկացությունների միջեւ: Այսուհանդերձ, տեղեկատվական սյուժեի տեքստում բավական է ասել «բժշկագիտության դոկտոր», փոխանակ՝ «Լ. քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկան, այսինչ հիվանդանոցի գլխավոր բժիշկ, իմունաբանության պրոֆեսոր, որ մասնագիտացել է...»:

Հազիվ թե ունկնդիրը կարողանա հիշել բոլոր այդ տիտղոսները: Սյուժեն երբեք մի սկսեք ունկնդիրների համար անծանոթ անվան հիշատակումով: Դա շատ հաճախ ունկնդիրներին մղում է անուշադրության մատնելու տվյալ սյուժեն:

Ռադիոլրագրողը պետք է սովորի խոսել հանպատրաստից, կարողանա միանգամից նկարագրել իրադարձությունը կամ այն վայրը, որտեղ գտնվում է: Այս արվեստին լավագույնս են տիրապետում մարզական մեկնաբանները: Սակայն ցանկացած լրագրողի երբեմն, թեպետ եւ ոչ շատ հաճախ, հարկ է լինում խոսել առանց նախապատրաստության: Դա դժվար չէ սովորել. անհրաժեշտ է ինքն իր համար նկարագրել առօրյան, ամեն օրվա կատարածը՝ մետրոյով երթելեկելը, խանութ, պարահրապարակ այցելելը եւ այլն: Հանպատրաստից ստեղծագործելու արվեստը ջանադիր նախապատրաստություն է պահանջում:

Տարու

Ձեր խոսքը գերծ պահեք մոդայիկ, դատարկ, մակաբույժ բառերից, որոնք «սովորություն ունեն» արմատավորվելու ռադիոլրագրողների եւ հեռուստալրագրողների բառապաշարում: *Արդյունքում, ...* բառերը նման «մոլախոտերի» օրինակ են: Ունկնդրի ձանձրույթն են հարուցում այն սյուժեները, որոնք սկսվում են ժամանակը նշելուց. «Դա տեղի ունեցավ ցերեկվա ժամը երկուսին...»: Խուսափեք այնպիսի շարքներ օգտագործելուց, ինչպիսիք են «հարձակման անցնել», «ահագանգ հնչեցնել», «հիմք դնել», «այսբերգի տեսանելի մասն է միայն» եւ այլն:

Տարբու վարորդները հայտնելով են խոսում, իսկ բյուրոկրատները՝ գրասենյակային լեզվով: Լրագրողը չպետք է տրվի այն միջավայրի լեզվին հարմարվելու գայթակղությանը, որում գտնվում է: Ցավոք, գրուցակիցը շատ հաճախ է մեզ վարակում խոսելու իր ոճով: Չրուցելով որեւէ պաշտոնյայի հետ՝ թղթակիցը հանկարծ սկսում է օգտագործել վերամբարձ արտահայտություններ, երիտասարդ տեխնոկրատի հետ գրուցելիս՝ անցնում է ժարգոնի եւ այլոց անհասկանալի մասնագիտական արտահայտությունների: Լրագրողը պետք է սովորի ինքն իր էությանը հավատարիմ մնալ՝ անկախ նրանից, թե ում հետ է գրուցում:

Չգույշ եղեք քարոզչական բնույթ ունեցող գնահատող դատողություններ կատարելիս: Դրանք օգտագործելիս դուք փաստորեն պիտակներ եք կայցնում: Լրագրողը պետք է հաշվի առնի իր օգտագործած բառերի նշանակությունն ու գնահատող բնույթը: Ազատամարտիկ, պարտիզան եւ ահաբեկիչ բառերը բացարձակապես տարբեր իմաստներ ունեն: Մանր ու միջին ձեռնարկությունների մրցունակության սահմանափակումը, կարտելների ու միջազգային սինդիկատների ստեղծումը բնութագրելիս խոշոր ձեռնարկատերերն օգտագործում են «սինեթիզ» գեղեցիկ բառը: Գործագուրկներին եւ գործից հեռացված մարդկանց ոմանք, չգիտես ինչու, կոչում են աշխատանքից ժամանակավորապես ազատվածներ:

Մոյայի մշակման նոր մեթոդի շուրջ բանավեճերը հետաքրքիր օրինակ են, թե ինչպես կարող են գնահատող արտահայտություններն ազդել հասարակական կարծիքի վրա: Գենետիկական փոփոխությունների շնորհիվ բույսերի մոտ պեստիցիդների որոշ տեսակների նկատմամբ դիմադրողականություն է առաջանում: Այս մեթոդի հակառակորդներն իրենց ելույթներում օգտագործում են **գենային աճաբարարություն եւ գենետիկորեն փչացած սննդամթերքներ** արտահայտությունները: Անձանոթ բառերը լսող մարդկանց մոտ անբարյացկամություն է առաջանում, նոր տեխնոլոգիան նրանց խորհրդավոր ու սարսափելի մի բան է թվում: Սննդարդյունաբերության ներկայացուցիչները խոսում են տյայի **գենետիկական վերափոխումների մասին**: Իսկ ահա նոր տեխնոլոգիայի կողմնակիցներն օգտագործում են **գենետիկորեն բարելավված տեսակներ** արտահայտությունը: Բառերի ընտրությունն, այսպիսով, այս կամ այն երեւոյթի գնահատում է պարունակում: Լրագրողը պետք է իր տեքստում օգտագործի չեզոք արտահայտություններ՝ ցույց տալով, որ ինքն այդ հարցում որեւէ մեկի կողմնակիցը չէ:

Տեքստից հանք բոլոր ավելորդ բառերն ու նախադասությունները. «Կադրում, Կարլ տասնվեցերորդ Գուստավից աջ, մենք տեսնում ենք Միլվիա թագուհուն»: Հեռուստադիտողի համար այն տեղեկությունը, թե կադրում ինչ-որ մեկը երեսում է, բոլորովին ավելորդ է, չէ՞ որ դա ակնհայտ է:

Ես անձնական հակակրանք ունեմ **«այսպես կոչված»** արտահայտության նկատմամբ: Որեւէ բարդ երեւոյթի կամ տերմինի նշանակությունը ռադիոունկնդրին կամ հեռուստադիտողին բացատրել չկարողացող լրագրողը այդ երկու բառն է մեջտեղ բերում. «Այսպես կոչված կոմպերզենցիայի տեսության քննադատները...»: Այս նախադասությունն ապացուցում է, որ լրագրողը ծույլ է եւ ջանք չի թափել պարզելու թե ինչ է կոմպերզենցիայի տեսությունն ու բացատրելու այն իր ունկնդիրներին: Սա վատ լրագրության օրինակ է: Կամ՝ **այսպես կոչված** լրագրության օրինակ:

Ինչու է անհրաժեշտ ծանուցումը (անոնսը)

Ծանուցումը (անոնսը կամ «լիդը») եւ համառոտ ընդհանրացումը թերթի վերնագրի ու «մխրճումների» համարժեքներն են էլեկտրոնային լրատվամիջոցներում: Ծանուցումը լուրը նկարագրում է ընդհանուր գծերով, առանց մանրամասնությունները նշելու, որպեսզի ունկնդիրների մոտ ծրագրի սյուժեների նկատմամբ հետաքրքրություն առաջանա:

Նորությունների ծրագրի ծանուցման ժամանակ կարող է ցուցադրվել Նոբելյան մրցանակի դափնեկիր մի անձանոթ կնոջ լուսանկարը: Կադրերն ուղեկցվում են հետեւյալ տեքստով.

ԱՅՍՕՐ ՆԱ ԴԱՐՉԱՎ ՆՈՒԲԵԼՅԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ. ՔԻՉ ՀԵՏՈ ՄԵՐ ԾՐԱԳՐՈՒՄ ԿԷՆՉԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ:

Լսելով այս ծանուցումը՝ հեռուստադիտողը եզրակացնում է, որ զանգվածային ընթերցողին անհայտ մի բանաստեղծուհի դարձել է Նոբելյան մրցանակի դափնեկիր եւ ծրագրի թողարկման ընթացքում կկարդա իր բանաստեղծությունները: Թե ով է այդ կինը, որ երկրից է եւ ինչ լեզվով է գրում ու խոսում՝ առայժմ հեռուստադիտողի համար գաղտնիք է մնում: Ռադիոյում եւ հեռուստատեսությունում նորությունների ծանուցման տեքստը, հաճախ, մի տեսակ խայժ է, որն ունկնդրի կամ հեռուստադիտողի մոտ շատ ավելի մեծ չափով է սպասում առաջացնում, քան թերթի հոդվածի վերնագիրը՝ ընթերցողի մոտ:

Կարճ ընդհանրացում անելն այնքան էլ հեշտ բան չէ: Այն պետք է լուրը ներկայացնի ավելի ընդարձակ քան ծանուցումը, սակայն, ընդամին, չբացահայտի բոլոր մանրամասնությունները, որպեսզի հեռուստադիտողը կամ ռադիոունկնդիրը չկորցնի հետաքրքրությունը բուն սյուժեի նկատմամբ: Ընդհանրացման խնդիրը ոչ միայն նորությունը

ներկայացնելն է, այլև, անհրաժեշտության դեպքում, իրադարձության նախապատմությունը նկարագրելը, ինչով լսարանին կարելի է օգնել հասկանալու սյուժեի բովանդակությունը:

Անցում կատարելու արվեստը

Կարճ ընդհանրացումից սյուժեին կամ լրագրողի տեքստից բուն սյուժեում եղած հարցազրույցին անցումը պետք է կապակցված լինի: Անցումները պետք է սահուն լինեն, մի փոքրիկ անճշտությունն անգամ, անհարթությունը կամ «ցատկը» հեռուստադիտողը կամ ունկնդիրն անմիջապես նկատում է: Եթե նախաբանն ավարտվում է «մեր թղթակիցը հաղորդում է» բառերով, ապա եթերում պետք է հնչի թղթակցի ձայնը:

ՆԱԽԱԲԱՆ

Մեր թղթակիցը Տոկիոյից հաղորդում է:
ՍՅՈՒԺԵ

(հիերոգլիֆներ - ճապոներեն խոսք)

Ի զարմանա ռադիոուսկնդրի՝ ընդունիչից հնչող առաջին բառերը ոչ թե «Էխ» ծրագրի թղթակցին են, այլ ճապոներեն խոսող զրուցակցին: Լսարանն ապշում է. ո՞վ է խոսում: Երբ հնչի ասվածի թարգմանությունը, արդեն ուշ կլինի: Ունկնդիրը կորսված է, նա իր մտքերի հետ է եւ դժվար թե ընկալի թարգմանության բովանդակությունը:

Չի կարելի սյուժեն սկսել նախաբանում օգտագործված ձեռնարկումներով: Կրկնությունները միշտ ձանձրալի են եւ բարկացնում են: Երբեմն բավական է կրկնել նախաբանի ընդամենը մեկ արտահայտություն կամ առանցքային բառ, եւ ունկնդիրները կամ հեռուստադիտողները ողջ հաղորդումը կհամարեն իբրեւ ձանձրալի ու հոգեմաշ:

Հնարավորության դեպքում թղթակիցն ինքը պետք է առաջարկի ծանուցման կամ նախաբանի տեքստը: Սա նյութը ներկայացնելիս անճշտություններից ու չափազանցումներից խուսափելու եղանակներից մեկն է: Սակայն հաղորդման սյուժեների միջեւ անցումների եւ նախաբանի վերջնական տեքստի պատասխանատուները ծրագրի հաղորդավարներն ու ստուդիայում աշխատող լրագրողներն են: Լուրերի ծրագիրը վարողի աշխատաժամանակի մեծ մասը ծախսվում է սյուժեները ունկնդրելու կամ դիտելու վրա, ինչպես նաեւ նախաբանները վերամշակելու, որպեսզի դրանք հասկանալի լինեն, հստակ ներկայացնեն նորությունը եւ ապահովեն սահուն անցումը սյուժեին: Լուրերի թողարկման լեզուն պետք է մի ոճով լինի: Ծրագիրը վարողը պետք է յուրաքանչյուր լրագրողական նյութ ներկայացնելիս պահպանի սյուժեի ոգին, հեռուստադիտողին կամ ունկնդրին պատկերացում տա դրա մասին եւ միաժամանակ նախաբանը չձանրաբեռնի փաստերով ու տվյալներով: Նախաբանը չպետք է վերածվի սյուժեն վերապատմելու, այլ լինի մի տեսակ խայծ, որով մենք ուզում ենք որսալ լսարանի ուշադրությունը:

Ռադիոծրագիր վարողը չպետք է մոռանա ներկայացնել թղթակցին, իսկ եթե սյուժեն սկսվում է հարցազրույցով, ապա նաեւ նրան, ով խոսելու է: Հեռուստատեսությունում դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ այստեղ թղթակցին եւ նրա զրուցակիցներին ներկայացնելու համար առավել հաճախ օգտագործվում են տիտրերը: Այդ պատճառով հեռուստատեսային լուրերի ծրագիր վարողը նախաբանի տեքստ կազմելու առավել շատ ազատություն ու հնարավորություններ ունի:

Լուրերի շատ ծրագրերում յուրաքանչյուր հեռուստատեսային սյուժեի վերջում հայտնվում են տեսամոնտաժի ռեժիսորի եւ օպերատորի անունները ներկայացնող տիտրեր: Սա այսպես կոչված credit-ն է: Սյուժեն պատրաստած լրագրողի անունը, որպես կանոն, տրվում է ռեպորտաժի սկզբում: Թերթում լրագրողի անունը, իսկ երբեմն նաեւ լուսանկարն ու աշխատանքային հեռախոսի համար տրվում են տեքստի վերջում (byline):

Ռադիոռեպորտաժների ժամանակ, սյուժեի ավարտից հետո, ծրագիրը վարողը տալիս է

լրագրողի եւ հաղորդված հարցազրույցի մասնակիցների անունները: Հեռուստատեսային կամ ռադիոժրագրի վարողի տեքստը, որը հետետում է սյուժեին, կարող է լինել ամփոփում կամ ապագային միտված խոսք. «Կառավարությունն այդ հարցի վերաբերյալ որոշում կընդունի երկու ամսից ոչ շուտ» կամ՝ «Դատարանը վճիռ կկայացնի երկու շաբաթ հետո, փաստաբան Ն-ի հետ զրուցեց մեր թղթակից Կ-ն:

Ժամանակաձեւերի համաձայնությունը

Ծրագրերը վարողները եւ սյուժեներ պատրաստող լրագրողները բայերի ժամանակային ձեւերն ընտրելիս պետք է հետետողական լինեն: Մի մոռացեք այն մասին, որ ներկա ժամանակը ունկնդրի կամ հեռուստադիտողի մոտ ներկա լինելու զգացում է առաջացնում եւ սյուժեին արդիականություն է հաղորդում:

- Սոցիալական ապահովության նախարարը համարում է...

- Բուժքույրերը փորձում են գործադուլի միջոցով հասնել...

Մակայն երբեմն անցյալ ժամանակի օգտագործումը նախաբանում, իսկ ներկա ժամանակի օգտագործումը դրան հետետող սյուժեում կարող են սահուն անցումներ ապահովել:

ՆԱԽԱԲԱՆ (նշում է ավարտված գործողությունը).

- Այսօր 10000 բուժքույրեր գործադուլ **արեցին**: Դրա պատճառով երկրի շատ հիվանդանոցներ **փակվեցին**:

ՄՅՈՒԺԵ (նշում է այն իրադարձության աստիճանական ընթացքը, որը տվյալ պահին չի ավարտվել).

- Բուժքույրերը **փորձում են** գործադուլի միջոցով հասնել աշխատավարձի նվազագույն մակարդակի բարձրացման մինչեւ...

Անցյալ եւ ներկա ժամանակների բայերի հերթագայությունը պատմությանը դիմամիկա է հաղորդում: Գործադուլը սկսվել է վաղ առավոտյան, սակայն լուրերի ծրագիրը եթեր հեռարձակելու պահին ավարտված չէ:

Էկրանային լեզու

Այն ամենը, ինչ ասվեց վերը, համարյա ամբողջությամբ վերաբերում է ինչպես հեռուստատեսությանը, այնպես էլ ռադիոյին, սակայն չպետք է մոռանալ, որ տեղեկատվության այդ երկու միջոցների լեզուները զգալի տարբերություններ ունեն:

Հեռուստատեսության լեզուն առավել սեղմ ու հավաք է: Հեռուստատեսային սյուժեի սցենարը մշակելիս մենք հաճախ ենք կրճատում ավելորդը, վերընթերցում ու նորից ենք կրճատում, հետո էլի ու էլի... մինչեւ որ, տեքստում մնա ամենակարեւորն ու էականը: Տեսաշարը ինքնին տեղեկատվություն կրող է: Հաճախ լրագրողը կարիք չունի հայտնելու քաղաքը կամ ձեռնարկությունը. բավական է ցուցադրել քաղաքի անվամբ ճանապարհային նշանը կամ գործարանի կամ ֆիրմայի պատին ամրացված ցուցանակը: Կադրերի լեզուն, գրաֆիկական պատկերները, խորհրդանիշները եւ հեռուստատեսությունում կիրառվող այլ հնարքներ հաջողությամբ փոխարինում են բանավոր նկարագրություններին:

Հեռուստատեսայորտաժի սցենարը գրվում է չափազանց խնամքով, քանի որ կադրից դուրս հնչող տեքստը պետք է համապատասխանի նրան, ինչ երեւում է էկրանին: 13 վայրկյան տետողությամբ տեսաշարի լրագրողական հանպատրաստից տեքստը ձախողման է դատապարտված: Տեքստի եւ տեսաշարի համապատասխանության հասնելու լավագույն ձեւը մոնտաժի ժամանակ մոնտաժող ռեժիսորի կողքին նստած տեքստ գրելն է (եթե, իհարկե, մնան հնարավորություն կա): Դա հնարավորություն է տալիս մի քանի փորձից հետո հասնել տեքստի եւ տեսաշարի ներդաշնակության: Հեռուստալրագրողը պետք է իր տեքստը մատուցի բնական եւ անկաշկանդ:

Ծրագիրը վարողը, որպես կանոն, իր տեքստը կարդում է հուշարար էկրանից: Շատ վարողներ, սակայն, պարբերաբար նայում են իրենց առջև դրված նշումներով եւ գրառումներով թղթերին, որպեսզի խուսափեն տեքստի մոնոտոն ընթերցանության տպավորությունից:

Երբեմն բարդ եւ խառը իրավիճակների մասին ավելի լավ է պատմել ուղիղ եթերում: Առավել հեշտ է այդ անել մեկնաբանության ձեով: Լրագրողը ծարգիրը վարողի հետ նստում է ստուդիայում եւ ուղիղ եթերում մեկնաբանում է այս կամ այն իրադարձությունը կամ որոշումը: Բհարկե, դա խնամքով նախապատրաստություն է պահանջում: Մինչեւ եթեր դուրս գալը ծրագիրը վարողն ու մեկնաբանը հիմնավորապես քննարկում են յուրաքանչյուր հարց եւ պատասխան: Սակայն ստուդիայում մեկնաբանը պետք է կարողանա խոսել ազատ, թղթից չկարդա իր պատասխանները: Ավելի լավ է ընդհանրապես տեքստ չգրել, բավական է ուրվագծել ելույթի հիմնական թեզիսները եւ ժամանակ առ ժամանակ հայացքը գցել այդ գրառումներին: Նման դեպքերում մեկնաբանի խոսքի նկատմամբ վստահությունն ավելի մեծ է, քան եթե նա տեքստը կարդար հուշարար էկրանից:

Հանդերձարարի խորհուրդներ

Հեռուստալրագրողը, ինչպես որ ռադիոլրագրողը, պետք է զբաղվի ձայնի մշակմամբ եւ կատարելագործի լուրերը մատուցելու իր հմտությունները: Սակայն սրան զուգահեռ նա պետք է մտածի նաեւ, թե ինքն ինչ տեսք կունենա էկրանին: Հագուստի անհաջող ընտրությունը կարող է այնպես շեղել հեռուստադիտողի ուշադրությունը, որ վերջինիս համար արդեն միեւնույնը կլինի, թե ինչ է ասում լրագրողը: Կարելու է, որ լրագրողի հագուստը եւ արտաքին տեսքը չշեղեն եւ չբարկացնեն հանդիսատեսին: Աշխարհի շատ հեռուստակայաններ ունեն հանդերձարարի կամ հագուստի ձեւավորողի (դիզայներ) հաստիք, որի խնդիրը հաղորդավարների եւ լրագրողների համար համապատասխան հագուստ ընտրելն է: Ստորեւ ներկայացնում ենք Շվեդական հեռուստատեսության հանդերձարարի խորհուրդները:

Համազգեստ. Պիջակի ուսերը չպետք է շատ վեր ելած կամ, ընդհակառակը, շատ կախված լինեն: Վերնաշապկի օձիքի չափսը պետք է ճիշտ ընտրվի, մի հագեք չափազանց նեղ կոնքերով անդրավարտիք, դա ոչ միայն նկատելի է էկրանին, այլեւ ազդում է ձայնի վրա: Ջեմպերի վզիկը չպետք է շատ բարձր լինի. կադրում կարող է այնպես թվալ, թե գլուխդ անջատված է մարմնից: Կարելու է, որ լրագրողները կամ ծրագիր վարողները հագուստի հարմարավետություն զգան:

Գուներանգներ. Ընտրեք այնպիսի գույների հագուստներ, որոնք ձեզ սագում են եւ ներդաշնակում են իրար: Վառ գույները աշխուժության զգացողություն են հաղորդում, սակայն չպետք է օգտագործել ճշան եւ խայտաբղետ գուներանգներով հագուստներ:

Լուսավորություն. Աշխատեք չհագնել ձյունաճերմակ վերնաշապիկներ: Դրանց համապատասխանող լուսավորում ընտրելը շատ դժվար է, բացի այդ նման գույնը դեմքին անբնական երանգ է հաղորդում: Եթե ձեզ, այսուհանդերձ, անպայման անհրաժեշտ է բաց գույնի վերնաշապիկ հագնել, ապա ավելի լավ է օգտագործել բեժ գույնի հագուստ:

Մեւ պիջակը էկրանին հաճախ մութ բծի տպավորություն է թողնում: Վառ կարմիր կամ վառ կապույտ հագուստները նույնպես այնքան էլ հարմար չեն հեռուստատեսության համար:

Արդուզարդ եւ փողկապ. Շատերին են դուր գալիս գեղեցիկ արդուզարդն ու փողկապները, դրանք մեր անհատականությունն են արտացոլում: Սակայն մի մոռացեք, որ չափազանց մեծ, աչք ծակող կամ փայլող զարդերը, ինչպես նաեւ պայծառ գուներանգներով

գլխաշորը կամ շարֆը իրենց վրա են հրավիրում հեռուստադիտողների ուշադրությունը: Թերեւս ծրագիրը վարողների եւ լրագրողների հանդերձանքում ոչինչ այնքան ծիծաղելի կամ զայրացուցիչ չի թվում հեռուստադիտողին, որքան տգեղ կամ հնատճ փողկապը: Մի կապեք նաեւ խոշոր կամ չափազանց մանր նկարներով կամ մուգ գուներանգներով փողկապներ:

Գրիմ. Նա, ով ելույթ է ունենում հեռուստախցիկի առջեւ, պետք է գրիմ օգտագործի, որպեսզի բնական երեւա: Ուժեղ լուսավորության տակ առանց գրիմի մարդը նման է ուրվականի կամ հանգուցյալի: Եթե դուք շտապում եք կամ գրիմի համար ժամանակ չկա, ապա գոնե դիմափոշի քսեք, որպեսզի ձեր դեմքը չփայլի: Մի մոռացեք սանրվել: Գզգզված մազերը հեռուստադիտողների ծիծաղն են հարուցում:

Պահպանի՛ր խոսքի կուլտուրային

Ռադիոն եւ հեռուստատեսությունն ազդում են երկրում խոսքի զարգացման վրա: Եթերում կամ հեռուստատեսությանից հնչած նոր բառերն ու արտահայտությունները շատ արագ մտղայիկ են դառնում եւ մտնում մարդկանց բառապաշարի մեջ: Մա հեռուստատեսային եւ ռադիոլրագրողների առջեւ խիստ պահանջներ է դնում: Նրանք պետք է հետեւեն սահմանված կանոններին, պահպանեն խոսքի կուլտուրան եւ ձգտեն լինելու գրական լեզվի կրողները:

8

Ստեղծիր նոր տարբերակներ՝

Պատկերացրեք, թե յուրաքանչյուր լուր մի ադամանդ է, որը կարելի է տարբեր ձեւերով մշակել եւ որով կարելի է հիանալ՝ տարբեր կողմերին նայելով: Ամեն անգամ, երբ դուք նրան նայեք այլ անկյան կամ այլ լույսի տակ, այն, միեւնոյն ադամանդը մնալով, ձեզ մի նոր քար կթվա:

Ազատ թարգմանություն Վալերի Գելերից

Ամենատարածված դժգոհությունը, որ մեզ ներկայացնում են ունկնդիրներն ու ռադիոլսողները, ծրագրերում բազմաթիվ կրկնություններն են: «Ինչո՞ւ եք դուք ամբողջ օրը ներկայացնում միեւնոյն բանը», - հարցնում են հաճախ: Մեծ մասամբ այդ հարցը միանգամայն տեղին ու հիմնավորված է: Մյուս կողմից՝ կարելու է նորությունները պետք է կրկնվեն լուրերի յուրաքանչյուր թողարկման ժամանակ: Չի կարելի երկրաշարժի կամ ինքնաթիռային աղետի մասին հաղորդագրությունը չհեռարձակել ժամը 10-ի եւ 11-ի վերջին լուրերի թողարկման ժամանակ, իսկ հետո դրանց նորից անդրադառնալ ժամը 12-ին: Տեղեկատվության հեռարձակման հետեւողականության սկզբունքը պահանջում է, որ նշանակալի նորությունները ներկայացվեն վերջին լուրերի բոլոր թողարկումների ժամանակ:

Թարմացում եւ անփոփոխություն

Յուրաքանչյուր ժամը մեկ անգամ նորություններ հեռարձակող ռադիոկայանները պետք է ձգտեն, որ անցած ժամանակամիջոցում կատարված կարելու է իրադարձությունների մասին հաղորդագրություններն անպայման ներառնվեն լուրերի թողարկման մեջ:

Ռ-ադիոկայանն ըստ էության իր ունկնդիրների հետ «պայմանագիր է կնքում» առ այն, որ վերջիններս, յուրաքանչյուր ժամի միացնելով ռադիոն, լսելու են վերջին լուրերի թողարկումները: Աշխատանքի այս ձևը կիրառվում է աշխարհի շատ երկրներում: Տեղեկատվության նման հաճախակի թողարկման պատճառով, բնականաբար, կարելու լուրերն անընդհատ կրկնվում են: Կանոնավոր կերպով վերջին լուրեր հաղորդող հեռուստակայաններն ու ռադիոկայանները հնարավորություն չեն ունենում թողարկումների միջև ընկած ժամանակամիջոցում փոփոխել տեղեկատվությունը: Առավոտյան լուրերը հեռուստատեսությամբ եւ ռադիոյով բավականին միօրինակ են, որովհետեւ աշխատանքային օրվա սկզբին տեղեկատվական հոսքն այնքան էլ մեծ չէ: Դրա փոխարեն՝ լսարանի կազմն է բավականին արագ փոփոխությունների ենթարկվում:

Առավոտյան եւ մինչեղեկոյան ժամերը ռադիոյի համար ունկնդրելիության կարճ հատվածներով պիկային ժամեր են: Ոմանք վաղ առավոտյան նախաճաշում եւ մեկնում են աշխատանքի, մյուսներն արթնանում են մի քիչ ավելի ուշ: Ճաշի ընդմիջման ժամերն էլ կարող են տարբեր լինել: Հեռուստատեսային առավոտյան թողարկումները հեռուստադիտողների համար փոխարինում են ռադիոյին. նրանք, որպես կանոն, միայն ունկնդրում են, եւ հազիվ թե որեւէ մեկը նայի, թե ինչ է ցուցադրվում: Առավոտյան հեռուստացույց նայելու ժամանակահատվածները նույնպես կարճ են:

Չնայած լսարանի կազմի արագ փոփոխություններին, բավականին շատ մարդիկ հասցնում են իրար հետեւից դիտել կամ ունկնդրել լուրերի մի քանի թողարկումներ: Դրանցում եղած անընդհատ կրկնությունները բարկացնում են նրանց եւ հաճախ՝ ստիպում փոխելու ալիքը կամ անջատելու ռադիոն: Խմբագրությունները պետք է լուրերի հետեւողական ընտրությամբ թարմացնեն եւ բազմազան դարձնեն լրատվական ծրագրերը, որպեսզի ունկնդիրը կամ հեռուստադիտողը հնարավորություն ունենա նույնիսկ կրկնվող հաղորդագրություններում իմանալու որեւէ նոր բան: Դա խմբագրություններից պահանջում է ստեղծել սյուժեների նոր տարբերակներ:

Ինչպես հեռուստատեսության, այնպես էլ ռադիոյի նորությունների յուրաքանչյուր թողարկման հաղորդագրությունները պետք է գոնե մի քիչ տարբերվեն նախորդ տարբերակներից: Խոսքը ոչ միայն տեղեկատվական սյուժեների մասին է, այլեւ ավելի երկար ռեպորտաժների եւ նույնիսկ ամենակարճ հաղորդագրությունների («ընթերցվելիքների»)՝ առանց տեսաշարի տեքստերի). լրագրողական աշխատանքի ցանկացած «արտադրանք» կարելի է թարմացնել: Սակայն դրա համար անհրաժեշտ է տիրապետել հեռուստատեսային եւ ռադիոնյութերի մոնտաժի հիմունքներին:

Բազմազան դարձրեք սկիզբը

Սյուժեի տարբերակներից յուրաքանչյուրը պետք է նոր սկիզբ ունենա: Եթե հաջողվի փոխել առաջին կադրերն ու դրանց ուղեկցող տեքստը, ապա արդեն շատ բան կշահեք: Լսարանը արագ է հոգնում տեքստերում եղած կրկնություններից եւ տեսաշարի միօրինակությունից: Հեռուստադիտողի համար ավելի ձանձրալի բան չկա, քան այն հաղորդագրությունը, որը լուրերի յուրաքանչյուր թողարկման ժամանակ սկսվում է միեւնույն բառերով եւ ուղեկցվում միեւնույն կադրերով:

Յուրաքանչյուր տեղեկատվական նյութ ունի մի քանի հիմնական տարրեր՝ փաստեր, հարցազրույցներ, կադրեր: Սյուժեի թարմացման մեթոդիկական պահանջում է լուրը բաժանել առանձին բաղկացուցիչ մասերի եւ հետո դրանք նոր ձեւով համադրել իբրեւ մի ամբողջություն:

Լավ լրատվական հաղորդագրությունը պատասխանում է **ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ** դասական հարցերին: Այդ հարցերի պատասխաններն էլ հենց սյուժեի բաղկացուցիչ մասերն են, որ կարող են արտացոլվել լրագրողի տեքստում, հարցազրույցում կամ ձայնագրության մեջ: Այն լրագրողը, ով իր նյութի նոր տարբերակներ է ստեղծում, այդ հատվածներն օգտագործում է իբրեւ խճանկարի բաղկացուցիչներ:

Այդ աշխատանքին նախապատրաստվելու ամենապարզ եւ լավ ձեւը խճանկարի բոլոր տարրերն առջեւ շարելն է, ասել է թե՛ դրանք թղթի վրա կամ համակարգչում գրառելը: Այդ տարրերից կարող են լինել տարբեր փաստերը կամ հարցազրույց տված անձանց այս կամ այն խոսքերը: Կարելի է երկու սյունակ գծել՝ ձախում գրառելով բոլոր փաստերը, իսկ աջում՝ հարցազրույցները: Երեք փաստը եւ երեք հարցազրույցը բազմաթիվ տարբերակների հիմք են դառնում: Այդ վեց տարրերը կարելի է օգտագործել ցանկացած հերթականությամբ:

Փաստեր	Հարցազրույց
1. Ավտոմոբիլային աղետ, զոհերի թիվը	ա) Ողջ մնացածներ
2. Դեպքի ժամանակը եւ տեղը	բ) Ականատես. դրվագ 1
3. Իրադարձության պատճառներն ու զարգացումը	գ) Ականատես. դրվագ 2

Սյուժեն կարող է սկսվել կամ հարցազրույցով, որում ողջ մնացածներից մեկը նկարագրում է, թե ինչ է պատահել, կամ Ա ավտոմայրուղու վրա տեղի ունեցած աղետի մասին լրագրողի պատմությամբ: Ականատեսներից մեկը պատմում է, թե ինչպես են զարգացել իրադարձությունները: Այդ հարցազրույցը կարելի է տեղադրել սյուժեի սկզբում, մեջտեղում կամ վերջում՝ համադրելով **ե՞րբ, որտե՞ղ, ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ** հարցերին պատասխանող փաստերին: Նույնիսկ մեկ հարցազրույցից կարելի է զանազան տարբերակներ ստեղծելու դրվագներ կորզել: Տեխնիկական առումով նույնիսկ սահմանափակ փաստական նյութ ունեցող սյուժեները թարմացնելու մեծ հնարավորություններ կան: Ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ է սյուժեի յուրաքանչյուր տարբերակում առնվազն մեկ նոր մանրամասն ներառել: Ինչքան իրադարձությունից հետո ավելի շատ ժամանակ է անցնում, այնքան խմբագրությունն ավելի շատ փաստեր ու մանրամասնություններ է ստանում: Նման դեպքերում տարբերակներ ստեղծելու հսկայական հնարավորություններ են լինում:

Արդյոք այդ ավտոաղետի վայրում մերկասառույց չկա՞: Անհրաժեշտ է, արդյոք, նախազգուշացնել այդ ճանապարհով երթեւեկող մյուս վարորդներին: Ինչպե՞ս են իրենց զգում ողջ մնացածներն ու վիրավորները: Տեղյա՞կ են, արդյոք, կատարվածի մասին զոհվածների հարազատներն ու բարեկամները: Կարելի՞ է հրապարակել տուժածների անունները: Գոցե աղետի պատճառը տեխնիկական անսարքություններն են: Աշխատո՞ւմ էր, արդյոք, լուսակիրը: Ո՞վ է կատարվածի մեղավորը: Հարցերը շատ են: Եվ քանի դեռ լուրը հրատապ է մնում ու անընդհատ եթեր է հեռարձակվում, լրագրողը հնարավորություն ունի (եւ պարտավոր է) որեւէ նոր բան ավելացնել: Միեւնույն սյուժեն լուրերի տարբեր թողարկումներում կրկնելն անթույլատրելի է:

Ռադիոլրագրության ամերիկյան դասախոսուհի Վալերի Գելերին կարելի է համարել սյուժեների բազմազանության առաջին առաքյալը: Իր «Creating Powerful Radio» գրքում նա քննարկում է տեքստի եւ ձայնաշարի օգնությամբ սյուժեի նոր տարբերակներ ստեղծելու մեթոդիկան եւ տեխնիկան: Յուրաքանչյուր նոր տարբերակում մի քանի տվյալներ փոխարինվում են նորերով՝ ավելի թարմերով: Օրվա ընթացքում, լուրերի տարբեր թողարկումներում եթեր հեռարձակված թարմ տարբերակները ունկնդրին օգնում են իրադարձության մասին ամբողջական պատկերացում կազմելու: Ընդամին, յուրաքանչյուր տարբերակ պետք է մի քանի հիմնական փաստերով ինքնուրույն սյուժե լինի:

Հեռուստատեսությունում կարելի է օգտագործել նույն հնարքները, ինչ որ ռադիոյում: Սյուժեն բաժանվում է բաղկացուցիչների, որոնք հետո համակցվում են իբրեւ նոր պատմություն: Ծրագրի սկզբում ներկայացվող ծանուցումը («լիդը») եւ համառոտ

նախաբանը նույնպես կարելի է թարմացնել: Այս աշխատանքը հաջողությամբ կատարելու համար լրագրողը պետք է իմանա ռադիոյի եւ հեռուստատեսության մոնտաժային տեխնիկայի հիմունքները:

Կրճատի՛ր

Մոնտաժի ցանկացած տեսակի համար ընդհանուր տարրը կրճատումն է: Մոնտաժումը, թերեւս, կարելի է համեմատել խտացված սննդամթերքի պատրաստման հետ: Թարմ, որակյալ մթերքներից պատրաստում են արգանակը, որին ավելացնում են համեմունքներ եւ հնարավոր է նաեւ՝ բանջարեղեն: Չուրը գոլորշացնում են այնքան, մինչեւ որ մնա խտացված արգանակը, որը քամում են եւ դրան էլի համեմունքներ ավելացնում:

Մոնտաժել՝ նշանակում է գոլորշացնել ողջ ավելորդը: Հանե՛ք այն ամենը, ինչ այնքան էլ կարելու չէ, պահե՛ք միայն ամենաէականը, հարցազրույցի ամենալավ ու անհրաժեշտ հատվածները: Երբեմն հարկ է լինում հրաժարվել նույնիսկ այն հատվածից, որը ձեզ դուր է գալիս եւ չափազանց հաջողված է թվում: Kill your darlings՝ «սպանի՛ր սիրեցյալներիդ»: Ամենակարելուը պահելուց հետո «համեմեք» պատրաստի խտանյութը կոնկրետ տվյալներով ու մանրամասներով:

Ռ-ադիոմոնտաժ

Նոր թվանշային տեխնիկան հեշտացնում եւ պարզեցնում է ոչ միայն բուն մոնտաժումը, այլեւ նորացված տարբերակների ստեղծումը: Բնագրային ձայնագրությունը ներածվում է համակարգիչ, որից հետո խմբագրության ցանկացած աշխատող այն կարող է տարբեր ձեւերով եւ անսահմանափակ անգամներ մշակել: Դա հնարավորություն է տալիս, որ այն պահին, երբ մի լրագրողը նախապատրաստում է տեղական վարչակազմի ղեկավարի ընդարձակ հարցազրույցը, մյուսը՝ նույն ձայնագրությունից վերցնի փոքրիկ հատվածներ լուրերի թողարկման համար: Երբ նույն ձայնագրությունը մատչելի է խմբագրության մի քանի աշխատողների միաժամանակ, նյութը տարբեր ձեւերով մշակելու մեծ հնարավորություններ են ստեղծվում: Սակայն մոնտաժման մի քանի հիմնարար սկզբունքներ ընդհանուր են ինչպես համակարգչով, այնպես էլ սովորական մոնտաժային սարքով աշխատելու դեպքում:

Սյուժեի հատվածներն իրար խառնելը

Մի որեւէ սյուժեի առանձին հատվածներ կարող են ձայնագրված լինել տարբեր օրեր, տարբեր պայմաններում: Ստուդիայից դուրս կատարված (կենդանի) հարցազրույցում շատ են բնական աղմուկները, որոնք չկան ստուդիայում ձայնագրություն կատարելիս: Հատվածների ուղղակի մոնտաժման դեպքում ֆոնային ձայների տարբերությունը, ինչպես ասում են՝ «ականջ կծակի»: Այդ պատճառով տարբեր ֆոներով հատվածները պետք է խառնել՝ մի հատվածի վերջն աստիճանաբար վերածել մյուս հատվածի սկզբի: Հենց որ լրագրողը պետք է սկսի կարդալ իր տեքստը, հարցազրույցի ֆոնը սահուն խլացվում է: Ասեմք, ռեստորանում կատարված ձայնագրության բնական աղմուկը՝ հնչողության ուժգնության սահուն փոփոխությամբ, կցվում է բոլորովին այլ պայմաններում կատարված հարցազրույցի վերջից: Նման մեթոդը հեշտացնում է մի հատվածից մյուսին անցումները՝ դրանք դարձնելով ավելի բնական: Այս պատճառով այնպիսի ռեպորտաժ պատրաստող լրագրողը, որում կան արտաստուդիական ձայնագրություններ, պետք է միշտ ձայնագրի նաեւ հարցազրույցի վայրի ֆոնային աղմուկները: Նման ձայնագրությունները կարելի է օգտագործել մոնտաժային անցումների համար:

Չայնը վերարտադրող գլխիկի դիրքը

Նա, ով դեռևս աշխատում է հին՝ զուգադրման (անալոգային) մոնտաժի եղանակով, միշտ պետք է հիշի, որ մոնտաժային մկրատը գտնվում է ձայնի վերարտադրման գլխիկից մեկ կամ մի քանի սանտիմետր հեռավորության վրա: Լրագրողի գտած մոնտաժելու կետը (այն տեղը, որտեղից նա ցանկանում է կտրել) գտնվում է անմիջապես ձայնի վերարտադրման գլխիկի դիմաց: Այդ նշանակում է, որ ժապավենը պետք է մի քիչ աջ՝ դեպի մկրատը ձգել: Դիշտ տեղից կտրելն այնքան էլ հեշտ չէ, հատկապես, եթե ժապավենի վրա նշում չես կատարել: Այդ պատճառով ավելի լավ է մոնտաժելու կետը նշել հատուկ մատիտով: Մոնտաժելու այս եղանակը լրագրողից ճարտարություն է ժամանակ է պահանջում: Թվանշային սարքավորումներով մոնտաժելն ավելի հեշտ է: Չայնագրությունը ներմուծվում է համակարգիչ: Էկրանին այն հայտնվում է գրաֆիկական պատկերի տեսքով: Մոնտաժը կատարվում է էլեկտրոնային «մկրատի» եւ նշիկի (կուրսորի) միջոցով, ինչը հնարավորություն է տալիս առավելագույն ճշտությամբ գտնելու մոնտաժման կետը:

Խուսափի՛ր կրկնակի հոգոցից

Պատրաստելով սյուժեում առանձին հատվածների համակցմանը՝ դուք բախվում եք կրկնակի հոգոց վերարտադրելու վտանգին. նա, ով ավարտում է խոսքը, խորը շունչ է քաշում, ինչպես եւ նա, ով սկսում է խոսել: Այդ պատճառով հաճախ այնպես է ստացվում, որ հարցազրույցը խորը շնչով կամ հոգոցով ավարտվում, եւ նրան հաջորդող լրագրողի խոսքը կամ մի այլ հարցազրույց նույն կերպ սկսվում է: Ունկնդրին թվում է, թե զրուցակիցներից մեկը բարկությունից, անվստահությունից կամ շփոթմունքից ջղաձգորեն հոգոցներ է հանում: Պահե՛ք միայն մեկ շնչառություն (կարելու է, թե ումը, ավելի լավ է ավելի աննկատելին), եթե իհարկե դա չեք օգտագործում իբրեւ ձայնային էֆեկտ:

Խուսափի՛ր ձայների բախումից

Լրագրողի՝ ստուդիայում ձայնագրված խոսքը չի կարելի կցել նրա իսկ՝ ստուդիայից դուրս ձայնագրված խոսքին: Նման կցումներն անբնական են հնչում եւ «ականջ են ծակում»:
«Չայնը ձայնի վրա» անվանվող այդ երեւույթի վտանգն առաջանում է այն ժամանակ, երբ լրագրողը հարցազրույցի դրվագը մոնտաժում է անմիջապես ստուդիայում կատարված ձայնագրության հատվածից հետո: «Բնական» եւ ստուդիական ձայնագրությունների հնչերանգների տարբերությունը չափազանց մեծ է, ուստի ավելի լավ է հանել հարցը եւ այն կրկին ձայնագրել ստուդիայում, կամ ներկայացնել զրուցակցին տեքստում՝ հարցազրույցը սկսելով վերջինիս պատասխանից:

Եթե, ասենք, լրագրողը ընդդիմադիր կուսակցության ղեկավարի հետ հարցազրույց է վարել եւ հարցրել է, թե ինչու է նա քննադատում կառավարության առաջարկությունները, ապա համադրելիս կարելի է հարցը հանել եւ զրուցակցին ներկայացնել լրագրողական տեքստում: Օրինակ՝ . «Ընդդիմադիր կուսակցության առաջնորդ ԿԿ-ն քննադատում է այդ առաջարկությունները»: Դրանից անմիջապես հետո ԿԿ-ն մեկնաբանում է, թե ինչու: Սա ավելի լավ է, քան սեփական հարցը ստուդիայում վերաձայնագրելը, քանզի վերջին դեպքում ունկնդիրը կարող է կասկածել, թե հարցերը խմբագրվել են: Իսկ սա էլ իր հերթին ամբողջ սյուժեի նկատմամբ անվստահություն կարող է առաջացնել:

Հնչերանգ

Նա, ով ինչ-որ հետաքրքիր բան է պատմում եւ նպատակ ունի շարունակելու իր պատմությունը, որպես կանոն հնչերանգը կամ ձայնը բարձրացնում է: Նման դեպքերում մոնտաժելը դժվար է, քանի որ ունկնդիրը խոսողի հնչերանգից շարունակության է սպասում: Ավելի լավ է կրճատել այն հատվածում, որտեղ խոսողի հնչերանգը նորից ցածրանում է: Եթե նման հնարավորություն չկա, ապա անհրաժեշտ է երկու հատվածներն այնպես մոնտաժել,

որ ունկնդիրը մտածի, թե պատմողին խոսքի կեսում ընդհատել են, ինչից հետո նա նորից շարունակել է իր պատմությունը: Ավելի լավ է այդպես, քան թե ասելիքը մնա օդում կախված:

Հեռուստասյուժեի մոնտաժումը

Հեռուստասյուժեում հնչյունաշարը մոնտաժելն ավելի հեշտ է, քան ռադիոյում: Տեսագրված ժապավենը ժամանակաչափային մեկ վայրկյանում 25 էլեկտրոնային կադր է պարունակում, ինչը հնարավորություն է տալիս հեշտությամբ գտնել կադրի սկիզբը կամ վերջը՝ մեկ քսանհինգերորդ վայրկյանի հաշվարկով: Այդ պատճառով հեռուստատեսային լրագրողները կարող են ավելի կտրուկ ու խիստ անցումներ օգտագործել, քան ռադիոլրագրողները: Ունկնդրին մի քանի վայրկյան է հարկավոր, որպեսզի վարժվի ռադիոսյուժեում հայտնված նոր ձայնին, այն դեպքում, երբ հեռուստատեսայորտաժի յուրաքանչյուր նոր մասնակից երեսում է էկրանին: Այդ պատճառով, նույնիսկ ամենակարճ «սինխրոնները» կամ հեռուստասյուժեի հատվածները միանգամայն «մարսելի» են եւ հեռուստադիտողի զարմանքը չեն հարուցում:

Ռադիոյով հեռարձակվող նյութում յոթ վայրկյան տեւողությամբ խոսքը բավականին անհեթեթ է ու թերեւս՝ հազվադեպ, այն դեպքում, երբ հեռուստատեսային յոթ վայրկյանանոց «սինխրոնը» բացառություն չէ: Եվ ամենեւին էլ պատահական չէ, որ նախընտրական արշավի ժամանակ ամերիկյան տեղեկատվական ծրագրերում նախագահի թեկնածուների խոսքը կազմում է հենց 7,2 վայրկյան: Նման տեւողությամբ հատվածները միանգամայն ընկալելի են, ինչը, սակայն, չի նշանակում, թե սա հեռուստատեսությունում ցանկալի երեսույթ է: Տեսամոնտաժը հեշտանում է նաեւ նրանով, որ անցումները հեշտ է քողարկել «միսրոնների» կամ «միջահատում – ներդիրների» միջոցով, այն դեպքում, երբ ռադիոսյուժեում կցումներն ընկալելի են ունկնդրի համար: Հեռուստատեսային սյուժեում «ներդիրները» հնարավորություն են տալիս հարթելու մոնտաժի կամ անցումների անհարթությունները:

Ներդիրներ (միջահատումներ)

Եթե ռադիոյում ընդունված ուղղակի մոնտաժի մեթոդը մենք օգտագործենք հեռուստատեսությունում, ապա դա կհանգեցնի կադրում երեսացող անձնավորության գլխի միանգամայն անբնական ցնցումների: Հեռուստալրագրողների ժարգոնում մնան կտրուկ մոնտաժային անցումն անվանվում է jump – cut («ընդհատված ցատկ»): Դրանից խուսափելու համար, կցման հատվածը քողարկվում է որեւէ ներդիրով: Դրա տեւողությունը պետք է լինի մոտ երեք վայրկյան, որպեսզի այն կրի իմաստային ծանրաբեռնվածությունը եւ որպեսզի հեռուստադիտողները կարողանան ընկալել կադրը:

Ձեռքեր. Խոշոր պլանով խոսողի ինչ-որ բան անող ձեռքերը: Նա որեւէ բան (ակնոց, մատիտ եւ այլն) է վերցնում:

Մանրամասներ. Հենց որ հեռուստադիտողը պատկերացում կազմեց այն սենյակի մասին, ուր հարցազրույցն է տեղի ունենում, ապա սենյակի կահավորանքի կամ հարցազրույց տվողի հագուստի առանձին մանրամասներ կարող են նկարահանվել մոնտաժային ներդիրների համար, սակայն այնպես, որ հեռուստադիտողի համար դժվար չլինի գլխի ընկնել, որ դրանք հենց շրջապատի մանրամասներն են: Վերարկուն արտադրած ֆիրմայի պիտակը կամ խոշոր պլանով նկարահանված զարդերը կարող են դառնալ ներդիրներ: Սակայն մի մոռացեք, որ ձեռքի դաջվածքը կամ չափազանց աչքի ընկնող զինդերը հեռուստադիտողի ուշադրությունը շեղում են բուն գրույցից: Գրադարակի թղթապանակների, լուսանկարների կամ սեղանին դրված թղթերի տրցակների կադրերը պետք է կապ ունենան գրույցի բովանդակության հետ:

Ունկնդիրը. Լրագրողը լսում է գրուցակցի պատասխանները. այլընտրանքային լուծում՝ հռետորին լսող հանդիսականների կադրեր:

Երկուսը կադրում. Լրագրողը եւ գրուցակիցը երեւում են կադրում, նկարահանումը կատարվում է այնպիսի հեռավորությունից, որ խոսողի շրթունքների շարժումը չերեւա:

Պատկերավորումներ. Միանգամայն ընդունելի է էկրանին ցուցադրել այն, ինչի մասին խոսում են: Այդպիսով, այն աշխատասենյակից, ուր հարցազրույցն է տեղի ունենում, կախված գրույցի բովանդակությունից՝ կարելի է տեղափոխվել արհեստանոց, ֆերմա կամ հիվանդանոց, իսկ հետո նորից վերադառնալ գրուցակցին ցուցադրող կադրերին: Նման լուծումը շատ ավելի հաջող է, քան հարցազրույցի սենյակի կահավորանքի անբնական կադրերը ցուցադրելը:

Շրջապատի մարդիկ. Մամուլի ասուլիսի ժամանակ կամ երբ հետաքրքիր անձնավորությանը կամ օրվա հերոսին մարդիկ են շրջապատում, կարելի է նկարահանել մյուս լրագրողներին, օպերատորներին եւ լուսանկարիչներին: Դա լավ ներդիր կլինի, որը կպատկերի տեղի ունեցածի մթնոլորտը:

Մեւ կամ սպիտակ կադր. Տեսքտը մոնտաժելիս պետք է ձգտեք, որ հեռուստադիտողը ներդիրները չընկալի իբրեւ անբնական ու տարօրինակ մի բան: Երբեմն ավելի լավ է հեռուստադիտողին անկեղծորեն խոստովանել, որ տեսամոնտաժի ռեժիսորը հանել է հատվածը, քան մոնտաժել անհեթեթ ներդիրներ: Սպիտակ կադրը (որպես կանոն՝ երկու - երեք էլեկտրոնային կադր, այսինքն՝ երկու - երեք 0,25 վայրկյան) օգտագործվում է իբրեւ ներդիր: Նման անցումները նկատելի են, սակայն օգնում են խուսափելու «ցնցումներից»: Շատ հեռուստադիտողներ սպիտակ կադրերը կարող են ընկալել իբրեւ լուսանկարչական լույսի բռնկում: Եթե սյուժեն մամուլի ասուլիսից է կամ հարցազրույց է, ապա դա միանգամայն բնական կերեւա: Որպեսզի լույսի բռնկման տպավորությունը ուժեղացվի, կարելի է նաեւ աշխատող լուսանկարչական խցիկի ձայն օգտագործել:

Մեւ կադրը մոնտաժն ավելի ընդգծված ցուցադրելու ձեւ է:

Նախնական մոնտաժ

Հեռուստալրագրողը պետք է պատկերացում ունենա ոչ միայն անցումների ու ներդիրների, այլեւ տեսամոնտաժի մյուս հիմնարար սկզբունքների մասին:

Լրագրողը սյուժեն մշակելուն պատրաստվում է նախնական մոնտաժի օգնությամբ: Նա ինքն է դիտում «սինխրոններն» ու տեսագրությունները, գրառում ժամանակային կողերը: Խցիկի էլեկտրոնային հաշվիչն ինքնուրույն է գրանցում ընթացիկ ժամանակային կողը՝ րոպեներով, վայրկյաններով եւ 0,25 վայրկյաններով:

Լրագրողը կարիք չունի զբաղեցնելու մոնտաժային սենյակը եւ ռեժիսորին կտրելու այլ գործերից՝ միայն այն բանի համար, որ դիտի ողջ նկարահանված նյութը: Բոլոր քիչ թե շատ խոշոր խմբագրություններում պրակտիկա է դարձել «Բետա» հոլովակից նյութը պատճենահանել սովորական VHS հոլովակի վրա, որպեսզի այն հնարավոր լինի դիտել սովորական տեսամագնիտոֆոնի օգնությամբ: Լրագրողը դիտում է ելույթները, հարցազրույցը, այլ նկարահանումները եւ իր համար գրառումներ կատարում՝ կազմելով կարեւոր դրվագների ցուցակը: Օրինակ.

- | | |
|--------|---|
| 01. 45 | վարչապետը խոսում է բյուջեի ճեղքվածքի մասին |
| 02. 30 | գործազրկության մասին հարցի պատասխանը |
| 04. 53 | ներդիր (լավագույն տարբերակը) - գործազրկության մասին հարցը |
| 08. 14 | վարչապետը ամբիոնի մոտ, նկարահանված է կողքից |
| 08. 22 | վարչապետը հանում է ակնոցը |
| 08. 37 | ակնոցը խոշոր պլանով |

Երբ այս սեւ աշխատանքն ավարտված է, կարելի է սեփական պատկերացումների ուրվագծերն առած գնալ մոնտաժային սենյակ: Լրագրողը ներկայացնում է իր մտահղացումները եւ մոնտաժային ռեժիսորի հետ դիտում նկարահանված նյութը: Նրանք

քննարկում են սյուժեի հնարավոր կառուցվածքը, միասին ընտրում տեսաշարը: Լրագրողի եւ մոնտաժողի համագործակցությունը պակաս կարեւոր չէ լրագրողի եւ օպերատորի համագործակցությունից: Մոնտաժային ռեժիսորը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու նյութին, որպեսզի օգնի լրագրողին՝ գտնելու սյուժեի մտահղացմանը հարմար տեսաշարի տարբերակը: Նախնական մոնտաժի ժամանակ լրագրողի գրառած ժամանակային կոդերը հեշտացնում եւ արագացնում են անհրաժեշտ հատվածների եւ «սինխրոնների» որոնումը:

Լրագրողի տեքստը (speakertext)

Տեսաապարատների սրահին կից, որպես կանոն, լինում է ձայնագրման մի փոքրիկ ստուդիա («տակառ»), որտեղ լրագրողն իր տեքստը ձայնագրելով համադրում է տեսաշարին: Իմաստ չունի տեքստը շարադրել, քանի դեռ հայտնի չէ, թե ինչ կադրեր են ընտրվել սյուժեի համար: Այդ պատճառով լրագրողները, որպես կանոն, տեքստը գրում են տեսաշարն ընտրելուց հետո եւ կարողում են՝ ստուգելով բառերի եւ կադրերի համապատասխանությունը: Նրանք, ում անունները հնչում են լրագրողի տեքստում, պետք է կադրում լինեն հենց այդ պահին՝ ոչ շուտ, ոչ էլ ուշ: Ի դեպ, միանգամայն ընդունելի է, որ նա, ում մասին խոսում է լրագրողը, կադրում հայտնվի կես վայրկյան ուշ, քանի որ պատկերի ընկալման արագությունն ավելի մեծ է, քան ձայնինը: Հնարավորության դեպքում խուսափեք «նարնջային հեռուստատեսության» (չափազանց համոզիչ, սակայն տեքստի եւ կադրի պարզունակ համապատասխանեցում) հնարքներ օգտագործելուց:

Հեռուստալրագրողի տեքստն ավելի զուսպ է եւ ավելի «քչախոս» քան ռադիոլրագրողի տեքստը: Կարողացեք երբեմն դադարներ կատարել՝ հնարավորություն տալով, որ արտահայտիչ կադրերն իրենք «խոսեն»:

Հեռուստապատումի արվեստը

Հեռուստատեսային կարճ սյուժեի տեսանկյունը եւ իմաստը պետք է հստակորեն արտահայտվեն: Պետք չէ մի քանի թեմաներ խառնել իրար: Նույնիսկ ամենակարճ սյուժեն պետք է մի պատմություն լինի, որն ունի հանգույց եւ ավարտ: Սկիզբը պետք է շարժի հեռուստադիտողի հետաքրքրությունը եւ միաժամանակ դառնա մուտք, որը լսարանին տեղեկացնում է քննարկվող նյութի եւ իրադրության մասին:

Տեսաշարի առաջին երկու - երեք վայրկյանները պետք է «մաքուր» լինեն, այսինքն՝ առանց կադրից դուրս հնչող տեքստի: Առավել լավ է սյուժեն սկսել կարճ ներածական տեսաշարով, քան «սինխրոնով», եթե ներկայացվող «մաքուր» հարցազրույց չէ: Գրամատուրգիական հնարքներն օգնում են զարգացնելու պատմությունը: Չանգերի դողանջը կարող է եկեղեցի պատկերող կադրերի նախաբան դառնալ: Անվտանգության ծառայության աշխատակիցների սեւ «Վոլվոյի» կադրերը հեռուստադիտողին հասկացնում են, որ շուտով կհայտնվի վարչապետը:

Սյուժեի բովանդակությունը հաստատող կրկնություններն անհրաժեշտ են, որպեսզի հեռուստադիտողը ընկալի դրա իմաստը: Դա կարելի է ձեռակերպել այսպես. նախ ասացեք, թե ինչի մասին եք պատրաստվում խոսել, հետո պատմեք այն, ինչ ցանկանում էիք եւ վերջում ընդհանրացրեք ձեր ասածը:

Ներքին մենախոսություններ

Ամենեւին էլ պարտադիր չէ, որ խոսողը երեւա կադրում: Հեռուստատեսությունում ներքին մենախոսությունը նշանակում է, որ ինչ-որ մեկի պատմությունը տրվում է ավանդական «սինխրոնից» տարբերվող ձեւով: Պատմողին, ում ձայնը լսվում է կադրից դուրս, ցուցադրում են իր համար բնական իրավիճակներում. նա զրոսնում է այգում, կարդում

է, գրուցում է հարեւանների, բարեկամների կամ աշխատանքային ընկերների հետ: Պատմությունը կարող է ուղեկցվել գրույցի նյութը պատկերող կադրերով: Այս հնարքը մի քիչ տարբերվում է գրականության մեջ ընդունված ներքին մենախոսության մեթոդից. վերջինիս դեպքում ստեղծագործության հեղինակը կամ վեպի հերոսը միայնության մեջ խոսում է ինքն իրեն հետ: Հեռուստատեսային ներքին մենախոսության դեպքում հեռուստադիտողի համար դժվար չէ գլխի ընկնել, որ պատմողը հենց նա է, ով այդ պահին զբոսնում կամ շախմատ է խաղում: Հանդիսատեսն առանց դժվարության ընկալում է պատմելու այս ձևը, որը նրան ծանոթ է կինոնկարներից եւ հրապարակախոսական հաղորդումներից: Ներքին մենախոսությունը կարելի է համադրել «սինխրոնի» հատվածներին:

«Խառնում» (համադրում, համակցում)

Կան տեսաշարերն իրար խառնելու շատ ձևեր: Ստանդարտ ձևը մի կադրը մյուսից քիտցնելն է, ինչը կարող է կատարվել վայրկյանի հարյուրերորդական մասից մինչև մի քանի վայրկյան արագությամբ: Մրան նախապատրաստվելու ձևերից մեկը դեռևս նկարահանման ժամանակ կադրից դուրս գալն է՝ պատկերը դանդաղ ապաֆոկուսացնելով: Դա կհեշտացնի սյուժեի հետագա մոտաժումը:

Թվանշային տեխնիկան համադրման անսահմանափակ հնարավորություններ է տալիս: Ինքս կարծում եմ, որ լրատվական սյուժեներում չարժե չարաշահել հատուկ էֆեկտները: Գեղագիտական տեսանկյունից մոտաժը պետք է լինի անպաճույճ, որպեսզի չխախտվի սյուժեի նկատմամբ հեռուստադիտողի վստահությունը:

Համադրման ժամանակ ձայնը խիստ կարևոր դեր ունի, սակայն պարտադիր չէ, որ այն պատկերի հետ միաժամանակ հնչի: Ընդհակառակը, հաջորդող կադրերին ուղեկցող ձայնագրության առաջին հնչյունները կարելի է համադրել ավարտվող տեսարանի վերջում:

Երկու շարժվող կադրեր, որպես կանոն, չի կարելի մոտաժել անմիջապես մեկը մյուսին: Դա էկրանին «ցնցումներ» է առաջացնում, եթե նկարահանումների պլանները, ուղղությունները եւ շարժումների արագությունները չեն համապատասխանում: Սակայն երկու շարժվող կադրերը միանգամայն հնարավոր է «խառնել»:

Հարցագրույց տվող անձին պատկերող կադրերը կարելի է խառնել իրար. դա հեռուստադիտողին մոտաժի մասին տեղեկացնելու ձևերից մեկն է, քանի որ հատվածների միացման տեղերը հստակ ուրվագծվում են: Սա սեւ կամ սպիտակ կադրերի այլընտրանքն է եւ քողարկում է մոտաժային հատումները:

Ուղղակի մոտաժ

Ուղղակի մոտաժի ժամանակ մեկ կադրը անմիջապես կցվում է մյուսին: Այս եղանակը միշտ չէ կիրառելի, քանի որ այստեղ կարևոր դեր ունի նկարահանվողների շարժման կամ հայացքների ուղղությունը: Տարբեր անձնավորությունների պատկերող կադրերի ուղղակի մոտաժի ժամանակ պահանջվում է, որ նրանց հայացքներն ուղղված լինեն ոչ թե միեւնույն կողմը, այլ միմյանց: Այս կանոնը գործում է նաեւ կարճ հարցագրույցների կամ հարցումների դեպքում: Ճեպագրույցները հեշտ է մոտաժել, եթե հարցվողները հաջորդաբար նայում են մեկ աջ, մեկ ձախ: Եթե դրա հետ մեկտեղ հարցվողներին պատկերող կադրերի պլաններն են համապատասխանում, ապա տպավորություն է ստեղծվում, թե նրանք նայում են իրար: Այսպիսի պահերը նկարահանող խումբը պետք է հաշվի առնի մինչև նկարահանումը սկսելը:

Ուղղակի կցման համար անհրաժեշտ է, որ պատկերներն անշարժ լինեն, իսկ իրար կցվող կադրերի պայծառությունը՝ համարյա միատեսակ: Ի դեպ՝ պայծառությունը կարելի է կարգավորել նաեւ մոտաժի ժամանակ: Ուղղակի մոտաժը փաստագրական լինելու տպավորություն է ստեղծում, ինչը սյուժեին հատուկ զորություն է հաղորդում:

Մեկնաբանի՛ր զգացմունքային կադրերը

Հեռուստադիտողի համար անսպասելի կամ անհասկանալի կադրերը բացատրություններ են պահանջում: Եթե էկրանին հանկաժակի ուժեղ զգացմունքներ են արտահայտվում, հեռուստադիտողը պետք է բացատրություն ստանա, թե ինչն է դրա պատճառը. ի՞նչն է այդպես երջանկացրել այս տղամարդուն, ինչո՞ւ է նա ծիծաղում, ինչո՞ւ է այն երեխան լալիս: Եթե սյուժեում երեւում է հաշմանդամի սայլակով ոստիկանը, ապա լսարանը պետք է լսի պատմություն այն մասին, թե ինչ է եղել, հակառակ դեպքում, շատերը կշեղվեն սյուժեից՝ մտածելով, թե՛ տեսնես ի՞նչ է պատահել օրենքի այս պահապանի հետ: Չէ՞ որ սայլակով ոստիկան տեսնելն այնքան էլ հաճախակի չի լինում: Լրագրողի խոսքը, որ հնչում է կադրից դուրս, կարող է լրացուցիչ մանրամասներ պարունակել՝ դրանով իսկ լսարանի ուշադրությունը բեռնելով նյութի հիմնական թեմային:

Երաժշտություն եւ գրաֆիկա

Ցանկացած քիչ թե շատ հագեցած մոնտաժային ստուդիայում կա հատուկ էֆեկտների (համաժողովի մասնակիցների աղմուկ, աշխատող տեսախցիկի բզբոց, աղմկուտ փողոց, մեքենաների հոսք, գնացքներ, ճայերի ճովոդյուն, մանկան լաց եւ այլն) գոնե մեկ տեսահոլովակ:

Ռ-ադիոյում հատուկ էֆեկտների օգտագործումը բարդանում է, քանի որ դրանք ունկնդիրը հաճախ ընկալում է իբրեւ արհեստական ֆոն: Ընդամիս, տեքստին ուղեկցող ձայնագրությունը կարող է նաեւ հաճախ խանգարել խոսողին: Հեռուստասյուժեները դիտողներին, ընդհակառակը, մի քիչ բարկացնում են համր կադրերը: Փողոցի կադրերը կարող են լսարանին անբնական թվալ, եթե չլսվի անցողիների ու մեքենաների աղմուկը: Նա, ով փողոցում նկարահանումներ է կատարում, միաժամանակ ձայնագրում է նաեւ ձայները: Արխիվից վերցված կադրերում հաճախ անհրաժեշտ ֆոնը բացակայում է: Նման դեպքերում անհրաժեշտ է հնչյունային էֆեկտներ օգտագործել. դա բոլորովին էլ ամոթալի չէ:

Լրատվական սյուժեներում երաժշտություն օգտագործելն ավելի նուրբ խնդիր է: Ոչ իբրեւ նկարահանման վայրի մթնոլորտ ձայնագրված երաժշտությունը հեռուստադիտողին խաբելու ձեւ է: Երաժշտական ձեւավորումը կարող է արմատապես փոխել ռեպորտաժի կադրերի ընկալումը: Բաց ծովում զբոսանավեր պատկերող կադրերը, որոնց ուղեկցող մեղեդու մեջ վտանգի, ողբերգականության եւ լարվածության հնչյուններ կան, հեռուստադիտողը այլ կերպ կընկալի, քան նույն կադրերը՝ ուղեկցված ժողովրդական մեղեդիով: Շվեդական հեռուստատեսության լուրերի ծառայությունում չկան լրատվական սյուժեում երաժշտություն օգտագործելը կարգավորող կանոններ, սակայն իմ կարծիքով, մենք պետք է ձեռնպահ մնանք հեռուստադիտողի վրա ազդելու այս եղանակն օգտագործելուց:

Հեռուստատեսային լուրերի խմբագրություններում, որպես կանոն, կա գրաֆիկական ստուդիա կամ նկարչի արվեստանոց: Թվանշային տեխնիկան այս ասպարեզում էլ նոր հնարավորություններ է ստեղծել: Համակարգիչները պարզեցրել են մուլտիպլիկացիայի, տիտրերի եւ գրաֆիկայի օգտագործումը: Արվեստանոցում պատրաստվում են սուբտիտրեր, գծանկարներ, նկարներ եւ այլն: Նույնիսկ այն լրագրողները, ովքեր քաղաքական եւ տնտեսական վերացական ու բարդ խնդիրներ են լուսաբանում, կարող են դիմել եւ գրաֆիկների ու աղյուսակների տեսքով օգնություն ստանալ, եթե ստուդիա ներկայացնեն անհրաժեշտ թվերն ու տվյալները:

Արխիվային եւ ստոպ-կադրեր

Լավ կազմակերպված խմբագրությունն իր տրամադրության տակ սեփական արխիվ է ունենում՝ հագեցած ինչպես տեսակադրերով, այնպես էլ լուսանկարներով: Գործարանային

արտադրամասի, ավտոմայրուղու, գրասենյակի, քաղաքական միջոցառումների արխիվային կադրերը շատ սյուժեներ են փրկել ձախողումից: Շատ հաճախ դրանք օգտագործվում են, երբ ժամանակը սուղ է կամ երբ տեղում նկարահանումներ կատարելու հնարավորություն չկա: Երբեմն արխիվային կադրերը կարող են կարելու տեղեկությունների աղբյուր դառնալ: Քաղաքական վճիռների կամ իրադարձությունների մասին պատմելիս օգտակար է հեռուստադիտողին հիշեցնել քաղաքական գործիչների նախորդ ելույթներն ու խոստումները:

Ցավոք, արխիվային կադրերը արագ են հնանում: Ժամանակի պահանջների փոփոխության հետ տեսակադրերը դառնում են ոչ արդիական: Քաղաքական ասպարեզում գործող անձինք անընդհատ փոխվում են: Բնականաբար՝ իրար են հաջորդում տարվա եղանակները, եւ հուլիսյան շոգ օրերին ձյունածածկ փողոցում վերարկուով նկարահանված քաղաքական գործիչն ցուցադրելը անհեթեթ կթվա հեռուստադիտողին: Իհարկե, դա երբեմն կարող է պատճառաբանված լինել: Որպես կանոն, բնական կադրերով ժապավենները նշում են ունենում, թե երբ է այն կատարված:

Արխիվային կադրերը պետք է օգտագործել՝ նրանցում պատկերված մարդկանց հարգելով, ինչպես նաեւ անձնական կյանքի անձեռնմխելիությունը հաշվի առնելով: Գուցե նա, ում մի քանի տարի առաջ նկարահանել եք, արդեն ողջ չէ, եւ նման կադրերի ցուցադրումը կարող է ցավ պատճառել նրա բարեկամներին ու հարազատներին: Հեռուստալուրերի շվեդական մի խմբագրություն զանգահարել վրդովված մի հեռուստադիտող եւ պահանջեց. «Խնդրում եմ, դադարեցրեք ծերանոցների մասին սյուժեներում իմ տատիկին ցուցադրելը, նա երեք տարի առաջ է մահացել»:

Նշի՞ր աղբյուրները

Այն, որ արխիվները թարմացնելը փող արժե, ոչ մեկի, այդ թվում նաեւ զանազան ձեռնարկությունների համար գաղտնիք չէ: Վերջին տարիներին խոշոր ֆիրմաները ավելի ու ավելի հաճախ են անվճար տրամադրում տեսագրություններ, որոնք կարող են օգտագործվել իբրեւ արխիվային նյութեր: «Վոլվո» ավտոգործարանը բաժանում է նոր մոդելները պատկերող տեսաժապավենները. մեքենան հաղթահարում է կտրուկ շրջադարձերը, առանց ցնցումների սլանում աշնանային թաց ճանապարհներով: Ֆիրմայի դիրքորոշումը հասկանալի է՝ հեռուստատեսությամբ նման կադրերի ցուցադրումը, ըստ էության, ավտոմեքենաների անվճար գովազդ է: Էրեսունի նեղուցի կամրջի շինարարությունն իրականացնող կոնստրուկտիվ ղեկավարությունը խմբագրություններ էր ուղարկում ճեմակ գրոսանավերի եւ արեւից փայլող ալիքների վերելով ձգվող նոր կամրջի համակարգչային ինտերակտիվ անիմացիաները: Այդ «աշխույժ» պատկերները հայտնվեցին դեռեւս մինչեւ կամրջի շինարարության մասին որոշում ընդունվելը:

Խմբագրությունները պետք է ընդդիմանան գովազդ տարածելու այդ անբաբույց փորձերին: Ամեն անգամ, նման ժապավեն ստանալիս, անհրաժեշտ է հստակ նշել դրա ծագումը: Նույնը վերաբերում է նաեւ այն տեսագրություններին, որոնք կատարել է, ասենք, պատերազմող կողմերից մեկը կամ այն նկարահանումներին, որ ուղարկողը գրաքննության է ենթարկել: Ցավոք, շատ խմբագրություններ անփութորեն են վերաբերվում իրենց այս պարտականությանը:

Տեղականից՝ համազգայինի

Նոր տարբերակների ստեղծումը հեռուստատեսության եւ ռադիոյի լրագրողներից պահանջում է իր աշխատանքի արդյունքը խմբագրելու հմտություններ: Խոսքը, առաջին հերթին, ոչ թե ներկայացման ձեւի մասին է, այլ բովանդակության: Հատկապես հստակ են ընդգծվում տեղական եւ համազգային հեռուստատեսությունների լուրերի ծրագրերի համար պատրաստված սյուժեների տարբերությունները: Շատ երկրներում զարգացած է հանրային (պետական) հեռուստառադիոընկերությունների եւ նրանց տեղական բաժանմունքների միջեւ

համագործակցությունը: Գործնականում դա նշանակում է, որ տեղական կայանների լրագրողները պետք է սյուժեներ պատրաստեն նաև նորությունների ազգային ծառայությունների համար: Նման սյուժեների ձեռք տարբերվում է նրանցից, որոնք նախատեսված են տեղական հեռուստադիտողի համար: Որպես կանոն, համագային խմբագրությունները լրագրողից պահանջում են իրադարձությունների նախապատմության առավել խորը լուսաբանում՝ ավելի փոքր ժամանակահատվածում: Մինչև սյուժեի համագային ծրագրերի խմբագրություն ուղարկելը, տեղական կայանի լրագրողը պետք է ջանադրաբար խմբագրի նյութն այնպես, որ երկրի ցանկացած մարզի բնակիչ հասկանա, թե ինչի մասին է խոսքը:

Երաշխավորվող գրականություն

Geller Valerie: *Greating Powerful Radio*. M Street Publications, New York 1996.

9

Չեզոք եղիբ հետեւանքների նկատմամբ

Հետեւանքների նկատմամբ չեզոք (անտարբեր) վերաբերմունք ունենալու սկզբունքը նշանակում է, որ լրագրողը չպետք է մտածի, թե ինչ-որ մեկը կշահի կամ կտուժի, եթե ճշմարտացի եւ հասարակության համար նշանակալի լուրը հրապարակվի:

Սա, իր հերթին, նշանակում է, որ խմբագրությունները պետք է ձգտեն հաղորդելու այն տեղեկությունները, որոնք ճշմարտացի են եւ լսարանի համար կարեւոր: Այդ հրապարակումների հետեւանքների համար խմբագրությունը չի կարող պատասխանատվություն կրել: Եթե նյութը հրապարակելու որոշում կայացնելիս լրագրողը կամ խմբագրությունը հաշվի են առնում դրա հնարավոր քաղաքական կամ տնտեսական հետեւանքները, ապա տեղեկատվության անաչառության սկզբունքը խախտվում է, եւ այդ դեպքում արդեն խոսք կարող է լինել կարծիքների ձեւավորման մասին: Լրագրողը չի կարող իր գործողություններով որեւէ հետեւանքի նպատակ հետապնդել: Լուրերն ընտրելիս նա չի կարող հաշվի առնել այս կամ այն կողմի շահերը: Այս իմաստով նա պետք է անողոր լինի: Անհրաժեշտ է ընդգծել, որ խոսքը վերաբերում է լուրեր տարածելուն եւ ոչ թե ազատ մամուլին բնորոշ մյուս գործառույթի՝ հասարակական կարծիքի ձեւավորման մասին: Իր առաջնորդող էջում կամ խմբագրական սյունակներում* թերթը կարող է արտահայտել իր քաղաքական ուղղվածությանը համապատասխանող կարծիքներ եւ շահեր: Միանգամայն ընդունելի է, երբ թերթը **հատուկ առանձնացված** տեղում պաշտպանում է հասարակական այս կամ այն կարգը եւ առաջարկում որեւէ հիմնախնդրի լուծում: Սակայն լուրերի եւ կարծիքների (news and views) տարանջատումը պետք է հստակ նշված լինի: Եվտեղական ռադիոյի եւ հեռուստատեսությանը պետության տված հեռարձակման արտոնագրում նշված խնդիրները եւ ռադիոյի մասին օրենքը ասում են, որ նշված հեռարձակող կազմակերպությունները պետք

* Եվտեղիայում մեծ մասամբ թերթերի երկրորդ էջը այսպես կոչված առաջնորդող կամ խմբագրական է, որում ինքը՝ խմբագիրը եւ խմբագրության աշխատակիցները կարող են արտահայտել իրենց քաղաքական համակրանքներն ու հանդես գալ գնահատող մեկնաբանություններով: Մյուս բոլոր էջերում հրատարակության քաղաքական ուղղվածությունը չի արտացոլվում:

է աշխատեն «անկողմնակալ եւ անաչառ՝ հաշվի առնելով, որ ռադիոյում եւ հեռուստատեսությունում պետք է տիրեն խոսքի ազատությունն ու տեղեկատվության տարածման ազատությունը»:

Երկրնորանք

Եվ այսպես, Շվեդական ռադիոն եւ հեռուստատեսությունը պետք է կարծիքների արտահայտման ամբիոն լինեն (խոսքի լայնածավալ ազատություն)՝ ընդամին իրենց գործունեության ժամանակ մնալով անկողմնակալ: Հրապարակումների հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքի սկզբունքը խնդրի իմ ձեւակերպումն է, որը պետք է կիրառվի տեղեկատվության տարածման բոլոր միջոցներում, չնայած ձեւականորեն այդ սկզբունքը տպագիր մամուլին ավելի քիչ է վերաբերում, քան հասարակական հեռուստառադիոհեռարձակումներին: Ինչ-որ մեկի արտահայտած կարծիքը, հնարավոր է, լուր լինի, սակայն դա չի նշանակում, թե այն հաղորդող ՋԼՄ-ն իրավունք ունի տարածել եւ պարտադրել սեփական վերաբերմունքը:

Այսպիսով, լուրերի ընտրության եւ գնահատման գլխավոր չափանիշները պետք է լինեն հավաստիությունը (ճշմարտացիությունը, իսկությունը) եւ նշանակալիությունը: Այս երկու հասկացություններն էլ դժվար է հստակորեն ձեւակերպել եւ առավել դժվար է՝ դրանք գործնականում կիրառել: Ի՞նչ է ճշմարտությունը: Ոչ մի դատարան, փիլիսոփա կամ գիտնական չեն կարող տալ այս հասկացության միանշանակ եւ անվիճելի սահմանումը: Իսկ լրագրողն ամեն օր ստիպված է կեղծ ու կասկածելի տեղեկատվությունը առանձնացնել ճշմարտացիից ու հավաստիից:

Տեղեկատվության ճշմարտացիությանը ներկայացվող պահանջը գործնականում նշանակում է, որ լուրեր ընտրող լրագրողը պետք է առաջնորդվի փաստերով: Այն, ինչի մասին մենք տեղեկացնում ենք մեր լսարանին, պետք է լինի կոռեկտ եւ ծայրահեղ մանրակրկիտությամբ ստուգված:

Նշանակալիության չափանիշը սահմանելն ավելի հեշտ է, սակայն դրա գործնական կիրառությունը պակաս դժվար չէ: Խոսքը մեր լսարանի համար կարելու տեղեկատվության մասին է, լուրեր տարածողների եւ դրանք սպառողների միջեւ չգրված համաձայնության:

Նշանակալիության չափանիշը արհմիութենական կամ մասնագիտական հրատարակությունում այլ է, քան դեղին մամուլում: Այն ինչ կարելու է տեղական թերթում, համազգային թերթի համար, հաստատ, որեւէ հետաքրքրություն չի ներկայացնում:

Գեկավարվելով իր փորձով եւ հենվելով իր մասնագիտական հոտառությանը, լրագրողը, հնարավորության դեպքում, պետք է փորձի ընտրել այն լուրերը, որոնք կարելու են իր լսարանի համար: Դրսի ճնշումները, այլոց կամ սեփական շահերն ու կարծիքները չպետք է ազդեն նրա որոշման վրա:

Խոսքն այս դեպքում տեղեկատվության միջոցների անկախության մասին է: Անթույլատրելի է, որ ինչ-որ հարցում չարտահայտված հատուկ շահագրգռվածությունը կամ ինչ-որ մեկի անձնական համակրանքներն ու հակակրանքները ազդեն լուրերի ընտրության վրա: Այս գործում վճռական դեր ունի լրագրողի մասնագիտական գնահատականը, որ տրվում է՝ առանց այս կամ այն կողմի համար հրապարակման հնարավոր դրական կամ բացասական ազդեցությունը հաշվի առնելու:

Այսինքն, մենք դարձյալ վերադառնում են ժողովրդավարական հասարակության մեջ լրագրողի դերի եւ տեղեկատվական ծառայությունների խնդիրների, լրատվության միջոցների իշխանության եւ նրանց կողմից այդ իշխանությունն օգտագործելու հարցերին: Պրակտիկայում ամեն բան, որպես կանոն, առավել բարդ է, կան բազմաթիվ սահմանային կամ այսպես կոչված՝ «գորշ» գոտիներ. իրավիճակներ, երբ այս կամ այն սկզբունքը կիրառելը ինքնին հասկանալի բան չէ: Այդ պատճառով միանգամայն տեղին է խոսել հրապարակման հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքի սկզբունքի երկրնորանքի մասին: Լրագրողի ոգեշնչվածությունը մի ակունք է, որից նա ստանում է ուժ եւ ներշնչանք,

հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքը, իմ խորին համոզմամբ, այն է, ինչին լրագրողը պետք է ձգտի: Մեր խնդիրն է պահպանել հնարավորի եւ ցանկալիի հավասարակշռությունը:

Լրագրողը պետք է ոգեշնչված հաղորդի քաղաքացիների համար կարեւոր իրադարձությունների մասին, սակայն չառաջարկի եւ չպարտադրի նրանց յուրաքանչյուր հարցի մասին իր որոշումը: Թեմայով ոգեշնչվելը հրաշալի է, սակայն մինչեւ ինչ-որ սահման: Այս է հենց այն սկզբունքի երկրնտրանքը, որը մենք քննարկում ենք այստեղ: Ե՞րբ մենք պետք է չեզոք դիրքորոշում ունենանք հետեւանքների նկատմամբ, ո՞ր դեպքերում է դժվար կիրառել աշխատանքի այդ մեթոդը եւ ո՞ր դեպքերում՝ ընդհանրապես հնարավոր չէ: Սա բավականին բարդ ու ընդարձակ հարց է, որի պատասխանը մի առանձին գրքի խնդիր է: Ավելի լավ է դիտարկենք մի քանի կոնկրետ օրինակներ, որոնք ցույց կտան սկզբունքի կիրառման ոլորտները:

Օրինակ 1. Խոզերի ծովախորշը

Սկզբունքի նշանակությունն ավելի հեշտ է հասկանալ, երբ խուսքն ընդհանուրին է վերաբերում, այն կիրառելն ավելի հեշտ է համազգային խնդիրների դեպքում, քան՝ երբ առնչվում է մասնավոր անձի կյանքին ու շահերին: «Ազգի շահերը» պաշտպանելու նախագահի կոչերը չպետք է լրագրողին եւ խմբագրությանը հետ պահեն հավաստի եւ հասարակության համար կարեւոր տեղեկատվությունը հրապարակելու ցանկությունից: Ամերիկյան լրագրողները սա հասկացան սեփական դառը փորձից:

1961 թվականին ամերիկյան «Նյու Յորք թայմս» թերթի թղթակից Թեդ Շուլցը տեղեկություններ հայթայթեց այն մասին, որ ԿՀՎ-ը աջակցում է նախապատրաստվող զինված հարձակմանը Կուբայի վրա: Այն պետք է իրականացնեին ԱՄՆ-ում ապրող կուբացի հակակոմունիստ վտարանդիները: Այս տեղեկությունը, անկասկած, մեծ կարեւորություն ուներ եւ արժանի էր դառնալու առաջին էջի հրատապ լուր: «Նյու Յորք թայմսը» դավանում է հետեւանքների նկատմամբ չեզոքության սկզբունքին, ինչն արտահայտված է թերթի առաջին էջում, անվանումից աջ տպագրվող տողում. «All the news that's fit to print» («Բոլոր նորություններն արժանի են հրապարակման»):

Պենտագոնը նախագահ Ջոն Բենեդուն նախագուշացրեց, որ «Նյու Յորք թայմսը» ունի հույժ գաղտնի տեղեկություններ: Քենեդին վերցրեց լսափողը եւ զանգահարեց թերթի պատասխանատու հրատարակիչ Օրվիլ Գրեյֆուսին՝ խնդրելով կասեցնել այդ տեղեկատվության հրապարակումը: Իր խնդրանքը նախագահը փաստարկեց նրանով, թե բացահայտումն, իբր, սպառնում է տապալելու գործողությունը, ինչն էլ կհանգեցնի արյունալի մարտերում բազմաթիվ զինվորների զոհվելուն եւ մեծապես կվնասի ազգի շահերը. «Կարո՞ղ է թերթի ղեկավարությունն իր վրա վերցնել նման հետեւանքների պատասխանատվությունը», - Քենեդին այս հարցն ուղղեց Գրեյֆուսին:

Այս պատմության մեջ ամենից զարմանալին այն չէ, որ նախագահը զանգահարեց թերթի խմբագրություն, այլ այն, որ «Նյու Յորք թայմս»-ի ղեկավարությունը տեղի սվեց նախագահի ճնշումներին: Ու թեպետ թերթի էջերում ինչ-որ տեղ տպագրվեց փոքրիկ տեղեկատվություն պատրաստվող հարձակման մասին տարածվող լուրերի վերաբերյալ, սակայն ոչ այն, որ դա տեղի կունենա մոտակա օրերին, ոչ այն, որ նախապատրաստությանը մասնակցում է նաեւ ԿՀՎ-ը, անգամ չհիշատակվեցին: Հոդվածն այդպես էլ աննկատելի մնաց: Խոզերի ծովախորշում զինվորներն ասի դուրս եկան, ինչպես որ պլանավորված էր՝ 1961 թվականի ապրիլի 17-ին: Գործողությունը լիակատար պարտությամբ ավարտվեց: Կուբացի 1500 վտարանդիներից կազմված զինված խմբավորումը գլխովին ջախջախվեց, իսկ Ֆիդել Կաստրոյի դիրքերը Կուբայում ավելի ամրապնդվեցին:

Ի՞նչ պատասխանատվություն էր կրում տեղի ունեցածի համար «Նյու Յորք թայմսը»: Եթե թերթը հրապարակեր իր ունեցած փաստերը, ապա հարձակումը հազիվ թե

իրականացվեր: Հենց այսպիսի հանդիմանանք նետեց թերթին նախագահ Քենեդին մի քանի օր անց: Ըստ նրա, թերթն այդ գործում չափազանց մեծ զսպվածություն էր զգուշավորություն էր հանդես բերել: Եթե «Նյու Յորք թայմս»-ը հրապարակեր նախապատրաստվող գործողության մասին ամբողջ տեղեկատվությունը, ապա երկիրը կխուսափեր ձախողման խաղաղությունից, եւ հարյուրավոր մարդիկ կփրկվեին անխուսափելի մահից: Այս մեղադրանքները Քենեդին Դրեյֆուսին նետեց հրապարակայնորեն:

Այս պատմությունն ամերիկյան լրագրողներին լավ դաս տվեց, որի արձագանքները հասնում են լրագրողների երիտասարդ սերնդին: Լրագրողական հրապարակումների հետեւանքները անհնար է կանխատեսել, հետեւաբար խմբագրությունները չպետք է տեղի տան այս կամ այն լուրը հրապարակելու հնարավոր հետեւանքների մասին շահարկումներին: Անկախ թերթը չպետք է երկնչի ազգի շահերի նախագահական ձեւակերպումներից եւ ընկալումներից: Լրատվության միջոցների խնդիրն է հրապարակել այն տեղեկատվությունը, որի հավաստիությունը հիմնավորված է, եւ որը կարեւորություն ունի իր լսարանի համար: Այն, որ հրապարակված լուրը կարող է հանգեցնել պատերազմի կամ խաղաղության, չի կարող մեղսագրվել խմբագրությանը:

Օրինակ 2. «Բուֆորս»

Այս գլխում քննարկվող սկզբունքը կիրառելի է նաեւ այն դեպքում, երբ խմբագրությունը տեղեկություններ ունի խոշոր ռազմական գործարանում արմատավորված կաշառասունության եւ մաքսանենգության մասին: Սակայն շատ երկրներում, բնակչության տարբեր խավեր տարբեր պատկերացումներ ունեն հասարակության մեջ զանգվածային լրատվության դերի մասին: Թղթակից եւ ռադիոյի լուրերի խմբագրության վարիչ աշխատած տարիներին ես հաճախ եմ լսել կարծիքներ այն մասին, թե մենք՝ լրագրողներս, որքան անամոք ենք, թե մենք, իբր, ընկնում ենք «թունդ» լուրերի հետեւից եւ պաշտում ենք սկանդալները, եւ թե՛ մինչ այս կամ այն նյութը հրապարակելու որոշում ընդունելը, վատ չէր լինի, որ մենք մի քիչ էլ մտածենք դրա հնարավոր հետեւանքների մասին:

Նման արձագանքի բախվեցի 1987 թվականի գարնանը, երբ մեր «Էխո» նորությունների ծառայությունը բացահայտեց, որ ռազմական տեխնիկա արտադրող «Բուֆորս» գործարանը հսկայական կաշառքներ է վճարել, որպեսզի Հնդկաստանից ստանա դաշտային թնդանոթների (հատուքների) արտադրության պատվերը: Այս լուրը աննախադեպ հետեւանքներ ունեցավ, եւ մենք բազմիցս լսեցինք մոտավորապես այսպիսի կշտամբանքներ. «Լավ կլիներ, որ դուք՝ «Էխոյի» սկանդալիստներդ, մի քիչ մտածեիք, թե ինչի կարող է հանգեցնել սկանդալների հետեւից ընկնելը»:

Բացահայտումն, իրոք, շատերին էր վնաս պատճառում: Այն վնասեց շվեդական կառավարությանն ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը, Ուլոֆ Պալմեի հիշատակին, չէ՞ որ վերջինս խաղաղարարի համբավ էր վայելում: Իսկ հիմա պարզվում է, որ իր այցելությունների ժամանակ նա ոչ միայն քննարկում էր խաղաղության խնդիրները, այլեւ զենքի հնարավոր մատակարարումները: «Էխոյի» լրագրողների հաղորդումները վնասեցին ընդհանրապես շվեդական արտահանմանը, քանի որ շվեդական ապրանքները սկսեցին նույնացնել կաշառասունության հետ, իսկ «Բուֆորս» ձեռնարկությունը երկար ժամանակով կորցրեց վստահությունը համաշխարհային շուկայում: «Բուֆորս» բառն այժմ հինդու լեզվում կաշառքի ու կաշառասունության հոմանիշ է: Կա նույնիսկ «բուֆորսով զբաղվել» արտահայտությունը, որը նշանակում է անազնիվ գործ կատարել, կաշառք տալ:

Մեր խմբագրության հրապարակումը մեծապես վնասեց նաեւ Հնդկաստանի կառավարությանը: Այն ժամանակվա վարչապետ Ռ-աջիվ Գանդին ինքն էր բազմիցս նշել, թե ընտրություններում տանուլ տվեց գլխավորապես «Բուֆորսի» հետ կնքված պայմանագրի շուրջ բարձրացված սկանդալի պատճառով:

Այսպիսով, լուրը հանգեցրեց աշխարհի ամենախիտ բնակեցված երկրներից մեկում կառավարության փոփոխության: Հաճախ չի պատահում, որ «Էխոյի» հաղորդումները նման

հետեւանքներ ունենան: Հետագայում տեղեկություններ ստացվեցին, թե Ռաջիվ Գանդին, «Բուֆորսի» գործարքի սկանդալից իր ժողովրդի ուշադրությունը շեղելու համար, Պակիստանի վրա հարձակվելու պլաններ էր մշակում: Եթե այդ պլաններն իրականացվեին, ապա հարյուրավոր, գուցե եւ հազարավոր զոհերով արյունալի պատերազմը կդառնար մեր խմբագրության հրապարակման ծայրահեղ հետեւանք: Այժմ, տարիներ անց, մենք գիտենք, որ դա տեղի չունեցավ, սակայն եթե հանկարծ բռնկեր այդ պատերազմը, մի՞թե այդ կնշանակեր, որ անձամբ ես՝ լինելով «Էխոյի» պատասխանատու խմբագիր, պետք է պատասխանատվություն կրեի:

Ես խորապես համոզված եմ, որ պատասխանատու եմ եղել միայն մի բանի՝ մեր ունեցած տեղեկությունները ճշմարտության եւ նշանակալիության չափանիշներով գնահատելու համար: Ունեի՞մք մենք փաստաթղթեր, որոնք ապացուցեին կաշառասունության եւ կաշառատվության մասին մեր հաղորդումների հավաստիությունը: Որքանով էր այդ տեղեկատվությունը նշանակալի մեր լսարանի համար:

Մենք, այո, ունեինք կաշառատվության փաստերն ապացուցող փաստաթղթեր եւ վկաների հավաստի ցուցումներ, որոնք հետագայում հաստատվեցին հետաքննության, դատաքննության եւ նույնիսկ հնդկական իշխանությունների կողմից:

Մենք համարում էինք, որ քաղաքացիները պետք է իմանային, թե ինչպես է Շվեդիան ստացել երկրի համար խոշորագույն (այն ժամանակվա չափանիշներով) ռազմական պատվերը, որը գնահատվում էր 8 միլիարդ կրոն (1998 թվականի օգոստոսի արժույթային կուրսով՝ մոտ մեկ միլիարդ դոլար): Հենց այս պատճառով մենք որոշեցինք հրապարակել լուրը, որի հետեւանքների պատասխանատվությունը չէր կարող դրվել ինձ վրա: Պատասխան պետք է տային նրանք, ովքեր կաշառք էին առաջարկել եւ նրանք, ովքեր վերցրել էին այդ կաշառքը:

Օրինակ 3. Գրամա Նորմալմսթորգեթում

Հաճախ, երբ խոսքը վերաբերում է համազգային խնդիրներին, որոշում ընդունելը ավելի հեշտ է, քան այն ժամանակ, երբ վտանգված է հասարակ մարդկանց կյանքը:

1973 թվականին Ստոկհոլմի Նորմալմսթորգեթ հրապարակում պատանդներ առեւանգելու դրամատիկ իրադարձություններ էին ծավալվում: Չինված կողոպտիչ Յանե Ուլսոնը պատանդ էր վերցրել մի քանի մարդու, որոնց պահում էր ՊԿ բանկի նկուղում: Որոշ ժամանակ անց նրան միացավ եւս մի կողոպտիչ՝ Կլարկ Ուլոֆսոնը: Իրադարձությունների զարգացումը մանրամասն նկարագրվում էր ռադիոյի եւ հեռուստատեսության հրատապ թողարկումներում: Երկու կողոպտիչներն էլ կանոնավոր լսում էին վերջին լուրերը: Ուլոֆսոնը պարբերաբար հարցազրույցներ էր տալիս «Էխոյին», որի աշխատակիցները տեղյակ էին, որ հանցագործները ռադիոընդունիչ ունեն:

Ոստիկանությունն սկսեց պատանդներին ազատ արձակելու գործողության նախապատրաստությունը: Նախատեսվում էր գրոհել՝ օգտագործելով արցունքաբեր գազ: «Էխոյի» խմբագրության աշխատակիցները, ինչպես նաեւ այլ լրատվամիջոցների ներկայացուցիչները, որոնք ՊԿ բանկի մոտ էին, դարձան այդ նախապատրաստության սկանառեսները: Մնում էր որոշում կայացնել՝ լուրերի հերթական կամ արտակարգ թողարկման ժամանակ տեղեկացնել, արդյոք, պատրաստվող գրոհի մասին, թե՞ ոչ: Տեղեկությունները հավաստի էին եւ հասարակության համար, անկասկած, հետաքրքիր: Խնդիրն այն էր, որ այդ հաղորդումները կարող էին հանցագործներին նախազգուշացնել պատրաստվող գրոհի մասին: Այն կանխելու հուսահատ փորձեր անելու համար, կողոպտիչները կարող էին սպառնալ պատանդների նկատմամբ հաշվեհարդարով: Ի՞նչ պատասխանատվություն կարող էր իր վրա վերցնել «Էխոն»:

Մի կողմից՝ ոչ լրագրողը, ոչ էլ խմբագրությունը պատասխանատու չեն կարող լինել իրենց զոհերի նկատմամբ հանցագործների կատարած գործողությունների համար, մյուս կողմից՝ ռադիոյով հաղորդումները կարող էին պատանդների կյանքի առավել մեծ

սպառնալիք դառնալ: Պրակտիկայում հրապարակումների հետեւանքների նկատմամբ չեզոքություն պահպանելու սկզբունքը հաճախ խնդրահարույց է: Որտե՞ղ է ջրբաժանը:

«Էխոյի» շատ աշխատակիցների կարծիքով պետք էր անմիջապես հաղորդել նախապատրաստվող գրոհի մասին: Սակայն ծրագրի պատասխանատու խմբագիր Մոնիկա Բոյեթիուսը որոշեց, որ Շվեդական ռադիոն պատանդների ազատագրման գործողության մասին կհաղորդի միայն այն ժամանակ, երբ գրոհը կավարտվի: Արդյոք ճի՞շտ էր նա: Հետեւանքների նկատմամբ անտարբերության սկզբունքը միանշանակ խախտվել էր:

Ես կարծում եմ, որ Մոնիկա Բոյեթիուսն ընդունեց ճիշտ որոշում: Այդ դրամայի հանգամանքները, պատանդների կյանքի եւ անվտանգության սպառնալիքը գերակայում էին սկզբունքը պահպանելու նկատմամբ: Հրապարակման հետեւանքները կանխատեսելի եւ չափազանց ակնհայտ էին: Հարցը, որ մենք ինքներս մեզ տալիս ենք նման դեպքերում՝ արդյոք հաղորդման հետաձգումը վնասում է հասարակության ժողովրդավարական սկզբունքներին, տվյալ պարագայում հրատապ չէր: Ստոկհոլմի Նորմալմսթրոմսը հրապարակում ծավալված իրադարձությունները ցույց տվեցին, որ հետեւանքների նկատմամբ չեզոք լինելու սկզբունքը միշտ չէ, որ կիրառելի է:

Էթիկայի սկզբունքներ

Շվեդիայում գործող «Մամուլի, ռադիոյի եւ հեռուստատեսության էթիկայի կանոններում» կան մի շարք դրույթներ, որոնք կարող են դիտարկվել իբրեւ հրապարակումների հետեւանքների նկատմամբ չեզոքության սկզբունքին հակասող.

7. Մանրագնին կշռադատիր բոլոր փաստարկները, մինչ կորոշես, թե արժե՞ հրապարակել այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են խախտել անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Հրաժարվիր հրապարակումից, եթե այն լայն հասարակության համար հետաքրքրություն չի ներկայացնում:

8. Հաշվի առնելով հարազատների զգացմունքները՝ ծայրահեղ նրբանկատ եղիր ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի մասին հաղորդելիս, մի մոռացիր անձնական կյանքի անձեռնմխելիության մասին:

9. Ծայրահեղ զգուշություն դրսեւորիր հանցագործությունների եւ դժբախտ պատահարների գոհերի մասին նյութեր հրապարակելիս: Հատուկ մանրագնությամբ կշռադատիր բոլոր թեր եւ դեմ կողմերը՝ անուններ եւ լուսանկարներ հրապարակելու որոշում ընդունելիս՝ հաշվի առնելով մարդկանց հոգեվիճակը եւ հարգելով հարազատներին ու մերձավորներին:

10. Մի ընդգծիր քո նյութերի «հերոսների» ռասայական պատկանելությունը, ազգությունը, սեռը, մասնագիտությունը, քաղաքական կուսակցություններին կամ խմբավորումներին անդամակցությունը կամ կրոնական դավանանքը, եթե դա կարող է քամահրական բնույթ կրել եւ հասարակական կարեւորություն չունի:

...15. Մանրագնին կշռադատիր, թե հրապարակման մեջ անվան հիշատակումը չի՞ վնասի, արդյոք, մարդուն: Մի հրապարակիր մարդու անունը, եթե այդ չի պահանջում հասարակական շահը* :

Լրագրողը պետք է հաշվի առնի հրապարակման հնարավոր հետեւանքները՝ մեր իսկ մշակած էթիկական սկզբունքներին համապատասխան: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ տեղեկատվության նշանակալիությունը եւ հասարակության համար դրա հետաքրքիր լինելը: Այլ խոսքով, այն դեպքում, երբ հասարակության շահերը պահանջում են որեւէ տեղեկատվության հրապարակում, էթիկայի սկզբունքներից շեղումը կարող է արդարացվել: Հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքն, այսպիսով, երկընտրաք է

* «Մամուլի, ռադիոյի եւ հեռուստատեսության էթիկայի կանոններ», Pressens samarbetsnämnd

պարունակում, որի լուծումը հնարավոր է գտնել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ կախված հանգամանքներից:

Օրինակ 4. Լիսեչիլ

Իննսունական թվականների կեսերին ավստրիական խոշոր մի ձեռնարկություն պլանավորում էր իր ապրանքների արտադրության գործարան տեղակայել շվեդական Բոխուսլեն նահանգի Լիսեչիլ քաղաքում: Խոսքը համարյա երեք հարյուր աշխատատեղ ստեղծելու մասին էր, ինչը այդ կոմունայի* համար կարելի էր նշանակություն կարող էր ունենալ: Շվեդական ռադիոյի «Radio Väst» (Արևմուտքի ռադիո) տարածաշրջանային ծրագիրը այդ պլանների մասին տեղեկություններ ստացավ դեռևս ֆիրմայի եւ տեղական վարչակազմի բանակցությունների նախնական ու բավականին խոցելի փուլում: Կոմունայի ղեկավարությունը անհանգստացած էր, որ ընդհանրապես այդ պլանների եւ մասնավորապես, ձեռնարկության անվան հիշատակումը կարող էր բացասաբար անդրադառնել բանակցությունների ընթացքի վրա: Լիսեչիլի տեղական վարչակազմի ղեկավարը դիմեց «Radio Väst»-ի պատասխանատու Լենա Լիդենին՝ խնդրելով իրենց բողարկումներում չնշել ձեռնարկության անվանումը: Ի՞նչ պետք է անել վերջինս:

«Radio Väst»-ի խմբագրությանը հայտնի էր ֆիրմայի անունը, աշխատակիցները տվյալներ ունեին այն մասին, որ բանակցություններն ընթանում են ամբողջ թափով, լուրը կարելի էր կոմունայի բնակչության համար եւ հետաքրքրում էր ռադիոլսողներին: Կարո՞ղ էր ձեռնարկության անվան հրապարակումը հանգեցնել նրան, որ գործարքը չկայանար:

Երկար մտորումներից ու բանավեճերից հետո «Radio Väst»-ը որոշեց ռադիոլսողներին պատմել բանակցությունների մասին՝ չնշելով ֆիրմայի անունը:

Որոշ ժամանակ անց բանակցությունները թեակոխեցին նոր փուլ: Այժմ արդեն ավստրիական ֆիրման էր ընտրության առջև. խոշոր ներդրում կատարել շվեդական Լիսեչիլում, թե՞ Չեխիայի քաղաքներից մեկում: Տեղական վարչակազմի ղեկավարը կրկին դիմեց «Radio Väst»-ին՝ խնդրելով չնշել ֆիրմայի անունը, քանի որ, իբր, դա կարող է խանգարել գործարքին, դրանով իսկ՝ կոմունայում նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այդ փուլում պլաններն առավել կոնկրետ էին, այդ պատճառով ձեռնարկության մասին տեղեկատվությունն առավել մեծ հետաքրքրություն ուներ հասարակության համար, քան առաջ: Որքա՞ն համբավավոր է ֆիրման, ի՞նչ պայմաններ են առաջ քաշվում ներդրումների համար: Իրենք՝ ֆիրմայի ներկայացուցիչները դույզն ինչ անհանգստացած չէին հրապարակմամբ: Սակայն տեղական վարչակազմի ղեկավարը շարունակում էր պնդել այդ խնդրի լուսաբանման ժամանակ գաղվածություն հանդես բերելու անհրաժեշտությունը:

Իրադարձությունների զարգացման այս փուլում «Radio Väst»-ը որոշեց հրապարակել ֆիրմայի անունը: Այն բանից հետո, երբ ավստրիական ձեռնարկությունը որոշեց ներդրումը կատարել Չեխիայում, տեղական մակարդակով բուռն բանավեճ ծավալվեց, թե ճի՞շտ էր, արդյոք, այդ ռադիոկայանի խմբագրությունը, չնայած ֆիրմայի ներկայացուցիչները բազմիցս կրկնել էին, որ իրենց որոշումը ոչ մի կապ չունի հաղորդումների հետ:

«Radio Väst»-ի օրինակը տեղական ռադիոկայաններին բնորոշ դեպք է: Որքա՞ն հաճախ են տեղական ղեկավարները դիմում խմբագրություններին՝ խնդրելով «օգնել» այս կամ այն խնդիրը լուծելու ի շահ տարածաշրջանի: Խոսքը մեկ ձեռնարկություն բացելու մասին է, մեկ հիվանդանոց փակելու, զինվորական ստորաբաժանումները տեղափոխելու եւ այլն: Ես խորապես համոզված եմ, որ տեղական ամենափոքր խմբագրությունն անգամ պետք է դիմակայի նման շահերի հետ գործարքի գայթակղությանը, եթե նույնիսկ խոսքն օգտակար գործի է վերաբերում:

Օրինակ 5. Փախստականներն Օսելեում

* Կոմունան Շվեդիայի վարչատարածքային բաժանման միավորներից է:

Լրագրության մեջ մի հին ավանդույթ կա, ըստ որի լրագրողը պարտավոր է օգնել հասարակ մարդուն: Լրագրողը պետք է գրկվածների պաշտպանը լինի, ասում է չգրված օրենքը:

Ո՞վ կարող է Շվեդիայում առավել անպաշտպան լինել, քան այն փախստականը, որը հետապնդումից թաքնվում է հեռավոր հյուսիսային Նորլանդ նահանգում գտնվող եկեղեցում: Ո՞վ, եթե ոչ լրագրողը, պետք է օգնի այդ անպաշտպան մարդուն:

Հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքի սկզբունքը նշանակում է, որ մեր խնդիրը որեւէ մեկին օգնելը կամ վնասելը չէ: Նպատակը, որ իր առջեւ դնում է լրագրողը, նախագահ Քենեդիին պաշտպանելը կամ վարչապետ Գանդիին տապալելը չէ: Մեր խնդիրն է լսարանին հասցնել այն տեղեկատվությունը, որ ունենք եւ գնահատում ենք իբրեւ կարեւոր ու հետաքրքիր: Եվ այսուհանդերձ, շատերն այն կարծիքին են, թե մենք պետք է առաքինիի կողմնակիցը լինենք: Մա կեղծ պատկերացում է: Լրագրողը չպետք է որեւէ մեկի կողմնակիցը լինի, եւ հենց այս է հասարակության մեջ մեր դերի իմաստը:

Սինկարիների ընտանիքը, որ արտաքսումից խուսափելու համար թաքնվում էր Շվեդիայի հյուսիսում գտնվող Օսելե ավանի փոքրիկ եկեղեցում, իբրեւ իր հայրենիքում քաղաքական հետապնդումների գլխավոր ապացույց ներկայացնում էր թուրքական թերթի մի հրապարակում: Այն ԶԲԿ-ին աջակցելու մեղադրանքով Սինկարիներ ընտանիքի հոր նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից հետախուզում հայտարարելու տեղեկատվություն էր: Շվեդական հեռուստատեսության տեղական լուրերի «Nordnytt» («Հյուսիսի նորություններ») ծրագիրը հաղորդեց այդ մասին, հենց որ խմբագրության աշխատակիցներն իմացան հայտարարության գոյությունը: Թողարկված սյուժեն ամրապնդեց փախստական ընտանիքի դիրքերը, եւ արդեն քաղաքական ապաստան ստանալու հիմնավորումներ կային. եթե ընտանիքի հայրն իր հայրենիքում քաղաքական հալածանքների է ենթարկվում, ապա Սինկարիներն իրավունք ունեին Շվեդիայում փախստականի կարգավիճակ ստանալ: «Nordnytt»-ի խմբագրությունը, սակայն, այդ նորությունը հրապարակելու որոշում էր ընդունել ոչ թե նման արդյունքի համար, այլ որովհետեւ տեղեկատվությունը գնահատել էր իբրեւ ճշմարտացի ու կարեւոր:

Շվեդական հեռուստատեսության այդ տարածքային ալիքի լուրերի խմբագրությունը շարունակեց իր հետաքննությունը. թղթակիցներից մեկը մեկնեց Անկարա եւ Ազգային գրադարանի արխիվներում գտնելով թերթի համապատասխան համարը, տեսավ, որ իբրեւ ապացույց ներկայացվող հայտարարությունն ակնհայտ կեղծիք է: Թերթի՝ Սինկարիի նշած համարում հետախուզման որեւէ հայտարարություն չկար: Այն տեղում, որտեղ իբր տպագրված պետք է լիներ այդ հայտարարությունը, ֆուտբոլի ռեպորտաժ էր հրապարակված: Այն ապացույցը, որ ժամանակին ամրապնդել էր ընտանիքի դիրքերը Շվեդիայում, այժմ նրանց այդտեղ գտնվելը հարցականի տակ էր դնում: Ակնհայտ էր, որ Սինկարին քաղաքական ապաստանի իրավունք չուներ: «Nordnytt»-ի թղթակիցն իր հետաքննությանը վնասեց ընտանիքին: Ճի՞շտ էր, արդյոք, նա: Ո՞վ, եթե ոչ լրագրողը պետք է պաշտպանի ճնշվածներին ու թույլերին:

Սակայն որտե՞ղ է սահմանը: Ո՞ւր կհասնենք մենք՝ փորձելով օգնել բոլորին: Իրավո՞ւնք ունենք մենք թաքցնելու մեր հայտնաբերած կարեւոր եւ հավաստի տեղեկատվությունը՝ իմանալով, որ այն կարող է վնասել ինչ-որ մեկին:

Հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքի սկզբունքը հաճախ է երկրնտրանքի առջեւ կանգնեցնում: Սակայն այստեղ հիշատակված օրինակում իրավիճակը միանգամայն պարզ է: Խմբագրության մանրակրկիտ հետաքննությունը ցույց տվեց, որ ընտանիքի հետապնդման միակ ապացույցը կեղծ համարելու էական հիմքեր կային: Ներգաղթի հարցերով զերատեսչությունը չընդունեց Սինկարիների ներկայացրած ապացույցը, քաղաքական հետապնդումների հիմնավորմամբ ապաստան տրամադրելու գործը փոխանցվեց կառավարությանը: Որոշումը մեծապես կախված էր հետախուզման հայտարարության հավաստիության գնահատականից: Հենց այս պատճառով կեղծ

հայտարարությունը կարելու էր այս գործի համար: Ունե՞ր, արդյոք, հասարակությունն իրավունք ստանալու հավաստի տեղեկատվություն, թե՞ ոչ: Այս հարցը պետք տա իրեն խմբագրությունը, եթե անգամ նրա աշխատակիցները մարդկայնորեն խղճում են Մինկարիների ընտանիքին, եթե անգամ ընտանիքի հայրը հիմքեր ուներ կեղծելու հետախուզման հայտարարությունը:

Կեղծիքը բացահայտող նոր տվյալների հրապարակումը ոչ միայն արդարացված էր, այլև անհրաժեշտ: Հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքի սկզբունքը պետք է կիրառման լայն սահմաններ ունենա, քանի որ այն կարելու էր ունի ՁԼՄ-ների նկատմամբ հասարակության վստահությունը ձեւավորելու գործում: Եթե մենք, անգամ ամենաբարի մտադրություններով սկսենք գրաքննել տեղեկատվական նյութերը, ապա աստիճանաբար կկորցնենք մեր նկատմամբ հասարակության վստահությունը: Եթե հասարակությունը սկսի կասկածել, թե զանգվածային լրատվամիջոցները միտումնավոր չեն անդրադառնում որեւէ թեմայի (ասենք՝ փախստականներին), ապա դա կհանգեցնի բնակչության այդ խմբի նկատմամբ կասկածանքների եւ պարարտ հող կատեղծի ասեկոսեների ու ենթադրությունների համար: Եվ երբեք չպետք է զԼՄ-ների նկատմամբ անվստահությունը օգտակար եղավ Նոր Ժողովրդավարություն կուսակցության համար, որն իր նախընտրական արշավում օգտագործեց թերթերում, ռադիոյում եւ հեռուստատեսությունում ներգաղթի հարցերի անտեսումը: Փախստականների հարցի շուրջ կրքեր չբորբոքելու լրատվամիջոցների ազնիվ մղումը, որ արտահայտվում էր այդ հողի վրա հակամարտությունների եւ կանխակալությունների մասին «տակտիկորեն» լռելով, հանգեցրեց հակառակ արդյունքի՝ արտասահմանցիների նկատմամբ թշնամաբար տրամադրված կուսակցության առաջացման:

ՁԼՄ-ների իշխանությունը

Չանգվածային լրատվության միջոցներն իշխանություն ունեն: Ազդեցության իշխանություն, քննադատության իշխանություն, օրակարգ հաստատելու իշխանություն: Կարճատեւ ժամանակահատվածում ՁԼՄ-ներին է պատկանում քննարկվող թեմաների եւ հաղորդագրությունների նկատմամբ իշխանությունը, երկարատեւ ժամանակահատվածում՝ այն հարցերի իշխանությունը, որոնք հասարակությունը կարելու է համարում, ինչպես նաեւ՝ իշխանությունը զարգացման միտումների նկատմամբ: Իշխանությունը հասարակագիտության գիտական հետազոտությունների առարկա է, բազմաթիվ եւ բոլորիվ էլ ոչ անվիճելի ձեւակերպումներով հասկացություն:

Իշխանության հարաբերությունները բնութագրվում են նրանով, որ ինչ-որ մեկը հնարավորություն ունի իր կամքը իրականացնելու ուրիշների նկատմամբ:

Մարս Վեբեր

Ա-ն իշխանություն ունի Բ-ի նկատմամբ այն չափով, ինչ չափով որ Ա-ն կարող է Բ-ին ստիպել անելու այն, ինչ վերջինս այլ պարագայում երբեք չէր անի:

Ռոբերտ Ա. Դալ

Իշխանությունը նպատակներին հասնելն է:

Բերտրան Ռասել

Եվ երբ գիտնական Ուլտֆ Պետերսոնը, որ ուսումնասիրում է պետական կարգի եւ իշխանությունների տարանջատման հարցերը, վերը բերված եւ այլ ձեւակերպումներին վերաբերող իր մեկնաբանություններում նշում է, թե դրանք նախատեսում են նպատակների (մտադրությունների) եւ հետեւանքների որոշակի կապ: Նա, ով իշխանություն ունի, կրում է

որոշակի արդյունքի հասնելու նպատակներ. «Ազդեցություն ունենալը նշանակում է, թե ինչ-որ մեկի մտադրությունները արդյունք են ունենում»:

Հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքի սկզբունքն, այդպիսով, նշանակություն ունի, թե ինչպես է լրագրողների իշխանությունն ընկալվում հասարակության կողմից: Տեղեկատվություն հաղորդելիս այդ սկզբունքը պահպանելու ձգտումը նշանակում է, որ լրագրողը պետք է հրաժարվի արդյունքի հասնելու ցանկացած նպատակից, երբ ինքը կամ խմբագրությունը որոշում են կայացնում հրապարակել կամ չհրապարակել այս կամ այն նյութը: Փաստի հրապարակումը հետեւանքներ է ունենում, ավելին, կախված կոնկրետ հանգամանքներից՝ կարող է ազդել իրադարձությունների հետագա զարգացման վրա: Լրագրողը պետք է ակտիվորեն դիմակայի լուրերը մշակելիս նման նպատակներ դնելուց: Հենց այս է հետեւանքների նկատմամբ չեզոք դիրքորոշում ունենալու սկզբունքի էությունը: Նա, ով պահպանում է այն, չի իրականացնում իր իշխանությունն ուրիշների նկատմամբ այն իմաստով, որ ունեին վերը հրապարակված մեջբերումները:

Հետեւանքների նկատմամբ չեզոք դիրքորոշման սկզբունքի ընդգրկման գոտին սահմանագծելը չափազանց դժվար է: Մենք միշտ բախվելու ենք այնպիսի իրավիճակների (այս գլխում ներկայացվածների նման), երբ այդ սկզբունքի կիրառումն անցանկալի կամ անհնար է լինելու: Յուրաքանչյուր լրագրողի ծանոթ է այդ սկզբունքը խախտելու գայթակղությունը՝ իշխանությունն իր ձեռքը վերցնելով: Սակայն այդ իշխանությունն ու լրագրողի պարտքը անհամատեղելի հասկացություններ են:

Երաշխավորվող գրականություն

Ungar Sanford J.: The Papers and The Papers. E. P. Dutton & Co. Inc. New York, 1972, s.99.

Broder David S.: Behind the Front Page. Simon & Schuster Inc. New York, 1987.

Fuller Jack: News Values. University of Chicago Press, 1996.

Lichter S. Robert & Noyes E. Richard: Good Intention Makes Bad News. Rowman & Littlefield Publishers, Inc. 1996.

10

Քայլի ժամանակին համընթաց*

Հեղափոխություն

Նրա համար, ում աչքերի առջև հեղափոխություն է տեղի ունենում, դժվար է գիտակցել կատարվող դեպքերի հսկայական նշանակությունը: Շվեդ լեզուագետ ռադիկալ լրագրող Սվեն Յերինգը Ռուսաստանի հոկտեմբերյան հեղափոխության դրամատիկ իրադարձությունների ականատեսը դարձավ, սակայն այդ դրամատիկ օրերին կատարված դեպքերի իմաստն ըմբռնեց միայն մի քանի տարի հետո: 1917 թվականի աշնանը երիտասարդ շվեդ դիվանագետ Յերինգը Պետրոգրադում էր: Նա իր աչքերով տեսավ, թե ինչպես են նավաստիները գրոհում Չմեռային պալատը, ինչպես են բռնաբերվում իշխանությունը: Այդ օրերին կատարվող իրադարձությունները նրան թվում էին անկազմակերպ ու քառասային, որ իրար հետ ոչ մի տրամաբանական կապ չունեին: Նրա՝

* Կարելի էր իբրև այս գլխի վերնագիր օգտագործել նաև Չարենցի տողը. «Ժամանակիդ շունչը դարձիր», սակայն մենք գերադասեցինք հավատարիմ մնալ բնագրին – ծ.թ.

իրադարձությունների կիզակետում գտնվող ականատեսի համար հեշտ չէր ընկալել համաշխարհային պատմության շրջադարձը, նոր պետության ծննդյան փաստը:

Գուցե հիմա էլ, ինքներս էլ չգիտակցելով անգամ, մե՞նք էլ հեղափոխության ականատեսներ ենք: Գիտակցո՞ւմ ենք մենք, արդյոք, այն, ինչի մասին այսօր խոսում են բոլորը: «Տեղեկատվական պայթյուն» եւ «տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխություն»․ սրանք նոր հասկացություններ չեն: Սակայն հասկանո՞ւմ ենք, արդյոք, տեղի ունեցող փոփոխությունների էությունը, նկատո՞ւմ ենք, արդյոք, այն, ըմբռնո՞ւմ ենք դրա կարեւորությունն ու տարածման ընդարձակությունը, կանխատեսո՞ւմ ենք, թե ինչի է այն հանգեցնելու:

Տեղեկատվական հեղափոխությունը շատ ավելի դանդաղ է ընթանում, քան Ձմեռային պալատի գրոհն էր, սակայն այն տեղի է ունենում մեր աչքերի առջեւ: Լրագրող աշխատելու ընթացքում ես շատ բան եմ տեսել: Իսկ ահա նրանք, ովքեր լրագրողական արհեստի հիմունքներին այսօր են ծանոթանում, աշխատանքի միջոցների եւ պայմանների փոփոխություններն իրենց մաշկի վրա կզգան մասնագիտական գործունեության ողջ ընթացքում:

Համակարգչային գրոհ

Տեղեկատվական հեղափոխությունն ամենից առաջ իշխանության բաշխման եւ ոչ թե տեխնոլոգիաների հեղափոխություն է: Տեխնիկական փոփոխությունները եւ գիտական հայտնագործությունները միայն մեր օրերում չտեսնված հզորությամբ զարգացող իշխանության կառույցների հեղաշրջման նախադրյալներ են ստեղծում:

Ութսունական թվականների սկզբին Ամերիկայի Միացյալ Նահանգներում կար համակարգչային տեխնիկա ունեցող ընդամենը տասը հեռուստառադիոկայան: 1983 թվականի գարնանը, Շվեդական Ռ-ադիոյի պատվիրակության կազմում ես էլ շրջագայում էի ԱՄՆ-ում՝ ուսումնասիրելով ռադիոյում եւ հեռուստատեսությունում համակարգիչների կիրառման փորձը: Մենք այն ժամանակ մտածում էինք, թե Ամերիկան այս ասպարեզում հարյուրապատիկ առաջ է Եվրոպայից: Սակայն բոլոր հեղափոխությունները չէ, որ սրընթաց են զարգանում: Մեր տեսածից շատ բան տեխնիկայի փակուղային զարգացման օրինակ էր:

Ջոնսոփոթյի (Արկանզասի նահանգ) փոքրիկ ռադիոկայանում մենք հանդիպեցինք գյուղատնտեսության խնդիրները լուսաբանող լրագրողի: Համարյա լաց լինելով՝ նա մեզ ասում էր, թե իր համակարգիչը ժամանակ առ ժամանակ «ուտում» է սկավառակներն իրենց ամբողջ պարունակությամբ, եւ դրանց վրա գրանցված ողջ տեղեկատվությունը անհետ կորչում է այդ «հրեշի» որովայնում:

Այդ օրերին մեր այցելած հեռուստակայաններից մեկը Ամերիկայի հարավային նահանգներից մեկում գտնվող մի առանձնատան նկուղում էր տեղավորված: Այդ կայանի լրագրողները գոհ էին իրենց կյանքից: Կալիֆորնիացի հանճարեղ ծրագրավորողների հետ սերտ համագործակցությամբ նրանք մշակել էին սեփական համակարգչային համակարգ: Լրագրողները մասնագետներին ասել էին, թե իրենք ինչ ծրագրեր կցանկանային ունենալ եւ թե դրանք ինչ գործառույթներ պետք է ունենան: Եվ ծրագրավորողները փայլուն արդյունքներ էին ստացել: Համակարգչին հասնող բոլոր հեռագրերը տեսակավորվում էին ըստ թեմաների եւ տեղավորվում այսպես կոչված «զամբյուղների» մեջ, իսկ եթերային ժամանակը հաշվարկվում էր ավտոմատ կերպով:

Basys կոչվող այդ համակարգչային համակարգը շատ արագ ընդունվեց աշխարհի բազմաթիվ հեռուստառադիոկայանների կողմից: Ծրագիրը առաջատարն էր նույնիսկ նրա առաջին տարբերակի երեւան գալուց 15 տարի անց եւ միայն այսօր է առաջատարի դիրքերը զիջել նորագույն տեխնոլոգիաներին: Լավ դասավորվեց նաեւ այդ փոքրիկ հեռուստակայանի լրագրողների կյանքը: Խմբագրությունը վաղուց Ատլանտայի առանձնատան նկուղից տեղափոխվել է եւ ամբողջ աշխարհում հեռարձակումներ է իականացնում CNN անվանումով:

Ութսունական թվականների կեսերին Շվեդական ռադիոն համակարգիչներով համալրելու խնդիրը բավականին անորոշ էր: Շատ աշխատակիցներ կրքոտ ընդդիմանում էին նոր տեխնիկայի ներդրմանը՝ իրենց բողոքները հիմնավորելով նրանով, թե համակարգիչները կհանգեցնեն գործազրկության աճի: Իսկ վտանագավոր ճառագայթման համա՞ր ինչ կասեք, հարցնում էին նրանք մեզ: ԱՄՆ-ից վերադառնալուց հետո մեզ սպասում էր անվստահության եւ հոռետեսության ալիքը:

Նավաստիները վերցնում են իշխանությունը

Շվեդիայում, ինչպես շատ այլ երկրներում, դեռես ութսունականների կեսերին լուրերի շատ խմբագրություններ եւ բաժիններ գործակալությունների հեռագրերն ու հաղորդագրությունները ստանում էին հեռատիպով (տելետայպով): Սովորական հեռատիպը, որպես կանոն, տպում էր մեկ բնագիր եւ երեք պատճեն: Հեռատիպի ժապավենին հետեւում էր մասնագետ աշխատակից, որը տեսակավորում էր հաղորդագրությունները եւ դրանք բաժանում ղեկավարությանը: Միայն մեր խմբագրությունում տասնհինգ աշխատակից կար: Պատասխանատու քարտուղարը ստանում էր մաքրագիր բնօրինակը, արտասահմանյան լուրերի բաժնի խմբագիրը՝ կապույտ պատճենը, լուրերի բաժնի խմբագիրը՝ բաց կարմիր, իսկ ֆիննական լուրերի խմբագրին բաժին էր ընկնում վերջին, ամենավատորակ պատճենները:

Խմբագրությունների «ամրոցների» առաջին գրոհը սկսվեց 1986 թվականի աշնանը, երբ «Էխոյի» մի քանի լրագրողների տրամադրվեցին նորերս ստեղծված Basys համակարգով սեփական համակարգչային տերմինալներ: Հենց դա էր, որ հասարակ լրագրողների ձեռքին գեներ դարձավ խլելու իշխանությունը «Էխոյի» պահապաններից՝ ամենակարող պատասխանատու քարտուղարներից:

Լրագրողները, որոնց համար մատչելի էր դարձել համակարգչային տեղեկատվական համակարգը, այժմ կարող են անմիջապես կարդալ ստացվող հաղորդագրությունները: Բացի այդ նրանք հնարավորություն ստացան հետեւելու հաղորդումների ծրագրին, ինչը հնարավորություն էր տալիս հետեւելու՝ հո իրենց սյուժեն դո՞ւրս չի մնացել առաջիկա ծրագրից: Լրագրողը կարող էր անմիջապես վազել հերթապահ խմբագրի մոտ եւ փորձել «խցկել» իր հաղորդումը: Այժմ աշխատակիցները կարող էին կարդալ պատասխանատու քարտուղարի գնահատականները սյուժեներին եւ հետեւել առաջադրանքների բաշխմանը:

Մեծացան ընդհանուր գործին մասնակցության զգացումն ու ստեղծագործական գաղափարների հոսքը խմբագրություն: Կարգախոսն էր՝ «Համակարգիչ յուրաքանչյուր աշխատակցին»:

Դա դարձավ ուժերի հարաբերակցությունը փոխող հեղափոխության աղբյուր: Լրագրության հաժանավի նավաստիներն իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Մակայն ամբողջ իշխանության նվաճումը իրականացավ միայն իննսունական թվականների սկզբին: Հենց այդ ժամանակ էր, որ մեր խմբագրության բոլոր աշխատակիցները համակարգիչներ ունեցան:

Իշխանությունն անցնում է ժողովրդին

Նոր հազարամյակի նախաշեմին սկսվեց ժողովրդի գրոհը տեղեկատվական ծառայությունների Չմեռային պալատի վրա: Այժմ արդեն համակարգիչներ կան ոչ միայն խմբագրություններում եւ գրասենյակներում, այլեւ մարդկանց տներում: Այն, ինչ ութսունական թվականների կեսերին շքեղություն, տարբեր խմբագրությունների լուրերի բաժինների հատուկ նստավայրերի մեմաշնորի էր համարվում, այժմ միանգամից մատչելի դարձավ բոլոր անհատական համակարգիչներ ունեցողների համար: Միլիոնավոր մարդիկ համակարգիչներով աշխատելու հնարավորություն ունեն: Հազար-հազարավորները միացած են Ինտերնետին, իսկ վերջինից օգտվողների թիվն աճում է տիեզերական

արագությամբ: Բաժանորդները հնարավորություն ունեն ծանաթոնալու աշխարհի բոլոր լրատվական գործակալություններից ստացվող նորություններին: Ընդամին՝ վճարովի, եթե ցանկանում են կարդալ ընթացիկ նորությունները եւ անվճար, եթե համաձայն են հաղորդագրությունները ստանալ մի փոքր ուշացումով: Տեղեկատվական հաձանավի նավաստիները, որոնք ընդամենը վերջերս էին զենքը խլել լուրերի տիրակալների ձեռքերից, այժմ ժողովրդի կողմից իշխանության գրավման վկաներն են:

Ժողովրդի տրամադրության տակ եղած զինանոցում այժմ արդեն միայն լրատվական ծառայությունների հաղորդագրությունները չեն: Ինտերնետը մատչելի է դարձրել աշխարհի հարյուրավոր, եթե ոչ հազարավոր, թերթերն ու հանդեսները: Այժմ քաղաքացիները կարող են օգտվել մամուլի անսահմանափակ արխիվներից:

Լրագրողների մշակած այդ նյութերի հսկայական քանակությունն ընդամենը մի կաթիլ է այսօր արդեն մատչելի փաստաթղթերի բնագրերի ծովում: Նրանք, ում չեն բավարարում լրագրողական հաղորդագրություններն ու նկարագրությունները, այժմ արդեն իրենք կարող են դիմել տեղեկատվության աղբյուրներին: Ձեռնարկությունները, հաստատությունները, կազմակերպությունները եւ զանազան քաղաքական կուսակցությունները ստեղծում են իրենց ինտերնետային էջերը: Թերթում հիշատակված հանձնաժողովի աշխատանքները կամ հետազոտություններն ամբողջ ծավալով տեղադրվում են Ինտերնետում: Քաղաքային խորհրդի նիստի արձանագրությունն ու քաղաքապետի ելույթը կարելի է կարդալ քաղաքապետարանի էջում: Խոշոր ձեռնարկությունների արտադրական պլաններն ու ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաեւ վարչապետի ճառը, կառավարության անդամների եւ ընդդիմության առաջարկները նույնպես մատչելի են Ինտերնետի բաժանորդներին:

Նոր պահանջներ լրագրողներին

Այս նորությունները քաղաքացիների համար իրադարձությունների մասին լրագրողների ներկայացրածի այլընտրանքն են եւ հնարավորություն են տալիս ստուգելու այն ամենի ճշմարտացիությունը, ինչ իրենք կարդացել են թերթում կամ դիտել հեռուստատեսությամբ: Ինտերնետում փաստաթղթերի մատչելիությունը լրացնում է լրագրողական աշխատանքի արդյունքը, սակայն չի մրցակցում նրա հետ, այլ ավելի շուտ ընդհակառակը:

Այնպիսի լրագրողների պահանջը, ովքեր տեղեկատվության անընդհատ աճող հոսքից ընտրում, տեսակավորում են լուրերը եւ մատուցում դրանք, առաջիկայում կաճի: Իշխանությունը տապալել շարունակող հեղափոխությունը եւ տեխնոլոգիական փոփոխությունները, սակայն, նոր պահանջներ կներկայացնեն լրագրությանը: Մեր լսարանը կկարողանա բացահայտել եւ մերժել այն լրագրողներին, որոնք իրադարձությունների մասին խեղաթյուրված կամ կողմնակալ նյութեր են ներկայացնում: Հասարակությունը հնարավորություն կստանա ընտրելու այն մեկնաբաններին, ովքեր տիրապետում են քննարկվող նյութին, կարողանում են ներկայացնել իրադարձությունների նախապատմությունը եւ բացատրություններ տալ: Մեր լսարանի քննադատաբար տրամադրված եւ պահանջկոտ հատվածը նոր տեխնոլոգիաների օգնությամբ իր պահանջմունքներին ավելի շատ ու ավելի օպերատիվ արձագանք կստանա: Սա նշանակում է, որ իշխանությունը նրանից, ով մատակարարում է տեղեկատվությունը, անցնում է նրան, ով այն սպառում է:

Մենք բոլորս մի երեսույթի նախաշեմին ենք, որը կարելի կոչել «լուրեր ըստ պահանջի»: Տեխնիկայի զարգացումը կհանգեցնի տեղեկատվության տարածման նոր ձեւի՝ «նախամուտքի նորություններին» մշակման: Հեռուստադիտողն ինքը կկարողանա որոշել, թե որ նորություններն է ցանկանում դիտել, ինչ հերթականությամբ եւ օրվա որ ժամին: Ով ցանկանում է, կկարողանա դառնալ տնաբույս պատասխանատու քարտուղար, ընտրել եւ կազմել վերջին լուրերի սեփական ծրագիրը՝ նլնելով սեփական հետաքրքրություններից ու պահանջմունքներից: Հանդիսատեսն առանց էական դժվարության եւ իրեն հատուկ

բծախնդրությամբ կրնաորի թեմատիկան, ծրագիրը վարողին, «ծրարաբաշխողին» ու մեկնաբանին: Նման հեռուստատեսության առաջին փորձերն արդեն կան. դա այսպես կոչված տելետեքստն է, որն անցնող հարյուրամյակի իննսունականների վերջին դարձել է նորությունների տարածման հաջող ձև: Տելետեքստն ինչ-որ իմաստով տեղեկատվության տարածման ինտերակտիվ ձև է, որի միջոցով հեռուստադիտողն ինքն է ընտրում այն նորությունները, որոնց ցանկանում է ծանոթանալ:

Չանգվածային լրատվության կայացած միջոցները մոտ ապագայի լրատվական շուկայում առավել մեծ արժեք կստանան: Այնպիսի հրատարակություններ, ինչպիսիք են «Գագենա Նյուիեթեր»-ը, «Նյու Յորք թայմս»-ը, «Վաշինգթոն փոսթ»-ը եւ մյուս ծանրակշիռ թերթերը վաղուց արդեն տեղեկատվության տարածման հավաստի, սեփական դեմք ունեցող միջոցի համարում են ձեռք բերել: Նույնը վերաբերում է նաեւ շատ ռադիո եւ հեռուստատեսային կայանների: Առանձին լրագրողների եւ մեկնաբանների անուններն առավել ծանրակշիռ կդառնան այն ժամանակ, երբ հեռուստադիտողները, ռադիոունկնդիրները եւ ընթերցողները հնարավորություն կստանան իրենք ընտրելու լրագրողական նյութերի հեղինակներին:

Այդ պատճառով մենք՝ լրագրողներս, ավելի ու ավելի շատ պիտի հավատարիմ մնանք փորձված լրագրողական առաքինություններին: Լուրեր մատակարարողի վստահելիությունը եւ նրա մտադրությունները ավելի ու ավելի կարեւոր դեր կունենան նոր լրատվական իրավիճակում: Իսկ ո՞վ է, ի վերջո, մատակարարը: Ո՞ւմ կարելի է հավատալ եւ ո՞ւմ չի կարելի վստահել այդ տեղեկատվական քառում: Վստահության է արժանի նա, ով անկախ դիրքորոշում ունի եւ իրեն նվիրում է լրագրությանը, այլ ոչ թե նա, ով զբաղվում է PR – ով (հասարակական կապերի ծառայությամբ) կամ քարոզչությամբ: Հրապարակումների հետեւանքների նկատմամբ չեզոք վերաբերմունքը նույնպես որոշակի արժեք ունի: Լուրեր առաքելը մի քիչ ավելին է, քան պարզապես սեփական ապրանքը վաճառելու եւ սեփական կարծիքի ճշմարտացիությունը համոզելու համար տեղեկատվության տարածումը: Նորությունների տարածման լրագրողական եւ այլ ձևերի հստակ սահմանագատումը վճռական դեր կունենա մեր նկատմամբ լսարանի վստահության համար: Գովազդը եւ PR-ը գոյության իրավունք ունեն, սակայն չպետք է խառնվեն լրագրության հետ:

Սահմանները ջնջվում են

ՁԼՄ-ները կշարունակեն իրենց գոյությունը, սակայն փոփոխված տեսքով: Թերթերը թերթեր էլ կմնան, եթե անգամ գնալով ավելի ու ավելի շատ տարածվեն էլեկտրոնային ճանապարհով: Միեւնույն ժամանակ, տպագիր հրատարակություններն արդեն այն չեն լինի, ինչին մենք սովորել ենք, քանի որ Ինտերնետում նրանք կարող են ներկայացվել ռադիո եւ հեռուստատեսային ծրագրերի կամ լայնածավալ արխիվների տեսքով՝ կապի ժամանակակից միջոցներով ու փաստաթղթերի գրավոր բնագրերի մատչելիությամբ:

Ինտերնետում թերթերը, ռադիոն, հեռուստատեսությունը, ֆիլմերը եւ փաստաթղթերը միավորվում են եւ դառնում մի ամբողջություն, մի նոր լրատվամիջոց, որոնք կարող են վերահսկել ոչ միայն նրանք, ովքեր այն արտադրում եւ առաքում են, այլեւ նրանք, ովքեր այն օգտագործում են: Սա մոտ ապագայի լրագրողներից պահանջում է ավանդական մասնագիտական հմտությունների համադրում նոր տեխնոլոգիաներում կողմնորոշվելու ընդունակության հետ:

Լրագրության նոր դերը պահանջում է մեր արհեստի բոլոր կայացած կանոնների պահպանում եւ տեղեկատվության մատակարարման ու տարածման ժամանակակից գիտելիքներ: Ապագայի լրագրողը կդառնա մուլտիմեդիա արվեստի մի տեսակ արվեստագետ, որը ոչ միայն տիրապետում է քննարկվող նյութին եւ լավ գրում է, այլեւ կարողանում է աշխատել պատկերով ու ձայնով:

Ռադիոլրագրողների նման, ովքեր արդեն այսօր իրենք են ձայնագրում ու մոնտաժում իրենց նյութերը, ապագայի հեռուստալրագրողը նույնպես պետք է սովորի

նկարահանման ու մոնտաժի հիմունքները: Արդեն այսօր Արեւմուտքի շատ երկրներում շատ են այն հեռուստալրագրողները, ովքեր միաժամանակ աշխատում են նաեւ իբրեւ օպերատորներ ու մոնտաժողներ: Նոր թվանշային տեխնիկան շատ ու շատ հեշտացնում է նկարահանումն ու տեսագրության մշակումը: Մասնագետ օպերատորներն ու տեսամոնտաժի օպերատորները կգրադվեն ավելի բարդ ռեպորտաժներով ու նախագծերով, որոնք պահանջում են տեխնիկական պատրաստվածություն, այն դեպքում, երբ հասարակ տեղեկատվական սյուժեները, հավանաբար, կդառնան թվանշային խցիկով մի զինված մեկ լրագրողի «խմբի» մենաշնորհը:

Ավելորդ է խոսել այն մասին, որ տեսագրման ու մոնտաժի տեխնիկային տիրապետելը դեռեւս լրագրողի աշխատանքի հաջողության երաշխիք չէ: Հագիվ թե նա կարողանա հասնել նկարահանման վարպետության, եթե պատկերացում չունի ֆիլմի կադրերի լեզվի մասին կամ ծանոթ չէ ռադիոսյուժեի դրամատուրգիական կառույցի հիմունքներին:

Օպերատորի կամ լուսանկարչի մասնագիտությունը պահանջում է խորը գիտելիքներ եւ աշխատանքի փորձ, իր գործով ոգեշնչվածություն ու, իհարկե, տաղանդ: Հեռուստաօպերատորի աշխատանքը չի սահմանափակվում միայն նկարահանման տեխնիկական կողմի ու տեսախցիկի գործառնությունների իմացությամբ: Տեսագրության մոնտաժի ռեժիսորի խնդիրը միայն ժապավենը կտրել-կպցնելը չէ: Այստեղ, բացի զուտ տեխնիկական գիտելիքներից պահանջվում են նաեւ պատմելու տեխնիկայի եւ դրամատուրգիայի հիմունքների տիրապետում, կադրի կառուցվածքի մշակման հմտություններ եւ կինեմատոգրաֆիայի պատմության իմացություն: Որպեսզի դառնաս լավ մոնտաժող կամ օպերատոր, անհրաժեշտ է մասնագիտանալ այդ բնագավառում այնպես, ինչպես լրագրողները որեւէ թեմայով են մասնագիտանում: Սակայն վաղվա հեռուստալրագրողը, այսուհանդերձ, ստիպված կլինի սովորել մի քանի մասնագիտությունների հիմունքներ, իսկ օպերատորներից եւ մոնտաժողներից կպահանջվի լրագրողի աշխատանքի սկզբունքների իմացություն եւ մասնագիտացում: Տեղի է ունենում ոչ միայն լրատվամիջոցների, այլեւ մասնագիտությունների միաձուլում:

Մենք՝ լրագրողներս, ինչպե՞ս պետք է վերաբերվենք սրան: Դ-ա, իհարկե, առաջին հերթին կարծիքների ու վերաբերմունքի խնդիր է: Եվ այսուհանդերձ, մենք պետք է պատրաստ լինենք առաջիկա փոփոխություններին ու հաշվի առնենք նորամուծությունները: Թվանշային տեխնոլոգիաները ոչ միայն պարզեցնում են մեր աշխատանքը, այլեւ այն դարձնում են առավել հետաքրքիր ու հետաքրքրաշարժ: Այն ռադիոլրագրողը, ով մի անգամ արդեն համակարգչով մոնտաժել է իր սյուժեն, այլեւս երբեք սեփական կամքով չի վերադառնա աշխատանքի մինչջրհեղեղյան եղանակներին: Հեռուստալրագրողը, ով վերջապես կարողացել է ազատվել սեւ-սպիտակ ֆիլմի անկատարությունից եւ անալոգային մոնտաժի դանդաղությունից, ոչ մի գնով չի համաձայնի բաժանվել իր թվանշային մոնտաժային սարքավորումից:

Հեռուստատեսության եւ ռադիոյի հեռարձակումները նյութի ստեղծման բոլոր փուլերում սրընթացորեն թվանշային տեխնիկային անցնելու ճանապարհին են: Թվանշային տեխնոլոգիաներն այսօր առկա են ամենուրեք. ձայնագրման ու տեսագրման, մոնտաժի ու հիշողության մեջ ներառնելու եւ բազմաթիվ այլ գործընթացներում: Սարքավորումները դարձել են առավել թեթեւ ու համահավաք, հեշտ ղեկավարվող, իսկ տեսա(ձայնա)գրման ու վերարտադրության որակը, չնայած հնչյունային օպերատորի բացակայությանը, դարձել է առավել կատարյալ: Հեռուստաօպերատորները կարող են ամենուրեք իրենց ձեռքին ունենալ դյուրակիր խցիկն ու օպերատիվ եւ հանպատրաստից նկարահանումներ կատարել առանց կողմնակի օգնության: Կադրերի ու տեսանյութերի առատություն է, ինչը հեռուստատեսությունում բազմազանություն է մտցնում եւ մեծացնում է բնական պայմաններում իրադարձությունները պատկերելու մեր հնարավորությունները: Այն նաեւ խմբագրություններին հնարավորություն է տալիս սեփական խցիկներն ունենալ

միաժամանակ տարբեր օբյեկտներում, ինչը նրանց աշխատանքի օպերատիվության եւ ծավալների մեծացման նոր նախադրյալներ է ստեղծում:

Աշխարհի շատ ռադիոկայաններում թվանշային ձայնագրիչներն արդեն գործնականում դուրս են մղել հին ծանրաքարշ, անհարմար ձայնագրիչներին, որոնցով ձայնագրություններ էին կատարվում մագնիսական ժապավենի վրա, իսկ վերջինս էլ հարկ էր անընդհատ փոխել: «Մեռնում» են նաեւ «կասետայինները», որոնք, ճիշտ է, մի քիչ թեթեւ էին հին սարքավորումներից, սակայն թվանշայինների հետ չեն կարող համեմատվել իրենց ձայնագրության որակով եւ օգտագործման հուսալիությամբ:

Թվանշային տեխնիկայով ձայնագրված կամ տեսագրված ձայնը կամ պատկերը հնարավոր է անմիջապես ներմուծել համակարգիչ հետագա մշակման եւ մոնտաժի համար: Ռադիոսյուժեները մոնտաժվում են հատուկ ծրագրերով ապահովված եւ բավականին մեծ հիշողությամբ օժտված սովորական անհատական համակարգիչներով: Ծրագրի աշխատանքի սկզբունքները շատ բանով հիշեցնում են մոնտաժի հին ու փորձված եղանակները: Մագնիսական ժապավենով աշխատող լրագրողը պետք է ժապավենը հետ ու առաջ փաթաթելու հնարավորություն ունենար, որպեսզի ճշգրիտ գտներ մոնտաժի կետը: Դա անելը բարդ չէ նաեւ համակարգչի միջոցով, իսկ ձայնագրության գրաֆիկական պատկերը տեսնելու հնարավորությունը հեշտացնում է մոնտաժային կետը գտնելը:

Անալոգային տեսամոնտաժի հին ու բարի մեթոդի ժամանակ բնագիր ժապավենը կրկնօրինակվում է այլ հղովակի վրա: Կրկնօրինակվում է տեսարանը տեսարանի, կադրը կադրի հետեւից: Սեփական նկարահանումները կարելի է համադրել արխիվային նկարահանումների, լուսանկարչական կամ գրաֆիկական պատկերների, դիագրամաների հետ: Ակնհայտ թերությունն այն է, որ լրագրողն ու մոնտաժողը արդեն սկզբից պետք է որոշեն, թե սյուժեում ինչ տեսարաններ են ընդգրկվելու, ինչ հերթականությամբ, ինչ ժամանակաչափով: Հետեւողական (կամ կադրը կադրի հետեւից) մոնտաժը նշանակում է, որ կադրերը տեղավորվում են իրար հետեւից, ինչը նշանակալիորեն բարդացնում է նրանց տեղերը փոխելու հնարավորությունը: Ծրագրի խմբագիրը լրագրողից պահանջում է 2 րոպե 45 վայրկյան տևողությամբ սյուժե: Առաջին երեսուն վայրկյանները մոնտաժելուց հետո անհրաժեշտ տեսաշար ընտրելը չափազանց դժվար է անգամ հեռուստատեսային շատ փորձառու աշխատողների համար: Իսկ եթե աշխատանքն ավարտելուց հետո լրագրողը հայտնաբերում է, որ իր նյութը 3 րոպե է ստացվել, (իսկ որպես կանոն հենց այդպես էլ լինում է) ապա ինքը եւ մոնտաժողը պետք է մեջտեղում ինչ-որ հատվածներ դեն շարտեն: Մուտքի եւ ավարտի հաջողված կադրերը գոհել ոչ ոք երբեք չի ցանկանում: Իսկ երբ մոնտաժողը կտրում հանում է մեջտեղի որեւէ տեսարան, ապա ստիպված է նորից կրկնօրինակել ամբողջ սյուժեն: Նման ամեն գործողությունից հետո նյութի տեխնիկական որակն ընկնում է: Յուրաքանչյուր կրկնօրինակ մի նոր ժապավեն է, որի նյութը ավելի ու ավելի հեռու է բնագրից:

Նման խնդիրներից մենք խուսափում ենք թվանշային տեխնիկայով մոնտաժելիս: Որեւէ տեսարան կրճատելուց հետո համակարգիչն ավտոմատ կերպով իրար է միացնում ժապավենի հատվածները: Ամբողջ մոնտաժի ընթացքում համակարգիչն աշխատում է միայն ժապավենի բնօրինակով, այդ պատճառով էլ տարբեր տեսարանները կարող են այս ու այն կողմ տեղափոխվել ու կրճատվել բազմիցս՝ առանց տեսագրության տեխնիկական որակը վնասելու:

Վերջին տեխնոլոգիաների օգտագործմամբ մեծանում է սյուժեի նոր տարբերակների ստեղծման հնարավորությունը: «Ոչ ուղղագիծ» մոնտաժի ժամանակակից ծրագրերը հնարավորություն են տալիս, որ միեւնույն տեսագրությունը մշակեն միաժամանակ մի քանի աշխատակիցներ: Բացի այդ, լրագրողը կարող է մոնտաժումը սկսել դեռեւս որեւէ նյութի, ասենք՝ ինչ-որ մեկի ճառի տեսագրության ընթացքում: Նման մոնտաժը նույնպես կարող են մի քանի աշխատակիցներ միաժամանակ կատարել, ինչը հնարավորություն է տալիս լուրերի տարբեր թողարկումների համար նյութի զանազան տարբերակներ ստեղծել:

Թվանշային տեսագրությունները պահանջում են հզոր հիշողությամբ համակարգչի օգտագործում: Իսկ ժամանակակից աշխարհում համակարգիչների էժանացման միտումներ են նկատվում, եւ այն աշխատանքները, որոնց կատարման համար անհրաժեշտ թանկարժեք խցիկներ, բարդ տեսագրիչներ եւ այլ տեխնիկա գնելը նախկինում միլիոնավոր դոլարների ներդրումներ էր պահանջում, այժմ կարելի է կատարել բավականին էժան թվանշային խցիկների եւ անհատական համակարգիչների օգնությամբ: Մա նույնպես իշխանության վերաբաշխման է հանգեցնում: Իշխանությունը խոշոր ընկերություններից աստիճանաբար անցնում է փոքր, անկախ հեռուստառադիոկայաններին: Նորագույն տեխնիկան լրագրողների կողմից նոր ֆիրմաներ հիմնադրելու նախադրյալներ է ստեղծում, քանի որ ժամանակակից սարքավորումները նրանց հնարավորություն են տալիս տանը ստեղծել եթեր հեռարձակելու պատրաստ սյուժեներ: Արեւմուտքում ավելի ու ավելի շատ լրագրողներ են սզատ լրագրողներ դառնում: Նրանք աշխատում են ինքնուրույն՝ բացելով սեփական ֆիրմաներ կամ բաժնետիրական ընկերություններ:

Լրագրողի մասնագիտությունը մեզանից մշտական կատարելագործում է պահանջում: Մասնագիտական վարպետության հիմունքները մենք յուրացնում ենք ամեն օր՝ սյուժեներ ու ռեպորտաժներ պատրաստելով, սակայն անհրաժեշտ է նաեւ, որ մենք մեծացնենք այն ոլորտների վերաբերյալ մեր իրազեկությունը եւ գիտելիքները, որոնց մասին պատմում ենք: Հասարակությունը սրընթաց առաջ է գնում, ինչը մեզանից պահանջում է առավել բարձր վարպետություն եւ խորը գիտելիքներ: Քայլել ժամանակին համընթաց, թե՞ հետ մնալ օրվա իրողություններից. այս երկընտրանքի առջեւ ենք կանգնած այսօր բոլորս:

Կարետր երեսույթների եւ իրադարձությունների մասին համակարգված ձեռով, ոգեշնչված ու կոնկրետ հաղորդելու, մանրամասն նախապատրաստվելու ու գրուցակիցների խոսքին ունկնդրելու, տեղում իրադարձությունների զարգացմանը չխոչընդոտելու, լուրերը գրական լեզվով, սակայն վերջին լուրերի տարբեր թողարկումներում նորացված տարբերակներով ներկայացնելու, աշխատելիս հետեւանքների նկատմամբ չեզոք դիրքորոշմամբ առաջնորդվելու խնդիրը լրագրողից պահանջում է քայլել ժամանակին համընթաց:

Երաշխավորվող գրականություն

Frantzich Stephen och Sullivan John: The C-SPAN Revolution. University of Oklahoma Press, 1996.

Էրիկ Ֆիլաթելիուս

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ 10 ՈՍԿԵ ՊԱՏՎԻՐԱՆ

Թառգմանիչ եւ խմբագիր՝ Սեսրոպ Զարուբյունյան
Ձեւավորող՝ Զամիկ Մայիլյան

Ինտերնյուսը շնորհակալություն է հայտնում Էրիկ Ֆիլաթելիուսին գիրքը թառգմանելու
եւ հրատարակելու իրավունքը տրամադրելու համար

ԻՆՏԵՐՆՅՈՒՍ